201.3
R-58

410-ԿՀ
1626 201.3 Բ-58
1029 39358

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ
Ի ՋԱՆԱՋԱՆ ՄԵԿՆՉԱՑ
Ի ՊԵՏՐՈՍԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՆԱԽՋՈՒԱՆՑԻՈՅ
ԱՂԱՄԱԼԵԱՆ ԲԵՐԴՈՒՄԵԱՆՑ

ՏՊԵԱԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ
ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԱՂԱԲԻԳԵԱՆ ԱՍՊԵՏԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱԶԳԱՍԻՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԵՑՆ ՀԱՅՈՑ. ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆՆ ՆՈՐ ՀՈՒՂԱՑ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՍՈՒՐԵՆԵԱՆՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

Ի ԿԱԼԿԱԹԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
1846.

225

2004

ԳԵՐՑԱՐԳԻ՛ ՄՏԵՐԻՄ
ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԻՍ ԱՂԱԲԻԳԵԱՆ
ՍԻՐԵԼԻՈՅԴ ԽՆԴԱԼ Ի ՏԻՐ։

ԳՈՎՆԻՑ բարերարութիւն քոյ, ո՛ Խմաստասէր Մտերիմ, հիացուցանէ զիս, տեսանելով զինքնայորդոր նախանձն բարի առ ի լոյս ածելոյ զայն Մատեան, որոյ գովեստն վկայեալ է յԱստուածաշունչ՝ "Երանի՝, որ կարդացող կամ լուցեալ զբանս մարգարէութեանս։" Յայսմ. Գլ. Գ։ Ընդ այս բարեփոփոխ լեալ Երանելի Պետրոս Առաքելաշունչ Աբգ Եղիազարեան Ռերդուուման՝ ձեռն ի գործ արկ ի մեկնութիւն և ի պարզաբանութիւն բանից Յայտնութեան Աստուծոյ։ Ջամբելով մանկանց սուրբ Եկեղեցւոյ զԱստուածային բանս առ ի անաշխատ վայելել։ Արդ՝ գու ո՛ Ազգասէր Սիրելի, սարածութեան գալով պատճառ, ոչ միայն գան ի խորշս մթագնելոյն, և զենթակայն ցեցակերք ապականութեան՝ տպագրութեամբ յերեւան լուսոյ ածել փութացար, այլ և զքաջ անճաշակ հին յայս մեղրածորան քաղցրութենէ զի բուն իսկ այգեստանի մերում զվերընձիւղեալն պտուղ՝ մաքարարութեամբ առ համայն Ազգ մեր, բուրաստան խընկաբոյս բացիք ազգաբերական եռանիւք։ Քանզի և հոգի

քոյ բարեբաղձ վառեալ է ջերմաջերմ ի բանս անուանակ-
ցին քոյ՝ Երանելւոյն Սրբոյն Յովհաննու, որ ասէ. "Երանի՛
որ պահէ զբան մարգարէութեանս զայս," Յայտ. իբ. 7։
Իսկ արդ՝ զերանութիւնս զայս հաղորդել կամելով և Ազգիս
մերոյ, ոչ միայն զԱստուածասիրութիւն քո ցուցեալ արդեամբ,
այլ և՝ ազնուական առաքինութիւնս սրտի ձերոյ յայտնեալ
օրինակ եռուր ամենեցուն Աստուածասէրաբար։ Քանզի
միով ձեռնարկմամբ գտար կրկին բարեբար. նախ՝ զի աշ-
խատասիրութիւն Երանելի Հեղինակին քեզ պակի, քեզ և
ի բաց տարանէրժէ զառ ի սրածայր ատամանց ժամանակին
ծախման գերկիւղն. քեզ և մշանջենաւոր ինն յիշատակու-
թեամբ արգասաւորի՝ յընթերցանելեացն զուելով յունկն
ամենեցուն, տպաւորել զԱստուածային Յայտնութիւնս։
Եւ միւս ևս՝ յառաջադեռն բարեբարութենէ քումմէ օրի-
նակ առնուն նախանձախնդիր պարք Ազնուականաց, զուն
զործելով ի խնդիր իմաստասի մատենից օգտակարաց. զորս և
ի լոյս ընծայել թեւակոխեն։ Որով ոչ միայն երագեն ժրա-
գրիչք արագագիր իմաստասիրաց առ ի նորանորս արտա-
գրել մատեանս բարոյականս, զառիթս լուսաւորութեան
Ազգիս և պայծառութեան. այլ նաև հասարակութիւն իսկ
առանց աշխատանաց մեծաց՝ միայնոյն զօգտակար և զհո-
գեսնուն խրատս Աստուածային՝ ի բարեկրթութիւն վա-
ղուց. թողուս յիշել և զառիս յաստուկ բարեբարու-
թիւնս Ձեր յայսմ մասին, որ փարեալ էր իձն տեսանել
զտպագրութիւն մատենիս այսմիկ։

Ապաքէն այսքան զերազանց գործոց առեթ զքեզ զի-
տելով ի Ազնուական Մտերիմդ իմ, զիաղդ հնարաւոր իցէ
ասի ի բերան մեալ, և զգոմանի գործս քոյ և զձեռնարկ ոչ
հաշակել։ Այլ զինչ առ այս բաւական ի շնորհակալիս
կացցէ բան, նա զի երկիւղիմ ևս՝ զի անսեթևեթ բանք իմ
ոչ արժանաւոր ըստ որ յիս բաղձանաց շարունակեալ,
մայլ զնոմա ասիցէ։ Դմին վասն խնդրեմ ի Ցառանէ պա-
հել զԱզնուասերութեդ Բարունակդ հաշակաւոր Գերազաս-

տանին ձերոյ՝ ընդ հովանեաւ ամենազօր Աջոյն իւրոյ, օր քան զօր պայծառացեալ ազգասիրական ոգւով՝ ի փառս Աստուծոյ, ի պարծանս Աբամեանս տոհմի, և յուրախութիւն իմոյս սրտի, որ կամս միշտ՝ շնորհապարտ խոստովանելով զանձն իմ, յամենայն կեանս մեծալ հանապազ վասն Պերճապայծառ Յարգութեան ձերոյ աղօթարար և բարեհայց.

Առաքելական Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի

Նուիրակ հնդկաց

Կալկաթա։
8 Յունն 1846

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԻՍԱՀԱԿ
Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ։

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ ԻՍԱՀԱԿԱՑ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ծ. Վ. ՆՈՒԻՐԱԿԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՍՐԲՈՑ ԱՂՈՑ ՀԱՄԲՈՒՐՋ ՀԵՐՄԵՆԱՆԴՈՒԹԵԱՄԲ։

ԱՄԱՍ հոգեշնորհ քաջալերութեան ձերոյ՝ որ առ գուշնաքեայ պատարագ խոնարհութեան իմոյ նուիրելոյ զբանութեան Աղգիս և յիշատակի Բազմերախտ Հեղինակին Մեկնութեան Յայտնութեանն Յովհաննու, հաս առիս. բերելով ինձ անդր քան զակնկալութիւն, տինա և զարժանաւորութիւն իմ, խրախոյս քաջալերութեան և օրհնութիւն սիրոխանաց։ Որոյ վասն զմի զոհութիւն, զմի շնորհակալութիւն՝ և զմի երախտագիտութիւն ինչ, զոր կարացից ի սրտուրբ դատել Աստուածասէր և Ազգասէր Ոգւոյ Ձերում, որ շնորհօք Սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ ստիպէ զձեզ միշտ այսօրինակ փարթամացուցանել զփանաքի արարս մեր։ Ոչ զօրաց բազմութիւն է՝ Հայր, և ոչ բազկաց կորովութիւն, որ յառաջ վարէ ըստարան՝ և շահի զյաղթանակ, այլ խմաստուն Գլուխ և քաջալերք Հօրաւարին են, որ զամենայն ի պարծանս Հայրենեաց խրախուսել կարեն։ Այո՝ խրախուսիչ առաջնորդի կարօտեաք, զորոյ զգլխաստութիւն վաղ ուրեմն ողբաց Երերոգլահայր Ծերունին՝ ասելով. "ով այսուհետև զմերս

յարգեսցէ զուսու�։ ով ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս, ով զհայրականն բարբառեսցէ զուարճութիւն։" Իսկ արդ զոհութիւն երախտեաց մարդասիրին Աստուծոյ, զի ի ձեզ տեսանեմք զառաջնորդ քաջալերիչ, զօրաւոր խրախուսիչ, վարդապետ քարոզիչ, վարժապետ աշակերտասէր, և հայր հրճուեալ ի բարեզործութիւնս որդւոց։ Ո՛վ ո՛րքան երանելի զանձինս համարէաք, եթէ համեմատ փոխարանաց Հօր այսպիսւոյ՝ զՀանապարհ Ազգային յառաջադիմութեան ամենեքին համակամ և հաւանութեամբ ընթանայաք։ Լիցի, եկեսցէ ապաքէն օրն ամենեքեան, յորում Քրիստոսի Հօր խրատուց՝ որդիք առհաստակի հընազանդեալք, վերստին ծաղկեցուսցին յԱզգի մերում և յաշխարհի՝ զԴարն Ոսկի, ոսկեբարն ասեմ Ազգիս զիտութեամբ և իմաստութեամբ։ Պարծանք շնորհաց այսոցիկ առաւելապէս Քեզ Ցեառնդ պատկանին, որ զմեծն մատակարարեցեր Ազգիս զգանձ թաքուցեալ ի գաղտնեան անյայտութեան. իսկ մեք մատամբ և եթ կցորդեցաք արքազան վատակոց ձերոց՝ տալ տալոյն զնա։ և այսպէս երանացուցանելով զԱզգ մեր, որ ընթերցեալ և ի միտ առնուցուն զբան մարգարէութեանս այսոցիկ։

Խոկական վերապատուութեամբ և յարգանաք,

Ձերդ Արժանապատիւ Ցէրուութեան,

Խոնարհ ծառայ.

9 Յունիսի, 1846.
Կալկաթա։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՂԱԲԻԳԵԱՆ։

প্রকাশিত ১.১০–১৬এবং ৫.১. প্রকাশিত ১.১০–১৬. যোহন ১.১. প্রকাশিত ১.১০–১৬ ও ৫.১.

Krishna Chunder Sc.

مشاهدات ۱۰-۱۶ اور ۱ ۵

Revelation i. 10–16 and v. 1.

Յայտնութիւն. 1.10–16. V. 1

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՑԱՑՏՆՈՒԹԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՅԱՑՏՆՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Հարց։ Վ՞ Քր ի մակագրին զնի յայտնութիւն Յովհաննու։ իսկ ասա՝ Յիսուսի Քրիստոսի։ Պատասխանի։ Օ՛ի Յե՛ի Քրիստոսի նախ յայտնեաց Աստուած ի մարդեղութեան զամենայն տպաւոյն։ և նա՛ ի ձեռն Հրեշտակի յայտնեաց Յովհաննու։ և սա՝ Եկեղեցւոյն։ Վ՞ս յարէ "ի ձեռն որոյ" այսինքն ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց։ "Որ լինելոցէ վաղվաղակի։" Վաղվաղակի զնի վասն երկուց։ նախ զի՝ մարգարէութիւնք յայտնութիւնք զկնի Յովհաննու սկսանելոց էին լինել թէպէտ կատարումն լինելոց էր ի կատարածի։ Երկրորդ՝ զի կատարածն իսկ աշխարհի։ յորում՝ ունելոց էր լսումն յայտնութեան՝ էառ Աստուած ներկայ և մերձ։ Այսպէս Եկեսցէ օր Տեառն վաղվաղակի։

"Եւ նշանակեաց Աւաքելով և այլն։" Քն

անմիջապէս եցոյց զապազայսն առաքելոց ի Հռովմ։ Զոր՝ ի լերինն ձիթենեաց։ Հանդէպ տաճարին։ Երկրորդ՝ զինի յարութեան ի քառասուն աւուրս ուսուցանելով զնոսա վասն արքայութեան Աստուծոյ։ բայց զինի համբարձմանն՝ մասնաւորապէս և յատկապէս եցոյց և նշանակեաց Յովհաննու։ մերթ ինքեամբ՝ և մերթ՝ հրեշտակիւ։ որպէս յայտնապէս գրէ։ Ապ՝ ասի յայտնութիւն։ այսինքն յայտնումն և բացայայտութիւն։ Օ՚ի թէպէտ բանք գրոցս՝ մեզ նսեմամտացս երևին դոլ ծածուկք և գժուարայայտք։ բայց սակայն՝ Յովհաննու արեգակնափայլ մտացն։ պարզ յայտնի և մեկն էին։ Որպէս և բանք մարգարէիցն յայտնի էին։ Բանզի մարգարէութիւք գաղտագայլ գոլով։ թէպէտ յինքեանս են ըստ՝ սակայն՝ որքան առ մեզ՝ եբր առաքաստիւ և քօղով ծածկեալք են։ Եւ որպէս նախկին գալստեամբն Քրիստոսի վերացան քօղքն ի մէջէն՝ որքան առ նա հայէին։ այսպէս և երկրորդ գալստեամբն վերանայ ծածկոյթն նսեմութեան ի յայտնութենէս։ Այլ այժմ՝ է որպէս ճանապարհ գիշերոյ թանձր խաւարաւ խրթնութեան ծածկեալ՝ ընդ որ ոչ է հնար առհ գործել։ եթէ ոչ՝ հոգւոյն ճառա-

գայթք ըմբռնուցեալ զայս տխուր գիշերս։ Տէր ուղղեա զՀանապարհս։ յոր եղաք զոսոմեր։

"Որ վկայեաց զԱնէն Աստուծոյ և այլն։" Որն յարաբերեալ զինքն Յովհաննէս։ որ վկայեաց զանէն Աստուծոյ։ այսինքն վկայօրէն պատմեաց զանէն Աստուծոյ՝ և զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի։ զոր վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի։ սա ծանոյց թէ արձանագրելով ի սուրբ Աւետարանի խրատ՝ և թէ քարոզելով ի հեթանոս։ Դարձեալ վկայեաց զԱնէն Աստուծոյ զոր Աստուած "և զվկայութիւն Յսի Քռի։" թէ նա ինքն է Մեսիայն որ գալոցն էր։ "Որ ետես և որ էր և որ լինելոց է յետայսորիկ։" Որ ետես զԲրիստոս։ և զոր էր ի նմա զորձ և վարդապետութիւն։ և զոր ինչ լինելոց է յետոյ մինչև ցկատարած։ զամենայն ետես և վկայեաց Յովհաննէս։ Զ Յիսուս և զգործն իւր յաւետարանին։ և զասպագայ եղեալն ի սոյն գրքոյ յայտնութեան։ Մինչև ցայս վայր հանուռօտ ծանոյց մեզ։ որ ինչ զԲրիստոսէ գրեալ էր և քարոզեալ և ուսեալ մարգարէաբար։

"Դրանէ որ ընթեռնու և լսէ զբան մարգա-

րէութեան և պահէ։" Ո՛չ որ միայն ընթեռնու-
կամ լսէ, այլ՝ որ պահէ՝ նա է երանելի։ Արդ՝
պահի մինչ խրատականքն զրեալք ի սմա՝ գոր-
ծով կատարին։ Իսկ տեսիլքն և պատմականքն
ի յիշողութիւն ամփարի։ Այսպէս զմօրէն Ա-
ստուծոյ ասի. իսկ Մարիամ պահէր զամենայն
զբանսն և խելամուտ լինէր ի սրտի։ Բան
մարգարէութեան ասէ. զի ծանուցցէ թէ զա-
պագայիցն են տեսիլք և յայտնութիւնքն։
Աստուստ որպէս ասէ վերջին կնիքն մար-
գարէութեանց. նոյնպէս և Յովհաննէս է
կնիքն մարգարէից և լուսն. և հետևապէս
ծայրագոյնն։ զի ժամանակն մերձ է։ այսինքն
ժամանակ հատուցմանն. զի որովհետև յայս
յապաղեալ նեղէ զանձն՝ մերձ ասէ։ զի յոր-
դորեցէ ի պահել զբանն. բայց ըստ Յու-
նաց ոչ դնի կէտնոս։ որ է ժամանակ։ այլ՝
կայթռոս։ որ է պատկանաւորութի դիպողուն
արդիւնաւորելոյ իւրաքանչիւրոյ զժամանակ
իւր։ որ իրաւի մերձ է. զի է սակաւ ինչ
յապաւիլն. որոյ թռչի դիպողութիւն և ոչ
կարէ արդիւնաւորել։ ահա ժամանակ ընդու-
նելի։ Մինչև աստ է մակագիր յայտնութե։
"Ի Յովհաննէ առ եօթն Եկեղեցիս՝ որք են
Ասիայ։" Յատկապէս զեօթն Եկեղեցիս առ-

նու՝ և նոքօք նշանակէ զամենայն եկեղեցիս Քրիստոսի, զի եօթն է նշան ընդհանրութեան, առ որս հայցէ «շնորհք և խաղաղութիւն Յէն և որ Էր, և որ գալոց է» այսինքն Աստուծոյ Հօրէ, և ի Յիսուսէ Յիսուսէ Քրիստոսէ որ էն առ Հօր, և գալոց է ի դատաստան։ այս է սովորութիւն Աւաքելոցն Քրիստոսի, և իմ՝ ի միջոցէն Հօր, որ համաներկայանայ յամենայն տարբերութիւնս ժամանակի և զնոսա պարունակէ և «յեօթն հոգւոյն զորութենէ, որ է առաջի աթոռոյն իւրոյ։» Այսինքն և ի հոգւոյն սրբոյ եօթնարփեան շնորհացն։

«Եւ ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարմի վկայէն՝ որ է անդրանիկ մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց, Եւ իշխան թագաւորութեանց երկրի։» Որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի՝ նմա հնազանդին։ զի յանուն Յիսուսի Քրիստոսի ծունր կրկնի յերկնաւորաց և այլն։» «Որ փրկեաց զմեզ և եղոյծ զկապանս մեղաց մերոց արեամբ իւրով։» Մեծ ևս քան զայս սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ։ Այլն Քրիստոս հրացեալ զոլամ այսպէս զամենայն կապանս մեղաց։ «Եւ արար զմեզ թագաւորս և Քահանայս Աստուծոյ մերոյ։ և Հօր իւրոյ։» Այսպէս Պետրոս։ դուք ազգ էք ընտիր

թագաւորուն, քահանայուն. և այլն։ Որ հաստատուն յուսով յուսայ թագաւորել յարքայութեան, արդէն իսկ է թագաւոր։ Բարոյապէս բարի քրիստոնեայն է թագաւոր. և իշխէ հպարտութեան և հպարտաց՝ խոնարհութեամբ. ագահութեան և ագահաց՝ աղքատութեամբ, բաց՝ի խորհրդական քահանայութենէն՝ զոր հաստատեաց Ինքն՝ իւրաքանչիւր առաքինի՝ է քահանայ Աստուծոյ, զի պատարագէ Աստուծոյ զհոգին իւր՝ աղօթիւք, զմարմին իւր՝ պահօք. և զենչս իւր՝ ողորմութեամբ։

"Դմա փառք՝ և այլն։" Ըստ Սիրաքայ՝ բերան շնորհակալու՝ի բարի մարդումն առատանայ. չև ևս սկսեալ՝ խօսիլ զոհացաւ. այսպէս պարտ է միշտ յամենայն խօսս՝ փառաբանել զԱստուած, և զոհանալ զնմանէ։

"Ահաւասիկ զաղոց է ընդ ամպս երկնից և այլն։" Ահաւասիկ, այսինքն փութով. այսպէս և Դանիէլ տեսի ընդ ամպս երկնից գայր, իբրև որդի մարդոյ և այլն։ "Դու տեսցէ զնա ամենայն աչք, և որք խոցեցինն։" Օ՜ սպիս խոցուածոցն պահէ նախ՝ ի փառս պարծանաց. երկրորդ՝ զի վկայեսցէ խոցողացն՝ թէ սա է՝ զոր խոցեցիք. երրորդ՝ ի զարհուրանս նոցա։ "Դու կոծեսցին՝ ի

ի վերայ նորա ամենայն ազգք" Ոչ յուսով ապաշխարութեան, այլ յուսահատութեամբ։ Դանդի ըստ խմատանայն տեսեալ գնա խառվեցին անհնարին երկիւղիւ. զոչացին ի միտս իւրեանց. և առ նեղութեան անձանց իւրեանց յոգւոյ՝ հանցեն և ասացեն, Այս այն այր է. զոր երբեմն մեք ծաղր առնէաք և այն։ Բստ Օ աքարիայ՝ յաւուր յայնմիկ սատակացի կոծ Յերուսաղէմ ոչ ապաշխարութեան, որպէս առ խաչին, այլ յուսահատութեանն։ Այսպէս ըստ Մատթէոս ի, և կոծեցին ի վերայ նորա ամենայն ազգք. զի տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։ "Այո՛, ամէն։" ասոյգ այսպէս է, եղիցի։

"ԵՍ ԵՄ ԱԼՖԱ ԵՒ Օ։"

Ի մեզ՝ այբ և քէ, այսինքն առաջին և վերջին։ Ակիզբն և վախճան։ Աստուած է որպէս ծով՝ յորմէ ամենայն գետք ժամանակաւորք իջանեն, և վերջապէս ի նա դադարին։ Ա՝ սան որոյ ասէ Աւաքեաղն, յորմէ ամենայն՝ որով և ամենայն, և յորում ամենայն. խորհրդապէս որպէս սկիզբն եկեղեցւոյ այսպէս և կատարումն։ Աստուստ յայտ է թէ Յովհաննէս Յունական լեզուաւ գրեաց

գՅայտնութիւնն. վայ ասէ ալքիա, զի յայնք այբին՝ ալքիա ասեն. իսկ Եբրայեցիք՝ ալէփ։ Ընդ՝ Աստուած է բացարձակ սկիզբն և վախճան ամենեցուն. իսկ Տէր՝ եկեղեցոյն. վայ այս ձայնս առ երկաքանչիւրն պատկանի։ Տէր է Ով, զի զոլով սկիզբն բոլորեցաւ և միաւորեցաւ ընդ վերջին ստեղծուածոյն՝ այսինքն մարդոյն։ "Եւ Յովհաննէս եղբայր ձեր և հաւասարակից վշտաց և արքայութեանն ի Տէր Յիսուսի" Ով մեծամեծ իրաց ճառելոցն. զի մի կարծիցեսուք այլոյ բնութեան. ասէ՝ նման ձեզ մարդ եմ՝ վշտակիր և ակնուռնոց արքայութեան ի Տէր։ Այսու ոմանք ասէր Ադաքեան նմանոց մարդիկք եմք։ Ի սոյն ոմանք ասէ Յակոբոս, Եղեալ մարդ էր իբրև զմեզ չարչարելի. համբերութեան և արքայութեան ասէ, զի ըստ Ադաքելոյն, եթէ համբերեմք, ընդ նմին և թագաւորեմք։ Դարձեալ հաւասարակից վըշտաց և արքայութեանն ի Տէր, այսինքն Տէրն, զի որ մասնակցի և հաղորդակցի վշտացն Տէրն՝ վն նորա կրելով, մասնակցի և թագաւորութեանն. զի նեղութիւնք և արքայութիւն եղբարք են։ "Եղէ ես ի կղզի, որ կոչի Պատմոս։" Պատմոս թարգմանի ստացումն. այժմ կոչի Պետինէ. "վասն բանին Աստուծոյ և թէ վը-

կայուն Յիսուսի Քրիստոսին։" Այս է ուշայլ
ինչ պահանջաւ, բայց միայն քարոզելոյ զԱւ-
տարանն Աստուծոյ, և վկայելոյ թէ՝ Որ է
Աստուած. քանզի Յովհաննէս մինչ նախան-
ձայուզութեամբ քարոզէր Յեփեսոս քաղա-
քի, չարախօսեցաւ առ Դոմեքիանոս կայսր,
որ բերեալ ի Հռովմ, եդ զնա ի մի կաթսա-
յողջ յեռաց ձիթոյ, և իբրև ել անտի անվնաս՝
աքսորեաց ի Պատմոս կղզին։ "Եւ եղև յիս
Հոգի յաւուր կիւրակէի։" Այս է Հոգի Ա-
ստուծոյ և մարգարէական շնչեաց և ներգոր-
ծեաց յիս։ Զ Շաբաթն փոխեալ էին ի
Կիւրակէ Առաքելոցն։ Ի հալածանս՝ Աստ-
ուած մխիթարէ զքեզ։ Յօրոյ հալածելոյ ի
սատանայէ՝ երևեցաւ ի մրրկի ամպոյն։ Յա-
կոբայ հալածելոյ յեղբօրէն՝ երևեցաւ յերկ-
նից։ Մովսիսի հալածելոյ ի Փարաւոնէ՝
երևեցաւ ի Սինա։ Այսպէս Յովհաննու
հալածելոյ ի Դոմեքիանոսէ՝ երևեցաւ ի Պատ-
մոս։ Ի տո Յունաց գրի. եղէ ես հոգւով,
այսինքն ի յարիշտակման, ի վերացման և ի
զմայլման. հոգին թմրի ի զբաղմունս և իբր
ննջէ, և մեզ ազդէ Աստուածային հոգին և
հրաւիրէ առ տեսութիւն խմանալեացն իբր
թէ զարթնոյր ի քնոյ։ Այսպէս մարգարէ-

քըն յարթնութեան տեսանէին զտեսիլս ։ զի հոգի նոցա զարթեալը հոգւոյն Աստուծոյ յիմանալիսն ։ Ուստի ասէ Օ՝ աքարիա՝ հրեշտակն զարթոյց զիս զորօրինակ յորժամ զարթնուցու այր ի քնոյ իւրմէ ։ յայտ է թէ յարթնութեան զարթոյց հոգւոյն ։ Օ՝ ի ըստ սիրոյն Գրիգորի Լաբեկացւոյ՝ արթնականն մեր զուարթութիւն՝ իբր ննջումն ինն է հանապեալ Աստուծոյ ։ Ուստի ասէ Դաւիթ ննջեցին զքունս իւրեանց՝ և այլն ։ Այլ ըստ սուրբ զուարթեամբ զաշխարհական կեանս՝ քուն կոչէ ։ զի մարմին եղծանելի ծանրէ զհոգին և նիրհեցուցանէ ։ որպէս և Պրոկղ ասէ ։ 'Ի կիւրակէի եղև հոգւով՝ ի պատիս յարութեանն Քրի ։ Եւ զի ի կիւրակէի սքէն առաւել պարապին ի խորհունս Աստուածայնոց ։ վասն հոգի նոր առաւել տրամադրի ի տեսիլս Աստուածայինս ։

"Եւ լուայ զկնի իմ՝ զձայն մեծ իբրև զփողոյ։"

Օ՝ անաղանապէս մեկնի ։ 'Լսէ զանծանօթս տեսանելոց էր ։ վասն այն ի յետկուսէ ։ Երկրորդ՝ զաստուածայինս դէմ՝ յանդիման ոչ կարէ տեսանել ։ ըստ՝ զյետոյս իմ՝ տեսցես ։ Յետոյքն են՝ ապագայքն ։ զորս նախատեսութեամբ իւրով Քրիստոս ցուցանել կամէր Յով-

Հանու։ Յովհաննէս Հանդոյն Դաւթի թերևս խորհէր զաւուրսն զառաջինս։ յորս ընդ Քրիստոսի էր։ և զամսն յաւխտենից յիշէր։ այսինքն զանցեալն։ Յետս կոչէ անտի՝ մնացեալ զապագայսն։ և այս՝ ուժգին գոչմամբ իբրև փողոյ։ զի բոլորովին շջեսցէ զմիտս նոր առ հանդէս տեսլեանցն։ Ասէ՝ այսպէս որք ի հանդէս խաղուց՝ զուրուանն տեսիլս ցուցանել կամին։ նախ՝ զփողս կամ՝ եղջիւրս հարկանեն։ զի յանձիս արասցեն՝ զտեսութիւն ամբոխին առ հանդէս հանդերձելոցն։ Եւ զի՝ ի զալ թագաւորի՝ փող հարկանի յերգաստութիւն ժողովրդեան։ Քրիստոսի նախկին գալստեանն յառաջագոյս փողն մարգարէութեանց։ որպէս և երկրորդի գալստեանն՝ յառաջանալոց է փողն Գաբրիէլեան։ Իսկ այս գալուստ Քրիստոսի թագաւորին առ Յովհաննու՝ էր օրինակ հանդերձելոյ և երկրորդի գալստեանն։ վասն փող հարկանի։ Օ այս փողս՝ էհար հրեշտակն՝ որ առաջի Քրիստոսի ընթանայր։ Ը ստ ոմանց՝ ձայնս փողոյ։ այլաբանօրէն նշանակէր զպատերազմ՝ հրէից ընդ եկեղեցւոյ մարտնչելոյ։ զի փողն է նշան պատերազմի։ և Քրիստոս ցուցանէր Յովհաննու զպատերազմ՝ ընդ իւր դիմակացուաց

Հ՝ամարտութեան ։ "Օ՛ որ տեսանեաղ գրեա՛ի գիրս ։ և տուր տանել՝ առ եօթն Եկեղեցիս՝ որ Ասիա։"

Ա՛եծ է Նախախնամութիւն Աստի ։ և սէրն ընդ եկեղեցւոյ ։ որ զամենայն ապագայ պատերազմունս ցուցանելով նախ զգուշացուցանէ։ Եօթն եղջիւրք՝ զամենայն եղջիւրս ։ և եօթն եկեղեցիք՝ զամենայն եկեղեցիս խրատէ ։

Օ՛ եկեղեցեացն՝ խօսեացուք ի վայր ։ "Եւ դարձայ ես տեսանել զձայնն։" Ասէ խմանալ մտօք թէ զինչ լցէ ձայնն՝ ուստի գայ ։ և զինչ խօսի։ Ասպէս ելից՝ Ը։16։ քոլոր ժողովուրդն տեսանէր զձայնն ։ այսինքն լսէր և խմանայր ։ Օ՛ ի տեսութիւն հաւատացեալն զորոյ ըմբռնումն այլոց զգայութեանց՝ առ նա վերաձի ։ և զի մտքն՝ որ է խմանալեաց տեսօղ։ զամենայն զգայութեանց առարկայն իբր թէ տեսանէ ։ Եւ զի՝ ձայնն էր խմանալի ։ վասնորոյ ասէ դարձայ տեսանել զձայնն ։ այսինքն՝ մտօք խմանալ ։ Աստուստ մարդարէութիւնքն տեսիլք անուանին։ այսինքն մտաց ։ "Եւ ի դառնալ իմ՝ տեսի եօթն Ճրագարան ոսկի ։" Եօթն Ճրագարանքս՝ այսինքն աշտանակքս ։ էին նման ոսկեղէն աշտանակացն Մովսէսի և Սողոմոնի տաճարին ։ Աշտանակաւ խմանի

կամ նշանակի եկեղեցին. որ է լուսաւոր ի մէջ աշխարհի. իսկ ոսկեաւ նշանակի նորին հաստատուն. և եօթամբք ընդհանրութիւնն. իւրն է ինքն Հոգւոյն սրբոյ. իսկ լոյսն Աւետարանն Քրիստոսի. կանաւ հալածանաց համբերութեամբ սրբոց և ճարտարութեամբ Հոգւոյն կազմեալ, ալեայծառացեալ, բարձրացեալ, յայտնի և երևելի աշխարհի եղեալ. "Եւ ի մէջ ճրագարանացն նման որդւոյ մարդոյ," Է Քրիստոս. զորմէ ասէ Աստուածաբանն, ի նմանութիւն մարդկան եղեալ և կերպարանաք զտեալ իբրև մարդ. Օ որմէ և Դանիէլ. զայր ընդ ամպս երկնից իբրև որդի մարդոյ. "Օ զեցեալ զպճնեալս, այսինքն զպատմուճան քահանայութեան;" Այսպէս Յեսու քահանայն մեծ զգեցեալ էր զպճնեալս, պաշտօն քահանայի. ուստի էր ի մէջ աշտանակացն ոսկւոյ զգեցեալ զպճնեալս. Եւ այս առ իւղել, յարդարել և ի պայծառութեան պահել զաշտանակն. որպէս ցուցանի թէ Քրիստոս է մաքրող, լուսաւորող և կատարելագործող ընդհանուր եկեղեցեաց, զի այս է պաշտօն քահանայի. և թէ անաչառասէս միօրինակ խնամ ունի ամենայն եկեղեցեաց. զի զայս ցուցանէ շրջելն

անզանազանապէս ի մէջ Ճրագարանացն , որ-
պէս զի մի պարծեսցի եկեղեցի զեկեղեցեաւ ,
որպէս առնեն այժմ։ Աստուստ ուսցուք մեք
կարդաւորքս , թէ որպէս պարտիմք եկեղեցւոյն
պաշտօն տանիլ . զի Քրիստոս գլուխ եկեղեցւոյ
պաշտօն տանէր ։ Պարծեալ՝ "Այր 'ի մէջ
Ճրագարանացն ։" զի է Քրիստոս 'ի մէջ եկեղեցւոյ
անբաժանելի 'ի նմանէ . Իսկ ընդ ձեզ եմ մինչև
'ի կատարած աշխարհի ։ Երկրորդ՝ զպաշտօն
զօրագլխի . վասն որոյ ունի սուր երկայրի 'ի
բերան իւր . զի Նովաւ հարցէ զթշնամիս եկե-
ղեցւոյ . ուստի միանգամայն նախանձամիջ և
պատերազմող է ։ "Եւ զօտեւորեալ առ ստեամբ
զօտի ոսկեղէն ։" Ոսկի զօտեաւ՝ ցուցանի նախ՝
իւ բաբանչիւր պաշտօնքն Քրիստի . թէ առ եկե-
ղեցիս ։ ըստ այնմ՝ եղիցին զօտիք ձեր պնդեալք
ընդ մէջս . և թէ առ թշնամիս եկեղեցւոյ ։ զի
ցուցանէ զարիւնի և զքաջութիւն ։ Աստուստ՝
Աստրիք ասին քաջազօտիք ։ Աստուստ՝ Երպա-
կասքաք 'ի ժամ՝ պատարագին ածեն ընդ մէջ
զօտիս ոսկեղէնս ։ Իսկ զի էր առ ստեամբ ։
այսու ցուցանէ զփակումն զթոյն առ թշնամիս
եկեղեցւոյ . և միանգամայն խրատէ զեկեղեցին
ծայրագոյն ողջախոհութեամբ զգուշանալ
և արգելու զերորդական մեղս ։ որք 'ի սրտի

յղանէին. ի վերայ որոյ են ասին՝ զոր
պնդէ և սեղմէ. «Բլրիատոս էր Քահանայ
Ճշմարիտ, վասն որոյ սկիզբն զօտեաւ երևեցաւ.
«Դու գլուխ նորա և հերս որպէս զասր սպիտակ
և որպէս զձիւն.» Որպէս զգլուխ խորին
ծերոյս. որով ցուցանի յաւիտենականութիւն
և խոստութիւն Աստուծոյ. զի ընդ Հինաւուրցն
Հօր՝ համաբնակիչ է. Ի զոլեստ հարսին՝
փեսային հերքն սեաւ էր որպէս զաղռաւ. և
այժմ յերկինս է երիտասարդ՝ և սեաւ հերքն
Բաց ի սուեալ սրատճառէն ի վեր՝ կարէ տրել
և այլ. Զոյանէ թէ զօրագլուխն մարտի. և
քահանայապետն պարտին զորժել. զի զպատե-
բազմն հոգևոր և մարմնաւոր իմաստութեամբ
մղեցեն. Ա՝ ի մատաղստուներն. զի մի հպարտ-
տացեալ՝ ի զատաստանս սատանայի անկցին.
Բարոյապէս՝ չարչարանքն և հոգաբարձութի
եկեղեցւոյ՝ զերիտասարդն Աստ ծեր երևեցուցին.
զի ծանիցուք թէ որքան ծանր է բեռն հով-
ուութեան, և մանաւանդ՝ Կաթուղիկոսութեան, եթէ
ըստ օրինի հովուեցին. Ի ծերան եռացումն
արեան դադարի և ուժգնութիւն տկարանայ.
վշոյ և հերքն սպիտակին. ուստի արիւնն այլ
ևս ոչ կարէ վազուել, խռովել և պղտորել
զբանականութիւն. ոչ սանէ յերիտասարդն.

Քրիստոս մինչ շրջէր ի տաճարին ի սրահին Սողոմոնի՝ հերքին էին սեաւ. իսկ ասա՝ ի մէջ Ճրագարանացն ոսկւոյ՝ սպիտակ։ Օր սինակոգայն՝ Ճանաչէր զնա ոչ մարդ. իսկ եկեղեցին՝ Ճանաչէ ոչ զԱստուած, զի զերազանցէ իմաստութիւն գեր քան զնա։ "Եւ աչք նորա ոչ զբոց հրոյ։ Աչք նշանակէ միտքն. միտքն Քրիստի իբրև զբոց թափանցէ ի գաղտնիս հոգւոց, ըստ այնմ՝ Աղաղաքիա։ Նա մոցէ, իբրև զբոց հալեսցէ։ և իբրև զօձառ լուանալեսց։ Ի բարկութիւն աչքն մարդոյ բոցանայ, ոչ ասէ Աբրահամոսէ, թէ Ջերմութիւնն ի բարկութիւն յաչքն անցանի ցոյանալով։ Եւ այս լինի սաստիկ շարժմամբ երևակայութեան։ Օգաբիլասէ ասէ Հոմերոս, թէ ի բարկութիւն՝ աչք նորա ոչ զբոց շողշողային։ Աստուած՝ Քրիստոս սեսանի բարկացեալ ընդդէմ թշնամեաց եկեղեցւոյ. և Դոմեսիանոսի հալածչին սքջն Յովհաննու։ Ապա թէ ոչ աչք նորա է ոչ աղաղնեւոյ հեզահայեաց, և քաղցրատես։ Ի հրոցայտ աչացն Քրիստի ոչ լինչ զորձ թաղչիլ կարէ, զի յորմէ հոտ և լոյս ցոլանայ, ամենայն խաւար մերժի ի նմանէ։ Ուստի ասէ Երեմիա. աչք քո բաց են յամ՝ Ճանաչելս որդւոց մարդկան, տալ իւրաքանչիւր ըստ պտղոյ գնացից նոցա։

1009
39358
1626

և Միւրաք՝ Աչք Տեառն լուսաւորէ զքան զարե-
զակն և այլն։ "Եւ ասաց Նոյա Նեման պղնձի
ծխելոյ ի մէջ հնոցի հրաշէկ։" Բառնկարագրին
զփառաւորեալ մարմնին Քրիստոսի ստորագրէ։
զի սոյ յայլակերպուն հանդերձքն պայծառա-
ցան։ այսպէս ի փառաւորուն ամենայն անգամքն։
և հետևեալս ասէն պայծառացեալ էին՝ սոյ պղնձա
հրացեալ պայծառանայ ի բովս։ Ըստ այլ
թարգմանութեանն զրի։ Նեման ասէի պղնձոյ։ որ է
արոյրն։ այսինքն՝ դեղնապղնձն։ որ զայն
նշանակէ և ի մեզ՝ պղնձն ծխեալ։ Պաս-
ճառն ի վերն գրեցաք։ զի ի նեղքուստ փառքն
արտացոլեալ զմարմնոյն՝ զանգամն ասկէ-
ճառանչ փայլեցուցանէր։ Այսպէս երևեցաւ և
Աստուած Եղեկիէլի երբև զտեսակ քէրուբի։ և երբու տեսիլ հրոյ ի ներքս նորա շուրջանակի ի միջի ի վերս և ի վայրս։ երբև զտեսակ հրոյ փայլատակեալ շուրջանակի։ Սոցա բարոյական պատճառն է բարկութիւն։ զի սոյ Աստուած բարկացեալ գոլով Հրէից ազգին՝ երևեցաւ Եղեկիէլի բոլորովին հրացեալ՝ այսպէս և Քրիստոս բարկացեալ գոլով կռապաշտից՝ երևեցաւ առաջ բոլորովին հրացեալ։ որոյ գոյնն դիմէ ի գոյն ասկէպղնձոյ։ և քէրուբիսն։ Այլաբանութիւն ասէն Քրիստոսի են հաւատացեալքն։

ի նեղուէս և ի չարչարանս փորձեալք և պայ-
ծառացեալք։ Երկրորդ՝ որքն Քրիստոս էին հրա-
շեկ, այսինքն հրաշոյն գինեաւ տոգորեալ.
զի նոր էր հնձան հարեալ և կոխեալ զբազ-
մուն դիւաց խաչելուքն. և խոցմամբ ոտիցն.
և զթշնամիս իւր զՀրէայս Պետրիանոսիս և
Տիտոսիս, որոց նորոգ յաջորդեալ էր Դոմի-
տիանոս. և կամէր ասել Յովհաննու, հան-
գերձեալ եմ այսպէս կոխել և զայլ թշնամիս,
և գնել պատուանդան ոտից իմոց։ Պատմի
նշանակի մարդկուն, ոգի և գլխով աստուա-
ծուն։ Գլուխ Քրիստոս է ասէ։ Մարդկուքն
ի չարչարանս խաչին իբր ի մէջ հնոցի հրաշեկ
պայծառացաւ։ Դարձեալ ոտիքն նշանակին
վերջին հաստատացեալքն՝ որք ի հուր փորձուէ
նեռին՝ պայծառանալոց են։ "Եւ ձայն նորա
իբրև զձայն ջուրց բազմաց։" Մովսէս զօրքն
յահարկուն թշնամեացն զոչել իբրև զգետ,
այսպէս Քրիստոս ի խաչին ընդդէմ դիւազունդ
զօրացն զոչեաց մեծաձայն։ Այսպէս և ընդդէմ
թշնամեաց եկեղեցւոյ սպառազինեալ զորով՝
զոչեաց իբրև զջուրս բազումս, որք զահավէժ
գնան։ 'Ի գերեզմանն Դաղարու՝ աղաղակեաց
ի ձայն մեծ և սարսեցոյց զկարապետս զժոխոց։
Ահիւծ զոչեցէ։ ո՞վ լցէ որ ոչ սարսեցի։

Այսու ձայնիւ ահաբեկելոց է գնեան և գնեա-
նապիսի զօրան։ Զայնն Դի է Սբ Աւե-
տարանն, և այս է իբրև զձայն ջուրց բազմաց,
զի ի սա միաբանին ամ՝ օրէնք և մարգարէք։
Դի ձայնն ոչ զջուր շինջուցանէ զրոց մեղաց.
ոչ ասէ Հնորհալին, Դի զջուր վարդապետաւն
բղխեաց առ ի շինջուցանել զհուրն մեղաց՝ որ
վառեցաւ յԳեհենայ։ Այլաբանօրէն՝ ջուրք
բազումք գոչէին ընդդէմ եկեղեցւոյ. այսինքն՝
ժողովք հեթանոսաց. մի միայն ձայնն գ լեռնոյն
եկեղեցւոյ՝ բաւական է լռեցուցանել զձայնս
նոցա. զի ձայն սր է ահարկու իբրև զձայն
ջուրց բազմաց։ այսինքն զարհուրելի բանակաց։
Դարձեալ՝ ժողովուրդք մինչ միաբերան
հնչեն Դի է Աստուած ընդդէմ անհաւատից.
այնու իսկ ձայնն Դի լինի իբրև զձայն
ջուրց բազմաց։ Աքանչելի եղեն՝ ոչ ասէ
Դաւիթ, զբօսանք ծովու. այսինքն վէճք
աշխարհի ի մէջ հաւատացելոց և անհաւա-
տից։ Երեկիել՝ զձայն բանակին նմանեցու-
ցանէ ջուրց բազմաց։ յասելն. ձայն բանա-
կին իբրև զձայն կրկնելոյ բազմաց։ (յայլ
թարգմ.) ջուրց բազմաց։ Զի եթէ եկեղեցին
ի տիպ Սոմնայուոյն իբրև զբանակ համարի,
ըստայնմ զնոսա տեսանիցէք ի Սոմնայիդ՝

որ եկեալ է իբրև զպարս բանակաց։ Քա-
ծն Քն։ վասն այլ ստուգութիւն զձայնն ասէ։
Ջուրց բազմաց։ այսինքն բանակաց։ Այսպէս
Դաւիթ ի տեղի տասն հազարաց համարեցեալ
եղև։ "Դու ունէր յաղ իւր ասասելոց եօթն
Սաղարդական և բուն նշանակութիւն ասող
գրէ։ "Եօթն ասասելոցն, եօթն եկեղեցեաց
հրեշտակքն են։ զեզսունս՝ նմանեցուցան
ասասելոց։ զի են լոյսք աշխարհի։ և ոչ ա-
Աւետարանն այսինքն խմաստութիւն։ Երկրորդ
կոչէ զնա հրեշտակս։ զի են վերակացու
և պահապանք եկեղեցեաց։ և իբր պաշտօնս
կոչ հրեշտակաց։ Օ է որպէս հրեշտակքն։
պահապանք աշխարհի։ այսպէս և եղեալք՝ եկե-
ղեցեաց։ եկեղեցին վանք ի գովեստ փեսայի
ասէ։ ձեռք նոր ձախարակեցին լցեալ ակամ
թաղստոյ։ Այս ակունքս նախ են ընդհանուր
եղեալք։ ընդ ձեռամբ նախանամուն Քնի։
Երկրորդ՝ ընդ հանուր հրեշտակք։ Երդ՝ հա-
մայն հոգիք արդարոց։ հոգիք արդարոց ի ձե-
ռին Աստուծոյ են։ Չորդ՝ համայն ասասելոք։
և ի նա յատկապէս եօթն մոլորակքն։ որովք
կառավարէ զենթալուսնեայս։ Յաղ իւր
այսինքն ի պատուի։ զի ոչ զգոհար ակունս
յաղ ձեռս կրեմք։ այսպէս և Քն զնոսս

յաղ իւր կրէ։ Այսպէ և գնշանաւ որս։ զՅո-
վակիմայ ասէ Երեմիա։ եղկսի Յեքօնիա
մասանի յաղ իմ։ Եւ Սիրաք։ Օ օրաբարէ
իբրև գնշան յաղ իմ։ և Անդէ՝ զՅովսեդեկեան
Յեսուայ։ եդկս գքեզ իբրև գինիք։ Էն
յաղ Քեզ։ զի են զարձակիցք նը։ եթէ եռաք
և թէ թագաւորք։ Զոմն նախախնամուն
խնանի։ Դարձեալ ոչ ասասեցաք կառավարէ
զաշխարհ։ նայնպէս և եռաքս զեկեղեցին
լուսով խնասուն և ջերմուն սկսոյ։ "Եւ
ի բերանոյ նը սուր երկայրի սրեալ ելանէր։"
Զզու և զարձունեայ բան է ոչ սուսեր սուր։
ոչիւ բանն Աստուծոյ։ լաստ այնմ։ առէք զսուս-
սեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ։ Այսպէ
Դասայի ասէ։ եդ զբերան իմ՝ իբրև զսուսեր սուր։
Եղկսի բերանն ոչ սուր երկայրի հատա-
նէր։ Աղղմանն ասէր՝ մանուկ սուր զտայց ի
դատաստանի։ սուր դատաւ մինչ սրով վաղա-
կաւորաւ՝ եցոյց զարեանն մերձաւոր։ Այս-
պէս Քե ի դատաստանի հանդոյն Աղղմանի՝
երկայրի սրով բերանոյ իւրոյ՝ իսկոյն զմահն
հատանէ։ արդարոց յասելն՝ եկայք օրհնեալք։
և զկեանս ամբարշտաց՝ ասելով։ երթայք
յինէն։ Այսպիսի սուր տարոց է և ի ձեռս
հետևողաց իւրոց։ Սուր երկայրի ետ ի ձեռս

նոցա առնուլ հատուցումն հեթանոսաց. և այս են փառք ամ սրց նր։ * (Պ գլուխ.)

առասպելեն թէ՝ ‖ քէլ Աչլեն՝ սրբան կամէր զելքիզաղն իւր։ այսինքն "զթութն" երկայնէր և տարածէր. սուտն նոցա ասա ի սուրն Դեի ճշմարտի. զի մինչ ասէ՝ ելանէր։ ցուցանէ զմիտ ելումն։ զի միտ էր ի յերման և միտ է ի հարման. և երկայնանայ և հասանի մինչ ցկատարած աշխարհի առ նեռնայինն, և միտ հարկանէ աստի և անտի զամբարիշտս։ "Դ։ երես նորա իբրև զարեգակն ճառագայթեալ երևիւր։ Արեգակնափայլ ցուցանէ զամենապայծառ խմաստուն Դեի։ ըստ այնմ՝ խմաստուն մարդոյ լուսաւոր առնէ զերեսս իւր. քանզի ամ ինչ միրկապարանոցն առաջն նր. և գիտէ թէ զոր հարկանելոց է սրոմն։ Օ որ օրինակ թէ երկայրի սուրն ի ցեղ յարեգակն՝ պարզեալ տեսանէ թէ ո՞րն է արժանի խոցելոյ։ թէ ի ցեղ ի նմա հոգի։ Աստուստ՝ բարեպէս ասի թէ Աստուած ընդ իշխանութեամբ և զնմաստուն։ զի կարասցէ կատարել զիշխանական սուրն։ Աստուստ՝ Դեի ի վե-

* Ղ.ԶԼՊՊ.Ն ԻՆԼԻՆ Պարսկիս ի սակս նարմիր գագաթաստոր գոտոյն գնելոյ։ Ցպ.

‖ Քէլ, նոնոպ, ինպոկ, պոպ. ոչալ։ Ցպ.

բանալն՝ մինչ ետ Ազաքելոց զնչխանութիւն։
Հրամայեաց նստիլ Ադէմ։ մինչև զգեցցին
զզօրութիւն ի բարձանց։ այսինքն զնմանահոգւոյն։
Դարձեալ խմաստուն զատաւորն մինչ նրբա-
զոյն վճիռս հատանէ ի զատաստանի։ փայլի զէմ
նր ոգի զարեգկն, ըստ այնմ՝ մանուկ սուբ զտայց
ի զատաստանի։ և յաչս հզօրաց փառաւորե-
ցայց։ Բարոյանալ՝ նա կարէ զատել երկայնի
սրով։ որոյ երեսք վարուցն՝ իցէ ամբիծ անա-
բատ իբրև զարեգակն՝ ոգի էր վարքն Դանի։
Դարձեալ Դան է արեգակն արդարութեան։ և
լոյս փառաց։ յայլակերպութիւն փայլեցաւ ոգի
զարեգակն։ ի խաչին խաւարեցաւ։ ի գերեզմանի
ընդ երկրաւ ծածկեցաւ։ և ի յարութիւն վերստին
ծագեցաւ։ և համբարձմամբ բարձրացաւ ի
կոնթարդ երկնից։ Դարձեալ նշանակի փա-
ռաւորեալ դէմն՝ ոգի Դանի։ նոյնպէս և երա-
նելեաց։ Ապէս ի հրեշտակէն իջելոյ յերկ-
նից՝ լուսաւորեցաւ երկիրս ի փառաց նորա։
ըստ այնմ՝ ծագեցին արդարքն իբրև զարեգկն։
սրոյ նշանն ընդ աղօտ ցուցաւ ի դէմն Մովսի-
սիսի։ Արդ՝ Դրիստոսի պարտիզն եղեսքն՝
նմանիլ յաշտանակի եկեղեցւոջ կայուն։ զգե-
ցեալ զպճնաւոր սրբութիւն։ ծերագոյն մտօք։
այլ և հասակաւ։ աչօք՝ տեսու մտաց։ հրա-

չեայ՝ Ներբաստես և Նախանձայոյզ, ոտիւք՝ առ
ի կոխել զաստանայ՝ զվիշապն Հրաշունչ, ձայ-
նիւ քարոզուէ դասալից Նման Ջուրց բազմաց,
այսինքն Նման բարուց ժողովրդոց. ի բե-
բանուոջ ունելով զսուսերն բանին Աստուծոյ.
յաջակրելով զասեղս եօթն, այսինքն զյանձ-
նեցեալ հօան խնամեալով, և երեսաք վարուց
արեգակնափայլ ամբիծ և անարատ հայելի
հաւատացելոց, ոգի և Քրիստոս։ Օ սոյն
կերպարան պարտին զգենուլ և հաւատա-
ցեալքն, այսպէս ասէ սրբոյն Պօղոս Եպան.
Նմանօղ ինձ եղերուք, ոգի և ես Քրիստոսի։
"Իբրև տեսի զնա, անկայ առ ոտս Նորա ոգի
մեռեալ։" Յայնքան սպառազինեալ կերպա-
բանացն արհաւիրս և զարհուրանս կրելով,
խոկոյն անկաւ, և եղև ոգի մեռեալ։ Ի ժամ
կայծակնահարութեան մինչ երկինք սաստիկ
աղաղակ և փայլատակէ՝ բազումք զահի հա-
բեալ անկանին յոտսաց, այսպէս առաքեալքն
ի փայլմանէ այլակերպուէ՝ անկան ի վը
երեսաց Իւրեանց։ Այսպէս պատահեցաւ և
Դանիէլի. եթէ ի ձորն Դեթսեմանի մեղմա-
բար ասելով Էս եմ՝ յետս յետս չոգան, և
հարան զգետնի. եթէ սիրելի աշակերտան առ
ի լինիլ խարհրդազգաց ապադայից՝ տեսեալ

զահարկու դէմն նորա, և լուեալ զձայնն հան-
գոյն ջուրց բազմաց հարաւ զգետնի։ Օրհնէ
արհաւիրս ոչ կրիցեն նեռայինքն և ամբա-
ւիշաք ի դատաստանի։ մինչ տեսցեն՝ զոր խոցե-
ցինն, և մինչ որոտայցէ ահեղ բարբառով
հզօրն, և բարձրեալն տացէ զձայն իւր։ "Դու
եղ ի վեր իմ զալ իւր։" Այսինքն զանազան
նախանշանմուռ։ Այսպէս ի լեառն Թաբոր
յարոյց զառաքեալսն։ Ինքն ասաց. ոչ ոք
տեսանէ զերեսս իմ, և ապրի։ Որքա տեսեալ
ոչ կարէին տալրիլ, եթէ ոչ ինքն յարոյց։
"Դու եմ սկիզբն։ Դու եմ վախճան։" այսինքն
ես եմ առաջ. ես եմ սկիզբն եկեղեցւոյ՝ և կա-
տարուն ակօղ վախճան. ես եմ սկիզբն ունօղ
հալածանաց՝ թոյլ տալով, և ես եմ վախճան՝
գնոսա մեղմացուցանելով և սպառելով. մի
երկնչիր ուրեմն, զի առանց կամաց իմոց՝ տե-
ւև մի ծառոյ ոչ կարէ անկանիլ։ "Դու եմ
կեանք. և ես եմ որ մեռայն։" Այս է, ես
եմ Որ կենաց աղբիւր. որ կամաւ իմով
մեռայ և յարեայ, և ահաւասիկ կենդանի
եմ յաւիտեանս յաւիտենից. և ոչ միայն այ-
ժմ։ Այսու քաջալերէ չերկնչիլ ի մահ-
ուանէ. մի երկնչիր ասէ ի մահուանէ, զի
ես եմ կեանք քո։ Ի որպէս ես մեռայ

և կենդանացայ։ Նոյնպէս և դուք թէպէտ և մեռանիք վասն իմ, կեցջիք։ Այսպէս Պօղոս։ Ինձ՝ ասէ, կեանք Քրիստոս է, և մեռանիլն շահ։ Այսու յուսով և մեք մեռցուք մեղաց, և կենդանացուք արքայութեան ի Քրիստոս։ Երկեղեցին իմ է՝ մարենի անկեզ։ Ի հուր փորձութեան այրիլ ոչ կարէ։ և ոչ ի մահուն կորնչիլ։ Այլ յաւնէ ի կեանս՝ բազում արդեամբ։ և ունիմ փականս մահու և դժոխոց։ Այս է՝ մահ և դժոխք ընդ իշխանութեամբ իմ են։ առանց Հրամանի իմոյ ոչ մահ կարէ մերձենալ ումեք։ և ոչ դժոխքն կլանել։ մի երինչիր ուրեմն ի մահուանէ։ և ոչ յայնցանէ՝ որք սպանանեն զմարմինս։ Այս ունիմ իշխանութիւն կորուսանելոյ ի գեհենի և ոչ այլ ոք։ Եթէ փակեմ զդժոխքն ընդդէմ իմոյնոց՝ ոչ կարէ բանել։ և թէ բանամ ամբարշտաց՝ ոչ կարէ փակիլ։ Բարոյապէս՝ կամիմ զմիտս սատանայի և արբանեկաց նորա պրկել։ զի մի յայտուացեն զփորձութիւն ի ձեզ։ և արձակել զանձս նոցա՝ ի փորձել։ զի առիթ լիցին փառաց ձեզ։ Հոմանձայնի։ ես տաց նմա զբանալին դաւթի։ փակիցէ և ոչ ոք բացէ՝ որ բանայցէ։ և այս իշխանութիւն տուեալ եղև Քրիստոսի

յարութեան։ Զուտ լեռ ամենայն իշխանութիւն, թէ և նախ ունէր. ցայժմ՝ ի ներքոյ փականաց մահուն ունի զամենայն մարմինս մեռելոց, և ընդ փականօք դժոխոց զհոգիս ամբարշտաց. յարժամ կամի՝ բանայ, և մահ և դժոխք տան ի դուրս զմեռեալս իւրեանց։ Ուրեմն ընդունայն պարծին չարք յասելն զարդարոյ. կալցու՛ք զնա կենդանւոյն իբրև զդժոխք, զի առանց Քրիստոսի թոյլատրութեան՝ ո՛չ ինչ կարեն առնել։ Այսու իշխանութեամբ եբաց զդուռն դժոխոց Կարիայ և Գադանայ. և եկուլ զնոսա կենդանւոյն։ Ո՞ասել կամի, ոչ որքան առ իս՝ յաղթեցի մահու և դժոխոց, որքան առ ձեզ ևս՝ յաղթեմ. զձեզ ի ժանեաց նորա կորզեմ, և զհալածիչս մատեամ ի բերան նորա. մի երկնչիր յայնցանէ։ Գամենտիանոս՝ կամեցաւ ապանանել զքեզ, չքաջի զդուռն մահու. վա՜յ յեռանդեան կաթսայէն՝ ամբողջ եղեր. մահ և կեանք ի ձեռին խնամ են։ "Գրեա՛ զոր տեսանեա՝ որ է՝՝ Այսէ զոր ինչ տեսեր յիս՝ ներկայապէս, և որ լեռելոց է յապագայն՝ զոր հանդերձեալ եմ ցուցանել։ Լուսաբերապէս՝ եօթն աստեղքն են եօթն հրեշտակք. այսինքն՝ եպիսկոպոսք եկեղեցւոյ։ և եօթն

աշտանակքն՝ եկեղեցիքն։ Ինանիր։ զի այս եօթնեքին եկեղեցիքս յայնմ ժամանակին Յովհաննու՝ էին յոյժ երևելիք, և պայծառք և անուանիք և Episkoposարանք։ վասն որոյ յանուանէ յիշատակէ։

ԳԼՈՒԽ Բ։

"Առ հրեշտակս Եփեսացւոց Եկեղեցւոյն գրեա։ այսպէս ասէ։ որ ունի զեօթն աստեղս յաջ իւր։ և շրջի՝ մէջ աշտանակացն ոսկւոյ։" Եփեսոս էր մայրաքաղաք Փոքրուն Ասիոյ։ շինեալ յԱմազոնեաց։ որպէս ասէ Յուստինոս։ Թարգմանի ցանկալի։ տաճիերէն՝ ասի "Այասուլուխ։" այժմ է փոքր աւան մի։ բնակին անդ տաճիկք։ Հրեշտակ սորա՝ այսինքն եղջ։ որպէս աւանդեն բաղումք՝ էր Տիմոթէոս անդրանիկ աշակերտն Պօղոսի Առաքելոյն։ Ուրեմն այսպէս ասէ։ որ ունի յաջ իւր զաստեղս եօթն։ յորոց մի՝ ես և դու։ և ես յաջ Նորա։ յորում որպէս ի քարտիսի՝ գրոշմեալ ես։ և տեսանէ զամենայն կեանս և վարս քո։ Սա կոչի աստղ։ զի ի մէջ եօթանց աստեղաց Նմանի փայլածուին՝ ըստ Արգզրու։ զի էր բարի և խոհեմ։ բայց թոյլ ի սէրն։ զի փայլածուն է պայծառ՝

բայց թոյլ տապով։ "Եւ շրջեալ ի մէջ աշ-
տանակացն ասէր։" Հետևապէս և ի մէջ
աշտանակի եկեղեցւոյ քո. շրջեալ, այսինքն
քննել, յուզել և նկատել զամենայն երիկամունս
և սիրտս բանաւոր հօտի քոյ։ "Տեսի զգործ-
ս քոս։ և զվաստակս և զհամբերութիւն։"
Յուսադրէ, զի ծանիցէ թէ վաստակն իւր ոչ
եղև ի զուր. և թէ՝ զոն վարձք վաստակոյ իւ-
րոյ. և չէ Աստուծոյ անտես։ Աստուած երկ-
կու ինչ ուսանիմք։ Նախ՝ ի դատելն ոչ
միայն զյանցանս՝ այլ զարդիւն յիշատակել։
Երկրորդ՝ թէ թուլութիւն սիրոյն և ներե-
լի մեղքն՝ ոչ խակոյն ունայնացուցանէ զար-
դիւնս. այլ յարատևելն ի նմին. վասն
որոյ ասէ, ապա թէ ոչ շարժեցից զաշտա-
նակս քո։ "Եւ զի ոչ կարես բառնալ զչար-
սըն։" Թէ յաստուածայինն սահմանադիր-
թեանէ, թէ ի բնութենէ իրացն, և թէ
ի բնութենէ ստեղծուածոցն՝ միշտ չարք և չա-
բիք լինին յաշխարհի. և որք առ մեզ ան-
կարելի է բառնալ զամենայն չարս ի հասա-
բակի. որպէս և Աստուածաբանին ասէ. Հարկ է
գալ գայթակղութեանց. վասն որոյ յիրաւի
ասէ, ոչ կարես բառնալ զամենայն չարսն։
"Եւ փորձեցիր զնոսա՝ որք ասէին զանձինս

առաքեալս գոլ և ոչ էին. և զտեր զնոսա սուտս։" Ասանօր գովէ զսրբոյն Տիմոթէոսի զնմանութիւն, զարիութիւն և զանտգովութիւն Ճշմարտութեան. զի սուրբն Տիմոթէոս զբազմութի սուտ առաքելոց հերձուածողաց վարդապետաց՝ որք առ ժամանակաւ նորա յանձախէին՝ Ճշմարտութեան բանիւք վիճաբանելով փորձեաց զնոսա՝ և եգիտ սուտս. և հերքեալ զնոսա որպէս զդայլս ի հօտէ զառանց՝ եբարձ ի միջոյ. զի զմանաւոր չարս կարեմք բառնալ։ Դարձեալ՝ ասելով ոչ կարես բառնալ զչարս՝ համոզէ ի համբերութիւն ընդդէմ հալածչաց. և մինչ ասէ՝ բարձեր զնոսա՝ գովէ զարուեստ մարդն ըստ պաշտօնի իւրոյ։ Ասի յայտ է քաջութիւն Տիմոթէոսի։ Առաւել միաստակաւ են Եկեղեցւոյն սուտ վարդապետք՝ քան անհաւատ հալածիչք։ "Եւ համբերեցեր վասն անուան իմոյ և ոչ պակասեցար։" Արժանի էր գովութեան այրն. զի որպէս սա զանուն Քրիստոսի յարգեաց աշխատութեամբ, համբերութեամբ և խոստովանելով. և ոչ պակասեցաւ ուրացութեամբ և անհամբերութեամբ. այսպէս և Քրիստոս՝ որպէս խոստովանեալ էր զանուն նորա առաջի հօր,

նոյնպէս շնորհակալութեամբ մեծաւ խոստո-
վան եղէ և առաջի Յովհաննու ։ " Ա՛յլ
ասեմ առ քեզ · զի զսէրն քո զառաջին թո-
ղեալ ։" Զ առաջին սէրն թողլոյ բազում են
պատճառք ։ Դախ՝ ներելի մեղքն ։ որ իբր
զցօղ մեղմացուցանէ զեռանդն սիրոյ ։ Երկ-
րորդ՝ երկարութիւն ժամանակին ։ որ ի պաշ-
տօնէն թուլացուցանէ · զի նոյն գործ և նոյն
աղօթք նովին եռանդեամբ որպէս էր ի սկզբ-
բանն ։ յայնժամ ոչ լինի ։ Ասսի՝ հանա-
պազորդ մանանայն ։ համեղ թէպէտ՝ սակայն
ձանձրացոյց ։ Երրորդ՝ ծերութիւն ։ զի ի մեղ-
մանալ տապոյ արեանն՝ և սէրն մեղմանայ ։
ստատուստ տեսանեմք զծերս թոյլս և պզերդ ։
Չորրորդ՝ շնորհն գոլով ի հոգին՝ յօտար
կայանի · իսկ անկակից ցանկութիւն ի սրտի
իբր ի բուն կայանի՝ հանապազորդ մարտիցն
դժուարաւ տոկայ ։ թէ ոչ նորանոր շնորհք
յաւելցին ։ Դարձեալ՝ առաջնորդաց սէրն
բաց ի վերոյ եգելոյ թուլանայ և ի յան-
հնազանդութենէ ժողովրդոց ։ և ի հանապա-
զորդ հակառակութենէ ։ և իբր առ հարկի
ակամայ յոգւոց հանելով ի հովութենէ և
ոչ յեռանդէ սիրոյ ։ Բայց Քրիստոս ոչ
ինչ պատճառ զթուլութեան առաջնորդաց

կամ։ զի առաջնորդք են Հայելի ժողովրդեան։ պարտ է նոցա յամենայնի զգաստ լինել։ զի և ժողովուրդն զգաստ կացցէ։ և անդրադարձեալ՝ ժողովուրդն է Հայելի առաջնորդաց։ եթէ բիծ և արատ ինչ կայցէ ի ժողովրդեան՝ առանց կարծեաց իմն զայն զոլ յառաջնորդն նոցա։ Բայց այս իմանալի է զայնց առաջնորդաց՝ որք քացարձակապէս իշխեն ժողովրդեան։ զի նոքա միայն կարեն սանձել զախտս ժողովրդեան։ Իսկ որք ընդ իշխանութեամբ անհատատից առաջնորդեն ժողովրդեան։ ի նոսա ոչ ունի տեղի այս բան։ զի բազմիցս ընդդիմանան առաջնորդին։ և ոչ վարին ըստ կանոնի նոցա։ Տես թէ որքան դժուար լցէ առաջնորդութիւն։ զի է բեռն հրեշտակայնոց ուսոց զարհուրելի։ ուստի յիրաւի՝ ասի թէ արհեստ արհեստից է կառավարութիւն հոգւոց։ Ա՛ռաջնորդն ուրեմն՝ պարտի զամենայն պատճառս դաղջութեան ի բաց դնել։ և որպէս Դաւիթն՝ արթնապէս շրջիլ ի մէջ աշտանակի լուսոյ։ այսինքն եկեղեցւոյ։ առ ի յիշել։ ի յարգարել և ի լուսաւորել զնա։ "Յիշեա՛ ուստի անկար և ապաշաւեա՛։" Զարձրագոյն աստիճան սիրոյդ՝ որով

նախ սիրէիր զիս, և լուսաւորէիր զաշտա-
նակդ, և յորմէ այժմ անկեալ ես զաղջու-
թեամբ. յիշեա՛ և ապաշխարեա՛, և զառա-
ջին գործսդ քո արա՛։ Լ՚էր՝ ասէ, որպէս
զարեգակն՝ որ ի սկզբանէ նովին լուսով և
ջերմութեամբ միշտ լուսաւորէ և ջերմա-
ցուցանէ, և ո՛չ երբէք նուազի։ Պարտ է
առաջնորդին դիմել ի զօրութենէ ի զօրու-
թիւն, և օր ըստ օրէ յառաջանալ ի կա-
տարելութիւն։ Այլ և ասէ, ի քէն միայն պա-
հանջեմ՝ զառաջին գործն. որով հաւատարիմ
երևեցաւ ինձ հօտդ։ Առաջին գործն հովուաց՝
է ջերմեռանդ քարոզութիւն, զոր ի սկզբանէ
առնեն յաճախ. յորմէ զաղջացեալ տեսանի
Տիմոթէոս։ Այս երևի և ի բանէ Առաք-
ելոյն, զոր առ նա գրեաց։ Եւ դու քարոզեա՛
զբանն, հա՛ս ի վերայ ժամու և տարաժամու,
յանդիմանեա՛, սաստեա՛ և մխիթարեա՛ ամենայն
երկայնամտութեամբ և վարդապետութեամբ։
Եւ ասա՛ զիտելի է. զի երբեմն զաղջութիւնք
եկեղեցւոյ վերադրին հովուին։ Եւ կամ-
զիկոսք՝ փոխանակ յանդիմանելոյ զեկեղե-
ցին՝ զհովիւն յանդիմանեն։ Այսպէս արար
Թերևս և Աստուած, զի Տիմոթէոս էր այլ
սուրբ։ Այսպէս Որոգինէս տեսեալ զմա-

նուկ սահակ, զգարդաձուն եհար. այսինքն զվարդապետն։ Ասացին սատէն առաջնորդք ուղղել զինքեանս և զՀօտ իւրեանց. զի թէ ի Տիմոթէոսի և ի Հօտն նորա եգիտ զարատ Արիստոս, ոչ չափ ևս առաւել յինքեանս։ "Ապա թէ ոչ դամ վաղվաղակի և շարժեցից։" Ասասուստ՝ բազմիցս տեսանեմք եպիսկոպոսաց փութով զրկիլ կամ անջատիլ ի հօտէն, կամ մահուամբ՝ կամ իջուցմամբ. քանզի վատ առաջնորդաց և հովուաց պատիժն շուտով տալի է, զի մի զՀօտն բոլորովին ապականիցեն։ Օ ի քնեաց հովիւն՝ զՀօտն տայ գայլոց. արբեալ նաւապետն՝ զնաւն խորասուզէ. և տգէտ զօրավարն՝ զզօրն կորուսանէ։ Շարժել զաշտանակն՝ է նախ զեկեղեցին առնուլ ի ձեռանէն, և տալ այլոց։ Այսպէս Սամուէլ զՍաուղ ասցէ ի քէն Տէր զթագաւորութիւնդ՝ և տացէ լաւագունի քան զքեզ։ Երկրորդ՝ շարժելն ի տեղւոջէ, է զժողովուրդն ապստամբեցուցանել ի հնազանդութենէ։ Եւ այս՝ պատճառի կամ ի թուլութենէ առաջնորդին, զի մարդկային խոհեմութեամբ զանց առնէ յանդիմանել, զի մի պատիւն իւր պակասիցի, (և սակայն

ի վախճանի դատին զնոսա ապստամբեալ։) կամ յապահովութենէ և ի զօշաքաղութենէ և այլն։ Երկրորդ՝ շարժիլ աշտանակին է ցան և ցիր լինիլ հօտին։ զի ուր բարի հովիւ լցէ։ անդր ժողովի հօտն։ Ասի աշտանակն Եփեսոսի՝ ի Թուլամտութ յաղօրդաց սրբոյն Տիմոթէոսի՝ շարժեալ այնպէս ցիր և ցան եղեալ է։ մինչ զի՝ հովիւ դատանի քանի մի հատատոցեալ անդ։ Զորրորդ շարժիլ աշտանակին է։ զաթոռն խանգարելն։ այժմ ոչ աթոռ զոյ ամենևին անդ։ և ոչ առաջնորդ։ "Արդ՝ զայս արա։ զի ատեցես ըզ գործսն Նիկոլայոսի։" Ի սա այլ թարգմանուէ։ զայս ունիս՝ զի ատեցեր։ Նիկոլայոս էր մի յեօթանց սարկաւագացն։ Սա՝ ի գեղեցիկ կնոջէ հրաժարեալ։ յետոյ յաղթեալ ի ցանկութենէ՝ դարձաւ ի նոյն։ ասեն։ և առ ի անբասիր լինելոյ՝ քարոզեաց անխիղճ զգուշութիւն ոչ զոլ մեղք։ Ասուստ պրնկութիւն՝ ասի հերձուած Նիկոլայոսի։ Օ այս վարդապետութիւն ստուրբն Տիմոթէոս հերքեաց և ատեաց։ վասն որոյ գովի ատ և հրամայի ի Քրիստոսէ ուժգին ասել։ "Օ որ և ես ատեմ։" Քրիստոս սիրէ ըստ կարգի զամուսնու-

թիւն հաւատացելոց։ իսկ զպտուղնիկսն ի սրտէ ասէ։ զի է ընդդէմ կարգաղրութեանն Աստուծոյ։ Բրիստոս կատարեալ սրբութիւն քարոզեաց։ զխորհրդական մեզ ևս արգելլով։ Որ հայի ի կին մարդ՝ առ ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում։ Այս բանք՝ ի կատարեալ ատելութենէ յառաջ գան։ Յիրաւի ասէ՝ զոր ես ասեմ։ Ատելից զայնոսիկ ոչ գործեն զանօրէնութիւն։ "Որ ուշի սկանջս լսելոյ՝ և այլն։" Այս է ներքին ընդունակութիւն մտաց։ Լուիցէ զինչ հոգին ասէ։ Օ՛ի ոչ դուք էք որ խօսիցիք։ այլ՝ հոգին հօր։ Հոգի աստուածեղէն է։ որ ուսուցանէ առ եկեղեցիս։ Որ ձեզ ասեմ։ ամենեցուն ասեմ։ Ընդրաբերաբար եկեղեցի անուանի և եպիսկոպոսն։ "որ յաղթէ աշխարհի։ սատանայի։ և յատկապէս մարմնականի ցանկութեան։ "Ցաց նմա ուտել ի փայտէն կենաց։ որ է ի մէջ դրախտին Աստուծոյ։" Ակարագրապէս արժանի արարից Ադամայ դրախտին։ և ուտելոյ զպտուղ ծառոյն կենաց։ Խորհրդապէս արժանի արարից արժանապէս ուտելոյ զխորհրդաւոր պտուղ ծառոյս կենաց։ զՄարմին և

զԱրիան՝ որ բաշխի յեկեղեցւոջ։ Ա՝ երաշ-
պէս՝ ի փայտէն կենաց՝ որ առ եղերք դեռոյ
երկնային քաղաքին, որ է յատկապէս դը-
րախտն Աստուծոյ։ Աւյրաբանօրէն՝ է երա-
նելական տեսութիւնն. որ է ճաշակ կենաց
և կեանք յաւիտենից։ "Եւ առ Հրեշտա-
կըս Օմիառնացւոց եկեղեցւոյն գրեա։" Օմի-
ռին է Լոզիր։ Եւ Հրեշտակ նորա էր երա-
նելին Պօղիկարպոս՝ որ հրով կատարեցաւ
ի Հռիստոս։ "Այսպէս ասէ անակիզն և
անվախճանն, որ եղև մեռեալ և կենդանա-
ցաւ։" Հռիստոս զինքինէ հրամայէ ասել
այսպէս, ուրեմն է ճշմարիտ Աստուած՝ որ
մեռաւ մարմնով և կենդանացաւ. լուծեալ
զերկունս մահու։ "Յեսի զգործս քո և զնե-
զութիւն, և այլն։" Օ՝ աղքատութիւն, այլ
աղքատութիւն քո մեծութիւն եղեցի։ Այս
է յատկագոյն. երանի աղքատաց հոգւով
զի նոցա է արքայութիւնն։ Ը՝ ստ այլ
թարգմանութեանց, այլ փարիսեաց։ Օ՝ ի աղ-
քատքն Հռիստոսի են մեծատունք հաւա-
տով. և ժառանգք արքայութեան։ "Եւ
հայհոյիս յայնցանէ՝ որք ասեն զինքեանս
հրէայս գոլ և ոչ են, այլ են ժողովք սա-
տանայի։" Որպէս այժմ, նոյնպէս և յայն-

ժամ՝ Հայհոյելին զքրիստոնէութեան բարւոք անուն, որ կոչեցեալ էր ի վերայ քրիստոնէից, զինքեանս ասելին հրէայս զոլ, այսինքն աստուածապաշտս, և բազումք անկեալ երթային զհետ նոցա մոլորութեանց։ Եւ որպէս զիտէին թէ ի հրէութենէ և յաստուածպաշտութենէ անկեալ էին հաւատացեալք զՔրիստոս։ Աստանօր զնոցանէ վճռէ և յայտնէ եկեղեցւոյ, ոչ այլ ինչ զոլ, եթէ ոչ ժողովք սատանայի. այսինքն ժողովուրդք սատանայի, կամ սատանայք։ "Մի երկնչիր վասն որոյ կամի չարչարել։" Վասն որոյ մարանչիս և չարչարիս՝ է կեանք յաւիտենական. մի երկնչիր ի կորուսանելոյ զկեանս աշխարհի, զի ես հաւատարիմ եմ ի խոստմունս իմ, փոխարինել ընդ այնր ըզկեանսն յաւիտենականս։ "Ահա հանգերձել է բանտարկուն արկանել ի ձէնջ ի բանտ։" Չարութիւն անդամոց գլխոյն վերադրէ, զի սատանայ է գլուխ չարայ, որք չարչարեն զսուրբն. յառաջագոյն ասէ զհանդերձեալն, զի սատրաստեսցին զանձինս փորձութեան. քան զի նախատեսեալ չարն զիւրաւ յաղթի, զի զսանէ զդատ առ որ գիմէ։ "Եւ ունիցիք նեղութիւն աւուրս տասն։" Սակ

նշանակի սովաւ հարածանքն՝ զորս յարու-
ցին Հռովմէական կուսակցաց կոյսերքն ի-
Կերոնէ կամ Իսկիզեսիանոս։ Երկրորդ՝ զամե-
նայն նեղութիւնս մինչև ցկատարած։ որ առ
ՏԻՐՈՋ զտանեաւուրս՝ սակաւ ինչ է։ վասն-
այսորիկ՝ յաւէ։ "Եկր հաւատարիմ՝ մինչև ի
մահ տաց քեզ զպսակն կենաց։" Համբե-
ռութիւն կիսակատար՝ ոչ ինչ է։ վասնորոյ
խրատէ։ որ համբերեսցէ խաղաղ՝ նա կեցցէ։
Աստուած ի զաղթ սանդխոցն հաստատեալ
կայր։ և ոչ ի մէջն։ ցոյ ցանելով թէ՝ պարտ է
ընդ ամենայն ատիճան համբերութեան անց-
ցանել։ և ապա հասանիլ առ Աստուած
պսակողն։ Զոր՝ ատիճանք համբերութեան
մինչև ցմահ համահաշուին։ քանզի զինուորու-
թիւն է կեանք մարդոյ ի վերայ երկրի։
Մին ի քառասուն մանկանց։ զամենայն նեղութի
կրեալ՝ բայց մերձ ի մահ անհամբեր լեալ։
կորոյս զպսակն։ բեր ուրեմն հաւատարիմ՝
մինչև ցմահ։ Նեղութիւն՝ որպէս 'առակի
փորձէ զընտրեալսն։ թէ չէր չարութիւն
Կայենի։ մարտիրոսութիւն Աբելի ոչ լի-
նէր։ "Որ ունի ականջս։ լուս ի վերն։ Որ
յաղթէ՝ ոչ անիրաւի յերկրորդ մահուանէն։"
Առաջին մահն է բնականն՝ երկրորդն՝ գեր-

բնական, այսինքն դժոխային տանջանքն։ Ըստ սաղ ի 21 գլուխն. ըստ այլ թարգմանութեան, ոչ մեռանի յերկրորդ մահն, զառաքն կեանքն, որպիսի է դժոխային։ Բանզի մահն չար է, երկերանք յայնմանէ, որ զՀոգի և զմարմին կորուսանէ ի գեհենին։ Այս է դառն տանջանք կենաց։ Առաջին մահն է, մինչ որոշի Հոգի ի մարմնոյն։ Երկրորդն է, մինչ որոշի Հոգին Աստուծոյ. թէ մեղաք՝ թէ պատժաք։ "Եւ առ հրեշտակս Պերգամոյ եկեղեցւոյն՝ գրեա այսպէս, ասէ՝ որ ունի զսուրն երկայրի սրեալ։" Պերգամոս է պայծառ քաղաք Ասիոյ մերձ Ստամբօլ, կոչի Տրովադա, այժմ է Էսկի Ստամբօլ։ Այս աշտանակ ևս շարժեալ տեսանի ի տեղւոջէն։ զի է անբնակ։ Ըստ սաղ "որ ունի զսուրն երկայրի սրեալ։" Այսպէս Դաւիթ՝ զսուր իւր սրեալ է. աշտէն երկայրի է Հատու վճիռն Քրիստոսի զոր առ որ ձգէ՝ խկոյն Հատանէ. տես ի վեր։ "Տեսի զգործս քո, զի բնակեալ ես ուր աթոռն սատանայի է։" Ուր թագաւորէ սատանայ՝ անդ ցուցանէ զգործս առաքինութեան. թէ և ընդ աղօտ՝ է մեծի զովութեան արժանի. կամի ասել՝ մի տրտմիր. զի ոչ

գործես զամենայն տեսակս առաքինութեան ։ զի բնակեալ ես՝ ուր աթոռն է սատանայի ։ Ասասաս յայտ է թէ քրիստոնեայք՝ որք բնակին ուր է աթոռն սատանայ ։ ոչ պարտին տրամիլ ։ զի ոչ վարին ամենայն համարձակութեամբ և վայելչութեամբ քրիստոնէական ։ որպէս յերկրին քրիստոնէից ։ զի բաւական է նոցա պահել զհաւատն որ ի Քրիստոս ։ և խորշիլ յանարժան գործոց ։ Ասոր երևի թէ սատանայ առաւել իշխէր ի Պերգամոս՝ քան յայլ տեղիս ։ վասն ուներոյ զքաղաքս՝ արքաներակս ի նմա՝ զի ի բազում զօրս՝ փառք թագաւորի ։ Եւ սատանայ է իշխան աշխարհի ։ այս է՝ մեղաւորաց ։ Ի Պերգամոս յաճախիւր պատկութիւն ի մէջ կռապաշտից ։ որ է աղանդ Նիկոլայոսութեան ։ " Եւ ունիս զանուն իմ և ոչ ուրացար զհաւատս իմ ։ յաւուրս յորսում Անթիպաս վկայն իմ՝ հաւատարիմ՝ եղև ։ զի մեռեալ է իմ՝ հաւատարիմ։ Ամենայն հաւատացեալ որ սպանաւ ի ձէնջ ուր սատանայ է բնակեալ ։ Ի Պերգամոս սատանայ՝ աթոռ իւր գոյել ։ յարոյց զմեծ հալածանս ։ որպէս յայտ է ի մարտիրոսութեան Անթիպասայ ։ Եպիսկոպոս հաւատուն զտաւ՝ վասնորոյ զո-

վն։ Ամենայն հաւատարիմ հաւատացեալք են վկայ Բլրատասի և զօրութեամբ մարտիրոսք են, և մինչ հարկն պահանջէ՝ նեղութեամբ մարտիրոսացին, վառեալք և հաղորդ են մարտիրոսացն փառաց, և հաղորդակից են։ Այլ ունիմ ասել ընդդէմ քեզ սակաւ, զի ունիս զվարդապետութիւն Բաղաամայ, որ ուսոյց զԲաղակ դնել զգայթակղութիւն որդւոցն Իսրայէլի՝ ուտել զզոհեալ և պոռնկիլ։" Բաղաամ ուսոյց Բաղակ թագաւորին զաղջկունս Մովաբու յըղել՝ ի քանակս Եբրայեցւոց, զի պոռնկիցին, և հեռեալքս դառնայցեն ի կուռս։ Յորմէ հեռեցաւ մեծ հարուած որդւոցն Իսրայէլի։ "Այսպէս ասէ, և դու ունիս զվարդապետութիւն Նիկոլայեցեանց՝ զոր ես ատեմ։" Ի զօրութենէ բանին յայտ է, զի կամ թոյլ տայր հեռելոյ, և կամ վարդապետէր, կամ՝ ոչ ընդդիմանայր։ Ընդդիցեն՝ վարդապետութիւն այն էր մեծ մեղք, վասն էր ասէ՝ ունիմ՝ ընդդէմ քեզ սակաւ, իբրև թէ փոքր համարելով։ Ասելի է թէ՝ թերևս ոչ բոլորովին թոյլ տայր, այլ յակամայ կամս, վասն ոմանց չանացողաց պարկեշտութեան, որպէս Մովսէս, որ վասն խստասրտու-

թեան Հրէից՝ թոյլ ետ արձակել զկանայս։ Դարձեալ ունէր վարդապետութիւն ։ այսինքն՝ ոչ ի քեզ՝ այլ յեկեղեցւոյ քում։ յոմանս թուլամտութիւն ։ և այն քեզ համարի ։ զի ես զէտ նոցա ։ Եպիսկոպոսս այս ոչ է յայտ ։ թէ ո՞ իցէ ։ "Արդ ապաշաւեսա ։" մեծ նեղութեամբ զդարձն խնդրէ ։ "ապա թէ ոչ՝ զամ վաղվաղակի ։" առ ի զատժել կամ մահուամբ ։ կամ դատապարտութեամբ ։ "Եւ պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ ։" Ընդ նոսա ասելով՝ ցուցանէ թէ Նիկոդայոսական ախտն ոչ էր յատկապէս Եպիսկոպոսին ։ այլ ստորադրելոցն ։ Զի սրպէս Բաղասամու հրեշտակն մերկապատեան սրովն ապառնայր և ասասկէր եթէ չէր փոխեալ զվատ խորհուրդն։ սոյնպէս ասաս ունողացն զվատ խորհուրդս կամ զվարդապետութիւնս Նիկոդայոսեանց ։ Բրբիստոս սրով ապառնայ՝ թէ ոչ զղջացին ։ "Ու յաղթէ տայ նմա ուտել ի մանանայէն թաղուցելոյ ։" Նախ է քաղցրու թիւն Աստուածութեն թաղուցեալ ի խորհրդեան ։ Ճաշակեցէք և տեսէք ։ զի քաղցր է Տէր ։ Երկրորդ՝ է երանական տեսութիւնն՝ իբրև զմանանայն առ ամենայն ցանկութիւնս բաւա-

կան։ և առ ամենայն հանդերձանս ձաշակաց։ Եւ ասէ մանանայ թագուցեալ։ զի որպէս բնութիւն մանանայի անդիտելի էր։ վասնորոյ ասիւ՝ մանանայ։ այսինքն զինչ է այս։ սոյնպէս Աստուծոյ երանելոյն տեսութիւնն քաղցր է։ և բնութիւնն թագուցեալ և անդիտելի։ Երբորդ՝ է ինքն Քրիստոս։ որ է յերկինս թագուցեալ ի մէնջ՝ և անտես։ Եւ ասէ զինքեանէ։ որք ուտեն զնս՝ և ևս քաղցիցին։ "Եւ տայ նմա զգիրն սրբութեան։" Ի հնումն մկրտելոյ գիր տային։ սոյնպէս յաղթողաց զաշխարհ։ և նորաձնելոյ յերկինս՝ Քրիստոս գիր տայ սրբութեան։ և գրոշմէ ի նմա անջինջ անուն նոր։ զոր ոչ ոք գիտէ։ բայց միայն որ առնու։ թէ զինչ անուն գրելոյ է ի նմա։ այժմ՝ ոչ ոք գիտէ։ զի այս յայտնի յարքայութեան։ վարկանի թէ լցէ թագակից կամ եղբայր Քրիստոսի։ Երկրորդ՝ այս գիրս է խմանալի։ գրեալ ի միտս։ յոր ընթեռնու տարբն և խմանայ թէ եղև հաւատաւոր որդի Աստուծոյ։ եղբայր Քրիստոսի և ժառանգ արքայութեան։ Յորմնակ ամէն՝ յասկի թիթեղն։ որ էր ի ձախատ քահանայապետին։ գրեալ էր՝ Սրբութիւն Տեառն։ այսինքն՝ տարբ

Աստուծոյ, և բաժին նորա։ Իսկ որք առ
ներկայս՝ խմանի զհատատատութենէ նախա-
սահմանութեան, զոր հաւատալ առնէ ի մի-
սրս յաղթողաց՝ իբր զբերել. և այս ոչ ոք
գիտէ, բայց միայն յաղթօղն. որպիսի էր
Պօղոս՝ որ ասէր հատատատեալ եմ, թէ ոչ
մահ, և ոչ կեանք կարէ մեզ ի սի-
րոյն Քրիստոսի։ Թէպէտ ըստ խմատանցն
ոչ ոք գիտէ թէ սիրոյ արժանի լցէ կամ
ատելութեան՝ բնականաբար բայց Քրիստոս
գերբնապէս ծանուցանէ յաղթողաց։ Յայլ
թարգմանութեամբ գրի։ տաց նմա զքարն սպի-
տակ. որով խմանի թէ յաղթողն տարոյ էգա-
դամանդ մատանի։ բայց միոն մօտ է մատաց։
զրեալ անուն գիտելի առնելոն։" Եւ առ հրեշ-
տակն Թիւատիրոյ։" Թիւատիրք՝ որ այժմ կո-
չի՝ Թիւրք։ է ի Լիւդիա Փիւքուն Աս-
իոյ. առ հարաւ Պերգամոյ, եպիսկոպոս սոցա
վարիչ զոլ աւրբն Պօղիկարպոս։ " Տեսի
զգործս քո, և զսէրս, և զհաւատս, և զպաշտօն
քո համբերութեամբ։ զի բազում է վաստակ
քո վերջին քան զառաջինն։" Բոցական ա-
չօքն թափանցեալ ի խորս խորհրդոցն և
զործոցն այս Եպիսկոպոսիս։ և ետես զի յա-
ռաջանայր ի զօրութէ ի զօրութի. վասնորոյ

գովեաց ասելով, բազում է վաստակ քովերջինն քան զառաջինն։ Բայց այնքան նրբատես աչօքն՝ յայս հրեշտակս եւս եղիսա զթիւրութիւն լինչ, ըստ Յօբայ. վանորոյ ասէ։ "Այլ ասեմ առ քեզ բազում. (սակաւ.) զի թողեր զկինն զԵզեբէլ, որ ասէր զինքն մարգարէ, և ուսուցանէր զմոլորութիւն զծառայս իմ, պոռնկիլ՝ և ուտել զզոհեալ։" Զինս այս էր հաւատացեալ՝ անուն Եզեբէլ. սա հետևելով վհկութեան՝ եղև վհկուհի, և կեղծէր զինքեանէ զալ մարգարէ. և ասէր ոչ զալ մեղք ուտելն զզոհեալ և զպոռնկիլն. իբր զի երկոքեանն են բնականք։ Եւ զի բազումք ի հաւատացելոց գիւրահակք յայսոսիկ մոլութիւնս՝ հետևէին թիւր աղանդոյ նորա. ուստի ի բազմութենէ երկուցեալ թոյլ տայր, վանորոյ յանդամանի տեառնէ։ Եպիսկոպոսս այս՝ որքան առ ինքն էր սուրբ և առաքինի, բայց որքան առ այլս՝ ոչ էր նախանձայոյզ քարոզիչ. և սակայն այս է յատուկ գործ եպիսկոպոսին։ "Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարելոյ զպոռնկութիւն իւրեանց, և ոչ ապաշխարեցին։" Ցծաւ երկայնմտութեամբ Աստուած տայ ժամանակ ապաշխարելոյ մեղաւորաց, և մանաւանդ պոռն-

կաց։ զի պռունկութիւն՝ դժուար անջատելի մարք իմն է յենթակայէն։ վասնորոյ առաւել պահանջէ զժամանակ։ Փիլիսոփայ ոմն առ ցանկացեալ ոք ի պռունկութիւն՝ ասաց այս քիզ ոչ չար մահկանացու, այլ՝ անմահ չար է։ յայս ախտ կապակցի սիրտ՝ կէս ի բնութենէ, և կէս ի չարին դրդմանէ։ վասնորոյ ասէ։ վասնայսորիկ ոչ ետուն ըզսիրտս խրեանց դառնալ առ Աստուած։ զի այս պռունկութեան է ի նոսա։ Այդ՝ կիներն այն Եղաբէլ էր պռունկի, էր այսակիր։ և էր կախարդ։ զորս վ եռապատիկ չար։ և այսպէս զբազումս որսայր յուռկան դիւին։ պարտ էր եպիսկոպոսին անքուն տքնութեամբ ի դարձ նորին աշխատել բանիւ և վարդապետութեամբ։ քայց ոչ ապար՝ յանդիմանի։ Ըստ Աբիսաղոսի՝ կին պռունկի է մեծ չար։ և իբր ժանտախտ։ վասնորոյ փութով բառնալն է ի միջոյ կամ դարձուցանելի։ զի մի ապականեսցէ զհասարակութիւնն։ "Հատասիկ ես արկանեմ զնա ի հնոց։" Որպէս որպէս զընձի ծխելոյ կոխատէ ըզպռունկին Եղաբէլ ի հուրն անշէջ։ այսինքն ի հնոցնզժոխոց։ և այս արդարապէս։ զի որպէս նա անբնական հրով ախտին առէրիւր

որամարդիւր առ ի վառիլ ի դժոխս ։ այսպէս իրաւամբ արկանելն էր ի հուրն դժոխոց ։ Զի թող փայտն մինչ չորանայ և տրամարդիւր առ հուր ։ ի հարկէ երբեմն վառի ։ Զ՝ սան սատակի բարկութեան ոչ հանդուրժէ ի կատարածի պատժիլ ։ այլ՝ առ ժամայն ահաւասիկ ։ " Եւ զործակիցս զորս ընդ որս շնացաւ ։ ի նեղութիւնս մեծամեծս ։ եթէ ոչ ապաշխարեսցեն ։" Զ հեղինակին պատնկութեան՝ առ ժամայն պատժէ ։ խակ զործակցացն տակաւին համբերէ ։ Ընդքան ծանր իր է գլուխս զոր չարեաց ։ Աստուա՝ ամենայն չարեաց գլուխք և հերձապետք՝ սատակի պատիժ կրելոց են քան հետևողք նոցին։ " Եւ զորդիս նոցա սպանիցէ մահուամբ" ։ Որդիք շնացելոց ծնանին յանէծս և ի պատիժս ։ և անուանին որդիք բարկութեան ։ վանտրոց փութով պատժին և եղծանին ։ Խմաստութիւ ։ " որդիք շնացելոց թերակատար եղիցին ։ և զաւակ յանօրէն անկողնոյ ծնեալ սատակեսցի"։ Եթէ սոցա ծնողքն ապաշխարեսցեն՝ զութն Աստուծոյ և ներողութիւն յորդի և ի յորդիսն ։ խակ եթէ ինքեանք իրաղգած գոլով անցցին՝ զղջացին և սատացեն ։ անօրէնութեամբ յղացաւ և ի մեղս ծը-

նաև զիս մայր իմ, և գիմեցին առ ողորմութիւն Աստուծոյ, արդարև ոչ երկնչին։ "Եւ ծանիցեն ամենայն եկեղեցիքն, և այլն"։ Կամի ասել թէ վասն այսորիկ պատժեմ, զի ծանիցեն եկեղեցիք, թէ ես եմ անհուն խնամատութի հօր, որ գիտեմ, կշռեմ, և քննեմ զսիրտս և զերիկամունս, և արդարապէս հատուցանեմ ըստ գործոց, զի մի ասիցեն չարք՝ թէ չէ անհուն խնամատութիւն, զի ոչ ծանեաւ զչարագործութեան մեղս, և ոչ արդարադատ, զի ոչ հատուցանէ ըստ գործոց մեղայ։ "Այլ ձեզ ասեմ, որք ի Թիւատիրէք, և ոչ ծանեայք զվարդապետութիւնս զայս և ոչ զեռոհուրդս սատանայի, ոչ արկից ըզձեօք զայլ ծաներութիւն, զոր ունիք՝ պահեցէք"։ Դատանայ առ ժողովուրդն Թիւատիրայ, որք չէին խմորեալ ի վարդապետութենէն Եզեքէլի, և ոչ յղացեալ ի հեշտալի սերմանց չար խորհրդոցն սատանայի։ Յուսադրէ զնոսա հանդերձ զովութեամբ, թէ ոչ արկից զձեօք զայլ ծաներութիւն, քան զոր Աստաքեալքն արկին զձեօք։ այսինքն խորշիլ ի զոհելոյ՝ և այլն։ Բաւական է այդ առաքինութիւն ձեզ, զի ոչ անասայք Եզեքէլի, և ոչ խորհրդոցն սատանայի։ Օ այդ

քաջութիւն զոր ունիք՝ պահեցէք ։ և կեցցիք ։
" Մինչև ես զամ ։" այսինքն մինչ ցօր
մահուան ձերոյ ։ և կամ՝ մինչև ցմիւսանգամ
գալուսան իմ ։ " Եւ որ յաղթէ ։ պահէ ըզ-
գործս իմ՝ մինչև ցվախճան ։" Կատարեալ
յաղթութիւն այն է ։ որ հասանի վախճա-
նի ։ այլազգ ոչ համարի յաղթութիւն ։
" Եւ տաց նմա իշխանութիւն ի վերայ ազ-
գաց ։" Օ ի յաղթողին վայելէ թագաւո-
րել ։ և առնուլ զպակ իշխանութեան ։" Եւ
հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ ։ և
իբրև զանօթ բրտի փշրեսցէ զնոսա ։ Երկ-
կաթեայ գաւազանն է յաւիտենական և հր-
զօր իշխանութիւն՝ զոր սուրբք ունին ի վե-
րայ աշխարհի՝ և ի վերայ դիւաց ։ և գործ
ածեն զայս թէ այժմ՝ և թէ ի դատաստա-
նի ։" Որպէս և ես ընկալայ ի հօրէ իմէ ։" Ես
նախ յաղթեցի սատանայի՝ աշխարհի և մահու ։
և ապատուաւ ինձ ամենայն իշխանութի յերկ-
րի ։ Ասի սուրբք են իշխանակից Քրիս-
տոսի ։ " Եւ տաց նմա զաստղն առաւօտու ։"
Ոմանք՝ զանկեալ արուսեակն ։ զի իշխեսցէ
և ի վերայ սաղայերազունդ զօրացն ։ Բայց
զայս ետ՝ երբ ասաց հովուեսցես զնոսա գաւա-
զանաւ ։ Աստղն առաւօտու ուրեմն է Քրը-

բիստոս ։ որպէս ասէ՝ ի վերջին՝ ես եմ՝ ասող պայծառ առաւօտու ։ Մ՝ խան ուրեմն է ։ թէ և գիս ժառանգեսցէ յաղթօղն ։ որ եմ՝ մի միայն աստուկայ սիրոյ հօր խմոյ ։ և ցնծութիւն երանելեացն ։ Բ՝ ուիստոս որպէս ասող ծագելով յաշխարհ՝ եղև զրաւ օրինաց հընոյն ։ և իբր մեզ առաւօտ խաղաղութեան ։ և մինչև ծագի միւսանգամ՝ քերէ սիրելեաց իւրոց զտիւն յաւիտենականի պայծառութեն ։

Գ. ԼՈՒԽ Գ ։

" Եւ առ հրեշտակս Սարդիսիցւոց եկեղեցւոյն՝ գրեա ։" Ա՝ ստուկայ կամ՝ Սարդիսկա էր մայրաքաղաք ի Լիւդիա արքայանիստ ։ առ ստորոտով հուչակաւոր Բեմնա լերին։ Եպիսկոպոս սորա թէ ոմ՝ իցէ ։ ոչ է յայտ ։ " Ա՝ յսպէս ասէ՝ որ ունի զեօթն հոգին Աստուծոյ ։" Ա՝ յս է զՀոգին սուրբ Հանգիրճ եօթնարփեան շնորհօքն ։ Ա՝ յլք եօթն հոգեօքն իսնեան զեօթն նախատատիս հրեշտակքս՝ որք առաքին ըստ Օ՝ աքարիայ յամենայն յերկիր ։ որք և կոչին հոգիք՝ ըստ այսմ՝ ։ ոչ ապաքէն հոգիք են հարկաւորք ։ Եւ Ա՝ ստփայէլ հրեշտակն ։ ես եմ՝ մի յեօթանց անտի։

Այսպէս խմանան և որ առաջին գլուխն ասէ, եւ յեօթանց հոգւոյն զօրութենէ։ Բայց ոչ է այնքան պարծանք Քրիստոսի ունել զեօթը՝ն հրեշտակս, որքան ունել զեօթնաբփեան հոգին։ Եւ զի առաքելոց չէ սովորութի՝ն շնորհք և խաղաղութիւն ի հրեշտակաց՝ գրել, այլ ի հօրէ և ի յորդւոյ։ Իսկ Յովհաննէս՝ յաւելու և ի հոգւոյն սրբոյ։ Բոլոր դժուարութիւն է ի վերայ եօթն թուոյն։ "Եւ զաստեղս եօթն։" եթէ եօթն հոգեօք հրեշտակք խմացին։ մեկնութիւն է թէ՝ որ ունի ընդ իշխանութեամբ զամենայն հրեշտակս։ և յատկապէս զեօթնեսին։ որովք զապագայսն կարգադրել հանգերձեալ է։ և զամենայն եպիսկոպոսս։ և յատկապէս զեօթանան։ որք են հայելիք հաւատացելոց։ "Տեսի զգործս քո։ զի անուն կենդանւոյ ունիս և մեռեալ ես։" Ասանք կարծեն թէ անուն սորա էր Օսիմոս։ որ ըստ յաւիտենից է կենդանի։ Միտն է թէ՝ համբաւդ կենդանւոյ է։ զի եպիսկոպոսք յաչս և ի մարս ամենից՝ են կենդանի։ այսինքն սուրբ համարելիք։ բայց բաղումք յաչս Քրիստոսի՝ որ զգաղտնիս մարդոյ նկատէ։ են մեռեալք։ Այսպէս մեռեալ էր այս եպիսկո-

պոռ այսինքն էր ծածկաբար ի մահացու մեղս։ էր շնչեալ սատղ, և կոչիւր լուսաւոր։ կամ թէ էր թոյլ և գաղջ ի քարոզել, զի թուլութիւն որ ի ժողովուրդն է ներելն։ յեպիսկոպոսն է մահացու։ Ա. Աստուած էր ենչեցեալ, իսկ յայլ ուամկաց արթուն վարկանիւր։ Լ էր արթուն և հաստատեա այսուհետև։ զի հանդերձեալ ես մեռանիլ։ Դակ մեռեալ գոլ վճռեաց։ զի ասէ, հանդերձեալ ես մեռանիլ։ վասն զի իսկապէս զի տէր, թէ՝ այն հիւանդութիւն է առ ի մահ։ և զի՝ ներելն տրամադրէ առ մահացուն։ եթէ զարթնանայր՝ իսկապէս մեռանիւր ի մեղս իւր։ Կամ թէ սա էր ծեր և մեռեալ գոլով ի մեղս իւր՝ հանդերձեալ էր և մարմնով մեռանիլ և անկանիլ ի ձեռն Աստուծոյ կենդանւոյ։ խնայեաց ի նա և զգուշացոյց։ Եպիսկոպոսն դիտող թարգմանի ըստ Յունաց։ ուստի՝ պարտ է նմա միշտ արթուն լինիլ։ յօրինակ սմին։ առիւծն զորով թագաւոր գազանաց՝ ենչէ ամենայն։ Արթնութիւն հովուին՝ է հաստատութիւն ժողովրդեան։ վասն որոյ ասէ։ լեր արթուն և հաստատեա։ այսինքն՝ զհօտդ։ Ենչումն հովուին է մահաբեր հօտին։ Հօտն է ի ձեռս հովուին

Որպէս ի ներհել աչացն՝ որ ինչ ի ձեռս է՝ անկանի. այսպէս և ի գաղմամբ ենղել հովուին։ Ի գերեզմանեն Յեսուայ նկարեցին զարեգակն. զի հակողութեամբ իւրով կապեաց զարեգակն։ Դարձեալ հանգերձեալ ես մեռանիլ. այսինքն դու մեռեալ ես, և զիօտն քո մեռուցանել կամիս. և այնու խսպառ շինանիլ։ "Բանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ։" Եպիսկոպոսուին է աստիճան կատարելութեան. վայ գործ նորին պարտի լինիլ կատարեալ, ուստի Առաքեալն յՏիմոթէոս՝ գրէր, զպաշտօն քո կատարեալ կալ։ Առաջի Աստուծոյ ասէ. զի առաջի մարդկան կեղծէր զկատարելութիւն վասն այսորիկ ասացեալ էր ըզհամբաւ կենդանւոյ անուանն։ "Արդեօ՞ք յիշեա թէ ո՞րպէս լուար՝ և պահեա. և ապաշաւեա։" Լուար. զի ասացի թէ՝ հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացս, որպէս մարգարէքն, ես և առաքեալքն իմ։ Եղաք. և պահեա՝ որ ինչ պատուիրեալ է Հոգւոյ Աստուածաշունչն. և ապաշաւեա զանցեալ հեղգութիւնդ։ զի ապաշխարութիւնս կենդանացուցանէ զանուն և զգործդ քո առաջի Աստուծոյ։ "Այս թէ ոչ՝ գամ ես որպէս

զգող։" Այսպէս և Առաքեալն՝ օր Տեառն իբրև զգող գիշերոյ՝ այնպէս գայ։ որպէս ըզգալ գողոյ ոչ ոք գիտէ։ այսպէս և ոչ ըզգալուստ իմ։ Խոստանաս քեզ մնոտի յուսով զերկարակեցութիւն և զհարկաւոր գործ փրկութեան քո և հօտին՝ վաղարկես։ ով յիմար։ մինչ ոչ գիտես թէ երբ գայ գողն։ պարտէ քեզ հանապազ հսկել։ Հովիւն հրակէ։ զի ոչ գիտէ թէ երբ գայ գայլն։ Դու զիարդ ենջես։ մինչ ասես սատանայ իբրև զառիւծ գոչէ։ և ես որպէս գող գամ զկեանս քո յափշտակել։ Մահն նկարէին՝ որպէս բու։ որ զկեանս մեղջերու հաւուն ի գիշերի յանկարծ խլէ։

"Որ ունիս սակաւ մի զանուն Սարդիանայցոց։ որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց։ և շրջին ի սպիտակս՝ որում արժանի եղեն։" Այս է՝ յեկեղեցւոյդ քո ունիս սակաւ մի սուրբս՝ որոց անուանքն գրեալ են ի գլխութիւն կենաց։ որք ոչ աղտեղացուցին զպատմուճանս իւրեանց։ Պատմուճանս հոգւոյն՝ է մարմին։ որ աղտեղանայ մանաւանդ՝ բղջախտութեամբ։ և կամ խղճմտանքն՝ որ բծաւորի զանազան մեղօք։ և շրջին ի սպիտակս՝ որում արժանի եղեն։ զի

մեռան սրբութեամբ և յաղթութեամբ ։ և կամ կուսութեամբ ։ և ես եառ նոցա արկանելիս սպիտակս ։ այսինքն՝ զհանդերձ փառաց՝ որովք այժմ ընդիս ի փառս շրջին ։ Երկրորդ՝ էին սակաւք առաքինիք ի Սարդիկա ։ որք յաչս Աստուծոյ որպէս փեսայ յառագաստի ի հանդերձս պայծառս շրջէին։ զի առաքինութիւնքն են պայծառ հանդերձ հոգւոյ ։ Ով ոք կամի զի շնորհքն Աստուծոյ անպակաս լեցի ի նմանէ ։ զգեցցի զսպիտակ հանդերձ սիրոյ ։ զորմէ ասէ Յովհաննէս ։ յամենայն ժամանակի եղիցի հանդերձ քո սպիտակ ։ և լուր ի գլխոյ քումմէ մի պակասեսցի ։ "Ուր յաղթէ այսպէս՝ զգեցցի սպիտակս ։" Յորինակ սմին Յովսէփ յաղթեաց մեղաց ցանկութեան ։ զգեցաւ բեհեզս և ծիրանիս ։ Աստի երևի՝ թէ յաղթողքն Սարդիկեցւոց ի յերկինս՝ սպիտակս զգեցեալ էին ի Բրկտոսէ ։ "Եւ ոչ ջնջեսցի անուն նորա ի գրքոյ կենաց։" Այս է՝ որ ի վերջին շունչն յաղթողդ տանի ի գրքոյ կենաց միանգամ՝ զրեալն՝ անջնջելի ։ յաւիտեան։ Գիրն կենաց՝ է էութիւն Աստուծոյ ։ անուն սրբոցն ի նմա գրի ։ մինչ վերջնական վճռաւ փրկութեան ի մեռացն Աստուծոյ նա-

խոստովանեմ։ “Եւ խոստովանեցիս զանուն նորա առաջի հօր իմոյ։” Որպէս և Աւետարանին ասէ։ որ խոստովանեցի զիս առաջի մարդկան։ խոստովանեցայց և ես զնմանէ առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է։ Ասի յայտ է։ թէ յաղթող զմարտիրոսս կոչէ։ “Որ ունի ականջս” Բազմիցս կրկնէ։ զի յակնիւս արասցէ զընթերցողս։ և մտադիրս՝ թէ զհարկաւորաց խօսի։ “Եւ առ հրեշտակս Փիլադելփիոյ եկեղեցւոյն գրեա։” Փիլադելփիոս՝ որ թարգմանի եղբայրսէր։ էր քաղաք զետեղեալ ի Մէսիոնա։ առ Լիւդիաւ։ ընկալեալ զանունն ի կեղտուէ իւրմէ։ որ կոչիւր Փիլադելփիոս։ “Այսպէս ասէ սուրբն և ճշմարիտն։” Սուրբ և ճշմարիտ՝ նախ՝ պատկանի Աստուծոյ։ որպէս ասէր Դաւիթ։ ՀԾ օրինիթ։ ես մատուցանեմ զաղօթս ձեր՝ առաջի Սրբոյն։ Երկրորդ ի զերազանցագոյն սատանանի՝ պատկանի Քրիստոսի։ զի սուրբ է խորհրդով։ բանիւ և գործով։ և ինքն է ճշմարիտ զայսոսիկ վանայսորիկ յառաջ բերէ։ զի ծանեցիմ՝ թէ՝ զոր ինչ ասել հանդերձեալ էր։ է զուտ ճշմարտութիւն անխառն ի ստութենէ։ “Որ ունի զփականս Դաւթի՝ փակէ։ և ոչ ոք է որ բանայ։ և բանալ ոչ ոք դիտէ։”

Մարդարէից վերջն, և մանաւանդ Դաւ-
թին՝ որ խօսի զամենայն անօրէնութենէն
Քրիստոսի՝ փակեալ է. բանալին էր ի ձե-
ռքն Քրիստոսի, որ երբայ անօրէնութեամբ
իւրով զմիտս գրոց, և ոչ ոք կարէ փակել
թիւր մեկնութեամբ. և մինչ փակեաց ընդ-
դէմ անհաւատ Հրէից, ոչ կարէ բանալ. այլ
մինչև ցայժմ նոյն առաքաստ ձգեալ կայ ի
վերայ սրտից Նոցա, և ոչ կարէ վերառնուլ,
եթէ ոչ Քրիստոս բացցէ. Լուսաւորչապէս
բանալիս այս և փականս է Հոգին Սուրբ ի
ձեռն Քրիստոսի, որով եթէ բացցէ զմիտս
ուղղաք խոստովանիլ զինքն, ոչ ոք կարէ
փակել, ոչ գեւք, ոչ հերձուածողք, ոչ ան-
հաւատք. և եթէ փակեացէ զմիտս անհաւա-
տից, ոչ ոք կարէ բանալ. ըստ այնմ, ոչ ոք
կարէ ասել տէր զՅիսուս, եթէ ոչ՝ հոգւովն
սրբով։ Դարձեալ՝ է ծայրագոյն իմաստու-
թեան բանալին ի ձեռն Քրիստոսի. զայս
շնորհեաց քահանայապետից. ինքեանք ոչ
բացին և ոչ մտին, և զմտանօղն արգելին.
ըստ այնմ, ունիք զփականս գիտութեան, զոր
ոչ մտանէք, և որոց մտանենն՝ արգելուք։
Վասնորոյ էառ զայն բանալին և ետ եկե-
ղեցւոյ ի դէմս Պետրոսի, տաց քեզ փականս

արքայութեան երկնից. և զոր միանգամ կապեցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։ Այլաբանօրէն խմաստնոյ բերանն է բանալի և լուծիչ տարակուսանաց, ստորասական վճռաւ բանայ, բացասական վճռաւ փակէ։ Իսկ խմաստութեան աղբիւրն է Քրիստոս. և որ ինչ երանէ ի բերանոյ նորա, է վճիռ։ Այս փականըս եբաց զղուռն ապաղայից խորհրդոց առաջի Յովհաննու. վասնորոյ ասէ։ "Տեսի զգործս քո. ահա ետու առաջի քո զղուռն բացեալ. զոր ոչ ոք կարէ փակել։" Քրիստոս ունի զլիութիւն իշխանութեան. Եղիակիմայ ետ զփականս տաճարին, Պետրոսի՝ ետ զփականս եկեղեցւոյ. Հրեշտակին՝ ետ զզփականս գբոյն անդնդոց։ Պետրոսի եբաց զղուռն քարոզութեան, ըստ այնմ. և զուռն բաց էր ինձ ի Տէր. որպէս և ասաց Յովհաննու, և ասէ, զոր ոչ ոք կարէ փակել. այսինքն ոչ սատանայ, ոչ Դեմետիանոս, և ոչ այլ չարք։ "Օ՛ի սակաւ է զօրութիւն քո։" Խոնարհ ես յաչս քո. և սակաւազօր կարծես զքեզ. վասնորոյ զօրացար յինէն զի զօրութիւն իմ՝ ի տկարութեան կատարի։

Եւ պահեցեր զքան պատուիրանաց իմոց , և
ոչ ուրացար զանուն իմ։ վասնորոյ սիրեմ
զքեզ և յաջողեմ քեզ ։ " Ահաւասիկ տամ
քեզ զժողովուրդն սատանայի՝ որք ասեն զին-
քեանս հրէայս զոլ՝ և ոչ են ։" Տամ զօրու-
թիւն բանից քոց դարձուցանել զնոսա , և
ածել ընդ քացեալ դրամբ հաւատոյ ի գա-
ւիթ եկեղեցւոյ , զի եկեսցեն ի հնազանդութիւն
հաւատոյ , և երկրպագցեն առաջի ոտից քոց
խոնարհութեամբ։ և ծանիցեն՝ զի ես սիրեցի
զքեզ ։ Յամառեալն մինչ յանկարծ դառնայ ,
ճանաչէ զզօրութիւն Աստուծոյ և զսէր նո-
րա առ դարձուցանողն ։ " Զի պահեցեր
զքան համբերութեան իմոյ , և՝ ես պահեցից
զքեզ ի ժամ փորձութեան ։" Այսպէս Յօր
պահեաց զքան համբերութեանն Աստուծոյ ,
այսինքն որչափ կամէր՝ համբերէր , և Աստ-
ուած պահեաց զնա ի փորձութեան իւրում։
Բանիւ համբերութեան իմանի չափ, սահման
և պայման, առ որ ժամանեալ համբերութիւն
սրբոց՝ դադարի Աստուած ի փորձելոյ ։
Դարձեալ չափ և սահման է կարն մեր ,
զի հաւատարիմ է Աստուած , որ ոչ արկցէ ի
փորձութիւն քան զկարն մեր , որ հանդեր-
ձեալ է զալ՝ ասէ , այսինքն՝ որք գրին ի հե-

տեսեալ զլուխն զգաստենէ նեռին. խոս-
տանեսմ՝ պահել զեկեղեցին քո յամենայն ժա-
մանակս ի փորձանաց՝ վասն սիրոյ և հաւա-
տարմութեան քո։ Երանեմ եկեղեցւոյն այն-
միկ, որոյ առաջնորդն ելցէ սիրելի Աստու-
ծոյ և հաւատարիմ. թէ ով ելցէր եպիսկո-
պոս այս՝ ոչ է յայտ. ով ոք և ելցէ՝ էր
քաջ, և բարի, և սիրելի Քրիստոսի։ "Կա՛լ
զոր ունիսդ, զի մի ոք առցէ զպսակ քո։"
Նախ՝ պիտիդ կա՛լ զՀօտդ՝ զոր ունիս ի ձեռն
։ որ է փառք և պսակ քո. որպէս ասէ
Պօղոս, ուրախութիւն իմ և պսակք։ Օ այս
պսակ առնու ոք, մինչ կարդադրութեամբն
Աստուծոյ մնանէ ի ժառանգութիւն եպիս-
կոպոսի ուրուք։ Այսպէս Մատաթիա զառա-
քելական պսակն Յուդայի էառ։ Եւ զկարգ
նորա առցէ այլ։ Երկրորդ՝ կա՛լ զոր ունիս.
այսինքն՝ զառաքելական զործդ հաստատ կա՛լ.
որոյ հետևի պսակն յաղթութեան. զի մի
թուլացեալ անտի ի հաստատութենէ, այլ
ոք առցէ զպսակն քո։ և դու անվարձ եղա-
նիցես։ որպէս մինն ի քառասուն մանկանց.
զորոյ զպսակն յափշտակեաց պահապանն։
Օ ի յարքայութեան երկնից պսակն բռնա-
բարի։ և բռունք յափշտակեն զնա։ Այսպէս

Հրէայք թոյլ տալով զԲրիստոս պսակն փառաց, Հեթանոսք բուռն հարեալ յափշտակեցին ի ձեռաց նոցա։ Ի զանձարան արքայութեան անթիւ պսակ զոյ, որ ոչ բռնաբարէ զչար յօժարութիւն իւր, սանձէ զախտն, և տեսէ ի բարի յառաջադրութեան, նա առնու զպսակն։ Պարձեալ արքայութիւն և պսակն երկնից ի ներքս ի մեզ է. վասնորոյ անուանի՝ զայն ըմբռնելն և թողուլն ի ձեռս մեր տուեալ է բարերարն, եթէ կամիցիմք վայելել պինտ կալցուք զհոստովանութիւնն։ Սաւուղ ունէր զպսակ արքայական, թոյլ ետ, անզգուշաբար եկաց. Պաւիթ բուռն զալով յափշտակեաց զայն։ Պարձեալ ստուգապէս պսակ զոյ յերկինս, վասն թագաւորելոց անդ՝ յերկին ասէ Լամաստուն, ընկալցին զպսակն վայելչութեան, և զթագն գեղեցկութեան ի ձեռանէ Տեառն։ Ասել՝ եպիսկոպոսն է թագաւոր. վասնորոյ դնէ զթագ և զպսակս. եթէ անարժան գտցի կալցին՝ ասա անկանի ի պատուոյ, և անդ՝ ի փառաց։ Բայց ասելիանն եպիսկոպոսական գալով անյեղլի, ոչ բառնի ինմանէ. այլ ի դժոխս տակաւին է եպիսկոպոս, որպէս և ոչ իշխանական և պետական անուանք բարձան ի դիւաց.

թէպէտ և յիւրեանց աստիճանէն զրկեցան։ "Ոչ յաղթէ արարից զնա սիւն տաճարի իմոյ։" Ասէ արարից, զնա անուանէ հաստատութիւն և պարծանք եկեղեցւոյ. փառաւոր ի վերնում տաճարին և 'ի ներքնում։ Այսպէս Յակոբոս, Պետրոս և Յովհաննէս սիւն անուանեցան ի Պօղոսէ։ Ուրք կարծեալ սիւնքն էին։ Միւնն հաստատէ զտաճարն, և սուրբք՝ զեկեղեցին։ Միւնն միով ծայրիւ զերկիր շօշափէ, միւսով զառաստաղն. այսպէս սուրբքն մարմնով յերկրի, մտօք յերկինս հպին։ "Աստուծոյ իմոյ։" Քրիստոսի սիրան լի էր շնորհակալութեամբ և սիրովն Աստուծոյ հօր. Աստուած կոչի նմա՝ ըստ մարմնոյ։ "Դու արտաքս այլ մի ևս ելցէ։" Այս է՝ եթէ միանգամ քաջագնական առաքինութեամբ յաղթող գոյի, այնպէս հաստատեցիր, մինչ զի եղիցի որպէս սիւն անկասկած յանկանելոյ և արտաքս ելանելոյ ի մեջ արտագնալոյ։ Այսպէս առաքեալն Պօղոս միանգամ յաղթեալ զչրէական յամառութիւն՝ որպէս սիւն հաստատեցաւ ի Քրիստոսէ յեկեղեցւոջ, և ոչ երբէք ել արտաքս. վասնորոյ ասէր, քանզի հաստատեալ եմ, եթէ ոչ մահ, և ոչ կեանք

կարէ մեկնել զնս ի Քրիստոսէ։ Օրհնեմ-
աս արար սիւն ընդդէմ սորա։ Յուրա մի-
անգամ յաղթեալ յաղահութենէ՝ եկ արբ-
տաքս իբրև զսան։ և ցամաքեցաւ ի շնորհ-
հաց։ զորմէ ասէ Սաղմոս։ արտաքս ելանէր
և զնոյն խօսէր։ Բայց այլապէս է զերանե-
լեաց։ զի երանելիքն մերթ ելանեն ի լուսեղէն
երկնից ի զբօսանս տեսլեան աշխարհի՝ և
մտանեն։ Ըստ այսմ Եսայի՝ ելցեն արտա-
քքս և տեսցեն զսակերս մարդկան առխ յան-
ցուցելոց։ "Եւ զրեցից ի վերայ նորա զա-
նուն Աստուծոյ իմոյ։ և զանուն քաղաքի
Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմի։ որ ի-
ջանելոց է յերկնից յԱստուծոյ իմոյ։ և ա-
նուն իմ նոր։" Այս է շնորհօք Աստուած
կամ աստուածացեալ և որդի Աստուծոյ։
"Եւ զանուն քաղաքին Աստուծոյ։" Այս
է՝ երկնաքաղաքացի։ ժառանգ վերին Երու-
սաղէմի։ և զանուն իմ՝ նոր։ Այս է՝ շնորհօք
Քրիստոսի։ զի եթէ աստուածական ա-
նուան հաղորդ առնէ։ քանի՞ օն քնականին։
զի զինչ են սուրբքն։ եթէ ոչ՝ որպէս
Աստուած և որպէս Քրիստոս։ Աստուստ
Մի՛ խքայել։ այսինքն՝ որպէս Աստուած։
ես ասացի։ եթէ դուք աստուածք իցէք։ զի որպէս

սրբոց անուանքեն գրեալ յԱստուած՝ այսպէս
և Աստուածային անուանքն գրին ի սուրբ-
բըս . զի սուրբքն լցեն յԱստուած , և Աստ-
ուած ի սուրբսն . ըստ այսմ Նոքա ի մեզ , և
մեք ի Նոսա լցեմք ։ Այս է՝ զոր ասէ Ե-
սայի՝ և Նոքա գիր հանցեն , մինն ասասցէ
յԱստուծոյ եմ , և միւսն յանուն Աստու-
ծոյ Իսրայէլի՝ խրախոյս բարձցէ ։ " Որ ու-
նի ականջս լուիցէ զինչ ասէ Հոգին առ
եկեղեցիս ։" Աստ արդարև խնդրի Նեղքին
ականջ , զի խորագոյն է բանս ։ " Եւ առ
հրեշտակս Լաւոդիկեայ եկեղեցւոյն ։" Սա էր
քաղաք մեծին Փռիւգիայ ընդ մէջ Փեղա-
դելփիոյ Կողոսի , ուստի Առաքեալն Կողոս-
ացւոց գրէ գալ ընթեռնուլ զթուղթն և յե-
կեղեցւոջն Լաւոդիկեայ , որ է ժողովուրդ
արդար ։ Եպիսկոպոս սորա ասի զոլ սուրբն
Սակաս , որ թէպէտ ի սկզբան զաղջ էր , սա-
կայն՝ խրատեալ ի Քրիստոսէ՝ զղջացաւ
և եղև կատարեալ սուրբ ։ " Այսպէս ասէ
ամէն ։" Ամէնս այս ոչ է մակբայ ատ , այլ
անուն , և եդեալ է ի տեղի հաւատարմի և
ճշմարտի ։ Քրիստոս վկայ հաւատարիմ կո-
չի , որպէս հետև ի վկայն հաւատարիմ և ճշ-
մարիտ ։ Զ ի Նախ՝ վկայեաց հաւատարմա-

բալ առաջի Պոնդացւոց Պիղատոսի։ Երկ-
բորդ։ ըստ այսմ՝ տեղեակ է խորհրդոց։ բանիցս
և գործոց մերոց։ և վկայելոց է առաջի հօր։
եւ ըստ այսմ՝ ինքն զատաւոր է։ և ինքն վկայ
հաւատարմութեամբ իւրով կամի շարժել
զգաղջն։ " Որ է սկիզբն ստեղծուածոցն Աս-
տուծոյ։" Այս է ստեղծողական և արարո-
ղական սկիզբն ընդ հօր։ ըստ այսմ՝ բանիւ
Տեառն երկինք հաստատեցան։ և հոգւով բե-
րանոյ Նորա ամենայն զօրութիւնք նոցա։
Պարուն՝ակողիւն զամենայն նշանակելով,
հաւատացեալք են Նոր ստեղծուածք Քրիս-
տոսի։ ի Քրիստոս Յիսուս ոչ թլպատու-
թիւն։ և ոչ անթլպատութիւն։ այլ Նոր ա-
րարած։ այսինքն միրտութեամբ Նորաստեղ-
ծեալք ի Քրիստոս՝ Քրիստոսիս։ " Գի-
տեմ՝ զգործս քո։ զի ոչ ցուրտ ես և ոչ
ջերմ։" Երեք մնոք մեկնի։ Նախ՝ երկոքեան
ի բարի կողմն։ ցուրտ յաշխարհէ և ջերմ
սիրովն Աստուծոյ։ առ այս ասէ պարտ է
քեզ։ զի պարտ է եպիսկոպոսին կամ ցուրտ
գոլ կամ ջերմ։ այսինքն միշտ ջերմեռանդ
գոլ։ Երկրորդ՝ եթէ չիցէ ջերմ։ Աստուած
լաւ համարի ամենեին գոլ ցուրտ, այսինքն
կռապաշտ՝ քանզի զաղջ հաւատացեալ։ Այս-

պէս Պետրոս՝ բաւ էր նոցա թէ ամենևին չէր
իսկ ծանուցեալ զՀմարտութեն Ճանապարհ ։
քան թէ ծանեան ։ և յետս կացին ։ և այլն ։
Յոսկի զգաղջաց ։ վասնորոյ և շան փսխողն
նմանեցուցանէ ։ քանզի զաղջ ջուրն զվիսին
շարժէ վասնորոյ բժիշկքն ըմպել տան հիւ-
անդաց առ ի փսխել ։ Եւ պատճառ սորին
է ։ զի կռապաշան դիւրաւ դառնայ ։ քանթէ
հերձուածողն ։ որպէս յայտ է ի Թուրքս ։
Այսպէս աշխարհականն դիւրաւ արբարանայ
քան զաղջ կրօնաւորն ։ զոյն և յերաժիշտն
տեսանեմք ։ զի զայն մեղգին՝ զոր ամենևին
չէ ուսեալ ոք՝ դիւրաւ ուսանի ։ քան որ նախ
ի փցուն վարդապետէ թիւրապէս ի՛նչ ու-
սեալ ։ Զաղջն է՝ որ զսիսեայն ոչ կատարէ ։
Այսպէս զաղջ ջուրն՝ ոչ եփէ զկերակուրն ։
Ուստի լաւ է կերակրոյն՝ բոլորովին անեփ
մնալ ։ քանթէ կիսեփ ։ Ուստի ասէ Եսայի
զգաղջաց ։ իբրև զՃակնդեղ կիսեփեաց լինք
են ի բարկութենէ Տեառն ։ Զիսոգինէս ըզ-
մանկունս ոչ խրատէր հարցեալ զպատճառն՝
ասէ ։ շունն ոչ կերակրի Ճակնդեղաւ ։ Ճակն-
դեղ կիսաեփ է մեղաւոր քրիստոնեայն ։
թէպէտ անհաւատ ցուրան ըստ ինքեան է
չար քան զաղջ քրիստոնեայն ։ “ Հանդերձ-

ձեալ ես փախիլ ի բերանոյ իմմէ ։" Ընեսի կերակուրն ոչ մարսի վանորոյ ըստ ինքեան փախի ։ Այսպէս Աստուած ոչ զոք փախէ, այսինքն յեկեղեցւոյն ձգէ կամ արտաքսէ ։ եթէ ոչ՝ ինքն զրգռիցէ իւրով զաղջութեամբն ։ յուսան և ջերմն կծկեն զստամոքս ։ իսկ զաղջն թուլացուցանէ ։ վանորոյ փախի ։ ջերմ ըմպելին ի մախզէ և ի յօդացաւութենէ պահէ ։ Աստուած այնպէս զղջի ի զաղջից՝ որպէս մեք ի փախացողաց ։ զաղջն զհիւրաւ կրծանի ի մահացու մեղս ։ զի որ արհամարհէ զսակաւս ։ փոքր փոքր կրծանեսցի ։ այսինքն ի մեծագոյն մեղս ։ վանորոյ Հայցէ Դաւիթ ։ "ի զաղանեաց խմոց սուրբ արա զիս Տէր ։ որք թէ ոչ տիրիցեն ինձ ։ յայնժամ ամբիծ եղէց և սուրբ եղէց ի մեղաց մեծաց ։" Զաղանի մեղքն է ներելին ։ մեծն՝ մահացուն ։ " Օ՜ իասես մեծատուն էի ։ և մեծացայ ։ և ոչ իւիք կարօտիմ ։" Եպիսկոպոսիս այսորիկ զաղջութեամբ առիթն էր ինքնահաւանութիւն ։ զի ասէր ի միտս ։ արժանի էի մեծութեան և աստիճանի եպիսկոպոսութեան ։ վասն որոյ և եպիսկոպոս եղեալ մեծացայ ։ և ոչ իւիք կարօտիմ ։ Եպիսկոպոսն ոչ կարօտի եկեղեցական աստիճանի ։ զի է հասեալ ի ծայրն ։ և

ոչ մարմնական ապրուստի, զի զպէտս նորա լցուցանեն ժողովուրդքն։ Կամ՝ թէ էր սա մեծատան որդի՝ և եպիսկոպոս եղեալ յամի մեծացաւ. վասնորոյ ասէր ի միտս, ահեղն իմ՝ ունիս բազում բարութիւն համբարեալս բազմաց ամաց. հանգիր, կեր, արբ և ուրախ լեր. զի զհոգևորն ոչ խոկայ։ "Դու ոչ գիտես, թէ դու ես ողորմելի։" Դան զմեծամիտ մարդն ողորմելի՝ այլ ոչ զոյ, զի ամենեին զրկի ի շնորհացն Աստուծոյ. վասնորոյ լինի աղքատ, մերկ ի հանդերձից առաքինութեան։ Զ զեցարուք իբրև սուրբք և սիրեցեալք Աստուծոյ զգութ և զողորմութիւն. ահա հանդերձ հոգւոյ։ Դր կոյր. զի ոչ ունէր զաչս միտաց՝ առ ի տեսանել զհոգևոր մերկութիւն իւր։ Դու էր տգէտ. զի զմարմինն զարդարէր, իսկ զհոգին մերկ պահէր։ "Արդ ես խորհրդակից եղէց քեզ։" Սիրաք ասէ, բազումք եղիցին քեզ բարեկամք, բայց խորհրդակից լեցի քեզ մի ի հազարաց։ Մի ի հազարաց է Քրիստոս. որ խորհրդակից լինի այս եպիսկոպոսիս։ Եթէ կամիս, զի և քեզ խորհրդակից լցի՝ ի միտ առ, զոր ասաս ասէ։ "Դու յինէն ոսկի փորձեալ ի հրոյ, զի մեծացիս։" Ոսկի փորձեալ ի հր-

ըոյ՝ է աւետարանական սուրբ խմաստութիւն։ Հրով Հոգւոյն սրբոյ մաքրեալ և պարզեալ ի ստութենէ։ որպէս և սուրբ արծաթ է բանք մարգարէից։ բանք Տեառն են բանք սուրբ որպէս արծաթ։ "Եւ Հանդերձս սպիտակս։ զի զգեցցես։ զի մի երևեցի անվայելչութիւն մերկոյ թեանդ։" Հանդերձ սպիտակ է սէրն որ ծածկէ զբազմութիւն մեղաց։ և զի հեղգութիւն զսա մերկացուցել էր յամենայն զարդուց առաքինութեանց՝ յարմարապէս զսիրոյ Հանդերձն յառաջադրէ։ զսէրն արիացուցանէ։ և գործէ զմեծամեծս։ և զի է ջերմութիւն Հոգւոյ՝ վասն որոյ զգաղջն ջերմեռանդ առնէ։ "Եւ դիր դեղ յաչս քո։ զի տեսցես։" Դեղն աչաց կազմի ի շաբարէ և ի վարդէջայ և փրփրոյ սեաւ արծաթոյ։ որով դեղն է սեաւ։ Դեղն ծախէ զդիմութիւն աչաց։ որ արգելու զտեսութիւն։ Այս դեղս է ապաշխարութիւն կսկծեցուցիչ։ ծախօղ խոնաւութեանց ախտից։ և պարզիչ միտութեան Հոգւոյ։ և այս օրինակեցաւ ի լեղին ձկան։ որ եբաց զաչս Տոբիթայ։ զինչ է զղջումն։ եթէ ոչ՝ լեղի Հեշտութեան։ բայց լուսաւորիչ աչաց մտաց։ Օ՜ ոսկին ասէ։ յինէն սա։ իսկ զդեղն՝ դու դիր։ զի շնորհն զղջման է

Աստուծոյ, իսկ զեղջն և ապաշաւն ի մէնջ։ Եւ է յիշատակ չարչարանացն Քրիստոսի և նեղութեան։ "Եւ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ. նախանձեսցայ այժմ և ապաշաւեա։" Այս է զեղն, զոր խնդրէ ի մէնջ. յանդիմանութիւն և խրատն է նշան։ Յակովբ և Յոսեր երկրպագին ի ծագ զաւազանին. և մեք խոնարհեսցուք զաւազանի խրատուն Քրիստոսի սիրոյն Աստուծոյ։ Օր զոր սիրէ Տէր, խրատէ։ Նախանձեաց Աստուած. նախանձելով սատանայի զմեզ խրատէ զի դարձցուք. և մի ուրախասցի սատանայ ընդ կորուստ մեր։ Մեք պարտիմք նախանձիլ սատանայի և ապաշխարել, զի կեցցուք և ուրախասցի Քրիստոս, և ողբասցի սատանայ։ "Հաւանիկ գամ՝ ես առ դուրս քո։" Եւ զարթուցիչ շնորհն Քրիստոսի, որ միշտ կանխելով բաղխէ զդրունս սրտից մերոց։ Այսպէս զգիշերն ողջոյն բաղխէր զդուռն հարսին. բանալն է ընդ իշխանութեամբ մերով, այսինքն կամին և անձնիշխանութեամբ տեղի տալն։ Աստէն երևի ծայրագոյն սէրն Քրիստոսի առ հոգիս մեր, և քաջալան փոյթն առ փրկութիւն մեր յետ այնքան չարչարանացն տակաւին հոգայ և

բաղխէ սիրով զսիրտս մեր։ Մեծ էր հեղ-
գութիւն եպիսկոպոսիս, զի ձանձրութեամբ
բանայր զսիրտն. մեք փութով բացցուք,
թէ ոք բացցէ։ Ընթրիսն՝ զոր առնեմք մեք
Քրիստոսի՝ է սեղանն առաքինութեանց.
իսկ զոր նա առնէ մեզ՝ է եօթնարփեան
շնորհն Հոգւոյն սրբոյ։ Որպէս ասէ Սիրաք.
Շնորհքն Աստուծոյ որպէս դրախտ փափ-
կութեան։ Քրիստոսի քաղցր խօսքն լսելն է
յաղեցուցիչ հոգւոյ։ Ածից զնա յանա-
պատ և խօսեցայց ի սրտի նորա. որ այժմ
բանայ Քրիստոսի զդուռն կամաց և մու-
ծանէ ի սենեակ սրտի խրատ՝ արժանանայ
այն սենեկին Քրիստոսի, զորմէ ասէ Հաբ-
սին խորհրդաւոր։ տարաւ զիս արքայ ի սե-
նեակ իւր։ "Ուր յաղթէ, տայ նմա նստիլ
ընդ իս յաթոռ իմ. որպէս ես յաղթեցի և
նստայ։" Երեք են սեռք յաղթութեանց.
մարմնոյ՝ աշխարհի և սատանայի։ Դ մէջ
երիցս՝ գերազանց է յօժարութեան մարմնոյ
յաղթելն՝ քան զայլս. զի ըստ Պաւղոսի՝
անձամբ անձին յաղթելն՝ գերազոյն է
քան զամենայն յաղթութիւն։ Երանի՝ յաղ-
թողաց. զի նոցա է մանանայն թագուց-
եալ, փայտն կենաց, սրսկին անթառամ և

աթոռն փառաց, որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ։

ԳԼՈՒԽ Դ։

"Եւ յետ այսորիկ տեսի, և ահա դռունք երկնից բացեալ էին։" Այս է՝ երկնային խորհուրդն. այսպէս Եզեկիէլ ասէ, բացան որպէս և տեսի զխորհուրդն Աստուծոյ։ Այսպէս Յակոբայ բացաւ, ետես սանդուխք յոր հրեշտակք երկնից իջանէին և երանէին, որպէս թէ խորհրդազգած առնել ըզ Յակոբ։ "Եւ ձայն փողոյն զոր լուայ՝ զաւաջինն խօսիւր ընդ իս։" Ի հեռաստանէ՝ ասէր են նաւավարքն փողով խօսիլ ընդ միմեանս. այս փողս էր հրեշտակին, զոր նախ եհար, և այժմ երկրորդեաց. և էր այնքան պարզ՝ մինչ զն յերկինս հարկանէր, և Յովհաննէս յերկրի հարկանայր։ Այսպէս յօրն վերջին՝ փող հարկանի յերկնից, և բանն հասանի յերկիր՝ և յանդունդս սանդարամետից։ "Եւ ասէր, ելլ այսօր և ցուցից քեզ զինչ լինելոցն է առ յապայն։" Օ Յովհաննէս կոչէ յերկինս, նախ՝ զի բոլորովին անջատեցէ զմիտս նորա յերկրայնոց, առ ի բարեպէս խմանալ զապագայից լինելութեանց։ Երկրորդ՝ զի միտն՝ որ է յերկրի, ոչ կարէ

ըմբռնել զերկնայինսն. զի ըստ խմաստնոյն՝ որ ինչ առ ոտս մեր է՝ հազիւ աշխատութեամբ գտանեմք, իսկ որ ինչ յերկինս է՝ ոչ քննեսցէ. վասն կոչէ յերկինս, զի ի դըպրատան երկնից ուսցի զառյապոյ եղանելս։ Ասպէտ և Պօղոս որ զասպագայիցն և զնեռնէն խօսելոց էր՝ յատուկապէս յերկինս և անդ ուսաւ։ "Եւ վաղվաղակի եղէ ես հոգւով, և ահա աթոռ անդ յերկինս։" Այս է, և վաղվաղակի ընդ կուշելն՝ խսկոյն յատրշատակեցաւ Հանդոյն Պօղոսի հոգւով և մտօք յերկինս, և ետես անդ զաթոռն Աստուածութեամբն։ Որ ոչ ելանէ մտօք յերկինս կոչմամբն Աստուծոյ, և կամ՝ ի սիրտ որոյ չիցէ խօսեալ Աստուած. որ ինչ խօսիցէ զերկնից՝ յանդգնութիւն է. ուստի Դաւիթ նէս զերկնից խօսողն ումեմն նրբագոյնս յանդգիմանեաց ասելով, երբ եկիր յերկնից։ "Եւ ի վերայ աթոռոյն նմանութիւն տեսու թեան ակնոց յասպիսոյ և սարդիանի։" Օ աթոռոյն ոչ խօսի թէ սպի էր, թուի թէ՝ լցեր քրօբէական. զի Մովսէս զքրովբէական կառքն՝ զոր արար ի վերայ տապանակին, ըստ օրինակին զոր ետես ի լերինն՝ արար. և կամ էր կառքն Եզեկիէլի. և կամ այլատեսակ,

որպէս Աստուծոյ վայելէ։ և զի անարուեստ
էր։ անկարացաւ պատմել։ Աստուծն ի վը
աթոռոյն՝ էր Աստուած։ նման յասպիսոյ։
որ է զապարձման բաց կանաչ՝ նշանակէ
զմշտադարար յաւիտենականութիւն Աստու-
ծոյ։ Իւ սարդիսն՝ որ է կարմիր սէրեանն՝
որով նշանակի ամենազուարճ, ցնծալից և
առոյգ կեանքն Աստուծոյ։ Յօրինակ սմին։
ի պարանոց նոր փեսայի կապեն կանաչ կար-
միր ի նշանակ անթառամ և զուարճ թագա-
ւորութեան։ Ոնոյն նշանակէ և ծիրածանն
շուրջ գնովաւ՝ որ է կանաչ և կարմիր։
Դարձեալ ծիրածանն գորով նշան խաղա-
ղութեան և հաշտութեան։ զթագաւորաւն
խաղաղութեան՝ վայելչապէս պատէ։ Իւ որ-
պէս սովաւ երարձ զերկիւղ ջրհեղեղի և կոր-
ծանման ի Նոյէ և ի յեանորդացն։ այս-
պէս յերկինս գոլով շուրջ զԱստուծով՝ բաւ-
նայ զամենայն երկիւղ և կասկած ի սրտից
սրբոց։ և աւետարանէ զմշանջենաւոր խաղա-
ղութիւն և հաշտութիւն։ և պատճառէ ի միտս
նոցա զցնծութիւն և զուրախութիւն յա-
ւիտենից։ Ի ստ այսմ՝ Նայի։ և ուրախու-
թիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։
" Իւ քահանայք շուրջ զսթոռոցն՝ նման

զմբխտի ։" Տեսին զմբխտոյ նշանակէ զնո-
ցին մշտականաչ և յարաղուարձ վայելչա-
կան երանութիւնն ։ Իսկ շուրջ գոլն զա-
թոռովն ։ նշանակէ նախ՝ զնոցին միաւորա-
կան սէրն ։ երկրորդ՝ քահանայական վեհա-
գոյն աստիճանն ։ զի որպէս յեկեղեցւոջն են
նախապատիւ և մեծագոյնք Աստուծոյ ։ այս-
պէս և յերանական փառս ։ Երրորդ՝ նշա-
նակէ զԱստուծոյ ամենատես՝ և իբր լցեալ
աչօք էութիւնն ։ որ զիւրև պատեալսն հա-
մանկատէ ։ Այս ըղձայր Դաւիթ ։ լուա-
ցից սրբութեամբ զձեռս իմ ։ և շուրջ եղէց
զսեղանով քով՝ Տէր ։ Քահանայ աստ նշա-
նակէ զվեհագոյն աստիճանաւորս եկեղեցւոյ ։
թէ Պատրուղիկոս ։ թէ Եպիսկոպոս ։ թէ
Քահանայ ։ որպէս և հետևի ։ "Եւ շուրջ
զաթոռովն աթոռք քսանև չորք ։ և ի վե-
նոցա երիցունք քսանև չորք նստէին ։" Այ-
սոքիկ նախ վարկին գոլ քսան և չորք մար-
գարէքն ։ բայց ստոյգն է ։ զի սոքա են վե-
հագոյնքն և ընտրեալագոյնքն ի նահապետաց ։
ի մարգարէից ։ և յառաքելոց ։ քանզի նա-
հապետք էին երիցունք՝ ուստի Աբէլ ։ Նոյ
և Աբրահամ մատուցին ։ Նմանապէս և մար-
գարէքն՝ զի Սամուէլ զոհեաց Տեառն ։ իսկ

զառաքելոց յայտնէ բանն։ Սոքա էին յաղթօղք։ վասն նոցին յաթոռ յերկինս։ որ յաղթէ՝ տաց նմա նոցիկ յաթոռս ընդիս զգեցեալ սպիտակս։ այս է՝ զփառս երանութեան։ ըստ այսմ՝ սուրբ յինէն զհանգերձս սպիտակս։ "Եւ ի գլուխս իւրեանց պսակս ոսկեղէնս։" Սոքա քաջապէս կարան զշնորհն։ վասն հասին պսակին։ ըստ այնմ՝ կալ զոր ունիս։ զի մի ոք՝ և այլն։ Սմանք ի վարդապետաց իսկական ոսկի գոլ ասին։ բայց ըստ Դիոգինէսի՝ այսպիսի նիւթ յերկինս գոլ անդէպ է։ Այլ՝ ոսկի ասէ։ զի է մեծագին և ազնուագոյն ի մէջ հրահալելեաց։ այլ սուրբք պսակին լուսեղէն պսակաւ։ այսպէս իմն և զաթոռսդն։ Աթոռովն և պսակաւն հաղորդ առնէ զսուրբսն դատողականի իշխանութեան։ Ի՝ ասէ Դիոգինէս։ թէ ի հնումն դատաւորք պսակ դնէին։ զի համարձակ դատեսցին։ Այսպէս Արիստոս ի դատաստանի զսուրբսն նստուցանէ յաթոռս։ զի համարձակ դատեսցին զմեզաւորս։ բայց ուր խղճ վերհագոյն դատաւոր՝ մանաւոր խորհրդակից դատաւորքն պարտին մնալ վերհագունի վճռոյն։ "Ա՝յ ձայնքն։ փայլատակմունքն և որոտմունքն յաթոռոյն Ա-

տուծոյ ելանէին, և ոչ յաթոռոց երկրացանցն։" Այսպէս ի դատաստանի ի Երուսաղեմ ելանելոց է, եկայք, երթայք։ Այդ՝ փայլատակմունքն են յանդիմանութիւնքն. ձայնքն՝ վշտիքն. և որոտմունքն՝ սպառնալիքն։ Օ ի Աստուած ասա զինքն ցուցանէ որպէս հանդիսացեալ դատաւոր ի պատժել զթշնամիս եկեղեցւոյ. վասն ձևացուցանի աթոռն որպէս ամպեղէն, յորմէ ելանեն փայլատակմունքն, ձայնքն և որոտմունքն։ Այսպէս Դաւիթ. որոտաց Տէր յերկնից, և Բարձրեալն ետ զձայն իւր ի կարկուտ և ի կայծակունս. վասն որոյ ասաց ի յաղթահարելն զայլազգիս։ "Եւ եօթն զամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն. որք են եօթն հոգիքն Աստուծոյ։" Օ այսմանէ ասացաք զոլ եօթնարփեան հոգիք, այլք վասկեն զոլ եօթն նախապատիւ հրեշտակք. եթէ այնպէս լիցէ, մեծ լինի պատիւն սրոյց՝ քան հրեշտակաց. զի նոքա յաթոռս էին։ Այսելի է. թէ հոգիք են հարկաւորք՝ որք առաքին ի սպասաւորութիւն, թէպէտ բնութեամբ և փառօք լիցեն վեհագոյնք։ Որպէսզի էր մի եօթեանց ասասի։ "Եւ առաջի աթոռոյն ծով ապակեղէն։" Այսու ծովու՝ սմանք խմանան

զերկնային ջուրսն՝ որք իբրև զապակի գոլ սառն, պայծառք և լուսաւորք են ի գուարճութիւն սրբոց։ Լուսհրդապէս նշանակէ նախ՝ զանազան մկրտութիւն. յորում է և եօթն զամբար՝ եօթնարփեան հոգին. վասն թէ զամբարքն՝ թէ ծովն՝ էին առաջի աթոռոյն. ընդ որ անցանօղքն հասանին յաթոռն։ Երկրորդ նշանակէ զապաշխարութիւն։ ընդ որ եբաց. ընդ գուռն ծով անցեալ նպաստիւք հոգւոյն՝ հասանիմք յաթոռն Աստուծոյ։ Աստուստ որք մնանէին ի տաճարն՝ նախ մաքրէին ի ծովն պղնձի, և ապա մատչէին յառաջ. քանզի տաճարն էր յօրինակ երկնից. ուստի որպէս ի նմա զոյին տապանակ, եօթնաջահեան աշտանակ, ծովն պղնձի և այլք. այսպէս և յերկինս՝ եօթն զամբարքն պատասխանեն եօթնաջահեան աշտանակին, որ է օրինակ եօթնարփեան հոգւոյն սրբոյ։ "Եւ ի մէջ աթոռոյն, և շուրջ զաթոռոյն չորք կենդանիք լիք աչօք յետոյ և առաջոյ։" Այս կենդանիքս՝ կիսով չափ էին ի ներքս յաթոռն, և կիսով չափ արտաքս։ Վասն որոյ ի մէջ աթոռոյն և շուրջ զաթոռոյն՝ ասեն. ոմանք մեկնեն ի վերջ չորից առետրանչաց. բայց Յովհաննէս դեռ ևս

էր կենդանի։ Այլք ասեն զոլ սերօբէք. զի ստորև ասէ զոլ վեցթև եան։ Բայց կենդանիքս այսոքիկ ասէին զենար և գնեցեր զմեզ. որ պատկանի մարդոյ. ասեմ՝ ուրեմն՝ թէ սոքա էին ի մարդկանէ ընտրեալքն։ որպէս քսան և չորք երիցունքն. բայց էին նմանք կենդանեացն՝ զորս ետես Եզեկիել։ Եզեկիելի կենդանիքն էին հրեշտակք. ըստ մեկնութեան սրբոյն Դիոնէսիսի։ Իսկ Յովհաննու էին մարդիկ. զի Աստուած ոչ միայն ունի զաթոռ քրօբէական։ այլ և բանական. մինն էր ծայրագոյն խոհեմ՝ վայ նման արծուոյ։ միւսն՝ ծայրագոյն արդար։ վայ նման մարդոյ։ Երրորդն՝ ծայրագոյն արի։ վայ նման առիւծու։ Իսկ չորրորդն՝ ծայրագոյն գործնական և հնազանդ։ վայ նման եզին. կամ՝ թէ իւրաքանչիւրք ունէին զնմանութիւն չորից. ըստ դէմս մարդոյ։ զբաշս առիւծու։ զթևս արծուոյ։ և զոտս եզին. և բարոյապէս՝ ունելով զհաղորդութիւն չորից առաքինութեանց իւրաքանչիւրքն։ Արդ՝ սոքա էին լեռք աչօք լեցուք և յառաջոյ. զի զանցեալն և զապագայն շնորհօքն Աստուծոյ նկատեն։ և զի ուսուցանելոյ էին զապագայն Յովհաննու՝ պարտ էր ինքեանց նախադէտ գոլ։ և

այս է լի զոյն աչօք ։ որպէս է տուն սիրամարգի ։ Սոքա են որպէս Համակողմեան հայելեօք կազմեալ տունք յամենայն կողմանց շքաւորեալք ։ Դարձեալ որպէս Սողոմոն զաթոռ իւր ըստ իւրում արժանաւորութեան կազմեաց ։ այսպէս և Աստուած ։ զի Աստուած է որպէս մարդ հեզ և խմաստուն կենդանի ։ որպէս կոչէ Աբիստոտէլ ըզ մարդն բարձրաթռիչ յիմացականութենէ ոգի զարծիւ ։ Ա՝ աստակաւոր ի մանկութենէ մինչև ցհաչն ։ որպէս զեղն ։ և թագաւոր ահարկու ի վերայ գազանաբարոյից ։ և պատառօղ ընդ մէջ յերկուս՝ որպէս զառիւծ ։ Յաթոռն Սողոմոնի էին տասն և երկու առիւծք ։ իսկ յաթոռն Աստուծոյ մի ։ զի երկայնամտութիւն Աստուծոյ երկոտասանապատիկ է առաւել քան զերկրաւոր թագաւորի ։ Քան զթագաւորն՝ զի որքան է կարօղ ։ այնքան է երկայնամիտ ։ Ըստ այսմ Իմաստունն ։ զի տիրելոյ քո զօրութեան ։ խնայել տայ քեզ յամենեսին ։ " Եւ չորից կենդանեացն միոյ միոյ ի նոցանէ էին վեց թևք ։ շուրջ լցեալ աչօք ։" Ա՝ եց թևօքն նշանակի նախ՝ թէ յաստիճանս սերօբէից էին վերացեալ ։ որ ըստ Իսայեայ վեցթևեան ։ զի և ընտրեալք

ի մարդկանէ խառնին ի սերօքէս։ Սոքա աչալից թեւօք թռուցեալ զաթոռն Աստուծոյ բերէին և տանէին՝ ուր և կամէր Աստուած։ Բարոյապէս վարդապետք են բարձօղք կառացն Աստուծոյ, ունին զվեց թեւս շուրջ լցեալ աչօք, գիտեն քարոզուէ աչօք զկառքն Աստուծոյ ի վեց կողմունս աշխարհի թռուցանել, ի յարևելս և ի յարևմուտս, ի հիւսիս, և ի հարաւ, ի վերին կիսագունդս և ի ներքին, և ի ներքս և ի նկատեն, զի մի թիւրութիւն ինչ մտցէ ի խորհուրդս։ "Եւ ոչ հանգչէին ոչ զտիւ և ոչ գիշեր։" Յերկինս ոչ գոյ գիշեր, զմշտատև փառաբանութիւնս նոցա նշանակէ. չհանգչէին նոցա, ոչ արդարև զանհանգստութիւն նշանակէ, այլ զցնծալից խրախճանիս և խաղաղական կեանս՝ հանդերձ մշտաշունչ օրհնաբանութեամբ։ Այսպէս տեսանեմք զսիրահարս միշտ յերգս երանելւոյն կանխեալ. թէ հոգևոր՝ թէ մարմնաւոր։ Բարոյապէս նոքա լի գոլով աչօք և անկասկած՝ չհանգչէին։ Մեք երկու աչս ունիմք, և ոսոխն մեր իբրև զառիւծ գոչէ, տակաւին անհոգ նստիմք։ Դարձեալ՝ այնմ կենաց ցանկացուք, յորում անտրըտում՝ ուրախութեամբ և անվրդով խաղա-

զութեամբ միշտ օրհնութիւն է ստեղծողին։ «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Աստուած ամենակալ՝ որ էն, որ ես, և որ գալոց ես։» Երկնայնոց փառաբանութեան նախապատիւ երգն այս է զԵրրորդութիւն ճանաչել և նշանակել. զոր երիցս սուրբ և մի տէր ասելով՝ յայտնեն. և զնոյն գովել, զոլ սկիզբն և վախճան առաջին և վերջին. և ներ-կայացող յամենայն ժամանակի։ «Եւ յորժամ տային կենդանիքն զգոհութիւն և զգ փառս Աստեղոյն ի վերայ աթոռոյն Կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։» Զորք կենդանիքն քան զքսան և չորք երիցունքն առաւել մերձակայք, համարձակ և նախապատիւք էին, և էին իբր դատապետք օրհներգութեամբ երանելեաց. ուստի նախ՝ ինքեանք սկզբնաւորէին զերեքսրբեանն։ Լսէ քսան և չորքն յերկրպագութիւն խոնարհելովն իբր ասէին՝ ամէն, այո, ճշմարիտ է։ Աստուած՝ ի ժամ պատարագին յերգէին զպրաց զերեքսրբեանն՝ պարտին ամենեքեան խոնարհիլ յերկրպագութիւն. այո՝ ամէն ասելով ճայնակցիլ։ «Դնելով զպսակս իւրեանց առաջի աթոռոյն։» Օ այս առնէին շնորհակալ լինելով. և իբր ասէին, զքոյս ի քոյոց՝ քեզ

մատուցանեմք։ Նշանակէ զծայրագոյն խոնարհութիւն նոցա։ Իսկ ամբարտաւանք ասեն, զօրութեամբ մեր եղեն մեզ եղջիւրք։ Պատկն տուողին մատուցանելն է։ Որդին Աստուծոյ է, որ տայ զպատկն։ որպէս գրի։ տեսի զմանուկ գեղեցիկ։ այսինքն՝ Որդին Աստուծոյ։ որ գնէր ի գլուխս սրբոց զպատկս։ վայ տրուողին մատուցանելն է։ Այսպէս Ալամպիական յաղթողքն զպատկս իւրեանց Ռանթադին մատուցանէին։ իբր ի նմանէ ընկալեալ զյաղթութիւն։ Եւ այս է մեծ խմատութիւն։ Ճանաչել թէ յումմէ է շնորհն։ Ասի ասէ մարգարէն։ մի մեզ Տէր։ մի։ այլ՝ անուան քում տուր զփառս։ Եւ Դանիէլ՝ քո Տէր՝ արդարութիւն։ և մեր՝ ամօթ երեսաց։ Ո՞նոյն և ասա երիցունքն զպատկն փառաց իւրեանց դնէին առաջի Աստուծոյ՝ և ասէին։ արժանի ես առնուլ զփառս և զպատիւս։ Ո՞ի ի քո կամիլդ ստեղծաք և կամք հաստատուն։ զի զամենայն ինչ կամեցար և արարար։ Կամին ասել ըստ Պօղոսի։ շնորհօք քով եմք։ զինչ և իցեմք։ Դու ես փառք մեր և բարձրացուցիչ գլխոց մերոց։

ԳԼՈՒԽ Ե։

"Եւ տեսի յաջոյ ձեռին, որ նստուր յաթոռն, զի ունէր գիր գրեալ. ներքոյ և արտաքոյ կնքեալ եօթն կնքով։" Աջ ձեռն նշանակէ զամենակարողութիւն Աստուծոյ, որով ըմբռնէ զամենայն. յորում պարունակին եօթն աստեղք։ Եւ յորում է գիրքն կնքեալ եօթն կնքով, որ նշանակէ զապագայիս բերմունսն մինչև ցկատարած. զոր ոչ կարդադրեալ ունի՝ որպէս ի գրքոջ շարադրեալ. և ոչ տայ թոյլ խառն ի խուռն դիպուածով բերիլ։ Գիրքս այս էր որպէս մագաղաթեայ մատեան, և կամ որպէս ծալեալ կոնդակ։ Նման գրքոյն Եզեկիէլի պարունակէր ողբս և վայս յապագայս։ Գիրքս այս կնքեալ ասի, ոչ միով, այլ՝ այլայլեցու կնքեալ՝ անընթեռնլի խրթին կալ. զերօրինակ եթէ կոնդակ մի սակաւ մի ծալեալ լակնով կամ զմուռսով պնտիցես, և ապա սակաւիկ մի ևս ծալեալ երկրորդ անգամ՝ պնդիցես. և այսպէս կարդաւ մինչև ցգլուխ եօթն անգամ զմուռսիցես, այսպէս էր գրեալ։ Ներքոյ և արտաքոյ ասէ. զի որ ինչ գրեալ գոյր ի նմա, ունէր

կրկին մեկնութիւնս։ Կամ՝ արտաքին նը-
կարագրական։ Երկրորդ՝ ներքին այլաբա-
նական, կամ խորհրդական. յետ բացման
կնքոցն՝ ծանեալ գրեալ զոլ ներքոյ և արտ-
աքոյ։ Այս զիրքս ոմանց կարծի զոլ հին
կտակարանն, զոր Աստ միայն տնօրէնու-
թեամբ եբաց, զի ոչ ոք զիտէր մեկնել ըզ-
գեղմն Դեղեօնի, զվէմն հատեալ առանց ձե-
ռին ի լեռնէն, զդարձ արեգական առ Եզե-
կիէլիս, և այլն, եթէ Աստ չկայէր ծնեալ
ի կոյս մօրէ, և կամ՝ չկայէր բացեալ զմիտս
իմանալ զգիրս։ Բայց ասեմ, թէ գիրքս այս
է նոր լեմն մարգարէութիւն զաղագսոյց հա-
մաճայն բանից մարգարէից՝ Դանիէլի և
այլոց, որք խօսեցան զկատարածէ։ Կամ
մարգարէական բանիցն Աստի յաւետարանին.
բայց սա է առաւել մանաւոր, քան զոր
խօսեցան նոքա ի հասարակի։ Եօթն կնիք
գրոցս՝ նշանակէ զքովանդակ ժամանակսն, ի
ժամանակէն Յովհաննու մինչև ցկատարած,
եօթն նշանաւոր և մանաւոր հատուածս և
ի դարս անջատեալ. զի որպէս ի սկզբանէ
արարածոց մինչև ցԱստ ի վեց մեծագոյն
դարս անջատի. այսպէս ի Աստէ մինչև
ցկատարած յեօթն փոքրագոյն դարս բա-

ժանի։ յորս զանազան աղանդաւորք երևին
ի ներքոյ եօթանց կնքոց։ Երօթն կնքոյս
սմանք զեօթն բանս ի մարգարէից Հայե-
ցօղս առ տնօրէնութիւն Քրիստոսի առնուն.
որպիսի է զերծին Գեղէօնի, և այլ նմանք։
Այլք նկատեն ասա զեօթն տկարութիւնս՝
զորս եցոյց ծայրագոյն կարողն ի խաչին.
որպիսի է ծայրագոյն տկարութիւն ի ծայ-
ծայրագոյն իմաստութիւն և այլք։ բայց
այսոքիկ են վայելչականք։ և ոչ բնականք։
"Երբ տեսի զՀրեշտակ մի զօրաւոր։ զի քա-
ջալերէր ձայնիւ մեծաւ՝ և ասէր։ ո՞վ է արժանի
առնուլ զգիրքդ։ և լուծանել զկնիքդ զորս։"
Այս Հրեշտակ՝ Հրամանատար Աստուծոյ։ որ-
պէս զմուտեստիկ՝ այնպէս ձայնիւ մեծաւ զո-
չեաց։ մի՞ոչ զի լուան երկնայինք։ երկրայինք
և անդարամեռականք։ և ասէր։ ո՞վ որ ար-
ժանի իցէ։ յառաջ եկեսցէ առնուլ զգիրն
և բանալ։ Երբ որպէս Գողիաթ ձայներ ի
բանակն Սաուղայ։ թէ՝ եկեսցէ մի ոք մե-
նամարտիլ ընդիս։ և որպէս յայնժամ՝ ոչ ոք
գտաւ բաց ի Դաւթէ։ այսպէս և ասա՝ ոչ
ոք գտաւ արժանի։ բաց յորդւոյն Դաւթի։
"Երբ ոչ ոք կարէր։ ոչ յերկինս՝ և ոչ յերկ-
րի։ և ոչ ի ներքոյ երկրի բանալ զգիրն։

և ոչ հայել ի նա։" Աստուստ յայտ է թէ զիւրքն այն էր մարգարէութիւն զապառնեաց. զի՝ ոչ ոք կարաց բանալ։ Բանզի զապառնիս բացարձակապէս միայն ՅԾ զիտէ, ըստայնմ՝ Դասայեայ, պատմեցէք զայն՝ որ զալոցն են, և ասացիք թէ ՅԾՔ իցէք։ Զ՝ այ ոչ հրեշտակք և ոչ սուրբք և ոչ զիք ի ներքոյ երկրի՝ կարացին զիտել։ Դու ոչ հայել ի նա, այսինքն պարզ մտօք զիտել զեսրհուրդն։ Դու թէպէտ ումանք ապառնիք իմացեալ լինին բնականաբար ի հրեշտակաց, ի դիւաց և ի մարդկանէ, բայց ոչ բացարձակ նկատմամբ, այլ ի բնական պատճառաց իւրեանց. որպիսի է խաւարումն արևու։ "Դու ողբային բաղումք, կամ՝ ես ողբայի բաղում։" Որ ունի ստատիկ իրաց առ իմաստութիւն, առ լուծումն խրթնիմաց բանից, իբրու հառաչէ և լայ. որպէս քաղցեալ երեխայ առ կաթն իմաստից, և որպէս կոյր առ տեսութիւն լուսոյ. զի իմաստն է լոյս. ըստ այսմ՝ սիրեցէք զլոյս իմաստութեան։ Բազումք ոչ սիրեն, պատճառն է, զի ոչ տեսանեն աչօք զգեղեցկութիւն նը. զի ըստ Պղատոնի, եթէ իմաստութիւն ձեւակերտ երևիր մարդկային աչաց, ոչ ոք

էր, որ ոչ սիրիցէր զնա։ Այսպէս սիրահար էր սուրբ խնամատութեան Յովհաննէս, վասն զայր սատարիկ, զի ոչ զտաւ բացօղ զրքոյն։ Ասիցե՞ս, երանելիքն յէութիւն Աստուծոյ, կամ՝ ի բանի՝ տեսանեն զամենայն, ապա ուրեմն՝ ոչ պարտին գոլ անտեղեակ ապառանեաց և այս գրքոյն։ Պատասխանեմ՝ թէ առ էութիւն երանութեան՝ ոչ պահանջի դիտել զամենայն զոր գիտէ Աստուած. այլ միայն տեսանել զէութիւն Աստուծոյ, և չափաւոր յայտնութիւն ի նմա։ Եւ պատճառն է հունաւորութիւն մտաց երանելեաց. զի հունաւոր միտքն ոչ կարէ պարփակել զանհուն խնամատութիւն մտացն Աստուծոյ։ Ասի՝ թէ պէտ հրեշտակք են երանելիք, բայց վասն հունաւորութեան իւրեանց՝ օր ըստ օրէ լուսաւորին Աստուծոյ, և յառաջանան ի գիտութիւնս։ Աստուստ երկնայինք ոչ կարացին առնուլ զգիրքն և բանալ։ Բանալն է յայտնել զլսարհուրդն. և ասա դիտելիք են երկուք։ Ասի՝ թէ լացն այն առ Յովհաննէս պատկանի, և ոչ առ երկրաւորսն և առ երկնայինսն. զի յերկինս ոչ գոյ լաց. վասն ըստ այլ թարգմանութեան գրի։ "Եւ ես ողբայի։" Երկրորդ՝ թէ երկնայինք և

անվնդայինք, ոչ թէ տեսին զայս ընդ զոչել հրեշտակին, այլ՝ ոՀ բանին այնպէս մակաբերէ. զի թէ երկնայինք չէմացան, քանի՞ ևս երկրայինք և անվնդայինք։ Ոմանք ի ներքոյ երկրի եղելովքն՝ խմեան զքաւարանի եղեալքն. բայց՝ որպէս քաւարանն է անհիմն, նոյնպէս և բանք նոցին. այլ՝ խմանին դժոխայինքն։ "Եւ մի ոմն յերկրայնոցն ասէ, մի ողբար. ահաւասիկ յաղթեաց առիւծ, յազգէն Յուդայ՝ յարմատոյն Դաւթի բանալ զգիրսն, և զեօթն կնիքսն նորա։" Դոհունակք են զկեցութենէ խրեանց, ոչ գիտելով զկորհուրդ զրքոյն՝ ոչ տրտմին, այլ յուսադրին, մի լար։ Քո է յաղթող առիւծ յազգէն Յուդայ, այսինքն որդի Յուդայի. այս է՝ առիւծ յառիւծոյ. զի ըստ Յուդայէ ասաց Յակոբ. առիւծ և կորիւն առիւծոյ, որ գիտէ առ Քո. տես անդ։ Այլ՝ յաղթութիւն նր սատ՝ ոչ է որքան առ սատանայ և առ աշխարհ. այլ ըստ իւրում՝ աստուածութեան միաւորութեամբ լուսաւորեալ խմացականին զերազանցապէս՝ յաղթէ մոռք սերոբէից և քերոբէից. խմանալով զամենայն ապառնիս։ Յայս միտ ասի, էած զքեզ Աստուած խղով ուրախութեան՝ առաւել

քան զընկերս քո։ այսինքն՝ քան զԿրեշտակս և մարգարէս։ "Եւ ի մէջ աթոռոյն և չորից կենդանեացն զառն կայր գնեալ։" Ոչ եթէ անդէն ի զենման էր, այլ զենեալ կատարեալ նշանք զենմանն ի նմա երևիր։ որպէս ի Համբարձմանն։ վասն էր կարմիր են ձորձք քո։ Խնդրիցես՝ վասն էր երիցունքն բազմեալ յաթոռս, իսկ զառն Աստուծոյ Քն կայր, այսինքն կանգուն ի մէջն Նոցա։ Պատասխանեմ, ի լրումն բանին զոր խոստացաւ։ Նստուցից զձեզ ի սեղան հօր իմոյ։ և անցեալ պաշտեցից։ Ուրիշ լսէ։ և զառն տեսանէ։ զի հեգ էր։ և զօրաւոր յոյժ ևս։ "Որոյ էր եօթն եղջիւրս։ և եօթն աչս։" Եօթն եղջիւրք նշանակէ զընդհանրական իշխանութիւն Քն։ ոչ միայն ըստ որումն՝ այլ և ըստ որումն մարդ։ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի։ Իսկ եօթն աչքն նշանակէ զամենատես խնամակալութիւն Քն։ և զլիութիւն եօթնարփեան շնորհաց Հոգւոյն Սրբոյ։ և զբոլոր հոգին։ որպէս յարէ։ "Որք են եօթն հոգիք Աստուծոյ՝ առաքեալք ընդ ամենայն երկիր։" Որով նշանակի Հոգւոյն Սրբոյ անհնութիւն։ զորմէ ասէ խնամատուն։ Հոգի

Տեառն ելից զտիեզերս։ Օ այս եօթնաչեայ այլաբանական զառնս՝ Օ ոքարիա կոչէ վէմ։ Դ վերայ վիմին եօթն աչք են, թէ պէտ ոմանք զեօթն գլխաւոր հրեշտակս սպասաւորս զառին իմանան։ "Եւ եկն և կալաւ յաջոյ ձեռանէ Նորա, որ նստիւր յաթոռն։" Գալ զառին և ժամանել առ աջն Աստուծոյ, նշանակէ զհաստատութիւն Աստուածութեան ընդ Հօր։ յայս միտ և Դանիէլ ասէ, զայր ընդ ամպս նման որդւոյ մարդոյ, և հասանէր առ հին աւուրցն։ այսինքն հաւասար իւր։ մերձենալով նմա ըստ Աստուածութեան։ Դարձեալ ոչ սպասելովն զի տայցէ։ այլ համարձակ կալնելով զաջն Հօր։ նշանակէ թէ բնու թեամբ ունի զաստուածութիւն ընդ Հօր։ ոչ ինչ յափրշտակութիւն համարեալ զլինելն հաւասար Աստուծոյ։ "Եւ յորժամ էառ զգիրսն։ չորք կենդանիքն։ քսան և չորք երիցունքն անկանէին առաջի զառին։" Նախ՝ յերկրպագութիւն։ երկրորդ՝ յուրախութիւն սրտից իւրեանց ի շնորհակալութիւն։ զի խորհրդազգայ լինելոց էին։ Քանզի պահական ինդութիւն յաւելանի ի սուրբսն ի Նորոգ լուսափայլութենէ զապառնեաց։ վայ երե-

ւեցուցին զքնարն և բուրվառս ոսկի, լի խնկօք. որք էին աղօթք սրբոց։ Գ. խոտելի է, զի մինչ հանգերձեալ էր զառն բանալ զգիրն, մեծ ուրախութիւն եղև կենդանեացն և երիցանացն. վասն սկսան հարկանելոյ զքնարս, և բուրել զնեկալից օրհնութիւն աղօթից ի յոսկեղէն բուրվառէ, այսինքն՝ ի սուրբ սրտից իւրեանց։ Որպէս ուրեմն զբուրվառն հոգեւորապէս իմանայ. թէ է աղօթք սրբոցն, այսպէս և քնարն հոգեւորապէս իմանալի է, զի նշանակէ զնեղդաշնաւոր և համաձայն երգս երիցանց, որպէս քնարս. բայց երևակայութեան Յովհաննու՝ քնար երևեցաւ։ Աստի ուրեմն ասեն լինել յերկինս քնար։ Աստի յայտ է թէ՝ կենդանիքն ևս ունէին զձեռս ի կալնուլ զքնար։ Արդ՝ երկնից պատկանի քնար ի ցնծութիւն. իսկ երկրի փող ի պատերազմ։ Օդայրազոյն փիլիսոփայից խղճն է գտանել զնորս, և լսել ընդ նորազոյնս. ըստ այսմ Աթենացիք ոչ այլ ինչ պարապէին, բայց ասել զնորս և լսել զնորազոյնս։ Այսպէս երկնաքաղաքացի երանեալ գերբնական փիլիսոփայքն և աստուածաբանքն՝ ոչ այլ ինչ ըղձան, եթէ ոչ՝ զնորոգ լուսափայլութիւնս, խնամատս և

տեղեկութիւնս խորոյն Աստուծոյ. վասն ընդ առնուլ զառին զդիրքն առ ի բանալ, ի զուարճութենէ սրան՝ խկոյն կազմեցին զքնարս և բուրեցին զենկալոյ զերգս օրհնութեան, "Եւ օրհնեին զերգս նորս, և ասէին, արժանի ես զառնդ զենեալ՝ առնուլ զգիրդ, և բանալ զնիքդ դորա. զի զենար և զնեցեր զմեզ Աստուծոյ և արեամբ քով։" Այս երգս ոչ զոյր յերկինս, նախ քան զմարդանալն և զենանիլն Որի. վասն է նոր։ Դարձեալ՝ նոր ասի երգն, մինչև ըղձիս երգեալ լինի։ Որի հոգին՝ թէպէտ ի սկզբան յղութեան հաղորդեալ աստուածութեան Բանին, լցեալ էր ամենայն գիտութեամբ. նաև գիտէր զապագայսն, որպէս զուշակեաց յաւետարանի անդ. բայց ոչ այնքան մասնաւորապէս՝ որքան Աստուծոյ վայելէր։ Ուստի զօրն կատարածի խոստովանեցաւ չգիտել. և ոչ որդի այսինքն՝ ըստ որում մարդ։ Այլ զայս գիտութիւն՝ և ևս պայծառապէս ընկալաւ հնազանդութեամբ չարչարանացն և արդեամբ խաչին. վասն ասեն ասա, արժանի ես բանալ զգիրդ, զի զենար, և այլն։ Ուստի ի յղութեան յայտնեցաւ նմա ամենայն ընդհանրապէս. իսկ ի յարութեան՝ յայտնեցաւ

նմա մանաւորապէս ։ ըստ ամենայն պարա-
գայից ։ նա և օր զատաստանին ։ և զայս
ասեմք զօրութեամբ բանի երիցանցդ ։ կամ
թէ ընկալաւ իշխանութիւն յայսոնէ ում
և կամիցի զապաւնիս ։ Գնեցեր զմեզ Աս-
տուծոյ՝ արեամբ քով ։ Այսպէս տրամա-
դրեալ նշանակէ թէ՝ գնեցեր զմեզ արեամբ
քով ։ վասն Աստուծոյ ։ Իսկ մինչ այսպէս
տրամադրեմք ։ գնեցեր զմեզ՝ Աստուծոյ ա-
րեամբ քով ։ նշանակէ Աստուածային արիւն ։
Եւ այս ոչ է անդէպ ։ զի որպէս ասիլ կա-
րէ աստուածային մարմին ։ աստուածային
ձեռն ։ կամ Աստուծոյ ձեռն ։ այսպէս Աս-
տուծոյ արիւն կարէ ասիլ՝ վասն միութեան
անձին ։ Այսպէս ասէ Յովհաննէս ։ արիւն
Որդւոյն Աստուծոյ սրբէ զմեզ ։ "Ամենայն
ազգաց և լեզուաց ։" Օ ի Դ ի ի ջարչա-
բանքն ընդհանրապէս փրկութիւն գործեաց ։
և արդիւնքն առ ընդհանուրս տարածեցաւ ։
վասն ոչ է խորութիւն Հրէի ։ կամ հեթա-
նոսի ։ Երկրորդ՝ յատկապէս շնորհակալ
լինին ։ վասն յանթիւ ազգաց և լեզուաց միջոց՝
զինքեանս ընտրելոյ և փրկելոյ ։ "Եւ
արարեր զմեզ Աստուծոյ մերոյ քահանայս
և թագաւորս ։ թագաւորել ի վերայ երկ-

րի։" Սուրբքն յերկինս ասին քահանայք, զի մատուցանեն Աստուծոյ զաղօթս և զօրհնութիւնս, և թագաւորք՝ զի են հաղորդակից տիրական իշխանութեան Քրիստոսի։ "Թագաւորել՝ ի վերայ երկրի։" Նախ՝ յերկին կենդանեաց։ Երկրորդ՝ զի նախ յերկրի թագաւորեցին տիրելով աշխարհի և մարմնոյ և սատանայի։ Զնորհքն Քրի։ Եւ ապա արժանացան երկնային թագաւորութեան. զի որ ի վերայ երկրի ոչ թագաւորեցէ ախտից, ոչ կարէ յերկինս թագաւորել։ Քահանայութիւն նախադրէ, զի ստոյգն քահանայութեան բարձր է քան թագաւորութեան. ուստի որպէս յեկեղեցւոջ՝ քահանայն յառաջապահ բազմի քան զթագաւորն, այսպէս և յարքայութեան։ "Եւ տեսի և լուայ զձայն հրեշտակաց բազմաց, որք շուրջ զաթոռովն, և զչորիսիսքն կենդանեացքն, և զքահանայիսքն. և էր թիւնոցա՝ բիւրք բիւրաց, և հազարք հազարաց։ Ասէին ձայնիւ մեծաւ, արժանի է գառնդ զեղեալ առնուլ զզօրութիւն, զիմաստութիւն և զաստուածութիւն, այսինքն զաստուածական պատիւ։" Մեծաձայն՝ է մեծ խղճն, հրեշտակք իմանալի ձայնիւ զո-

չէին։ բանից կենդանեաց և երկրացոյն վկայէին։ Այսպէս և ամենայն արարածք, զի յանուն Յեսի Քրիստոսի ծունր կրկնեն երկնաւորաց, երկրաւորաց, և ի սանդարամետականաց։ Բայց ոչ ասացին զենար և զնեցեր զմիզ, զի հրեշտակք ոչ են զնեալ արեամբն Քրիստոսի։ "Եւ որք ի ծովու։" Այս է ծովային կենդանիք։ "Եւ որք ի նոսա՝ է հաստատութիւն։" Վերոյ ասացելոց միան է, թէ՝ ամենայն բաստեղծուածք ճանաչեն զՔրիստոս ստեղծող և իշխան ինքեանց, և ամենայն գովութեան արժանի։ Այլ՝ երկրացոյն և ի հրեշտակաց և յամենայն արարածոյ՝ ուսանիմք զովել, օրհնել, սիրել, և երկրպագել Քրիստոսի։

ԳԼՈՒԽ Զ։

"Եւ տեսի զի եբաց զառն զմին ի կնիքսցն և լուայ ի միոջէ չորից կենդանեացն իբրև զձայն որոտման, զի ասէր, եկ և տես։" Ասէ իմաստունն, զամենայն ինչ կարգաւ արարեալ։ կարգ տիեզերաց պահանջէ, զի Աստուածային խորհրդոցն նախ՝ մերձակայքն Աստուծոյ լեցին խորհրդազգած։ Ուստի և սուրբն Դիոնէսիոս ասէ, և տեսանեմք՝ զի Աստուածային տնօրէնութեանն Քրիստոսի, նախ՝

հրեշտակք եղեն խորհրդազգած։ վասն որոյ ի բանալ կնքոյն նախ՝ կենդանիքն առաւել մերձակայք՝ խորհրդազգած եղեն։ և ապա միւսն ի նոցունց՝ որ կարծի զոլ առաքեալքն։ որ որոտայր և ասէր առ Յովհաննէս։ ես ծանեայ զխորհուրդն եկ և դու և տես։ էր բանաւոր կենդանի։ թէպէտ առաքեալքդ։ վասն զի որոտայր և խօսէր։ Հոգւոյ որոտմանէն ցուցանի Քրիստոսի ահեղ թագաւորութիւն։ "Եւ տեսի և ահա ձի սպիտակ։" Զին է նշան պատերազմի։ Օ պատերազմ՝ էրիցս թագաւորայ ցուցանէ էրբրորդ իր իւրօք։ Այսպէս։ ձին պատրաստի պատճառաւ պատերազմի։ և Ցէր տայ զփրկութիւն։ Եւ Ամբակումն՝ ելեր դու ի կառս քո։ հեծելութիւնդ քո փրկութիւն եղև յերանելդ քո։ Այսպէս Սաղմոս։ կառք Աստուծոյ բիւրաստուիկ հազարք ուղղիչ։ Ուստի հրեշտակքն Եղիսէի ձիւք և պատերազմական կառաք երևեցան։ Այսպէս երիվար երևեցաւ Հեղիսդորոսի։ որ կամէր զգանձս տաճարին յափշտակել։ Այսպէս Քրիստոս զպատերազմող հարսն ձիոյ նմանեցոյց։ ձիոյն խմոյ ի կառն Փարաւոնի նմանեցուցի զքեզ մերձաւոր իմ։ Լսէ սպիտակ

կեն լծի ի կառս յաղթողաց ։ որպէս առնեն Հռոմայեցիք ։ " Եւ որ հեծեալն էր ի նմա ունէր զաղեղն ։" Եւ Քրիստոս որ յարեցաւ ի խաչին իբրև զաղեղն ։ և զնետ սիրոյ արձակեալ խոցեաց զամենեսեան սիրով իւրով ։ Բայց այժմ ընդդէմ թշնամեաց Եկեղեցւոյ և անդարձ ձիոյ ելանէ ի պատերազմ ։ որպէս ասէ Դաւիթ ։ ապա թէ ոչ դառնայք առ նա՝ զսուր իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ և ի նմա պատրաստեալ է զանօթս մահու ։ և զնետս իւր այրեցելովք է գործեալ ։ այսինքն սիրով ։ զի զոր սիրէ Տէր խրատէ ։ Եւ այլուր ասէ ։ նետ քո սրեալ են հզօր ։ անկցին ի սիրտս թշնամեաց թագաւորի ։ զի ի պարտութիւն մատնեցին ։ ուստի յարէ ։ և եկն յաղթօղն զի յաղթեսցէ ։ Ելոյ՝ երկրորդ ազգ է Քրիստոսի յաղթութիւն ։ մին սիրով ։ մինչ դարձուցանէ զՀնազանդօղս ի մեղաց ։ Երկրորդ՝ սրով ։ մինչ դատապարտէ զապստամբս ի դըժոխս ։ Ելոյ՝ ի ներքոյ առաջին կնքոջն իրաւեկ եղև և ծանեաւ զՔրիստոսի ծածկապէս պատրաստեալ զոյն ի պատերազմ ընդդէմ Եկեղեցւոյ մարանչողաց ։ և յաղթանակեն ։ Այլ ասէ տուաւ նմա պսակ ։ զի յաղ-

թողին տացի պսակ։ քանզի պատերազմելով ի Տրայիանոսէ մինչև ց Կոստանդիանոս, տասն կայսերս վերջապէս յաղթեաց։ որոց առաջինն էր Ներոն։ երկրորդ՝ Դոմիտիանոս։ երրորդ՝ Տրայիանոս։ որ զսուրբն Իգնատիոս առիւծուց էարկ։ Չորրորդ՝ Ադրիանոս, որ զսուրբն Պողիկարպոս հրով դատեաց։ Հինգերորդ՝ Մեռեխանոս։ վեցերորդ՝ Յուլիանոս։ եօթներորդ՝ Դեկոս։ ութներորդ՝ Վալերիանոս։ իններորդ՝ Ուրելիոս։ Բայց սորա հալածանքն անկատար մեացին։ Տասներորդ՝ Դիոկղետիանոս։ Ապ՝ սպիտակ ձիաւորաւ որպէս Բրիստոս։ նոյնպէս և Բաստիկ հովիւքն Եկեղեցւոյ են իմանալի։ որք մինչև ց Կոստանդիանոս, յաղթօղ մարտիս պսակեցան ի Բրիստոսէ։ Նաև սուրբն Կոստանդիանոս և սուրբն Տրդատ սպիտակ ձիաւորաւ նշանակին։ զի ի սոսա յաղթանակեաց Բ։ Հանդերձ սուրբ Գրիգորիս և սուրբ Սեղբեստրոսիս։ ընդդէմ այս ձիաւորիս յաջորդութեամբ ժամանակաց յարեան երեք այլ ձիաւորք։ եկեղեցականք և աշխարհականք։ որք հետևին։ “Եւ յորժամ եբաց զինիքն երկրորդ՝ լուայ յերկրորդ կենդանւոյն։ որ էր զուարակն։ որ ասէր եկ

և տես։ Եւ ել այլ ձի կարմիր։ և որ հեծեալն ի նմա տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ։ զի զմիմեանս զենցեն։ և տուաւ նմա սուր մեծ։" Որպէս առաջին ձիաւորին մատնեալիկ եղև Աբիւծն, այնու զի նշանակէր զյաղթող Աբիւծն Քրիստոս։ Այսպէս և երկրորդ ձիաւորին մատնեալիկ եղև զուարակն։ զի նշանակէր ի քահանայական դասէ հերձուածող ոգի։ ամբոխող խաղաղութեան եկեղեցւոյ։ և այս էր Արիոս առաջին հերձուածողն՝ որ զԵկեղեցին յաւուրս Կոստանդիանոսի ի խոր խաղաղութեան վերուվեաց։ Սա էր հեծեալ ի կարմիր ձի։ զի բոլորովին ընկղմեալ էր ի մարմին և յարիւն։ որ զորդին Աստուծոյ ոչ կարէ յայտնել։ ուստի ի դատանէն Պետրոսի զորդին Աստուծոյ։ ասաց Քո՝ երանելի է քեզ Սիմովն։ զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ։ այսինքն բնական բանականութիւն։ յոր յենոյր Արիոս։ վասն օտարանայր Աստուածային անձնաւ ծննդենէն Քրիստոսի։ Այսու կարմիր ձիով երևեցաւ և Մակեդոն։ զի յենեալ յուժգնութիւն մտաց՝ մարանէր ընդդէմ Աստուածութեան Հոգւոյն Սրբոյ։ Յայս կարմիր ձի հեծաւ և

Ղեսատոր , զի հաստատելով զՔրիստոս կատարեալ մարդ և կատարեալ Աստուած հետևեալ բանականութեան՝ երկուս անձինս զանազանէր ի նմա Աստուածային և մարդկային. զորս զամենեսին յաղթահարեաց հեծեալն յապտակ ձին , երիւք գլխաւոր ժողովիւքն : Դարձեալ յայս ձի հեծաւ և Լևոն ի չորրորդ նուագին , և զի Աստուած ի՝ չորրորդումն պատժէ , ըստ այսմ ի վերայ երից ամբարշտութեանցն Մովսէս և ի վերայ չորրորդին ոչ դարձայց ի նմանէ . վասն ի պատիժ նոցա թոյլ ետ Աստուած առնուլ զեսաղաղութիւն յերկրէ և առնուլ զսուր մեծ : Այս մեծ սուրս է բնական բանն՝ տուեալ ի բերան Լևոնի , որով նախ՝ զմիաստանի պատմութեանն ներմարմնութեան Քրիստոսի երկատեաց . ասելով ի տումարն իւր , թէ ոմն պայծառանայր , և ոմն ախտակրիւր : Երկրորդ՝ զեկեղեցին Քրիստոսի պատառեաց , զի մինչև յայնժամ ի միութեան կայր : Երրորդ՝ այնու սրով զանթիւ բազմութիւնս Քրիստոնէից յայտնապէս խոցոտեաց . զի համախոհութեամբն Արկիանոսի՝ զԱսորեստան բովանդակ անապատ արար . և այս է՝ զոր ասէ , զի ղենցեն զմի-

մեանն՝ տուաւ նմա սուր մեծ։ "Եւ յոր-
ժամ եբաց զկնիքն երրորդ՝ լուայ յերրորդ
կենդանւոյն, որ է մարդն ըստ կարգի։
Եւ տեսի և ահա ձի սեաւ, և որ նստեալն
էր ի վերայ նորա, ունէր կշեռս ի ձեռին իւ-
րում։" Այս սեաւ ձիաւորս նշանակէ զՄահ-
մէտն. նախ՝ զի ի հարաւոյ եկն. յորում
մարդիկ ի տապոյ աշխարհին սեւացեալ են։
Երկրորդ՝ զի խաւարեալ էր ի լուսոյն՝ որ
մեզ ծագեցաւ. որպէս ասէ Շնորհալին՝ որոց
Մահմէտն խաւարեալ, առ ի լուսոյն երկնից
ծագեալ։ Աստուստ երրորդ կենդանին ե-
ցոյց զսա, որ էր նման մարդոյ, զԲրիս-
տոս՝ սոսկ մարդ և սոսկ մարդասէր զաւանեաց,
վոյ սեւացաւ դէմ նորա քան զածուին։ Սատ
Սաւուղ կամ Աբիսաղոմ, որ հայածէր զդ
Դաւիթ, կոչեցաւ քուս. յեօթն վերնագիրն
Սաղմոսի։ Պիւթագորաս ասէր, մի ձաշա-
կէք ընդ նոսա, որոց տունն է սեաւ, այսինք-
քն բասրքն։ Աստուստ՝ նմանօրէն սեաւ ձի-
ոյն՝ արապ ձի ասի։ Այս ձիաւորս՝ ասէ,
ունէր կշեռս ի ձեռին իւրում՝ այս կշեռս
էր ի Մահմետ ոսանաւոր չափով կշռեալ
Դուռան գիրքն. զոր կոչեն մէվզուն քիթապ,
այսինքն կշռեալ գիրք։ Թէպէտ թարգման-

նեալն ոչ է ոտանաւոր։ յայսմիկ զբաղ ըստ
իւր կամաց կշռէ զօրէնս իւր։ վասն ասի լի-
նիլ ի ձեռին իւրում։ "Եւ լուայ զձայն
ի միջոյ չորից կենդանեացն։ կապիճ մի ցո-
րեան գինարի միոյ։ և երեք կապիճ գարի
գինարի միոյ։ և զձէթ և զգինի մի մի ինասես-
ցես։" Որպէս ներողութեամբն Աստուծոյ
Յուլիանոս թագաւորեաց։ այսպէս և սա։
բայց Աստուած ողորմութեամբ իւրով մե-
ծաւ ոչ եթող ինքնարձակ անձանց արձա-
կիլ ի վերայ քրիստոնէից։ այլ՝ չափով
բերիլ։ Ուստի միոքն ի կենդանեաց՝ զգու-
շացուցանէ զնա խնամով շարժիլ։ և գա-
տաստանաւ վարիլ։ Որպէս երեք լիտր գա-
րին արժէ միոյ լտեր ցորենոյ։ Այսպէս իւ-
րաքանչիւր նիւթ գատելոյ ուղիղ կշռել։
Զն նիւթք՝ որոց մի կապիճն արժէ միոյ
գինարի։ որպէս ցորեանն։ Եւ են՝ որոց ե-
րեքն արժէ։ որպէս գարին։ Զն՝ որոց մինն
բաւական է չորս ոսկի խաճար տալոյ։ Եւ
են՝ որոց երեքն հազիւ կարեն այնքան տալ։
Որոնն չիւրաքանչիւրոցն ըստ արժանւոյն
տացես։ Զն՝ որոց մինն արժէ միոյ գինարի։
և են՝ որոց երեքն։ Այս թէ այսպէս է։
ահա յարէ յասելն՝ գինւոյ և ձիթոյ մի վը-

նասեսցես ։ այսինքն Քրիստոնէից ։ որոց օրէնքն կապեալ է ի ձէթ և ի գինի ։ այսինքն ի մկրտութիւն մեռանիս և ի գինեաւ Սուրբ պատարագն ։ Այսպէս զՅօբ մինչ մատնեաց նատանայի ։ պատուիրեաց բայց միայն զոգի նորա պահեսցես ։ Սա ցանկացաւ ի ժամանակս Հերակլի կայսերաց ։ ի թուին Քրիստոսի 630։ և մինչ թագաւորեալ նուաճեաց զՔրիստոնեայս ։ ըստ Հրամանի երրորդ կենդանւոյն պատուիրեաց իւրայնոյն չնեղել զքրիստոնեայս ։ և ուղիղ դատաստանաւ վարել ընդ նոսա ։ Բայց այժմ բարձեալ տեսանի ուղղութի և արդարութիւն ի դատաւորն նոցա։ զի ամենեքեան զրեթէ են ագահք և կաշառաբեկք ։ Ուստի նշան է թէ՝ փոթով կործանելոց են ։ Կապճաւն ումանք զլարաչարն իմանան ։ այլք ասեն տանի իբրու հօխայ ու կէս ։ Պլիտակ ձիաւորն Քրիստոս զայս ևս յաղթահարելոց է մերձ ընդ մերձ ։ որպէս զաւհաւատչեայն Ճաշակեն այժմ ։ "Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ լուայ ի չորրորդ կենդանւոյն՝ որ է արծիւն։ զի ասէր եկ և տես։ Եւ տեսի և ահա ձի շլատս և որ նստեալն էր ի վերայ նորա։ ունէր զմահ ։ և դժոխք երթային զհետ նորա։ և տուաւ նմա իշխա-

նութիւն չորրորդ մասին աշխարհի. սատա-
կել սրով և սովու և մահուամբ և գազա-
նօք երկրի։" Շ լուսոյ է բառ Յունաց, գրի
ի նոսա քլուսօս և նշանակէ զգոյն կանաչ,
կամ՝ Քսախի, կամ՝ քիպրիթն։ Կոտօղն ի
վերայ սորա նշանակէ զնեռն, որ կից հե-
տևելոց է կործանման Թուրքաց։ Կախ՝ զի
զսա եցոյց արծուակերպ չորրորդ կենդանին.
զի նեռն որպէս արծիւ նստելոց է ի վերայ
Թագաւորաց երբ ի վերայ բուսոյ։ Երկրորդ՝
զի է ըստ կարգի չորրորդ ձիաւոր, որ պա-
տասխանէ Դանիէլի չորրորդ գազանին. զի
որպէս նա էր ահեղ և զարմանալի, և նշա-
նակէր զնեռն. այսպէս և սա էր զարմանա-
լի և ահեղ։ Կախ՝ զի էր նստեալ ի շլուսոս
ձի, որ տարազ ի մէջ ձիոց, է զարմանա-
լի և հաղուագիւտ։ Երկրորդ՝ ունէր զմահ,
այսինքն զամենայն իշխանութիւնս մահա-
ցուցիչս, վասն սպանանէր զմարդիկ սովու,
սրով, մահուամբ և գազանօք երկրի. քան-
զի նեռն զօրութեամբ գիւաց արգելու զանձ-
րև, պատճառէ զսով, առնէ ժանտախտ,
այսահարէ զգազանս կոտորել զմարդիկ. վասն
սոսկ զժոխք երթային զհետ նորա, այ-
սինքն դիւագունդ զօրք. ի պարունակողէն

զպարունակեալն նշանակելով, որպէս ասել քաղաքն գնաց զհետ իշխանին. այսինքն քաղաքացիք։ Եւ այս թոյլատրութեամբն Աստուծոյ, վասն ասէ տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի, այսինքն ի վերայ քրիստոնէից, զի սուքա միայն ընդ-զիմանալոց են նեռին, և են իբր չորրորդ մասն ի մէջ հեաւողաց նեռին. յորոց զոմանս նահատակելոց է սրով, զոմանս մահուամբ՝ այսինքն ժանտախտիւ, զոմանս սովու, և զոմանս այսահարեալ գազանօք։ Այ ի հետևեալ կնքոջն ցուցանին հոգիք զեղոյն ի նմանէ և կամ ի սկզբանէ եկեղեցւոյն մինչև ցնեռն. որպէս Դանիել զչորս պետութիւնս չորս գազանաց նմանեցուցոյց, և Օաքարիա զնոյն չորից ձիոց, զնոյն և ասա Յովհաննէս առնէ. բայց ամենեքեան յաղթին յառաջնոյն։ Արդ՝ սուրբն Յովհաննէս ի ներքոյ չորից կնքոցս տեղեկացաւ ի չորից կենդանեացն որպիսի մարդ լինելոց է յեկեղեցւոջ մինչ ցնեռն. և յետ այսորիկ ի ներքոյ մնացեալ կնքոջն՝ ընթեռնու որ ինչ լինին ցկատարած։ "Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան զեղելոց վա-

ոչն բանին Աստուծոյ, և վասն վկայութեան նորա՝ զոր ունէին։" Եւ մէջ խրատին Մովսէսի և Սղոմոնեան տաճարին զոյր սեղան ողջակիզաց, ուր զպատարագիսն ի պատիւ Աստուծոյ ողջակիզէին. և զարիւն հեղուին շուրջ զատրոտումն, և այն նշանակէր ըզ բոլորապտուղ պատարագն մարտիրոսական նուիրեալ Աստուծոյ՝ կամ սրով, կամ հրով յամբաստաց։ Որպէս ասէ Տէրն, եկեսցէ ժամանակ եթէ ոք սպանանիցէ ի ձէնջ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Աբդ՝ այսպիսի սեղան նմանութեամբ ետես յերկինս. եւ կամ թէ նմանութեամբ զաթոռն Աստուծոյ սեղան կոչէ. զի որպէս մեք զբեմն՝ ուր Բրիստոս բազմի, սեղան կոչեմք, այսպէս և սա՝ զբազմոյն Աստուծոյ սեղան կոչէ. ի ներքոյ որոյ էին հոգիքն զեղեալց մարտիրոսաց նմանութեամբ արեանց հեղեալք զսեղանով ողջակիզին։ Աստուստ երեւի թէ հոգիք սրբոց են զատեալք և որոշեալք ի հոգւոց մեղաւորաց։ Երկրորդ՝ երևի թէ ոչ հատարակ արդարոց հոգիքն, այլ՝ միայն մարտիրոսացն լցեն ի ներքոյ սեղանոյն. և այս ի պատիւ նոցա։ "Որք ասէին ի ձայն մեծ մինչև յերբ Տէր սուրբ և ճշմա-

ինս ոչ դատես և խնդրես զվրէժ արեան մերոյ ի քնակչաց երկրի։" Ահա ձայնն Ելշանակէ զմեծ իղձն, այս է՝ բողոք արեան սրբոց։ Ասիեն Աբէլ եղբօր քո բողոքէ առիս յերկրէ։ Աբէլ անտի մինչև ցժամանակս Նեռին եղեալ մարտիրոսացն հոգիք՝ հանդչէին ի Ներքոյ սեղանոյն, և սպասէին երկայնմտութեանն Աստուծոյ. և մինչ տեսին զի նեռանէն Նահատակեալք հոգիք մարտիրոսաց երամովին երանէին առ ինքեանս, յայնժամ զարմացեալ նախակատար հոգիքն ընդ երկայնմտութիւն Աստուծոյ. զոչէին միահաղոյն, մինչև յիրք Տէր, և այլն։ Կամին ասել, մինչ սուրբ հոս և Ճշմարիտ, հարկէ փութով առնել զհատուցումն, զի մի պղծեսցի անուն քո ի վատախոհ հայհոյչաց՝ որք ասեն եթէ տեսցուք, եթէ գայ Աստուած և փրկէ զդա ի մէնջ։ Եւ այսպէս իբր խօսին զարդարութիւն առ Աստուած. նաև այսու ցանկան առուրն դատաստանի, զի զվեցցին զվառաւոր մարմին. վայ ի տեղն մարմնոյ տուաւ նոցա պատմուճան սպիտակ։ Նաև այսու յայտնապէս ցուցանի, թէ չև էր առեալ Տէր զվրէժ ի սպանողաց իւրեանց, և մանաւանդ ցուցանեն

զնեալն դեռ կենդանի գոյն։ Օ՛ի մեծ խնդութիւն է արդարոց տեսանել զՀատուցումն մեղաւորաց։ Ուրախ եղիցի արդարն յորժամ տեսցէ զՀատուցումն։ Եւ ասա ծանիցի զի սուրբ գիրն՝ մերթ ցուցանէ զՀոգիս արդարոց պսակեալ։ որպէս զերիցունս։ Եւ մերթ չև ևս կատարեալ։ որպէս զմարտիրոսս։ Այսպէս զմանս դատապարտեալ ցուցանէ որպէս զմեծատունն։ և զմանս չև դատեալ որպէս ահա ասա։ առ որոյ խնամս արժանակշիռ՝ գիտելի է։ զի Աստուած հաստատեաց ըստ Առաքելոյն զմի օր։ յորում՝ դատելոց է աշխարհս։ և Հատուցումն առնելոց։ Բայց զի բացարձակ իշխան է։ զմանս արժանաւորս նախ քան զօր դատաստանին երանեցուցանէ։ և այս՝ ոչ միայն Հոգւով որպէս զերիցունս և Հարիւր քառասուն և չորս Հազար կուսանս։ այլ և մարմնով։ որպէս զսրբուհի Աստուածածինն։ Այսպէս և զմանս առաւել անարժանս վաղագոյն դատապարտէ։ որպէս զԴաւան մարմնով։ և զմեծատունն Հոգւով։ զի եթէ ոչ այսպէս խնայի՝ անհնարին է համաձայնել զտարբեր բանս սուրբ գրոց։ Յուսամ՝ թէ բարեմիտ ընթերցօղն Հասանիցի։ Այս եղիցի

սահման առ այս։ Դարձեալ աղաղակն այն էր աղաղակ անմեղ արեան սրբոց։ Վայ ասեն վրէժ արեան մերոյ։ զի որպէս ասաց Տէր եթէ դոքա լուսցեն քարինքդ աղաղակեսցեն։ Եթէ սուրբք լուեն։ արիւն նոցա աղաղակէ։ որպէս գրի։ ահա արիւն անմեղ և արդար աղաղակէ առ իս։ "Եւ տուաւ նոցա արկանելիս սպիտակս։ և ասացաւ նոցա զի հանգիցեն փոքր մի ժամանակս։ մինչև լցցին ծառայակիցք նոցա և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ էին կատարիլ իբրև զնոսա։" Այսու պատմութեամբ՝ ոմանք խմբեան զերանական փառս նոցա։ զի հրեշտակքն ի հանդերձս սպիտակս երևեցան։ նոյնպէս և Տէր։ և ես ասեմ այո։ Բայց պատկերն՝ որ յատուկ է մարտիրոսաց չտուաւ։ սակաւիկ մի ևս սպասել ասացաւ։ և այս կամ՝ վասն մարմնոյն։ և կամ՝ վասն պատկերն։ յայս միտ ասէ Աղաքեալն Աստուծոյ։ վկայեալք ի հաւատոցն չև ևս ընկալան զաւետիսն Աստուծոյ։ վասն մեր լաւագոյն համարեալ։ զի մի առանց մեր կատարեսցին։ Կատարումն կրկին է։ ատ՝ երջանիկ մահուամբ։ զորմէ ասէ։ հանդերձեալ են եղբարքն ձեր կատարիլ իբրև զձեզ։ Լսկ

յերկինս՝ փառօք։ զորմէ Աւետարանն։ զի մի առանց մեր կատարեսցին։ Իսկ զի ասէ փոքր մի ժամանակս։ զի որպէս ասացաք։ Նեռն յառաջին ամի թագաւորութեան մինչ զբազումս նահատակեաց։ զայս ասացին մարտիրոսքն։ և զի մնացեալ էր փոքր մի ժամանակ՝ յորում կատարելոց էին եղբարքն նոցա։ այն փոքր ժամանակին հրամայէ հանգչել։ Օ ի հալածումն Նեռին տևելոց է յերիս ամս և կէս։ ըստ Դանիէլի։ ժամանակ և ժամանակի և կէս ժամանակաց։ որ է այնքան։ Օ ի Նեռն է սուտ քն։ որպէս ՀՇմարիտ Քրիստոսն յերիս ամս և կէս քարոզեաց։ յորս ամանք հաւատացին։ և ամանք՝ ոչ։ Այսպէս և սուտ քն։ Իսկ որքան առ Աստուած բովանդակ ընթացք ժամանակիս է փոքր ինչ։ այսպէս նկատմամբ երանելեաց՝ ժամանակ աշխարհիս երևի փոքր ինչ։ զի յաւիտեանս։ Էին՝ ի սէրն Աստուծոյ։ վասն զզարս իբր զմի օր զրեն։ Հայրն Միայն ցՀիւրն ասաց։ յանդորրն տեղիս այս բնակեցաք փոքր ժամս ինչ՝ իբր տասներեք ամս։ Արդ՝ եթէ յանապատին հանգարտութեան տասն և երեք ամ՝ն փոքր ինչ ժամք երևեցան։ քանի՞ևս բովանդակ ընթացք աշխարհի հանդչե-

լոյն յերկինս անդ՝ առ սեղանովն Աստուծոյ։ "Եւ տեսի յորժամ՝ եբաց զկնիքն վեցերորդ, և ահա շարժումն մեծ եղև, և արեգակն եղև սեաւ իբրև զկապերտ այծեայ, լուսինն բոլորովին եղև արիւն։" Արեգակն ի խաւարիլն՝ մթնի, վասն երևի սեաւ իբրև զսեաւ այծենեայ զորձեալ կապերտ։ Այլ՝ խաւարի աշխարհն։ Նախ՝ հակադրութեամբ լուսնի բնականաբար՝ որպէս յայտ է։ Երկրորդ պատահաբար՝ մինչ թանձրախիտ ամպք ըմբռնեն զերեսս նորա։ Երրորդ՝ զերբնապէս։ մինչ Աստուած ոչ համընթանայ ընդ նմա։ ուստի արեգակն մնալով աշխարհն ոչ լուսաւորէ, որպէս և ոչ հուրն Բաբելոնի կարաց այրել զերիս մանկունսն։ մնալով հուր։ զի Աստուած ոչ համընթացաւ ընդ նմա։ Այս երկրորդ կերպս պատկանի աստ։ Օ այն և ՊՌ ասաց։ արեգակն խաւարեսցի։ իսկ լուսինն յայնժամ՝ արիւնակերպ լինի։ մինչ սակաւիկ ինչ լոյս հանդերձ ամպով զիւրև ունիցի։ Այսպէս յետուստ զատաւակի մինչ լուցանի լոյս։ թէ լուսին իցէ նշանակեալն և թէ արեգակն։ արիւնակերպ երևին բարառնաբար։ իբր թէ պատկառին լուսաւորքն ընդ

պատիժ ամբարշտաց ։ կամ՝ ընդ թագաւորու-
թիւն նեռին՝ զոսա լուսաւորեն ։ կամ՝ լուսա-
ւորեցին ։ Այսպէս ընդ սատակումն Գղեոմ-
բեատոսի յիմարի՝ ասաց ։ ուրախացիր ո՛վ աշ-
խարհ ։ եւ զի զերծաւ ի լուսաւորելոյ զայն-
պիսի յիմարն ։ Օ ի ուրախանան և տրըտ-
մին բարառնաբար լուսաւորքն ընդ ազգաս
ամբարշտաց ։ "Եւ աստեղք յերկնից թօթա-
փեցան յերկիր ։ որպէս տերև թզենւոյ ։ զի
ուժգին հնչեցի ի հողմոյ ։" Թ.զենին առա-
ւել խոնաւ գոլով քան զայլ ծառս ի հնչել
հողմոյ յաչքն զիւրաւ տերևաթափ լինի ։
աստեղք անապական գոլով ոչ անկանին ։
այլ ասա նմանօրէն միտէորայք և ասուպք
առեալ ի տեղի աստեղաց ։ որ յայնժամ
յամբոխիլ օդոց առաւել անկանին յերկ-
նից քան այժմ։ Եւ ի մեծէ տագնապէ սրբ-
տի՝ համարին աստեղք անկանիլ յերկնից ։
Բնականաբար՝ աստեղաց անկանիլն յերկնից
անհնար է ։ որպէս ասէ Արիստոտէլ ի գի-
րքս Մետաքիզիքային ։ ոչ միայն զի են ա-
նապականք ։ այլ և բազումք ի նոցանէ են
բազմապատկաբար մեծ քան զերկիր ։ Եւ
կամ՝ աստեղք ևս յերկիրս ամփոփելով ըզ-
լոյս իւրեանց ի ներքս ։ որպէս զզայականք

զարիւնս ։ սան կարծիս անկման ։ Օ ի եթէ աշխարհն երևի խուսարիլ ։ ոչչափ ևս ասողք ։ Պարձեալ խուսարման ատուղաց գլխաւոր պատճառ տայ Յովհաննէս զահագին երկրաշարժն անդ ։ յորմէ այնչափ անդունդք բանին ։ և այնչափ ծուխ և փոշի և գոլորշի ելանէ անդ յօդս ։ մինչ զի՝ բովանդակ զերեսն երկնից կաղնոս ։ և ամենայն լուսաւորքն խուսարիլ տեսանին ։ "Եւ երկին իբրև զմագաղաթեայ գիրս գալարիւր ։ և ամենայն լերինք և կղզիք ի տեղւոյ իւրեանց շարժեցան ։" Կոնդակն ի պիտոյութեան բանի ։ յեռոյ՝ ծալի ։ երկին որպէս կոնդակ արարաւ ։ այժմ՝ վարէ զիշխանութիւն ։ ի դատաստանի՝ ծալի և դադարի ։ Պարձեալ ի մեծի շարժման՝ տեսանեմք զառաստաղն գլորիլ ։ և յընթացս նաւու՝ զլերինս շարժիլ այսպէս տեսանի ի մեծի շարժմանն երկին գալարիլ ։ շարժիլ և ընթանալ ։ ուստի հետևի ասել ամենայն լերինք և կղզիք և այլն ։ Այս լինի ի զօրութենէ մեծի շարժմանն ։ այսպէս ասի թէ ի դաշտին Մունցէնսիոյ՝ երկրորդ լերինք համընթացան ։ Երկրորդ ամենայն լերինք շարժին ։ զի յերկին յաւաղին ահաւորութիւն աստուածային ։ քան-

զի այլ ոչ ևս պիտոյանայ ծառայել մարդկան, վայ զոյացան երկինք։ "Եւ ամենայն թագաւորք երկրի՝ և իշխանք, հաղարապետք և մեծամեծք՝ և զօրաւորք և ամենայն ծառայք՝ և ամենայն ազատք՝ թաղուցին զինքեանս յայրս և ի ժերպս վիմաց։" Ամենայն ասելով, տայ խմանալ թէ ի վախճանի հաղիւ գտանի արդար, ըստայսմ՝ որդի մարդոյ յորժամ՝ եկեսցէ, գտանիցէ արդեօք հաւատս յերկրի։ զի որովհետև յոր հակի թագաւորն՝ հակին և ստորադրեալքն։ Ամենայն թագաւորք մինչ լցեն անօրէնք, հետևի։ զի և ստորադրեալքն այնպէս լցեն, ըստ այսմ՝ Ադամ, թագաւոր՝ որ հաւանի բանից անիրաւութեան, ամենեքին որ ընդ նոսա են՝ անօրէնք են։ Դարձեալ ամենայն ասելով՝ ցուցանէ զսատիկ երկիւղս և զարհուրանս աւուրն այնմիկ, յորում՝ ոչ միայն մեղաւորք, այլ և արդարք թաղուցանել Ջանան զինքեանս։ ոչ միայն յայրս և ի ժերպս, այլ՝ թէ կարելի լցէ՝ ի դժոխս։ յերեսաց նստողին յաթոռն։ և ի բարկութենէ գառին։ որպէս ասէ Յօր։ երանի՝ թէ ի դժոխս պահէիր զիս մինչև անցանէր ժամանակ բարկութեան քո։ "Եւ ասացեն լերանց թէ

անկերուք ի վերայ մեր։" Ըստ նկարագրութեան յայտնի է բանն։ Այլաբանօրէն, կարգացին մեղաւորք առ սուրբն, որք են յաւիտենական լերինք և քարինք սուրբք, զի պատսպարեսցեն զինքեանս բարեխօսութեամբ. բայց յայնմիկ սոսկալի վայրի եղբայր ոչ փրկիկ, և ոչ փրկիկ մարդ։ "Օ՛ի եկն օր մեծ բարկութեան նորա, և ով կարէ կալ առաջի նորա։" Թագաւորն որ քան է հեզ, այնքան է հատու և խիստ ի ժամ բարկութեան. զոյն է տեսանել է՛ի թագաւորն Բրիտոս, որ այնքան է հեզ՝ մինչ զի նմանի գառին։ Բայց ի բարկանալն այնքան լինի ահարկու, մինչ զի ասեն մեղաւորք, ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեան գառին. և թէ՝ եկն օր մեծ բարկութեան նորա։ Ըստուստ գառն ետես և առիւծ լուար. զի սրտմտութիւն թագաւորի նման է առիւծու, և այլն։ Օր բարկութեան գառին բազումք են, զի ի մահուան իւրաքանչիւր մեղաւորաց բարկանայ, և զծառայն անպիտան հանէ արտաքս։ Բայց մեծ օրն բարկութեան է մի օր, վերջին օրն զորմէ ասէ Եսայի՝ ահա օր Տեառն գոյ ի յամայր ամն լի բարկութեամբ մինչև ցվեց-

երրորդ կնիքն՝ կարդաց Յովհաննէս գլխաքաղօրէն՝ զինչ դիպելոց էր ի ժամանակէն իւրմէ մինչև ցգալուստն Քրիստոսի։ իսկ չորրորդ կնքոջն՝ ընթեռնու զամենայն դիպուածսն ի մատեանսն։

ԳԼՈՒԽ Է.

"Եւ յետ այսորիկ տեսի չորս հրեշտակս։ զի կային ի չորս անկիւնս երկրի։ և ունէին զչորս հողմս երկրի։ զի մի շնչեսցի հողմ ի վերայ երկրի։ և ի ծովու։ և մի ի ծառս։" Հողմք և ծով հնազանդեցան Քրիստոսի։ հողմ և մրրիկ որք առնեն զքան նորա։ Աստուստ՝ բարեպէս տայ իշխանութիւն հրեշտակաց՝ ունել զչորս հողմս։ զի մի շնչեսցեն։ զի ապականեսցին ծովք և ծառք և ամենայն երկիր։ վասն մեղաց բնակչաց երկրի։ Զի ոչ ծովայնովք և ոչ պտղովք ծառոց շնորհակալ եղեն զԱրարչէն։ Մեծ հարուած է դադարումն հողմոց։ վասն զի ծովք անշարժք հոտին։ նոյնպէս և ծառք որդնին։ Եւ որպէս ամպոց ատեղաց։ նոյնպէս և հողմոց երասանն է ի ձեռին հրեշտակաց։ Աստուստ՝ ոչ կարացին փիլիսոփայք վեսահատու լինիլ թէ ուստի գան հողմք։ կամ որպէս

դադարին և շնչեն։ Աբրահամեն վասակի ի գլուա պատճառեն, վայ ասէ Տէրն, հողմ ուր կամի շնչէ, և զձայն նորա լսես, բայց ոչ գիտես ուստի գայ, կամ յո երթայ. քանզի անարեւոյթ զօրութեամբն Աստուծոյ հրեշտակք երբ կամին կալնուն, և երբ կամին թողուն. ո՞ կարէ կարծել թէ ի հնոցի ցողագին հողմ կարէ շնչել. բայց հրեշտակ Տեառն իջեալ ի հնոցն Բաբելոնի, արար զհողմ, որ ցողագին շնչեցէ։ Ի վերայ շրջիկ անկեանց կամ կողմանց աշխարհի ասելով՝ ցուցանէ զմեծ բարկութիւն Աստուծոյ, որով պատժել կամի զընդհանուր աշխարհս ի ժամանակս վերջնոս։ Այժմ մասնաւորապէս բարկանայ, վայ ի տեղիս տեղիս երկրին սովք և սրածք։ Աստուած գթած է, ուրախանայ ի շինութիւն արարածոց. վայ ինքեամբ շինէ. ասացեր աշխարհս ողորմութեամբ շինեցիս։ Բայց ընդ կործանումն տրամի, վայ ոչ ինքեամբ՝ այլ հրեշտակօք առնէ։ Այսպէս զՍողոմ երկրորդ հրեշտակօք կործանեաց։ "Եւ տեսի զայլ հրեշտակ. զի ել յարևելից, և ունէր զնիւք Աստուծոյ կենդանւոյ. և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն, որոց առեալ էր

իշխանութիւն ապրկանել զերկիր։ և զծով։"
Այս է բնական սովորութիւն Աստուծոյ։
մինչ առաքէ զհարուածող հրեշտակս։ խկոյն
զկնի նոցա և զկնքօղն յղէ։ զի մի վնաս
ինչ լիցի սրբոցն։ Այսպէս ի հարկանել
զանդրանիկսն Եգիպտոսի։ դրոշմել ետ զդռ-
բուանս Իսրայէլացւոց արեամբ գառինն։ զի մի
սատակիչ անդրանիկացն՝ վրիպակ ինչ գոր-
ծեսցէ։ Այս հրեշտակս էր խնացութեամբ և
աստիճանաւ զերազանց քան չորեսինսն։ զի
պաշտօն սորա էր վերհազոյն։ և պատուա-
կան քան զնոցայն։ Զաղաղակ ձայնիւ մե-
ծաւ։ Նախ՝ զի լսելի լիցի չորից հրեշտա-
կացն՝ որք ի չորս անկիւնս աշխարհի։ Երկ-
րորդ՝ զի փութով լուեալ դադարեսցին մին-
չև կնքեսցէ զընտրեալսն։ Աստէն ուսցին
զեպանք թագաւորաց զաւետեաց պատճէն
թագաւորաց։ և կամ՝ զվճիռ խաղաղութեան
պատերազմի փութով հրատարակել։ զի մի
վնաս ինչ լիցի և ժողովրդոց։ "Մի՛ վնասէք
երկրի։ մի՛ ծովու։ և մի՛ ծառոց։ դադարեցէք։
մինչև կնքեցից զծառայս Աստուծոյ իմոյ և
ի ճակատս նոցա։" Այսպէս ի սատակել
զամբարիշտս Հրէից՝ Աստուած ընդ առա-
քելն զվեց հրեշտակս՝ խկոյն և զգլխաւոր

սմն առաքեաց կնքել թաւու զձակատս ընտ-
րելոցն, որպէս գրի Եզեկիէլ։ Անքովն այ-
սու ոմանք խմանան զչարչարանս Քրիստի. ըստ
այսմ՝ զչարչարանս Քրիստի ի մարմնի խմում
կրեմ։ Զհամարձակէին բազմիլ. այսպէս
Մովսէս գքառասուն օր եկաց առաջի Աս-
տուծոյ։ Ըստ այլ թարգմանուն՝ զկնիքս
Քրիստի. այլ՝ այն էր աղաղումն լմն հարուածող
հրեշտակաց՝ զի զիտասցեն թէ ոչք են ընտ-
րեալքն, որոց չէ պարտ վնասել։ Երկ-
րորդ՝ այս էր նոյն նշանն թաւու. զի որ-
պէս ի ժամանակս Եզեկիէլի եղաւ ի ձա-
կատս սրբոցն, նոյնպէս ի ժամանակս նեռին
գնի ի ձակատս ընտրելոցն ի հրեշտակաց։
Նշանս այս է խաչանման գիր. և նշանակէ
զնաչազգեացն հրէից՝ ի ժամանակս նեռին,
դարձելոց։ Ուստի հետևի, յազգէն Յու-
դայ՝ և այլն։ Կամ է նշանս այս գրոշմն
լուսազարձոյ՝ ի ձակատս ի հրէից դարձե-
լոց կնքեալ. հաստատ հիմն կայ, թէ՝ ծան-
նեաւ Տէր զայնոսիկ որք իւրքն են։ "Եւ
լուայ զթիւ կնքելոցն, զի էին հարիւր քա-
ռասուն և չորք հազարք կնքեալք յամենայն
ցեղէ որդւոցն Իսրայէլի։" Այս թիւս է
նշան ընդհանրութեան, զի է քառակոյս.

քանզի երկոտասանիցս երկոտասան առնէ 144. բայց զի ՃՂրիւ գնէ Յովհաննէս. վասն հաւատալ պարտիմք թէ՝ այսքան ելոց է թիւ փրկելոցն ի հրէից ի կատարածի։ "Յազգէն Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ։" Յուդայ նախադրի վասն արժանապատուութեան. զի յազգէ Յուդայ ծագեցաւ ՏՐՆ, և արար փրկութիւն երկոտասան ցեղիցն։ Երկրորդ պատճառն է բարոյական. զի ի զարձման հոգեւոր կենաց՝ նախ՝ է Յուդայ, այսինքն՝ խոստովանիլ զՏՐՆ Աստուած։ Յերկոտասան Ազգաց փրկեալսն զոյգ և հաւասար գնէ վասն ընդհանրութեան երկոտասան թուոյն, զի է նշան բազմութեան. ուստի կարէ ի միոյ ազգէ աւելի փրկիլ քան ի միւսոյն, և չէ անկարելի։ "Յեղէն Յովսեփայ։" Այս է Եփրեմի. նախադրեցաւ ի պապոյն՝ Մանասէի, վասն որպէս արժանաւոր ընկալնու զանուն հօրն։ Դան աստ ի բաց թողանի. զի յազգէ նորա ասի ծնանելոց է Նեռն, որոյ հետևելոց են Դանցիք. որպէս Շմաւոնեանք հետևեցան Օամբրիայ, վասն՝ ՉՆՉեցան։ Այսմ կարծեաց տեղի ետ բան Յակոբայ. թէ Դան օձ զարանակալ, որով խնանան հալք գնեռն։ Ի Դանայ լսելի

եղև խնդիրն երիվարաց. յաղագէ Դանայ
ասի զոլ Յուդայ մատնիչ. ի տեղի Դանայ
գնի Ղևի, որպէս և Յուդայի Մատաթիա
յաջորդեցաւ։ "Եւ յետ այսորիկ՝ տեսի զամ-
բոխս մեծ, զոր ոչ ոք թուել կարէր, յամե-
նայն հեթանոսաց, և յամենայն ցեղից, և ժո-
ղովրդոց և լեզուաց, որք կային առաջի ա-
թոռոյն, և յանդիման գառին՝ զգեստաւո-
րեալք սպիտակ պատմուճանօք և արմաւենի
ի ձեռս իւրեանց։" Ամբոխ ասէ վասն բազ-
մութեան, և ոչ թէ վասն խառն ի խուռն
լինելոյն. զի սուրբքն զարմանալի կարգա-
գրութեամբ կան առաջի Աստուծոյ։ Օ ի
եթէ դշխոյն հարուց զարմացաւ ընդ կար-
գըս պաշտօնէիցն Սողոմոնի, որչափ ևս ա-
ռաւել զարմանալի լինի կարգ սրբոցն և
պաշտօնէիցն Աստուծոյ. զոր ոչ ոք թուել
կարէր, ասէ. Նկատմամբ մարդկան, և ոչ
նկատմամբ Աստուծոյ. որ թուէ զբազմու-
թիւն աստեղաց։ Օ ի սոքա են զորոց խոս-
տացաւ Աբրահամու, ասելով՝ եղեցի զաւակ
քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ,
որոց ոչ գոյ թիւ։ 144.000 կնքեալքն էին
ի բնական որդւոյն Աբրահամու՝ Ի նտրեալ-
քքն. իսկ այս մեծ ամբոխս էր ի զերբնական

որդւոցն Աբրահամու. այսինքն՝ ի հեթանոսաց, որք հաւատով որդիացան Աբրահամու. և պայծառացան իբրև զաստեղս երկնից։ Որք կային առաջն աթոռայն և յանդիման գաւին ասէ. այսինքն՝ ստուգութեան և մարդկութեան։ Իսկ սպիտակագեղացն լինիլ և արմատնակիր։ Նշանակէ զխառս երանութեան և զբարբառն յաղթութեան՝ զոր ընկալուն հողիք սրբոցն. և մանաւանդ՝ մարտիրոսացն։ Ըստ պատմաբանից ի ժամանակս Դիոկղետիանոսի, յամին 17։000 հաւատացեալք մարտիրոսանային։ Իսկ հարցմանքն նորա տեսեալ ի տասն ամս. տես թէ որքան լինի թիւ մարտիրոսացն. որք կատարեցան միայն յաւուրս նորա։ "Զգաղակէին ի ձայն մեծ, և ասէին. փրկութիւն Աստուծոյ մերոյ՝ որ նստի յաթոռն, և գառին։" Այս է մեծաւ բաղձանօք և ցնծալից բերանովք. և բախտաւէտ բերկրանօք շնորհակալ լինէին զաստուածութենէն և զմարդկութենէն Քրիստի. և փրկութեան իւրեանց սկիզբն և պատճառ զՔրիստոս դոլ ճանաչէին, և ոչ զնիւթեանս։ "Եւ հրեշտակք՝ որք շուրջ կային զաթոռովն՝ և այլն, և երկիրպագանէին և ասէին. Ամէն։" Այս է՝ ի լը-

տեղն թէ փրկութիւն Աստուծոյ մերոյ և դա-
ւին։ Հրեշտակք երկրպագելով և զամէն
ասելով, ասորասէին թէ՝ այո՛, այդպէս է,
Հիմարիա է։ "Եւ ասէ ցիս մի յերիցանց
անտի. սոքա՝ որք զդեցեալք են զՀանդերձս
սպիտակս, ո՞յք են. և կամ՝ ո՞ւստի գան։"
Զ Յովհաննէս՝ որ է անգուսնդ խնամատու թէ,
Հարցանէ Հրեշտակն, քայց ոչ Հանաչէ զնոցա
զմիմ լինիլն, և ո՞ւստի գալն։ Ապա և մեղ
չէ պարտ զանծանօթից յանդգնաբար վՀիս
Հատանել։ "Եւ ասացի ցնա, Տէր դու
գիտես. և ասէ ցիս, սոքա են որք գան ի
վշտաց մեծաց. և լուացին զարկանելիս իւ-
րեանց և սպիտակացուցին արեամբ գառին։
Հրեշտակն լուսաւորէ զՅովհաննէս, և ցու-
ցանէ թէ ո՞յք իցեն. են նոքա՝ որք գան ի
վշտաց մեծաց և ոչ ի փոքունց։ Մեծ վիշտն
է նախ՝ մարտիրոսական մահն. զի ըստ
Աբիստոտէլի՝ մահն է վերջինն ի մէջ ահաբ-
կութեանց։ Երկրորդ՝ մեծ վիշտ է կուսաու-
թիւնն, որ է հանապազորդական վիշտ և
խայթ մարմնոյ։ Սոքա յիրաւի փութով պատ-
կին և մխիթարին. կամ՝ զայն նեղութիւն կոչէ
մեծ, զոր ի ժամանակս նեռին կրելոց են,
որպիսի ոչ եղև ի սկզբանէ, և այլն։ Սոքա

զպատմուճանս իւրեանց լուացին և սպիտակացուցին արեամբ գառին։ այսինքն Ջանայլին համակերպել զկեանս իւրեանց՝ կուսական վարուց և մարտիրոսական արեանն Քրիստոսի։ "Այսն այնորիկ են առաջի աթոռոյն Աստուծոյ։ և պաշտեն զնա զտիւ և զգիշեր ի տաճարի նորա։ և որ նստի ի վերայ աթոռոյն՝ բնակեալ է ի նոսա։" Ոչ առանց սրդեանց վայրապար։ այլ՝ մեծաւ սրդեամբ և նեղութեամբ արժանացեալք են կալ առաջի աթոռոյն Աստուծոյ։ այսպէս առաքեալն՝ մեծ նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Օրն և զգիշեր ասելով։ ցուցանէ զյաւէժական ներկայութիւն նոցա՝ առաջի Աստուծոյ։ ըստ Պօղոսի թէ՝ յամենայն ժամ՝ ընդ Տեառն լինիցիմք։ և ոչ թէ զգիշեր զուցէ անդ։ զի յատուրև ասէ։ և զգիշեր ոչ զոյր։ Իսկ որ ասէ՝ ի տաճարի նորա։ ցուցանէ զլուսաւորչն երկինն։ որ զոլով ընդարձակ բնակարան երանելեաց՝ նմանութեամբ ասի տաճար։ և ոչ թէ յատկապէս տաճար իցէ անդ։ և ահա ի նմա։ և որքան առ այս՝ ասէ Յովհաննէս։ և տաճար ոչ տեսի ի նմա։ Օրն Տէր ահա տաճար էր ի նմա։ և գառն։ Իսկ Աստու-

ծոյ բնակիչն ի սուրբան՝ նշանակէ հանգ-
չիչն և հաճիչն կամաց ի նոսա։ «Ոչ քաղ-
ցիցեն և ոչ ծարաւիցին. և ոչ ոք մոլեսցէ
նոցա, ոչ արեգակն և ոչ տօթ։» Այս-
պէս խօսի և Դասայի։ Այսու ցուցանի օ-
ժիտ անկրականութեան սրբոց։ Մեծ երջան-
կութիւն է ոչ քաղցիլ և ոչ ծարաւիլ, և
ոչ խորշակահար լինիլ յարևու. թէպէտ
արեգական ցուրտ և տօթ չէ լինելոց անդ. և
թէպէտ անդ լինին ծառք կենաց, աղբիւրք
կենաց և պատմուճանք փառաց. բայց այ-
սոքիկ են ի վայելչութիւն և ի զուարթու-
թիւն և ի զբօսանս սրբոց. և ոչ ի բուժումն
քաղցի և ծարաւոյ, և ի պատսպարան մարմ-
նոց. զի արքայութիւն Աստուծոյ՝ ոչ է
կերակուր և ըմպելի, այլ սէր և խնդու-
թիւն ի Քրիստոս։ «Եւ զառն ի միջոյ
աթոռոյն իւրոյ հովուեսցէ զնոսա. և առաջ-
նորդեսցէ նոցա ի կենաց աղբիւրն ջրոյ կեն-
դանւոյ. քանզի եհատ Աստուած զամենայն
արտասուս յաչաց նոցա։» Զառն Քն ի մի-
ջոյ աթոռոյն, այսինքն աստուածութեամբն
և մարդկութեամբն հովուեսցէ և արածեսցէ,
զի մնացեն յաստուածութիւն իմանալի աչօք,
և երցեն ի մարդկութիւն զգալի աչօք, և

Ձարակ զայնն։ Այս Ձարակս է Հսկումն մեռաք և զմայլումն կամաք ի սէրն Աստի և Աստուծոյ։ Իսկ աղբերակունքն՝ նախ՝ են երանական տեսութիւն։ երկրորդ՝ լուսափայլական բղխմունք զանազան խնամատութեանց յԵռութենէն Աստուծոյ։ որք զմիտս երանելեաց յաղեցուցանեն և զոմանցուցանեն։ Ոմանք ասեն՝ են անդ զգալի ջուրք ի զուարճութիւն երանելեաց և զգալի աչաց։ Հանճայնի Եսայեայ։ որ ասէ ընդ ապբերակունս ածցէ զնոսա։ Եւ այսոքիւք մխիթարութեամբ հատանէ Աստուած զամենայն արտասուս յաչաց նոցա։ որպէս մայր մինչ զրկէ զերեխայն լացեալ և տխրէ։ այնու իսկ սրբէ զարտասուս յաչաց նորա։ և կամ՝ որպէս թագաւորն՝ մինչ պակէ զքաջայաղթ զինուորն։ այնու մոռացուցանէ զամենայն նեղութիւն պատերազմի։ Այսպէս զեկեալսն ի մեծ վշտաց Աստուած մխիթարելով հատանէ զամենայն արտասուս նոցա։ Յեռութենէրորդ զլեռնս որ ինչ ասացաւ պարունակին ի վեցերրորդ կնիքն։ հետևի ութներրորդ։

ԳԼՈՒԽ Ը։

"Եւ յորժամ եբաց զվեցերորդ՝ եղև լուսթիւն յերկինս՝ որպէս կէս ժամու։" Քրիստոս յորժամ եբաց զվեցերորդ վերջին, յայնժամ բոլոր մատեանն, և կամ մեծ մասն՝ յորում զրեալ էր մատնաւորապէս զապառնիսն՝ ընթեռնուելի եղև երկրացոց կենդանեաց, և բոլոր երկնայնոց։ Այլ եղև լուսթիւն ի նոսա՝ վասն երկուց պատճառաց. ի փառաբանութեանցն՝ զոր անդադար երգէին, մի՝ զի ընթերցան զբացեալ մատեանն, յոր ծախեցին իբրու զկէս ժամ. երկրորդ մատեալով ի նմա զայնքան նորանշան և ահաւոր պատիժն գանձեալ վասն նեռնայնոց և մեղաւորաց՝ առ զարմացմանէ պատանձումն կալաւ զնոսա մինչև ցկէս ժամ։ Այսպէս թագաւորն մինչ նորանշան պատժոյ վէճս հատանէ ի վերայ յանցաւորաց, ամենայն պարտականք ապի ի բերան լինին և լռեն առ ահին՝ առ ժամանակ մի։ "Եւ տեսի հրեշտակս եօթն՝ որք կային առաջի Աստուծոյ, և տուաւ նոցա եօթն փող։" Այսոքիկ եօթանքս են նախապատրաստք. որոշեալք և յատկացեալք ի պատուհասել զաշ-

խարէս, որոց տուեալ է յԱստուծոյ փողս հրամանի. զորոց ասէ Սիրաք, են հոգիք ստեղծեալք ի սկզբանէ ի վերէժանդրութիւն. և ի ժամանակի բարկութեան հեղցեն զարտմտութիւն։ "Եւ այլ հրեշտակ եկն, և եկաց առ սեղանն. և ունէր խնկանոցս ոսկի, և տուաւ նմա խունկ բազում, զի մատուցցէ զաղօթս ամենայն սրբոց ի վերայ ոսկեղէն սեղանոյն առաջի աթոռոյն Աստուծոյ։" Որպէս ի դրունս թագաւորաց պաշտօնեայք կարգին ըստ զանազան գործոց, այսպէս և ի դրունս երկնաւոր թագաւորին, են՝ որք առ պահպանութիւն ընտրելոց կարգին. են՝ որք առ պատիժ չարագործաց. են՝ որք գշնորհս հեղուն առ մարդիկ. և են՝ որք զաղօթս մատուցանեն մարդկանց առ Աստուած։ Որպէս հրեշտակք ի Ղանեելով ընդ սանդուղսն՝ բերէին զշնորհս առ Յակոբ, և երանելով՝ տանէին զաղօթս նորա առ Աստուած։ Այսպէս Դանիայէլ յՏօրելի ասաց. ես էի՝ որ զաղօթս քո մատուցանէի առաջի Սրբոյն. և թէ Դանիայէլ կարծիցի այս հրեշտակս. ոչ է անդէպ։ Արդ զիտելի է, սուրբքս այսոքիկ որք յայս նուազ աղօթեցին, են մեծ ամբոխքն և կնքեալքն. զի նախ՝ հոգ-

ւոց մարտիրոսաց աղօթողաց առացաւ, տա-
կաւիկ մի հանգչել՝ մինչև լցցին ծառայա-
կիցք նոցա։ Յայմ վայրի ծառայակիցք նոցա
ի նեռնէն կատարեալք. մինչ եկին և խմբե-
ցան։ Դարձեալ՝ զնոյն աղօթս մատուցին հա-
մակամութեամբ, մինչև ցերը ոչ առնուս ըզ
վրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի. և
զայս աղօթս Ասափայէլ, և կամ՝այլ հրեշ-
տակ կարգեալ առ այս պաշտօն՝ ոսկի խընկ-
անոցաւ, որ պուխուրսան կոչի և կամ՝ բուրվառ՝
մատոյց առաջի աթոռոյն Աստուծոյ
ի վերայ ոսկի սեղանոյն։ ըստ օրինակի սե-
ղանոյ խնկոցն՝ որ էր ի տաճարին։ զի տա-
ճարն երկրաւոր՝ էր օրինակ Սոսկսեան
խորանին երկնաւորի. ըստ այմ՝ արասցես
զամենայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ
ի լերինն. և յայս նուագ սրբոյն աղօթք
հզօրապէս շարժաց զԱստուած զատել զնա-
կիչս երկրի. որպէս հետևի՝ զի ամենայն
սուրբք համակամութեամբ աղօթեցին։ Տես
թէ ո՞րքան զօրաւոր լցէ համախումբ ժո-
ղովրդոյ աղօթելն առ Աստուած։ Դարձ-
եալ մատուցանելն ի վերայ ոսկի սեղանոյն
երկուս։ Նշանակէ նախ՝ թէ աղօթք սրբոյն
է ճշմարիտ պատարագ հաճոյ աստուծոյ.

վայ մատչի ի վերայ ոսկի սեղանոյն։ Երկ-
ոտրդ՝ էր որպէս ծանարտակ, այսինքն՝ ար-
զուհալ, որ եգաւ առաջի Աստու ծոյ։ զի ըստ
այնմ գաստեղէ։ "Եւ ել ծուխ խնկոցն՝ ա-
ղօթքն սրբոց։ ի ձեռաց հրեշտակացն առա-
ջի Աստուծոյ։" Գրիգորոս մատուցանօղն է
Առափայէլ։ գործակիցս ևս ունէր։ վայ յոգ-
նակի խօսի։ ի ձեռաց հրեշտակացն։ Օրը-
խոյ խնկոց։ որ է անուշահոտ։ վայելչապէս
նմանի սրբոցն։ Ուղիղ եղեցին աղօթք իմ՝
որպէս խունկ առաջի քո Տէր։ Աստուստ
ի ժամ՝ աղօթից խունկ ծխի յեկեղեցւոջ։
և այս ոչ միայն Աստուծոյ։ այլ և ժողո-
վրդոյ ի տիպ շնորհաբաշխութեան Աստու-
ծոյ՝ որ ի խունկ նմանապէս առակի։ Երբ-
կոքեանն ևս ձեռամբ հրեշտակի յինի։ թէ
հանելն ի վեր զաղօթս։ թէ իջուցանելն
առ մեզ զշնորհս։ Այ՝ ասէր մարգարէն։
առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։
զի թէպէտ Աստուած է ներկայ։ բայց զա-
մենայն ինչ կարգաւ արար։ "Եւ եկից հր-
եշտակն զենկանոցն ի հրոյ սեղանոյն։ և
էարկ զնա յերկիր։ և եղև որոտումն։ ձայն
և փայլատակումն և շարժումն մեծ։" Լը-
ռեալ Աստուծոյ զաղօթս սրբոցն։ ոչք բո-

ղոքէին զենակէաց երկրի՝ մեծաւ սրտմտութեամբ, հրամայեաց հրեշտակին ցանել զհուր յերկիր՝ առ ի հրակիզել զենակիչս նորա. որպէս երբեմն զՍոդոմ ձեռամբ հրեշտակի։ Յորմէ երևի՝ թէ յաւուրս նեռին, կամ մերձ ի կատարած, սոդոմականութիւնն տարածի ընդ ամենայն աշխարհ։ զի համանման պատժէ հրակիզելով, որոտայ բարկանալով, ձայնէ յանդիմանելով. փայլատակէ զարհուրեցուցանելով, և շարժէ ամբոխելով զոսկեղերս։ Այս և ինքնին հուն բարկութեան Աստուծոյ։ ի յուրս յաստուածային սիրոյ՝ պատճառէ զորոտումն ահաւոր։ ի գաղջ՝ զշնչիւն ձայնի։ ի չարս՝ ի գթութենէ ողորմութեան խրատասրտութեամբ՝ զփայլատակումն հրոյ զեհենին. իսկ և ի դադարեալս ի բարեգործութենէ՝ զշարժումն առ առաքինութիւն. և կամ իրականպէս զորոտումն, զփայլատակումն և զշարժումն պատճառէ. յահաբեկումն մեղաւորաց։ Որպէս և Տէրն դուշակեաց։ եղիցին շարժմունք մեծամեծք։ սովք և սրածութիւնք։ Սոսին պատճառի յերաշտութենէ։ զոր հուն արձակեալ յերկիր՝ պատճառէ։ Իսկ սրածութիւն ի տուաւոր աստեղաց։ որք յայնժամ յաճախին։ Այսպէս

Եղեկիել ասաց ցՏրեշտակն, լեց զոգու

և ոչ այլ լեցի։ Յերուսի մեծ լենի նեղու-
թիւնն։ զի այս արիւնախառն հրալից կար-
կուտս։ սրոյ հուրն զարեան զոյնն պատճառ-
ութիւն մինչ արկանի յերկիր։ երրորդ մասն
երկրի և ծառոց այրէ։ և առաջիկ զամե-
նայն խոտ։ Եւ զանազանումն ի բնակչաց երկ-
րի։ զի ասա նկարագրապէս առնլի է բանն։
և ոչ այլաբանօրէն։ Այսպէս հրամանաւն
Աստուծոյ։ և կամ թոյլատրութեամբն սա-
տանայ հուր լիզոյց յերկնից և այլեւոց զհօտ-
սըն Յոբայ։ Այլ՝ փոգովք խմանան զեօ-
թըն դասս քարոզողաց։ զորս հրեշտակք
յարդարմամբք և ազգմամբք շարժելոց են
ի քարոզութիւն։ Զոր այլաբար ասցի բանն։
առաջին մասն երկրի են Դրիսատոնեայք։
երկրորդ մասն Հրէայք։ երրորդ մասն հե-
թանոսք կամ Մահմետականք։ Այսուքիկ
ընկղմին, այսպէս խմ՝ և զծառոց։ "Եւ երկ-
րորդ հրեշտակն փողեաց։ և իբրև զլեառն
մի մեծ հրդեհեալ անկաւ ի ծով։ և եղև եր-
րորդ մասն ծովու՝ արիւն։" Այս հրեշտա-
կըս առնլով յօդն հաւաքեաց զբազմութիւն
գոլորշեաց։ որ եղև իբրև լեառն մի մեծ։
զոր և հրդեհեալ էարկ ի ծով։ և զօրու-
թեամբ հրոյն երրորդ մասն ծովու արիւն

եղև ։ “Եւ սատակեցաւ երրորդ մասն լո-
ղակաց, և որ ունէր զշունչ կենդանի՝ ապա-
կանեցաւ, և երրորդ մասն նաւուց ընկղմե-
ցաւ ։” Այսպէս գիտելի է, զի առաջին հրեշտա-
կի հարուածն այնքան սատակիչ լինելոյ է,
մինչ զի բազմութիւնք մարդկանց յահէ
նորա ի նաւս դիմելոց են. զի թերևս ի ծովս
ապահով կացցեն յերեսաց հարուածոյն ։
Բայց վրիժառու ձեռն Աստուծոյ և անդ
գտցէ զնոսա. թէ առից զթևս և բնակեցայց
յեղերս ծովու, սակայն և անդ ձեռն քո
առաջնորդեսցէ ինձ, և աջ քո գտցէ զիս.
զի լեառն հրդեհեալ անկեալ ի ծով սատա-
կեցէ զծովայինս, և զերրորդ մասն նաւուց
ընկղմեսցէ. այս է զոր ասէ. եղեցին նշանք
մեծամեծք յերկնից ։ Զմասն սմին պատմէ
Վարդան պատմիչն թէ՝ 558 թուին մերոյ
հուր անկաւ յերկնից ի ծովն Վասպուրա-
կան, և ձկունքն մեռեալք արտաքս դիպե-
ցան ։ Եւ ծանիր. զի ըստ այլ թարգմա-
նութեան գրի այսպէս, և սատակեցաւ եր-
րորդ մասն լոզակաց, որ ունէր զշունչ կեն-
դանի ։ Այլաբանօրէն, ծովու՝ նշանակի աշ-
խարհս, նաւու՝ եկեղեցիք կամ վանորայք ։
Իսկ հրդեհեալ լերամբ՝ սուտ քն կամ սուտ

մարգարէ ոք, որ անկեալ ի ծով աշխարհի զերբորդ մասն լոգակաց, այսինքն հեշտասիրաց, և զերբորդ մասն նաւուց՝ այսինքն եկեղեցեաց կամ վանօրէից ընկղմէ մոլորեցուցանելով, զի յարիցեն սուտ քն և սուտ մարգարէք, և տայցեն նշանս մեծամեծս, թէ հնար ինչ իցէ մոլորեցուցանել և զընտրեալս։ Կարապետն ասցա եղև Լուսթեր, որ ի մուտ ամի տասն հազար վանորայս կոչեցանեաց Յիտալիա։ Բայց ընտիրքն ոչ նաւակոծին. քան այսմ ոչ երկիցուք մեք ի խռովիլ երկրի, ի փոփոխիլ լերանց ի սիրտս ծովու։ "Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ մի մեծ բորբոքեալ իբրև զջամբար, և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբերաց։" Դրականապէս առեալ՝ այս հրեշտակս առնելով ի յօդն զտասաւոր աստղ մի բաղկացոյց ի գոլորշեաց դառնից և թունաւորաց, և էարկ յերրորդ մասն գետոց և աղբերաց. այսինքն յանկանիլն Ճապաղեալ ի բազում՝ մասունս՝ զերրորդ մասն գետոց և աղբերաց ապականեաց։ "Եւ էր անուն աստեղն դառնութիւն. և բազումք մեռան ի դառնութենէ ջուրցն։" Դիտելի է, զի բնականաբար գոլորշիք ի

ջուրց ծովու վերայեալ յոգւ՝ քաղցրանան։ բայց կարէ հրեշտակն զարեգական տապն այնքան առաւելուլ ։ մինչ զի անդր քան զչափն յապականեալ տեղեաց երկրի ։ և ի ծովէ քարշեալ զյոլովութիւն շոգեաց բաղկացուցեալ զտատաղ ամպ դառնագոյն և թունաւոր ։ որ յանկանիլն ի ջուրս՝ ապականեսցէ և մահ պատճառեսցէ ։ Այլ բանօրէն ։ ասողս այս մեծ՝ նշանակէ զՀրիստոնեայ վարդապետ ոմն մեծ ։ որ առ ժամանակօք նեռին անկանելոց է յեկեղեցւոյ՝ որ է խորհրդական երկինք ։ յուրացութիւն։ և հետևապէս յաղբիւրս և ի գետս ։ այսինքն ի քրիստոնեայս ։ և մերթեցուցանելոց զվնի նեռին զերրորդ մասն հաւատացելոց ։ որք և ի դառնութենէ բանից նորա մեռանելոց են հոգւով ։ "Եւ չորրորդ հրեշտակն հարկանէր ։ և վիրաւորիւր երրորդ մասն արեգական և երրորդ մասն լուսնի ։ և երրորդ մասն աստեղաց ։ և խաւարիւր երրորդ մասն նոցա ։ աւուր՝ ոչ լուսաւորէր մասն երրորդ և գիշերոյ՝ նոյնպէս։" Երկիր ։ ծառք ։ ծով ։ աղբիւրք ։ գետք ։ ըստ երրորդ մասին ապականեցան։ վերամնայ՝ զի և լուսաւորք ըստ երրորդ մասին ապականեսցին ի նախասահմն։

ի պատիժ և ի տանջանս ամբարշտաց։ Լի-
նի այս ամենայն՝ ի նշան և ի յոյժակ կոր-
ծանման մարդկայնոյ ազգի յաշխարհէ։ ի
պաշտօն որոյ կարգեցան այս ամենայն։ Եւ
տես, զի չափով, և կշռով, և կարգաւ առնէ
զպատուհասն, տալով տեղի ապաշխարութեան։
վասն ի փոքրէն առ մեծագոյնն փոխի և դի-
մի։ Արդ՝ ջրրորդ հրեշտակն իշխերով և
առնելով ի վերայ արեգական նուազեցու-
ցանել զլոյսն ի նմանէ։ ըստ երրորդ մասին։
այնպէս՝ զի որքան լուսաւորէ այժմ՝ յայն-
ժամ՝ այսքան լուսոյ երրորդ բաժինն բարձ-
ցի։ յորմէ հետևի։ զի և աստեղք և լուսին
զգիշերն ոչ կարասցեն այսքան լուսաւորել
այլ՝ սակաւ։ զի զլոյսն իւրեանց ընկալ-
նուն յարեգականէ։ Եւ՝ թէ և աստեղք
ինքնայոյսք իցեն, երրորդ մասն լուսոյ բարձ-
ցի։ Աստուստ հետևի։ ձմեռանն՝ սաստկու-
թիւն։ ամառանն՝ զաղջութիւն։ պտղոց և արմ-
ատեաց՝ տհաստութիւն։ և ամենայն ծնընդ-
ականաց և անկականաց և զգայականաց՝ նը-
ուազութիւն և ամլութիւն։ և մարդկային
կենաց՝ մեծ թշուառութիւն։ յայնժամ՝ որ
խնամատուն իցէ։ ի բերմանց իրացն մակաբե-
բեսցէ զմերձ գոլն կատարածի։ և ապաշխա-

բեսցէ ։ Իսկ որ յիմարն է՝ յուսաբեկ լեալ թշուառալից կորիցէ ։ Այլաբանութիւն յայնժամ պայծառութիւն եկեղեցւոյ՝ որ նշանակէ արեգակամբ ։ Հանդերձ ամենայն լուսաւոր կրօնաւորական զարդուք՝ նսեմասցի ըստ երբորդ մասին ։ և գաղջասցի ի սիրոյն Աստուծոյ ։ ըստ որում վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքեսցի սէր բազմաց ։ "Եւ տեսի ։ և լուայ զձայն զհրեշտակի թռուցելոյ ի մէջ երկնից ։ զի ասէր ի ձայն մեծ ։ վա՛յ ։ վա՛յ ։ որ բնակեալ են յերկրի ։ յորժամ լիցի ձայն եւս երիցն փողոց ։ զոր կամիցին հրեշտակքն հարկանել ։" Հրեշտակն՝ այս էր մի ի քերովբէից ։ և կամ այլ դասուց ։ Նախագիտակ հանդերձելոց զողոցն ։ որ արծուակերպ թռուցեալ ի մէջ երկնից հրամանաւն Աստուծոյ զուշակէր զստակութիւն երից հարուածոցն հանդերձելոց՝ զի ապաշխարեսցեն ։ վայ արծուակերպ թռչէր ։ զի արագապէս ընդ ամենայն աշխարհ լսելի արասցէ զձայն իւր՝ ի զգուշութիւն բնակչաց երկրի ։ Նաև այսու ցուցանի մեծ ցաւակցութիւն հրեշտակաց ի թշուառութիւնս մարդկանց ։ Այսպէս զհանդերձեալ պատժէն Երուսաղէմի ։ շինական ումն ազգմամբն Աստուծոյ ի տաճարին Սո-

զամենի՝ ի մեծի տօնին, զուշակէր ասելով, ձայն յարևելից, ձայն յարևմտից, և այլն։ Եւ այս է նշան մեծի զթութեան Աստուծոյ, որ ի ժամանակի բարկութեան զողորմութիւն յիշէ։ Երիցս վայ կարդալով նշանակէ ըզ-ծանրութիւն հարուածոցն։

Գ Լ Ո Ւ Խ Թ։

"Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. և տեսի, զի աստղ մի անկանիւր յերկնից յերկիր. և տուաւ նմա բանալի գբոյն անդընդոց։" Որչափ յամառին մեղաւորք ի չար կամս իւրեանց՝ այնչափ սաստկացուցանէ ըզ պատիժն, զի դարձցին։ Այս աստղս առանց կարծեաց է այլաբանօրէն աստղ, զի է կենդանի. և է ի յօդային դիւաց կերպարանեալ ի հրեշտակ լուսոյ. վայ և աստղ կոչի այլոգութեամբ։ Հինգերորդ հրեշտակն հրամանաւն Աստուծոյ՝ բռնադատեաց զսա անկանել յերկիր, որոյ տուաւ Աստուծոյ ի ձեռն հրեշտակաց բանալին գբոյն անդնդոց. քանզի Աստուած զԱդամայէն անկմամբ ընդ բազմաց դիւաց՝ արգել փակեաց խաւարային կապանօք ի տարտարոսն, որպէս ասէ Յուդայ առաքեալն։

և և սառեալ զայն արար ի ժամ խաչելութեան։ Օ՝ որ կամեցեալ աստէն արձակել, զբանալի զբոյն տայ ի ձեռն անկեալ առաքելն, այսինքն օգային գիւին, զի այնքան սարսռելի հարուածն՝ որ լինելոց է երկնքէ նոցա յանգնդոց ի տիպ մարախոց, ի ձեռն չար հրեշտակի լիցի, և ոչ բարի. որպէս և հարուածն Եգիպտոսի չար հրեշտակօք՝ լինել ասի։ Այլաբանօրէն, մերձ ի կատարած՝ աստղ անկանի յերկնից, որպէս յեկեղեցւոյն, և տրի նմա Աստուծոյ թոյլտուութեամբ բանալի զբոյն անդնդոց։ Օ՝ ի հերձուածողքն են անդնդաբերանք, որպէս էր Լութեր և Գալվին և այլք։ Այս բանալի լինելոց է կամ վարդապետ, կամ քահանայապետ, և այլն։ "Եւ երաց զգուբն անդնդոց. և ելանէր ծուխ ի գբոյն, որպէս ջծուխ հնոցի մեծի, և խաւարեցաւ արեգակն և օդ։" Գուբս այս է խսկապէս դժոխքն, որ թէպէտ է ընդարձակ և լայն, բայց վասն ահագին խորութեանն՝ կոչի գուբ։ Հաւատալ պարտ է թէ ի բանալ բերանոյն դժոխոց, այնքան ծուխ ելցէ, մինչ զի ամբռնեսցէ զերեսս արեգական. և զօդն բոլոր առնիցէ գիշերանման. զի ի սկզբանէ

մինչև ցժամանակս նեռին՝ յորում՝ բանի, ծերի, և բորբոքի։ Ասեցես։ Ի կլանելն զԴաղան՝ բացաւ։ վասն էր ոչ այնքան ծուխ եհան։ Պատասխանեմ՝ թէ անդ ի վայրկենի բացաւ։ եկուլ զԴաղան։ և խփեցաւ։ խկաստ յերկար ժամն բաց մնայ մինչև երանելոցն մարախակերպ թիւնքն։ Այլոց ուրեմամբ ծուխն յանվնդոյն ելեալ՝ է սուտ սեռրակ վարդապետութիւն աստեղն անկելոյ։ Հերձուածողն ուրումն ի ժամանակս յետինս։ որում այրարունի և նեռմանայ պայծառութիւնն եկեղեցւոյ։ զի ոչ սակաւ խրթնացաւ եկեղեցին ի պայծառութենէ՝ անգնդաբերան Մահմէտիւն։ "Եւ ի գրոյն ելանէր մարախ յերկիր։ տուաւ նոցա իշխանութիւն իբրև զակայթոց կարծի։" Օ ի որպէս յաւուրս Յովելեայ զմնացորդս թրթրոյ՝ եկեալ մարախ։ այսինքն զօրքն Ասորւոց։ որք այրաբանութեամբ ի մարախ օրինակին։ այսպէս աստ զմնացորդս չորից հարուածոցն ուսելոյ է մարախն գժոխային։ Տես աստ։ թէ դեռ ընկալեալք իշխանութիւն Աստուծոյ ի չարչարել զմարդիկ զամիսս հինգ։ որպիսի խստասիրտ և անողորմ բարուք փոխին ի ձև խառնակերպ կենդանեաց։ զի մա-

բախ է, և ունի զնայթոց կարգի, և այլն։ Ըստ զանազան կերպի հարուածոցն՝ զանազան մասունս կենդանեաց երևեցուցանէ, որպէս երկնային կենդանիքն, ըստ զանազան զօրութեան, յառիւծն, յեզն, յարծիւն կերպարանին։ Շողքորթէ զևն, և ծածկաբար խայթէ. վասն ունի իշխանութիւն իբրև զնայթոց կարգի։ Այսպէս խմն և զհերձուածողաց, որք յերեսս են որպէս մարդ, և ի տուտս՝ որպէս գազան։ "Եւ ասացաւ նոցա զի մի մեղցին խոտոյ երկրի, և մի ամենայն ծառոյ. բայց միայն մարդկանց երկրայնոց, որք ոչ ունիցին զկնիքն ի վերայ ճակատուց իւրեանց։" Աստուստ երևի թէ՝ սոքա էին կերպարանեալ մարախք և ցուցանէ ինչ հրեշից. զի իսկական մարախոց կերակուրն է խոտ և տերև ծառոց։ Բայց սոցա կերակուր տուան երկրաւոր մարդիկ, որք չէին կնքեալք ի հրեշտակէն. քանզի զիւանք ոչ ունին իշխանութիւն ի վերայ ընտրելոց։ Այնպէս և հերձուածողք զանարգեսան միայն պատրեն, և ոչ զընտրեալսն։ Ամենք ծառով և խոտով իմանան զընտրեալսն՝ որք են կանաչ հաւատով, և պտղաբեր գործով, և ընտրեալ կնքով "Եւ տուաւ նոցա հրա-

ման, զի մի սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ, և չարչարանք նոցա իբրև զեայթոց կարձի՝ որ հարկանիցէ զմարդ։" Այնքան զժնդակ և անբմբերելի և լինելոց խայթոց սոցայ, մինչ զի թէ ոչ անձեսցին Աստուծոյ՝ միով խայթմամբ սատակեն զմարդիկ։ Պարիձն ի Ակիւթիա՝ միով խայթմամբ սպանանէ զեղն։ Հրամայէ չարչարել, բայց ոչ սպանանել։ Նախ՝ զի զղջացին և ապաշխարեսցին։ Երկրորդ՝ զի զառհատուցեալն տանջանաց ի մարմնի տեսցեն, զի որպէս անդ, այսպէս և առս ցանկասցին մահու, և փախիցէ ի նոցանէ մահ։ և այս չարչարանք տեւեսցէ ամիսս հինգ վասն ընտրելոց, զի մի ի նոսա հայելով յուսահատեսցին։ վասն ընտրելոցն կարձեաց ժամանակն։ Այսպէս և ի ժամանակս սուտ մարգարէից՝ Եղիա ցանկայր մեռանել։ Ասէ՝ Տէր, առ զոգի իմ՝ զի չեմ ես յաւ քան զհարս իմ։ Այսպէս դիւրին հրամանն ետ չարչարել զմարմինն Յովայ, բայց միայն զոգի նորա պահել։ "Եւ նեմանութիւն մարմարայն ի նեմանութիւն ձիոյն պատրաստելոյ ի պատերազմ։ և ի զլխոյ նոցա իբրև զպսակ նեմանեալ ոսկւոյ։ և երեսք նոցա իբրև զ-

բեաս մարդոյ։" Զեոյ նմանին վասն յանդգնութեան և անգրաղարձմանն ի պատերազմ. ունին պատկ՝ ոչ իսկական, այլ՝ ուրուական. նման ստկոյ, և ոչ ստկի։ Բանզի Պատգամն թագաւոր նոցա իբրև զյաղթող զենուորս պատկէ զնոսա։ Բայց այս է թոյլատրութեամբ Աստուծոյ, և ոչ զօրութեամբ նոցա. վասն այսորիկ է սուտ պատկ, և զի զկնի սակաւուց պատկաւորքս այսքիկ մնացեալք են անդրէն ի գուբն անդնդոց՝ ուստի ելին։ Երեսս ունէին իբրև զմարդոյ, զի և բևեռնգերաւունս խոսիլ. և զի գեն խնացական գոլով ազգակից բանական հոգւոյ՝ մինչ զմարմին զգենու, գոնէ ըստ երեսացն ի մարդ կերպարանի։ Դա զի և մարախ ըստ դիմացն գաւհկական նմանութեամբ նըմանի մարդոյ, զի է իբրև զկապիկ։ Այսպէս և հերձուածողք՝ են յանդգուգն և լիրք իբրև գձի՝ ունիլ երևին զպատկ, որպէս Մահմատականք. և մարդպարեալ ձևանան իբրև հեռուոյ օրինաց և քաղաքավար, բայց յոր հպին՝ վերջապէս խայթեն ի վախճանի նմանեալ կարձի տատամ խայթողի։ "Եւ հերք նոցա իբրև գհերս կնոջ, և տատամունք նոցա իբրև զտատամունս առիւծուց։" Կանացի

բարքն է կակուղ իբրև զձէթ ։ իսկ ինքեանք
որպէս սլաք ։ Այսպէս սատանայ կակուղ
բարուք մեղէ զկամն մարդոյ առ վաղաշ-
տութիւն ։ իսկ առիւծական ոստամբ պա-
տառէ զհոգիս մեղանչողաց ։ Օ կանացի հե-
բրն սեսեալ մերձենան մարդիկ ։ և մինչ հր-
պին յառիւծական ժանեացն պատառին ։
Այսպէս հերձուածողք առ կանոյս ցուցա-
նեն զկանացի հեբս ։ զի են վաղաշոք ։
ուստի Գաբրիէլն կապեցաւ ընդ վանակնուհւոյ
իւրոյ ։ Իսկ առ արս ներքուստ ցուցանեն
զառիւծական ժանիս ։ այսպէս արտաքոյ են
ոչխար ։ և ի ներքոյ գայլ ։ " Եւ ունէին
զզբահս երկաթիս ։ իբրև զզբահս ։ և ձայն
թեւոց նոցա իբրև կառավարաց ձիոց բազ-
մաց ։ որք արշաւեն ի պատերազմ ։" Սիրաք
նոցա արտաքուստ ըստ լանջայն՝ էին խրա-
տագոյն իբրև զմարթս կոկորդիլոսի ։ յորս
սուր ։ տէգ ։ և նետ կամ ռումբ ոչ կարէին
ազդել ։ վնաս անյաղթք էին և անեղանելք ։
Իսկ ի ներքուստ էին վստահք և անահք
իբրև զսիրտս և զլանջս ձիոց վառելոց ի
պատերազմ ։ զորմէ ասէ Յօր ։ ո զգեցոյց
ձիոց զվառս լանջաց նոցա զյանդգնութիւն ։
Արդ՝ որպէս կուռաձիգ երիվարք ի մորա-

կերն առ պատերազմ՝ արշաւընթաց կառաքն զահարկու շառաչիւնս արձակեն, յորմէ զահի հարեալ թշնամիքն ի փախուստ դառնան, որպէս Մադիանացիք ի ձայնէ եղջերացրն Գեդեոնի. այսպէս պատերազմական ձայնս կառաց արձակեն թեւք մարախոյս, յահարկութիւն մարդկանց. և այս ահարկու ձայն ի միաբան թռչմանէն արձակի. տես զզօրութիւն միաբանութեան։ Այսպէս ահարկու են հերձուածողաց բազմութիւնք. որք վիճաբանութեան թեւօք ահաբեկեն զեկեղեցին, թէպէտ նրբապէս նկատեալ ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ թեւք մարախոյ տկար և վախտ։ "Եւ ունէին ազիս ըստ նմանութեան կարձաց. և խայթոց յազիս նոցա. և ունէին զիշխանութիւն չարչարել զմարդիկ ամիս հինգ։" Գլուխն նշանակի խորամանկութիւն և դարանակալութիւն դիւաց։ Աստուստ զեք նկարագրին ազգաւոր. նման կարձաց ասէ, զի հետևողք դիւաց և հերձեալոց որպէս կախարդք և դեղատուք ի վախճանի զգան զնայթն, թէ ի խղճմտանս՝ և թէ ի յստուկ վնասս իւրեանց։ "Եւ ունէին ըզ թագաւոր ի վերայ իւրեանց զհրեշտակն գրժոխոց, և անուն նորա Եբրայեցերէն Ազ

բազան, որ կոչի ի Հայ բարբառ Կորուստ։"
Օգալն մարախին առանց թագաւորի է, ըստ որում Առակ՝ առանց թագաւորի է մարախ, և զօրաժողով լինի իբրև ի մեջէ հրամանէ։ Բայց այս ազգ մարախոց, ունի թագաւոր զՀրեշտակն անդնդոց, այսինքն զԱպալիոն։ Յայտ է թէ և ինքեանք են գլուխ ի մարախ ձևացեալք։ Ապալիոն յայնժամ ստացաւ զկերտուն թագաւորութեան ի վերայ սոցա, երբ յերկիրս Հեսաւեցան չար խորհրդոց նորա, վայ իրաւամբ է թագաւոր ի վերայ որդւոց ամբարտաւանից։ Տես թէ որքան դարշելի է անգլխութիւն, յորմէ և գլուխ զզուին։ Նաև մինչ տանջանք զրգռէ զմարդ։ Յորմէ լինին տանջեալքն զայլայլակա։ Յայնքան ամս տանջեալք գլուխ մինչ յարձակին ի մարդիկ։ տես թէ որքան գաղանութեամբ չարչարեն։ Յիրաւի ասաց Հրեշտակն առ այս նկատելով։ թէ վայ բնակչաց երկրի։ Այսպէս նեղութիւնք յիրաւի ըստ Տեառն։ ոչ եղեն ի սկզբանէ։ "Հատասիկ վայ մի էանց։" Ընթերցմամբ գիւրաւ անցանի։ "Եւ վեցերորդ Հրեշտակն հարկանէր զվեցն։ և լուայ զձայն ի չորից կենդանեացն։ որք են առաջի սեղանոյն

Աստուծոյ։ Զի ասէր ցՀրեշտակն վեց-
երրորդ՝ որ ունէր զվոզն։ Լոյծ զչորս Հրեշ-
տակսն զկապեալսն ի վերայ գետոյն մեծի
Եփրատայ։" Այս սեղանս՝ նախ՝ նշանակէ
զսեղանն խնկոց։ որ է առաջի Աստուծոյ
ըստ կարգի խորանին։ Երկրորդ՝ նշանակէ
զաթոռն Աստուծոյ։ առաջի որոյ էին չորք
կենդանիքն։ ձայնն՝ ըստ այլ թարգմանու-
թեան՝ զայր յեղջերայ սեղանոյն։ իբր զի
սեղանն ինքնին վրէժխնդիր լինէր ամբա-
րշտաց։ Բայց ըստ մեզ։ զայր ի կենդանեաց։
զի կենդանիքն չորք՝ էին իբր բերան և
փոխանորդք Աստուծոյ։ վասն միշտ նոքա
Հրամայէին։ յորոց մինն և ասա Հրամայ-
եաց ցվեցերրորդ Հրեշտակն փողահար՝ ար-
ձակել զչորս Հրեշտակսն։ Զ որոց գիտե-
լի է նախ՝ զի սոքա երևին զոլ նախան-
ձեալ չորս Հրեշտակքն՝ որք ունէին իշխա-
նութիւն ի վերայ հողմոց։ որոց Հրամայեցաւ
զադարիլ մինչև կնքեսցին ընտրեալքն։ Զ
զոսոցունց յաւեցաւ ցարդ և ոչ նշանակեցաւ
զոչ ինչ ի սոցանէ։ ուրեմն են սոքա և կա-
պանք սոցա էր Հրաման արգելիչ։ Երկրորդ՝
իմանին զոլ զևք զորս ի հերքեն Աստուած
յերեսաց իւրոց։ ըստ զանազան յանցանաց և

ատոիճանաց, և ըստ զանազան պիտոյից արգել
ի զանազան տեղիս ։ զոմանս յօգա՝ ի փորձել
զմարդիկ ցյետին ժամանակս ։ զոմանս յան-
դունդս՝ ընդ Աղաւեալի ։ և զոմանս ի վերայ
գետոյն Եփրատայ՝ վասն ժամանակի վեց-
երրորդ հրեշտակի փողոյն ։ Այսպէս Առ-
փայէլ զիշխանն վաւաշտութեան Ամենէսա
ի վերին կողմանս Եղիպտոսի կապեաց ։ Այդ
ի վերայ գետոյն արգել ի խորհուրդ մերբ-
սութեան ։ յորում արգելանին գեր զօրու-
թեամբ Հոգւոյն Սրբոյ և եկաւորու թեամբ ։
Ասատատ ոչ արգել ի վերայ այլ գետոց
դրախտին ։ այլ ի վերայ Եփրատայ ։ Դան-
գի չորք գետք օրինաց բաժանեցան յաղ-
բերէն Եդեմայ ։ այսինքն ի հոգւոյն սրբոյ ։
Նախ՝ բնական ։ երկրորդն աւանդութեան՝
առ Նոյիւ ։ որում բազում ինչ աւանդեցաւ
Աստուծոյ և պատուիրեցաւ ։ Երրորդ՝
գրաւորական ։ առ Մովսիսիւ ։ Չորրորդ՝
աւետարանական ։ յորում միրտութիւն որ է
համաձայն վերջին գետոյ դրախտին ։ որ է
Եփրատէս ։ Ասի առաջին հայրն հաւատոյ
Աբրահամ՝ ի կոչելն յերկիրն աւետեաց ։
նախ՝ էանց ընդ Եփրատէս ։ և անտի Եբրա-
յեցի անուանեցաւ ։ այսինքն ի Եփրատայ ։

Իսկ թէ որպէս կապին զեք, նախ հրամանն Աստուծոյ որպէս առաստան կապէ։ Այսպէս Յեսու հրամանաւ կապեաց զաբեգակն։ Երկրորդ՝ ոչ համընթանալով առնոսա՝ որ պահանջի առ շարժումն իւրաքանչիւր էից։ Երրորդ՝ բնութեամբ, զի ի հզօրէ բնանայ, որպէս զօրեղ մարդն զարկարն արգելու։ Այսպէս Ռափայէլ կապեաց զԱսմոդէոս։ Դարձեալ՝ երկեցուցանելով, զի թէ փոխեսցէ զտեղին պատժեսցի։ Դարձեալ Երփրատ գնայ առ Բաբիլոն, որ է տիպ դժոխոց, որ ազդէ ի միտս դիւաց զգնալն նոցա վերջապէս ի դժոխս։ "Երեքուտասան ջուրք հրեշտակքն պատրաստեալք ի ժամ և յօր և յամիս և ի տարիս, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան։" Հինգերրորդ հարուածն ոչ սպանանէր, այլ տանջէր, և մինչ ոչ դարձան և ոչ զղջացան, հրամայեաց սորա սպանանել, զի թերեւս զարհուրեալք ի մահաբեր պատժոյն՝ դարձցին։ Դազանք շղթայակապք զայրագնին յոյժ, ուստի յարձակիին անողորմաբար փոգոտեն, մանաւանդ՝ դիւանք, վայ և ոչ բապէ մի նեղեն, նմին իբրեւ ասէ պատրաստեալք ի ժամ, ի յօր, և այլն։ Ասին

ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ։ "Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց և հազարք հազարաց. լուայ զթիւ նոցա։" Այս թիւ պատկանի հրեշտակաց, որպէս զրեաց։ Այսպէս և Դանիէլ, ուստի մինչ հրեշտակ կոչեաց զկապեալսն, այնու երևին զոլ զքսերք բիւրաւոր զօրաց հրեշտակաց, որովք արձակին ի մարդիկ կոտորել զամբարիշտս. յայս միտ ուրեմն՝ զիտելի է. զի Աստուած անշնչային մարախով, այսինքն զիւօք չարչարեալ զմարդիկ զամիսս հինգ՝ մինչ եռեսս թէ ոչ գարձան, զզօրս հրեշտակաց ի ձեռս էառ. և զնոսա ի ձև այլանդակ կենդանեաց մուծեալ նոքօք պատժէ զմեղաւորս, որպէս երբեմն զզօրսն Փարաւոնի և Սենեքերիմայ։ Եթէ գիք ևս իմացին ոչ է անգէտ, զի անթիւ բազմութիւնք անկան յերկնից. ամենք սոքօք զզօրս նեռին խմանան, բայց անգէտ է. զի զօրք նեռին ոչ լինին ցուցանքաւոր, այլ մարդիկ. և զի այնքան ամբարիշտ զօրք եթէ լինին, հազիւ մնան այլ սպանանելի ամբարիշտք։ "Եւ տեսի ձիս ի տեսիլեանն, և հեծեալս որք ունէին զսատս հրեղէնս, և յակինթս հրդեհեալս

ծծմբով։" Զեբ պատքիկ, որպէս ինձ թուի, են անգնդային մարախքն՝ որք փոխեցան ի ձիս պահել զառ հաճական գլուխ. և կարի-ճական ոգիս, որք յայնժամ առանձնոն ու-նէին առիւծու, իսկ այժմ զգլուխս. յայնժամ զոտս կարճի, այժմ օձի գլխաւորս. քանզի մարախքն այնքիկ՝ զոյով զեզ՝ գիւրաւ փո-խին ի ձիս։ Իսկ հեծեալքն ի վերայ սոցա էին զօրք հրեշտակաց չորից դէսկին. որք ունէին զրահս հրեղէնս, ինքեանք զոյով հուր չէ անգէպ թէ ունիցին և զրահս հրեղէնս։ Իսկ ըստ բիւրոց՝ զհրացեալ սրտմտութիւնս նոցա նշանակէ ընդդէմ մեղաւորաց։ Այսպէս և յակինթն՝ որ է երկնագոյն քար, էր ի գրահսն զետեղեալ. և զի հրդեհեալ էր ծծմբով, նշանակէ զերկնային նախանձայու-զութիւն, որով զծծումբ դժոխոց սպառնան ամբարշտաց, և զնախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառակորդսն։ Եւ զի գահճական պաշ-տօն գիւաց ձեռամբ հրեշտակաց կառավարին, վեց հեծեալ են ի վերայ ձիակերպ գիւաց. զորս ի մորակերն ի վերայ մարդկանց զա-նազան պատժովք՝ սատակին որք հետևին։ "Եւ գլուխք ձիոցն իբրև զգլուխս առիւ-ծուց. և ի բերանոյ նոցա հուր ելանէր և

ծուխ և ծծումբ։" Օ՛ի որպէս ասացաք, զեւք թոյլատուութեամբն Աստուծոյ զօրն ի հուր և ի ծուխ կարեն փոխարկել. ուրեմն առ սատանիկ սրտմտութեան զօրն զոր ձգէին ի հուր և ի ծծումբ փոխարկեալ՝ ընչէին ի մարդիկ և սատակէին։ Իսկ բարոյականապէս զսրտմտութիւն նոցա կոչէ հուր, զբարկութիւն՝ ծուխ. ըստ այսմ Գրոցի, այս է ծուխ բարկութեան խմոյ. յորում հուր բորբոքեալ է զամենայն աւուրս։ Իսկ ըզ գժոխային նախանձն կոչէ ծծումբ. զոր գայրին։ "Գու ի հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան։" Ցե՛ս թէ քանիցս անգամ երրորդացաւ թիւն ամբարշտաց. զմնացորդս սատերն դառնութեան՝ եկեր մարախն, զմնացորդս մարախոյն՝ եկեր առիւծագլուխ ձին։ Գու այս միչև յերբ. ըստ Գրոցեայ՝ մինչև աւետեցին քաղաքք ի բընակչաց և տունք առ ի չգոյէ մարդկան, և մնացեալ երկիրդ աւերակ. սակայն և ի նմանէ սատանորդեացն, ի գերութիւն և յափշտակութիւն եղեցին զաւակ սուրբ արձանութիւն նորա։ այսինքն բնակիչ։ Սմին նման և Գրիգորիոս Հրամայէ զչորրորդ մասն մարդոյ գլխոց և մօրուաց քոց հրով այրեա-

ցեաս, և զչորրորդ մասն հողմով հոգեսցես, և զչորրորդ մասն կտրեսցես սրով, և սատակես անտի սակաւ ինչ թուով. և դարձեալ անտի ընկեսցես ի հուր։ Եթէ յայնժամ այնպէս, քանիցն յաւուրս յետինս, յորս մարդիկ թիւրեսցին ի հաւատոց։ "Օ՜ի իշխանութիւն ի բերանս նոցա է, և յագիս նոցա. և ագիւք նոցա նմանութիւն օձի, և ունէին գլուխս՝ որով սատակէին զանիրաւս։" Ասասուս հետևի թէ հեծեալքս այսոքիկ էին բարիք, զի զանիրաւան սատակէին, կամ զի թէպէտ ձիանքն էին չար գիւք, բայց արդար դատաստանաւն Աստուծոյ խոյս տուեալ ի բարեաց զանիրաւան սատակէին։ Զիքս այսոքիկ ամենիքն էին, յառաջոյ՝ փոխանակ խածանելոյ ծծմբային շնչով վատնէին։ Իսկ յետուստ՝ փոխանակ աքացելոյ՝ օձապուխս ստոմն խածանէին։ Գլուխն և տուան միացեալ էին, այսինքն գիտութիւն գիւաց՝ որ է կորուստ մարդկան, ժամանեալ էր արդէն վախճանի իւրոյ. զի երջանկութիւն գիւաց է կորուստ մարդկան. զի լաւ համարին կրկնակի տանջել հանդերձ մարդկամբ քան միակի առանց մարդկան։ Եգիպտական հարուածքն առ ստքօք իբ-

բոս խաղք էին, վայ ասէր Աստուած, տեսնէր որչափ խաղացի ես ընդ Փարաւօն. տիրապէս հարուածք սորա են, "Եւ այլք ի մարդկանէ՝ որք ոչ մեռան ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին ի գործոց ձեռաց իւրեանց. և ոչ դարձան յերկրպագութենէ դիւաց;" Աստուստ յայտ է թէ կռապաշտութիւն մերձ ի կատարած Նորոգի. և ամենայն ոք վասն զախտ իւր տարածելոյ՝ խնամով բերի ի կուռս։ Երկրորդ՝ խրատանան առաւել քան զՓարաւօն. Նախ՝ զի գնն արձակեալ ի ծայրագոյն աստիճանի հակառակի։ Երկրորդ՝ զի ոչ հաւատան ընդ այնքան հարուածքն՝ թէ են յԱստուծոյ, այլ պատահմամբ։ Երրորդ՝ զի ծանր տանջանքն զրդռէ զմարդն և զայրագնէ, վայ խստանան և շարժին ի հայհոյութիւն, և ոչ զիջանին յապաշխարութիւն. զի խստասրտաց ասէ առակ, զանիւք ոչ հնազանդի ծառայ խիստ. թէպէտ հարկանի ոչ զգաստանայ։ Յամառեալք ի մեղս ձաղանօք ևս խստանան։ "Եւ ոչ ապաշխարեցին ի մարդասպանութենէ ի դեղտուութենէ, ի պոռնկութենէ, և ի գողութենէ իւրեանց;" Մեղքն ունակացեալ՝ լինի երկրորդ բնութիւն՝

որ է կիրք գժուարաշարժ յենթակայն · ամ-
տուսա՝ զողք · շնայողք · արբեցողք · պատ-
ժոք ոչ զգաստանան · մանաւանդ՝ եթէ և
այսն չար՝ զարծակցի արտաքուստ · և ի ներ-
քոյ լուցկիքն գրդէ · ուստի ասէ Մովսէս · ոչ
եառնն զսիրտս գառնայ առ Աստուած · զի
այս պռաւնկութեան է ի նոսա ·

ԳԼՈՒԽ Ժ ·

“Եւ տեսի զայլ հրեշտակ զօրաւոր՝ զի
իջանէր յերկնից · և զգեցեալ էր զամպ · և
ծիածան ի գլուխն նորա · և երեսք նորա իբրև
զարեգակն · և ոտք նորա իբրև սիւնս հրոյ ·”
Որմանք բացարձակապէս նկատեալ կարծե-
ցին զՀրեշտակս զայս զոյ Աստ · որպէս և
յատկութիւնք սորա Աստ զոյ կարծեցուցա-
նեն · զի զգեցեալ էր զամպ · այսինքն զմար-
մին · և ծիածանն ի գլուխ նորա · զի է
միջնորդ հաշտութեան · երեսք նորա իբրև
զարեգակն՝ որպէս և նախ ասաց · զի է արե-
գակն Աստուածութեան · Եւ ոտք նորա իբրև
սիւն հրոյ · որպէս և նախ ասաց՝ ոտք նորա
նման սղնձի ծխելոյ · Բայց ըստ կարգի ներ-
կասեալ · սա է գեղան Աստի ի ձեռն որոյ
զարքունին բացեալ ի կնքոց · յղեաց առ

Յովհաննէս։ Էր զգիսեալ զամպ։ յամ-
պոյ կերպաւորեալ զմարմին, և նշանակէր զո-
զորմութիւն Աստուծոյ։ և ծիածան ի գլուխ
նորա։ զի էր խաղաղութեան աւետարանիչ։
Երեսք նորա իբրև զարեգակն Հառաջա-
թեալ։ զի էր երանեալ։ որոց ոչ միայն դէմ-
քն այլև բոլանդակ իրանքն փոխակերպին
յարեգակն։ մեր և ոտք նորա որպէս սիւն
հրոյ։ "Եւ ունէր ի ձեռին իւրում զրքոյկ
մի բացեալ։" Է այն գիրքն զոր երեր Յա-
թեղէտ ասա գրքուկ դնի զորմէ փոքր ինչ
խորհրդաւորեալ եղեալ էր նախապէս։ ասասն
կրանէ զի վերծանիցէ զամենայն որ ի նմա։
"Եւ եդ զաջն իւր զաջ ի վերայ ծովու։
և զձախն ի վերայ երկրի։" Որպա իրանն
էր հսկայաձև և յաղթահասակ։ և ոչ իբրև
զհասարակ մարդ։ մեր կարայ ի վերայ ծովու
և ցամաքի կանգնիլ։ Որ նշանակէր գիշխա-
նութիւն զոր ունէր ի վերայ ծովու և ցա-
մաքի։ Այսպէս երանեալք իշխեն աշխարհի։
Օ աջն եդ ի ծով։ զի անկայուն զոլով
առաւել զօրութեան կարօտի։ իսկ աջն է
զօրեղ քան զձախն։ մեր նստաւ ընդ ամմի
զօրութեան։ Այրոգութեամբ երկիրն նշա-
նակէ զհաստատեալս։ իսկ ծովն զանհաստա-

տրս։ Իսկ առ ի հնազանդել և նուաստել զանհաւատս, առաւել զօրութեան կարօտի։ Վայ զայն դնէ ի վերայ ծովու։ "Եւ աղաղակեաց ի ձայն մեծ։ և զոչեաց իբրև զառիւծ։ և յորժամ աղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտմունք յիւրեանց ձայնսն։" Այս աղաղակելովն իբրև զառիւծ յանդիմանեաց զնոսա տարտարոսի անզեղջից։ և այս այնպէս ուժգին։ զի առ ամենեսին լսելի լեցի։ ուստի որպէս առիւծ ասելովն։ նախ՝ զամենայնս ձայնն զուշակէ։ երկրորդ՝ զնստադոյն յանդիմանութիւն առ մեզ ասելոս։ որք այնքան հարուածովն ոչ դարձան առ այս յանդիմանութիւն։ համաձայնեցան և եօթն որոտմունքն որք յայլոց այլապէս կարծին։ Այլ որպէս ինձ թուի։ են եօթն փողահար հրեշտակքն՝ որք ի փողելն որոտային։ վայ կոչեցան որոտմունք։ որք որպէս վարկանիմ՝ զառիւծազոչ հրեշտակայն։ ի զուր ջանան յանդիմանելով զդոսա դարձուցանել։ զի մինչ այնքան հարուածովքն մի բովք ոչ դարձան։ անհնարին է դարձն զոսա այսուհետև։ և այլ յուսահատեցուցիչ բանս խօսէին։ զի որոտմունք էին բանաւորք։ "Եւ յորժամ խօսեցան եօթն որոտմունքն՝ կամէի գրել։

և լուայ ձայն յերկնից որ ասէր։ Կնքեսցո զոր խօսեցան եօթն որոտմունքն և մի գրեր։" Արդեալ երկնային ձայնն ի գլեալոյ։ խնայելով ի մարդիկ։ զի մի արդէն ընթեռնլով զայ՝ քան յուսահատական բանն։ և զայնքան խստասրտութիւն մարդկան։ կամ՝ անհաւատայն թուլցի։ կամ՝ յուսահատիցին։ Բայց հրամայէ կնքել։ այսինքն՝ գանձել ի միտս իւր։ զի չէր ինչ երկիւղ զՅովհաննէ։ Աստուստ ուսցին վարդապետք զամենայն ահարկու բանն Աստուածային զլոց։ և զամենայն Սաղմոսական և հերձուածողական աղանդսն չյայտնել ոմանցս։ զի չէ բաւական անօթ նոցա տանել։ և գիւրաւ զայթակղին։ "Համբարձ զձեռն իւր զաջ յերկին։ և երդուաւ ի կենդանին յաւիտենից։ զի սչ ևս զոյ այլ ժամանակ։" Այսպէս Դանիել երկոտասան այր կայր ի վերայ ջուրց գետոցն Եփրատայ։ ամբարձ զաջ և զահեակ իւր յերկինս և երդուաւ ի կենդանին յաւիտենից։ ասէ՝ ժամանակ։ ժամանակ և կէս ժամանակայ։ Մարդս յամենայնի ազատ։ ի ծախել զժամանակն է առատ։ Թէպէտ Աստուած է յամենայն ուրեք։ բայց սեպհական Աթոռն քրօբէական՝ է յերկինս։ վասն զոր յեր-

կենս։ Դարձեալ՝ երկինն լուսաւորօքն է պատուականագոյն մնան էից, և իբր պալատ արքունական, ուստի որպէս թագաւորն է ի պալատի, այսպէս Համարի յամենեցունց Աստուած զոլ յերկինս։ Ուստի բնականաբար ամենայն իզձ առնող և աղօթող, ըստ Աբիսողոմոնի, զձեռս իւր և զաչս Համբառնայ յերկինս. այսու առթիւ և հրեշտակքն յերկնուն ամբարձ զաչ իւր յերկինս. պատճառ երկնչելոյն է, զի զայնու ժամանակս առաւել զօրանայ Աղաչակեցութիւն, որք զաղանդն չիւք յարութեան և դատաստանի նկատին հաստատել. վասն այս փառաւոր հրեշտակս յետ յանգիմանելոյ զկաստաղիսան ի հաստատութիւն կատարածի և ի դարձ ամբարշտաց, հարկաւորի երկնուլ Յոտեղծողն բնաւից, թէ ոչ ևս զոյ այլ ժամանակ, այլ՝ հասեալ է կատարածն և ժամ հատուցման։ "Այլ յառուրս ձայնի եօթներորդ հրեշտակին՝ յորժամ հարկանէ զփողն, կատարեսցի խորհուրդն Աստուծոյ, որպէս աւետարանեաց ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից։" Այս է ի հարկանել եօթներորդ հրեշտակին զփողն, մերձեսցի հատուցումն և կատարեսցի խորհուրդն Աստուծոյ՝ որ

խորհեցաւ զմարդոյ, նախատահմանելով զարժանաւորսն, և նախագիտելով զանարժանսն զորոց խօսեցաւ մարգարէութիւնք. որոց կատարումն լիցի ոմանց ի կեանս յաւիտենականս, և ոմանց ի տանջանս։ "Եւ ձայնն զոր լուայ յերկնից, գարձեալ ասէր ցիս, երթ առ զգիրն ի ձեռաց հրեշտակին։" Այս ձայնս գայր ի միջոց երից կենդանեացն, ի միոյն ի նոցանէ Յովհաննէս թէպէտ ըղձալի էր փութով ընկալնուլ զգիրն, ընթեռնուլ և տեղեկանալ խորհրդոցն Աստուծոյ. բայց ոչ յանգղնէր, այլ սպասէր հրամանի, զի և ի հոգևոր ըղձաձկտութիւնն՝ բարեխառնութիւն պէտք է. քանզի անխոհեմ ջերմեռանդութիւն և ի հոգևորս յանդիմանի։ "Եւ ես երթեալ առ հրեշտակն խնդրեցի ի նմանէ, և ասէ ցիս՝ առ զսա և կիր զզոյն և դառնացի յորովայն քո, այլ ի բերան քո եղիցի քաղցր իբրև զմեղր։" Այսպէս Համբակաց Աստուած Երեկիէլի զգրքոյկն մարգարէութեան, որ ի Ճաշակելն թէպէտ քաղցր էր, բայց յետոյ դառնացաւ. մնացեալով զայնքան սպասիւս զորս այնքան սպառնայր Իսրայէլի, վշոյ յաճախ տուն դառնացողաց լսի ի գիրս նորա։ Այսպէս Յովհաննէս

որ ցանկայր սեղեկանալ խորոյն Աստուծոյ ։ Ի սկզբան քաղցրացաւ՝ զոր նշանակէ բերանն։ բայց ի մնացեալն զդէպսէս արհաւիրս զոր կրեալ էր աշխարհ՝ դառնացաւ ։ զոր նշանակէ որովայնն ։ Թ։ երևս Յովհաննէս ճանեաւ ի նմա թէ՝ որքան գլխաւոր եղիսկոպոսք և մեծամեծք սրբակրօնք անկանեալ են ի յետին ժամանակս ։ և այլ այսպիսիքս ։ վայ դառնացաւ ։ զի սակաւ ինչ գլխ յետ կլանելոյ զգիրքն ։ և զքաղցրութիւն զանց առնէ ։ Հանճայնի գրքուէն այն՝ բնութեան մեղրս ։ որ ի բերանոջ է քաղցր ։ իսկ յորովայնի դառնանայ ։ և փոխարկի ի լեղի ։ վայ է նման մեղրս ։ Պարծեալ նմանի հապի՝ որ կազմի ի զմեղոյ և ի հալուէն ։ բայց օձանի շաքարաւ ։ վայ ի բերանի է քաղցր ։ և ի ստամոքսի դառն ։ "Եւ առի զգրքոյկն բացեալ ի հրեշտակէն ։ և կլի զնա ։ և էր ի բերան իմ որպէս մեղր ։ և յորժամ կերայ՝ դառնացաւ որովայն իմ ։" Ա՝սարգասական հոգւով իմանալով զաստուածին ։ քաղցրանայ ։ իսկ որոնալով և խոկալով գնեանէն և զծանր նեղութեանցն՝ դառնանայ և ցաւի ։ յայս միտ իմանի բանն ։ որ յաւելանայ ի գիտութիւնս՝ յաւելանայ ի ցաւս ։

"Եւ ասէ ցխ՝ Հասանի քեզ գարձեալ մարգարէանալ ի ժողովուրդս և ի հեթանոսս, ի լեզուս և ի թագաւորս երկրի։" Այսմանէ ոմանք կարծեցին թէ Յովհաննէս գալոց է և մարգարէանալոց և վկայելոց ընդ Եղիայի և Ենովքայ, և յայնժամ՝ վկայական մահուամբ մեռանելոց. բայց ստոյգ է թէ՝ Յովհաննէս մեռաւ։ Ուստի այսու կամի ասել թէ՝ յետ մարգարէանալոյդ մինչև ցայժմ՝ զօրութեամբ գլ.քոյդ գարձեալ մարգարէանալոց ես զնեռնէն մինչև ցկատարած։

Գ.Լ.Ո.Ի.Խ ԺԱ.։

"Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի, և կայր հրեշտակն և ասէ ցիս, արի և չափեա զտաճարն Աստուծոյ և զսեղանն. և զերկրպագուսն Աստուծոյ սրբ ի նմա։" Նախ՝ գիտելի է, զի հրեշտակք և սուրբք համակերպ զոլով կամացն Աստուծոյ՝ միաչափք են, և չափն նոցա հաստատակ է, զի որպէս չափէ մարգն, այնպէս չափեն Աստուած և հրեշտակք։ Այս միտ ասի։ չափ մարդոյ՝ որ է հրեշտակի. աստուստ հրեշտակն ոչ չափէ։ այլ՝ Յովհաննու տայ զեղէգն։ Այլ զի մի կարծիցես թէ իցէ

զրիչ, ասէ՝ նմանն զաւազանի, որ հաստատակապէս լինի մարդաչափ։ Այսու նշանակի հոգեւոր իշխանութիւնն, զոր ետ Տէր, զոր ոչ կարէիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս։ Երկրորդ՝ սուրբք որով չափով չափեն զարժանապատուութիւն սանձարի և սեղանոյն նոցա նոյնին չափով չափեն և զարժանապատուութիւն երկրպագուացն։ Վասն այս զաւազանս որ տուաւ Յովհաննու, որ նշանակէ զնորին արժանակշիռ ենթադասութիւն, մինպէս չափէր զսանձարն՝ զսեղանն և զերկրպագուսն։ Երրորդ՝ այս եղէզս նման զաւազանի բարոյականապէս նշանակէ զզաւազանն նեղութեան և խրատու։ ուստի նախ՝ չափել տայ զսանձարն և զսեղան, ապա զերկրպագուսն։ իբրու գքարինս կոփեալս համաչափս սանձարին։ և իբրու նեղութեան հրով ողջակիզեալ, արժանի սեղանոյն։ և այս մանաւանդ ի ժամանակս նեռին՝ յորում սուրբքն գանազան նեղութեամբք չափակցեցան սանձարին և սեղանոյն Աստուծոյ։ Մին և անդուզական պատիւ է սրբոյն Յովհաննու՝ զնորոգութիւն սրբոյն տալ ի ձեռս նորա։ սուրբք հոգւովն սրբով ճանաչեն զարժանաւորսն Աստուծոյ։ Այսպէս սուրբն Բարսեղ ծա-

նեաւ հոգւոյն զասւրբն Եփրեմ Խորին։ Ամուէլ՝ զԳաւթիթ։ Աշխարհս սուրբն Յովհաննէս հոգւոյն ճանաչէ զարժանաւորսն տաճարին Աստուծոյ։ Վասն սակր մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զհոգիսն՝ որ յայր իցեն. զի ինքն ճանաչէր զի ունէր ընտրութիւն հոգւոյ։ Որ եմ պատիւ սորա քան զԵղեկիէլին. զի այրն որ ունէր ի ձեռին լաւ շինողաց և ճոզ չափու, և ինքն էր տեսեալն փայլուն պղնձոյ, ոչ եառնեմ զճոզն ի չափել, այլ՝ ինքն չափեաց. իսկ սատ հրեշտակն ի մեծարանս Յովհաննու նմա չափել սայ։ Զսոն Եզեկիէլի էր ի վեց կանգնոյ և թզաւ. թուի թէ և յովհաննուն էր համաչափ նմա։ Կանգունն ըստ ոմանց է յարմենկանէ բազկին մինչև ցթաթ ձեռին, իսկ ըստ այլոց՝ անտի մինչև ցծայրս մատանցն։ "Եւ զգաւթիթն՝ որ է արտաքոյ տաճարին, թող զնա և մի չափեր, զի տուեալ է նա հեթանոսաց. և զքաղաքն սուրբ կոխեսցին ամիսս քառասուն և երկու։" Գաւթիթ՝ նախ իմանին իսկ անուամբ քրիստոնեայք. զի որպէս գաւթիթն է ըստ մասին կից տաճարին, և ըստ մասին արտաքոյ, այսպէս նոքա են հաւատով քր-

բիստոնեայք, իսկ զորձով հեթանոսք. վասն տուեալ լինին հեթանոսաց. այսինքն՝ համարեալ լինին ի կարգս հեթանոսաց, ուստի և բարձի թողլ արարեալ. վասն ասէ՝ զգաւիթն թող, մի չափեր, զի տուեալ է այն հեթանոսաց, սովին պատճառաւ և զքաղաքն սուրբ կոխան առնէ՝ նեռնայնոց երեք տարի ու կէս, այսինքն՝ զԵրուսաղէմ. զի հեթանոսաբար և ոչ հրէարէն կեցցեն զայնու ժամանակաւ։ Ցնա ասա զլքումն հրեշտակին զեստանան, և զհոգան առ ընտիրսն։ Հրեշտակն որպէս աշակերտի, Յոհաննու ուսուցանէ թէ՝ ոչք իցեն ընտիրք, և ոչք իցեն խոտան. և այս վասն այսորիկ զի ի նեղութեան աւուրսն զընտրեալսն չափել, և զնոցանէ ի ձեռն չափու լաւագոյն տեղեկացեալ, զգուշութեամբ պահպանեսցեն զընտրեալսն։ Ասասա ուսանիմք թէ, սուրբքն եթէ յաչքս մեր ի գաւթի իցեն՝ են տաճարաքնակ. իսկ մեղաւորք՝ թէ և մտցեն ի տաճարն, են գաւթականք։ Մեղաւորաց և ոչ զգաւիթն ներսէ կոխել Եասի. դարձեալ համաձայնի նկարագրին, զի ի հարկաւորութեան՝ հեթանոսաց թոյլատրիւր ի գաւիթն մտանել, իսկ ի տաճարն ոչ երբէք. արդ՝ գաւ-

թով խմա արտաքոյ երկնից՝ եկեղեցին զենուորեալ, յոր մեղաւորաց թուլատրի մտանել. իսկ ի տաճարն երկնից ոչ երբէք։ Պարձեալ՝ այս գաւիթս է զենուորեալ եկեղեցին, զոր կոչէ քաղաք սուրբ. և այս տուեալ լինի հեթանոսաց կոխան, և մանաւանդ նեռնայնոց. զի կոխեսցեն կայմնասայլիս նեղութեան իբրև զկալ, յորմէ ընտրեալ ցորեանքն ժողովեսցին ի շտեմարան երկնից տաճարին, և յարդն այրեսցի անշէջ հրով. զցորեանսն հրամայէ չափել, և կամ եղեգնեայ գաւազանաւ իբրու զրչաւ գրել և հաշուել. իսկ զյարդն՝ ոչ. զի է իբր անթիւ։ Այսպէս սովորք են հողագործք զցորեանն չափել, և զյարդն՝ ոչ։ Բարոյականապէս սրահն կամ գաւիթն, որ է արտաքոյ տաճարին, նշանակէ արտաքին բարիքն. երկրի է թագաւորութիւն, հարստութիւն, ուժեղութիւն, և այլն։ Ո այսոսիկ ասէ ի բաց ձգեա, խոտեա, անգոնեա, մի չափեր, զի պարծանք սրբոց ոչ կայանայ յայսոսիկ. և ոչ Աստուած հաճի ընդ իրանս առն հսկայի. այլ զայսոսիկ չափեն հեթանոսք, զի նոցա է տուեալ. բայց զու գնելքին բարիս սրբոցն չափեա և այլն. այսինքն զմե-

ծութիւն սիրոյ, զերտութիւն հաւատոյ և գործոյ։

"Եւ տաց երկուց վկայից իմոց, և մարգարէասցին զաւուրս հազար երկերիւր և վաթսուն, զգեցեալ զքուրձ։" Երկու վկայքս այսքիկ ըստ հաստատակ վճռոյց վարդապետաց, լինելոց են Եղիայ և Հենովք, որպէս ցուցանի ի տառս։ Որոց ասէ տաց, այսինքն՝ զգօրութիւն և զշնորհս։ Զի մարգարէասցին, այսինքն՝ զի քարոզեսցեն զերիս ամս և զվեց ամիսս։ Զի որովհետև նեռն և սուտ մարգարէն իւր, յայսքան ժամանակ սուտ վարդապետութեամբ Ջանալոց են տապալել զեկեղեցին, հակադրէ ընդդէմ երկուցն՝ զերկուս համաչափ ժամանակաւ հակամարտել։ Զի որպէս Աքայաբու և Յեզաբելի հակադրեալ զԵրկիա ընդ Եղիսէի, պարտեաց զայնքան Բահաղու մարգարէսն, և զեկեղեցին յինքն կորզեաց։ Այսպէս և առ Նեռնիւն առնելոց է, զի հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ ի նեղութիւն զընտրեալսն առաւել քան զչափն, այլ ի մեծ փորձութեան նեռին, արասցէ և զելս սաքօք, զի համբերել կարասցեն։ Ուստի ոչքան զժնդակ լիցի նեռն,

այնքան ախոյեան կացցին սոքա ի Հալա-
ծեին՝ պաշտպանել զեկեղեցին. տացէ տցա
բերան և իմաստութիւն կալ հակառակ նեռին։
Զգեցեալ զքուրձ՝ ասէ, զի կատարեալ
քարոզիչն պարտի մերկ զոլ յամենայն զար-
դուց աշխարհի. զի ոչ միայն բանիւք, այլ
և վարուք շրջեցցէ զսիրտ աշխարհասիրաց։
Երկրորդ՝ վասն մեծի աղէտին զգենուն ըզ
քուրձ. զի եկեղեցին յայնժամ լինի ի մէջ
մեծի սգոյ, վասն մեծի հալածանաց։ Դարձեալ
յարտասքուստ քարոզին, ի նեղութեան
քրձազգեաց աղօթին առ Աստուած վասն
փրկութեան. առ այս նկատէ բանն՝ Զնօք
հաճոյացար Աստուծոյ և վերափոխեցար
ի դրախտն. զի տացէ հեթանոսաց զապաշ-
խարութիւն, այսինքն՝ թէ վերացմամբն
յուսադրելով, և թէ զարտասամբն քարո-
զելով։ Իսկ զԵղիայէ, ասէ, զվերջին գա-
տաստանէն խօսելով ստորակոյտ։ Հա՛ ես ա-
ռաքեմ զԵղիայ Թեզբացի մինչև եկեալ
իցէ օր տեառն մեծի և երևելոյ, այսինքն Յե-
Բ՚ն. որ պատրաստեցէ զսիրտ հօր առ որ-
դիս. այսինքն՝ յեանորդացն հրէից զսիրտ
նահապետաց և մարգարէից տացէ. զի որ-
պէս հարքն իւրեանց հաւատացին և քարո-

զեցին զՄեսիայն։ Նոյնպէս և ինքեանք հաւատացին և քարոզեցին։ զի Ճշմարիտ հարք նոցա են նահապետքն և մարգարէքն։ և գիտելի է։ զի քարոզութեամբ սոցա ոչ միայն Հրէայք։ այլև Հեթանոսք դարձին ի Քն։ Սոքա են երկու ձիթենիք և երկու Ճրագք։ որք կան առաջի Աստուծոյ յերկրի։ Ձիթենիք կոչին։ զի որպէս ձիթենին է միշտ դալար։ այսպէս և նոքա միշտ կենդանի կեան։ և ոչ լուծան մահուամբ։ Աստուստ եզբակացուցանի թէ սոքա իսկեն Էնովք և Եղիա։ զի սոքա միայն չեն Ճաշակեալ զմահ։ և են իբրև զձիթենի միշտականաչ առաջի Աստուծոյ։ Աստուստ ևս ասին Ճրագք։ զի են իբր միշտավառ աստեղք։ զի ոչ շիջան մահուամբ։ Դարձեալ՝ ձիթենիք անուանին և Ճրագք։ զի իւղով շնորհայ հոգւոյն լցեալք են։ Այսպէս Յեսու քահանայն և Օրաբաբէլ որդիք պարարտութեան և ձիթենիք անուանին։ Գլուխ 4։ թէ վասն քահանայութեան և թագաւորութեան՝ որոց ամենք է օծումն։ և թէ վասն զոլոյն շնորհալցք։ Դարձեալ յայս օրինակին։ զի իբրև զձիթենի ողորմելով մելորելոց։ զՃրագ հաւատոյ վառեն ի հոգիս նոցա։ Եւ որպէս ի

խոր խաւարի անհատատութեան՝ Զինուք եղև Ճրագ աշխարհի և Լոյսն զամբար։ այսպէս լիցին և առ Նեռին։ Զ՝ որպէս յառաջին զաւետեանն Դաւի եղև Ճրագ Յովհաննէս կարապետն իւր։ և ՚ի՚ք յերկրորդ զաւետեանն Աւետարանն արդարութեան եղիցին։ "Զ՝ որ՚ք կամիցին վնասել նոցա։ հուր ելցէ ՚ի բերանոյ նոցա։ և կերիցէ զթշնամիս նոցա։ և որք կամիցին մեռանել նոցա՝ այսպէս սատակեսցին։" Աստուստ մակաբերի։ մինն ՚ի նոցանէ զոլ Լոյսոյ՝ որ զայնմանպէսն Աքայաբու Հրաշիղեաց։ բայց և առաքեալքն ունէին զայս իշխանութիւն։ հուր ելցուցանել յերկնից։ Տէր կամիս։ զի ասասցուք և հուր յերկնից իջցէ և այրեսցէ զքաղաքս նոցա։ Այլաբանօրէն հուրս այս է հատուս հրամանն նոցա։ Այսպէս ՚ի բերանոյ Պետրոսի առաքելոյն իբրու հուր ել և այրեաց։ այսինքն սպան զԱնանիայ և զՍափիրայ։ Եւ դրականապէս կարելի է հուր ցոլանալ ՚ի բերանոյ նոցա յահ և յերկիւղ թշնամեաց։ որպէս Լոյսն աղատաբերան յանդիմանեաց զԱքայաբ։ ասելով։ ես ոչ խանգարեմ՝ զԱսրայել՝ այլ դու։ Այսպէս հրեղէն բերանով սատակելոյ է Նեռին։ ասելով։ դու ոչ ես Դաւ։

այլ նեռն։ "Սոքա ունին զիշխանութիւն փակել զերկինս, զի մի տեղացի յաւուրս մարգարէութեան նոցա։ և ունին իշխանութիւն ի վերայ ջուրց դարձուցանել զնոսա յարիւն, և հարկանել զերկիր յամենայն հարուածս՝ քանիցս անգամ՝ և կամիցին։" Եթէ չունիցին զայսպիսի բանից իշխանութիւն։ զիարդ կարասցեն յայնքան աւուրս համարձակ քարոզել և պաշտպանել զեկեղեցին։ Այսպէս առ ի փրկել զԻսրայէլ ի ձեռացն Փարաւօնի՝ ետ զբարձրագոյն զիշխանութիւն Մովսէսի հարկանել զԵգիպտոս ամենայն հարուածովք։ ասասի վարկանեն ոմանք թէ ի սոցանէ միոն էր Մովսէս։ զի նմա ետ զայս իշխանութիւնս։ և զի ընդ Եգիպտի եկն ի Թ.ափօր։ այլ կարծիքն վերին որպէս հաստատակ։ այնպէս հաստատէ։ Այսպէս Եղիա յաւուրս իւր փակեաց զերկինս։

"Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան իւրեանց՝ յայնժամ գազանն՝ որ ելանէ յանդնդոց։ տացէ ընդ նոսա պատերազմ՝ և յաղթեսցէ նոցա և սպանցէ զնոսա։"

Զի որպէս ինքն Տ.ն յաւուրս քարոզութեան իւրոյ բարձր իշխանութեամբ առ-

նէր սքանչելիս. և թէպէտ բազումք կամեցան ձեռնամուխ լինել, բայց ոչ ոք կարաց մինչ ցսահմանեալ ժամանակն, յորում իբր թէ յաղթեցին նմա ըմբռնելով և խաչելով, և այս ոչ իւրեանց զօրութեամբ, այլ՝ թոյլատրութեամբն Աստուծոյ։ Այսպէս յետ աւարտման պաշտօնի քարոզութեան սոցա, յաղթեցէ յիրաւի զազանն, բայց ոչ իւրով զօրութեամբ, այլ՝ թոյլատրութեամբն Աստուծոյ։ Զազանս այս՝ է նեռն, և ասի յանդնդոց ելեալ նկատմամբ Սադայէլի գրոյն, ելեալ մտանէ ի նա։ Կամ զի այլաբանօրէն աշխարհս է անդունդ՝ յորմէ ելանէ նեռն, կամ զի զազանս այս անդնդային է սադայէլն, և թէպէտ նեռն սպանանէ, բայց զի ուժգնութեամբ սադայէլի սպանանէ, սադայէլի վերագրի գործն։ Այս անդնդային զազանս՝ է մարախաց թագաւորն մտեալ ի նեռն։ "Եւ գիւք նոցա անկեալ կայցեն ի մէջ քաղաքի նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն Սոդոմ և Եգիպտոս՝ ուր և Տէրն նոցա խաչեցաւ։" Քաղաքս այս է Երուսաղէմ. կոչի ըստ հոգւոյն՝ այսինքն այլաբանօրէն Սոդոմ, վասն սոդոմականութեան յաճախելոյ ի նմա առ նեռիւ։ Եւ

Եղիսաբեթ, որ թարգմանի նեղութիւն և անձկութիւն, վասն անտանելի նեղութեան առնելու եղելոյ ի նմա. զի տասնապատիկ զանազանացեալ եղիցի նեռն քան զԳարաւօն ի չարչարել զհաւատացեալս։ Աստուած յայտ է թէ նեռն թագաւորեսցէ յԵրուսաղէմ, և անդ սպանցէ զնոսա, և ոչ թողցէ թաղել զն փառաւորեսցի ի տեսողաց և զովեսցի զօրութիւն իւր։ Յայսմ վայրի յանդգնեսցի զենքն կոչել պաշտօն այսինքն պաշտելի որպէս Աստուած, իբր զի զոյնպիսի սքանչելագործան կարաց սպանանել մինչև նստիլ նմա ի տաճարին և ցուցանել զանձն թէ Աստուած իցէ։ "Եւ ոչ տայցեն թաղել ի գերեզմանս զոսկերս նոցա։" Պատճառն է զի որքան էին նուքա մեծահամբաւ սքանչելագործք, այնքան մեծասցի պատիւ և անուն սպանողին նոցա։ Աստի տեսանելով զդիս նոցա՝ ամենայն ազգք և լեզուք, որք անդ յաճախ գտանին յայնժամ՝ վասն զոյոյն թագաւորանիստ քաղաք նեռին, զարմացին ընդ մեծ զօրութիւն գազանին։

"Եւ որք բնակեալք են յերկրի, ուրախ լինին և խնդան ի վերայ նոցա մինչև պատարագս տանել միմեանց։ վասն զի սուքա

երկոքեան մարգարէքս չարչարեսցեն զբնակիչս երկրի։"

Եվ ահա Եղիա ի նեռայնոց զամանս հրակիզելով, և զայրս ազգի ազգի նորանշան պատժովք պատժելով, նաև զջուրս յարիւն փոխելով չարչարեսցեն զբնակիչս յերկրի, այսինքն՝ զաշխարհասէրս և զմեղաւորս։ Վայ ասելի եղեցին նոցա, որք մինչ տեսցեն զնոսա մեռեալս իբր արեգակն ծագեալ ինքեանց համարեսցին զնեան, և առ մեծի ուրախութեան իբրև յաւուրս կաղանդից ընծայատարք լինին միմեանց։ "Եւ յետ աւուրց երից և կիսոյ հոգի կենդանի Աստուծոյ մտցէ ի նոսա, և յարիցեն և կայցեն ի վերայ ոտից իւրեանց։ և մահ և երկիւղ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն որք տեսին զնոսա։"

Հոգիք նոցա որք ի սպանման զարձան առ Աստուած, ըստ Յովհաննէի թէ՝ հոգին զարձցի առ Աստուած՝ որ ետ զնա։ Զարձեալ զարձցին ի մարմինս նոցա, և ընդ յարութիւն նոցա զարձեալ մեծաւ երկիւղիւ ի սուգ մտցեն ամբարիշտք։ Յերից աւուրց և կիսոյ ասէ, զի մի՛ յարութիւն նոցա ըստ ժամանակին համաչափ զոլով՝ Քանզ կար-

ծեսցին, որպէս յանդգնի նեռն զինքենէ կարծել տալ։ "Եւ լուայ զձայն մեծ՝ որ ասէր ցնոսա, վերացէք և ելէք աստ. և վերացան և ելին յերկինս ամպովք, և տեսին զնոսա թշնամիք նոցա։" Մեծ է զօրութիւն Աստուծոյ՝ որ սոսկ հրամանաւ զերկրաքուն մարմինս վերացուցանէ յերկինս։ Ամպովք ասէ. ոչ զի ամպն օգնէր ինչ նոցա, այլ զի պատուով վերացին՝ իբրու ամպեղէն կառօք, և այս ակներև թշնամեաց՝ ի յամօթ, յերկիւղ և ի տանջանս նոցա։ Ասէն սկսանի կործանիլ աթոռ ամբարտաւանութեան նեռին, և ընկճիլ իշխանութիւն։ "Եւ ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղև, և տասներրորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, և մեռան արք եօթն հազար, և յետ այնորիկ ահ մեծ եղև յամենեսեան, և փառս տային Աստուծոյ երկնաւորի։" Օ այս շարժս թուի նշանակել յասել Օ աքարիայ՝ պատառեցի լեառն ձիթենեաց. կէսն նորա յարևելս, և կէսն նորա ի ծով, վիհ մեծ յոյժ։ Թէպէտ Լամբրօնային յառաջին գալուստն մեկնէ. բայց անդ ոչ պատառեցաւ ի մեծէ շարժմանէն. տասներրորդ մասն քաղաքին ընկղմեցաւ. այսինքն կենդանւոյն ի դժոխս։ Հան-

զոյն բանակին Դաւանայ։ Սոքա նեռայինք էին։ Բայց յընկղմելոյն եօթն հազար արք ևս մեռանէին. զայս պատիժս կրեցին վասն անպարտ սպանման Ենովքայ և Եղիայի. վասն տեսեալ հաւատացելոյն զայս արժանահաս առ Նոսա։ փաւս եռուն Աստուծոյ երկնաւորի վրէժխնդրողն վկայից իւրոց. այս ամենայն պարուն ակիւ ի փողն վեցերորդի հրեշտակին "Հաւասիկ վայն երկրորդ էանց. և վայն երրորդ գալոց է։ Այս վայս՝ թէպէտ ըստ Ճառին ասէ էանց, բայց առ ուրացողն և առ ընկղմեալսն ի պժոխս՝ է յարատեւոյ։

"Եւ յորժամ՝ եօթներորդ հրեշտակն հարկանէր զփողն։ եղև ձայն յերկինս և ասէ։ եղև թագաւորութիւն ամենայն տիեզերաց Տեառն մերոյ՝ և Քրիստոսի իւրոյ. և թագաւորեսցէ ի վերայ տիեզերաց յաւիտեանս յաւիտենից. Ամէն։" Օ այս ժամանակս զիտերով՝ ասաց առաքեալն Պօղոս։ յորժամ՝ տայէ ի ձեռս որդւոյն զթագաւորութիւն Աստուծոյ և Հօր։ Զայնս այս եկն ի վերջոյ չորից կենդանեացն. այս ձայնս լինի զկնի սատակման նեռին։ և է ձայն առեալեաց՝ զոր ասեն ամենայն հաւատացեալք։

"Եւ քսան և չորք երիցունքն՝ որք նստէ-

ին յաթոռս իւրեանց առաջի Աստուծոյ, անկանէին ի վերայ երեսաց իւրեանց և երկրպագանէին Տեառն Աստուծոյ՝ և ասէին։" Դ մեծամեծ վշտաց զերծեալքն Քրիստոսիւ, զընդհանրական թագաւորութիւն տուեալ Աստուծոյ հօրէ Քրիստոսի՝ լուեալ, երկրպագութեամբ շնորհակալ լինին զԱստուծոյ Հօրէ, և ուրախալիցք ասեն առ Քրիստոս, զոհանամք զքէն Տէր Աստուած ամենակալ, որ էն՝ որ ես՝ և որ գալոց ես, այսինքն ի դատել. և առեր զզօրութիւն քո մեծ և թագաւորեցեր։ "Եւ հեթանոսք բարկացան և եկն բարկութիւն քո մեծ. և ժամանակ մեռելոց՝ զի դատեցին. և տաս վարձս ծառայից քոց մարգարէից, և սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փոքունց և մեծամեծաց. և ապականես զապականիչս երկրի։" Պարզապէս խօսին զարդար դատաստանէն և զհատուցմանէն։ Դիտելի է, զի բարկութիւն հեթանոսաց լինի, նախ՝ վասն յուսահատութեան. երկրորդ՝ վասն մեծի տրամութեան՝ որ յառաջադայի ի յուսահատութենէ. զի է դադարումն բաղձանաց ի ներկայ բարւոյ՝ յանհնարին չար։ Եւ մեծ ասեն զբարկութիւն Քրիստոսի, զի մինչև ցդատաս-

տանն ոչչափ պատիժ եկն համեմատութեամբ դատողականի բարկութեան՝ ոչ եկն բարկութիւն, այլ իբր նախընթացք և նշանք բարկութեան. իսկ տիրապէս բարկութիւն ի դատաստանի լինի, որպէս ասէ մարգարէն՝ ճանաչի Տէր առնել դդատաստանս իւր։ Օ ի այս է եօթներորդ փողն. վերջին վայն քան զամենայն ծանրագոյն։ "Եւ բացաւ տաճարն Աստուծոյ՝ որ յերկինս, և երևեցաւ տապանակն Աստուծոյ՝ որ ի տաճարի։ Եւ եղև փայլատակումն, և ձայնք, և որոտումն, և շարժումն, և կարկուտ մեծամեծ։" Ի գալստեան Տեառն գրուն՝ երկնից բանին, այնպէս՝ մինչ զի լուսեղէն երկին, որ տաճար Աստուծոյ ասի՝ երևի. վասն, և բացաւ տաճարն Աստուծոյ։ Եւ երևի տապանակն Աստուծոյ, այսինքն Քրիստոս մարդեղութեամբն. վասն լինին փայլատակումն, շարժումն, ձայնք և կարկուտ մեծամեծ, որպիսի չէ եղեալ, և ոչ լինելոց է. զի ինքնէ բարկութեամբ իբրև զկարկուտ, որոյ հետևին փայլատակումն, ձայնք և որոտմունք։ Տապանակն է Քրիստոս. զի որպէս նա յանփուտ փայտէ գոլով պատեցաւ զուտ ոսկւով ներքոյ և արտաքոյ, այսպէս և Քրիստի մարմինն

և Հոգին աղաւոր ի սկզբնական մեղաց։ պատեալ ներքոյ և արտաքոյ զուտ ոսկւով՝ աստուածութեամբն։ Եւ այլ բազում համեմատութիւնքն Աստուծոյ տես ի Բարոզդրքի մեր։ Աղդ՝ տապանակն Բրիստոս ինքնէ բազում զօրօք։ այս զօրքս ոչ միայն են հրեշտակայինք։ այլև տարբերականք ի պատժել զամբարիշտս։ որպիսի է փայլատակումն։ կարկուտ։ և այլն։ Ի աստուծմէ՝ հուր և կարկուտ։ ձիւն և սառն։ այս մերիկ՝ բաժին բաժակի նոցա։ Այս՝ ըստ այլ թարգմանութեան գնի հոգի։

ԳԼՈՒԽ ԺԲ։

"Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս՝ կին մի արկեալ զեւրև զարեգակն։ և լուսին ի ներքոյ ոտից նորա։ ի վերայ գլխոյ նորա պսակ յաստեղաց երկոտասանից։" Նշանն առնի ի տեղի սքանչելեաց։ ըստ այսմ՝ կամիմք զնշան ինչ յերկնից տեսանել։ Նշան մեծ ասի։ այսինքն մեծ ըսքանչելիք։ Աղաւսև մեծ սքանչելիք։ կին վայրահակ մարմնովն զԱյսմ հանօղն ի դրախտէն։ որ ի դրախտին չկարաց կեալ՝ այժմ յերկինս տեսանի արկեալ զեւրեաւ զարեգակն։ Նշան ասի ևս այն՝ առ որ զնեաս և ռումբս

ձգեն։ եդ զնս որպէս նշան ի նեսս։ և առաքեաց յերկիսմունս իմ զդատերս կապա-
ՀՒ իւրոյ։ Այս կին՝ խորհրդապէս նշանա-
կէ զեկեղեցին, որ է հարսն Քրիստի։ Այսպէս
զոլ յերկինս, ոչ զի նշանակէ զյաղթող
Եկեղեցին, որ է խակապէս յերկինս, այլ
զի և զենուորեալ Եկեղեցւոյ էջ կեանքն,
որոյ վարդապետութեան խոցն, վաղճանն և
պսակն է երկնային։ Այ՝ ասէ մնասուցեալ
էք ի Սիոնի լեառն. և ի քաղաքն Աստուծոյ
կենդանւոյ՝ Յերուսաղէմ յերկինս. որ է նոր
եկեղեցի, զի որպէս Եսայի զանկումն Թա-
գաւորին Բաբելոնի առակաւ անկման ա-
ստուսեկին. և Եզեկիել զաՀումն Թագաւորին
Տիւրոսի, սահմամբ քրօբէի ուրումն նշանա-
կեն, այսպէս զԵկեղեցւոյ գերասանած բարձ-
րութիւն Հոգին Սուրբ այսու կնաւ երևեալ
յերկինս առակէ և ցուցանէ։ "Այրեալ
զնուև զարեգակն։" Այս է՝ զՔրիստոս և ըզ-
նախանձամութիւն նորա. վՀՒ փոխակերպի
ի Քրիստոս. ուստի ասէ մարգարէն, ամենա նորա
որպէս զարեգակն։ Այ՝ ասէ Առաքեալն.
որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս
զգեցեալ էք։ Այսպէս՝ զգեցարուք զՀՒ Քրիստոս.
զի ի մկրտութեան զգենումք զՔրիստոս

հասարակաբար ։ իսկ առաքինութեամբ իւրա-
քանչիւր ոք զգենու զնա յատկապէս ։ "Եւ
լուսին ի ներքոյ ոտից իւրոց ։" Քրիստոս
Աստուածութեամբն է արեգակն և մարդ-
կութեամբն լուսին։ եկեղեցի ի գլխոյ մինչև
ցոտն է զարդարեալ Քրիստոսիւ ։ Լուսին
է լուսաւոր՝ որ նուազի ի կատարածի։ որ-
պէս ասէ Սիրաք ։ Այսպէս Քո զանձն
ունայնացոյց։ զկերպարանս ծառայի առեալ ։
Երկրորդ՝ փոքր է քան զաստեղս։ բայց լու-
սաւոր քան զնոսա ։ և այսպէս և Քրիս-
տոս՝ վասն խոնարհութեան մարմնոյն։ փոքր
է քան զհրեշտակս։ բայց փառօք և պատուով
առաւել քան զնոսա պսակեալ ։ Երրորդ՝
լուսին է ճնօղ աշխարհի ջերմութեամբ ա-
րեգական ։ և խոնաւութեամբ իւրով իբր
հայր և մայր ։ Այսպէս և Քո ջերմու-
թեամբ սիրոյ Աստուածութեան և խոնա-
ւութեամբ արեան մարդկութեան՝ եղև ծնօղ
եկեղեցւոյ։ որպէս հայր և մայր ։ Հայր իմ և
մայր իմ թողին զիս ։ և Տէր իմ ընկալաւ
զիս ։ Իսկ երկոտասան աստեղքն են երկո-
տասան Առաքեալքն ։ յորոց իբր յերկո-
տասան ականց պսակ փայլեալ եդ ի գլուխ
եկեղեցւոյ՝ ի պատիւ և ի փառս ։ Դարձեալ

լուսին է Արբուհի Աստուածածին, զի որ-
պէս լուսին ի ներքոյ ոտից կնոջն կալով-
ցնա հաստատէր և կազդուրէր, այսպէս
Աստուածամայրն զԵկեղեցին կազդուրէ շնո-
հօք և հաստատէ։ Լուսին է խոնարհա-
գոյնն լուսաւորաց. բայց զամենեցուն զօրու-
թիւն յինէն ընկալեալ՝ հեզու ի ստորինս։
Լուսաւորք են Առաքեալքն. զուք էք լոյս
աշխարհի։ Այլոց խոնարհագոյնն է Արևն
սուրբ. զի վասն մեծի խոնարհութեան նորին
ի վերջն ամենեցուն գրի ի Գործս Առաքե-
լոց։ Բայց զամենեցունց զօրութիւն յինէն
կրէ և հեզու յեկեղեցի. ուստի ասէ Սի-
լուան. ինև շնորհք յամենայնի ճանապարհի և
ճշմարտութեան։ Գարձեալ կինս այս է
Աստուածամայրն, որ Էարկ զիւրև զարեզակն
մինչ յդացաւ զՔանն Աստուած, և կամ՝
մինչ զօրութիւն Բարձրելոյն հովանի եղև
ի վերայ նորա։ Եւ ունէր ի ներքոյ ոտից
զլուսին, մինչ առ ոտն կոխեաց զերկրաւորս
և անցաւորս։ Եւ ունէր ի գլուխ իւր պսակ
յաստեղաց երկոտասանից, որ նշանակէր զը-
նորին երկոտասան փառքն։ Դէպ՝ անբիծ
յղութիւնն. երկրորդ՝ անարատ կուսութիւնն,
երրորդ՝ անապատ ծնունդն։ չորրորդ՝ կուսա-

կան մայրութիւն, հինգերորդ՝ խորագոյն խոնարհութիւն և ամենամաքուր սրբութիւն. վեցերորդ՝ Աստուծոյ մայր զոյն, եօթներորդ՝ խորագոյն խոնարհութիւն, ութերորդ՝ նրբագոյն խելամտութիւն, իններորդ՝ սրօբէական սէրն, տասներորդ՝ մեծագոյն հաւատն. եղիցի ինձ ըստ բանի քում. մատաներորդ՝ ծայրագոյն շնորհակալութիւն, մեծացուցէ անձն իմ զՏէր, կամ արար ընդ իս մեծամեծս հզօրն, երկոտասաներորդ սատրգեան մարգարէութեամբ. այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք. Աստ՝ Տիրամայրն վերատիսեցաւ ի տանէ աշխարհի երբև հարսն յերկինս, որում չորս օժիտք շնորհեցան յերկնաւոր հօրէն, նախ՝ երկինքն ի յաթոռ. երկրորդ՝ լուսինն ի պատուանդան. երրորդ՝ արեգակն ի զարդ զառնաւորեալ ճանաչաւորեալ. չորրորդ՝ երկոտասան աստեղքն ի պսակ. Զանիր այսմ գլխոյ և ի հետևեալսն՝ զմարան նեռին և սատանայի ընդ եկեղեցւոյ՝ զրէ. Եւ զի Աստուած ասաց, առ նմա եղէց ի նեղութեան, և զի եկեղեցին յայնժամ լինի ի մէջ մեծի նեղութեան՝ զոր Աստուած մանաւանդ և յաստուծ նախախնամութեամբ հոգայ զեկեղեցին.

նմին իսկ՝ ետես զեկեղեցին զգեցեալ զարեգանն, և այսմ՝ համաձայնի բանն Օ աքարիայ, ես եղէց նմա պարիսպ հրեղէն շուրջանակի։ «Եւ էր յոլի, և Ճէր յերկնեն. և բազմօք վշտօք մերձ էր ի ծնանիլ։» Երեքկին է մեկնութիւն սորա. նախ՝ հայի առ ծնունդ Աստուծոյ, որ թէպէտ ոչ վշտացաւ յերկնեն և ի ծնանելն, բայց յղացեալ գոլով՝ առանց երկանց անհնարին է։ Ընդ ձիւ վարվարէր առ ծնունդն, զի սատրիկ կարօտն վշտացուցանէր զնա, թէ երբ արդեօք ծնայց և համբուրեցից զԻսածինն Հօր։ Ուստի այս սատրանի բանն Իսայեայ՝ մինչև ցկէ հասեալ ցաւք երկանցն՝ ապրեցաւ և ծնաւ արու. զգուշանայցես երկանց եղանց։ Ուր թէպէտ այլք ասեն թէ՝ յոյժ դժուարաձին լինին եղունք, բայց որպէս վարկանիմ՝ որովհետև են օրինակ Աստուածածնին զգուշանայ Աստուած, զի մի յոյժ գերկուանս ցաւոց կրկցեն։ Այսպէս երդէ Աստուածածինն, նման է եղբօրորդին իմ՝ այծեման, կամ՝ որթուց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց։ Երկրորդ՝ առնանի ի վերայ վերջին եկեղեցւոյն. որ ի ժամանակս նեռին առ մեծի հարածանացն՝ յոյժ դժուարաւ ծնանի որ-

դիս փրկութեան։ ուր միով որդւով առնու զքովանդակ եկեղեցին։ Երրորդ նիստ առ սինակիսային Հրէից, որ այժմ սկսեալ է յղանալ զնորհուրդ Աստուծոյն, և մերձ է հաստատել թէ՝ եկեալ է։ որ գկնի նեռին, կամ՝ առ նովաւ իսկ։ Նախանձայոյզ քարոզութեամբ Եղիայի և Էնոքայ ծնանելոց է զոգի փրկութեան։ որք ասելոց են ըստ Գրոց՝ յայնժամ՝ այսպէս եղաք սիրելոց քում՝ Տէր։ Յիսուսի սիրելոց։ յահ և յերկիւղ քո յղացեալ երկնեցաք։ և ծնաք զհոգի փրկութեան։ ընդ որ զարմանալոց է Գրոցն։ ո՞ լուաւ։ ո՞ ետես այսպիսի ինչ։ եթէ երկնեաց երկիր ի միում աւուր։ և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն։ զի երկնեաց Սիոնն և ծնաւ զմանկունս իւր։ Սին յորժամ՝ ծնանի տրտմութիւն է նմա։

"Եւ երևեցաւ այլ նշան յերկինս՝ և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն։ որոյ էին գլուխք եօթն և եղջիւրք տասն, և ի վերայ գլխոյ նորա եօթն թագք։" Այս վիշապս է սադայէլն։ և ասի զոլ նշան։ այսինքն սքանչելիք։ զի յիրաւի սքանչելի ինն է զատորանկեալ փայլակն տակաւին տեսանել յերկինս։ Այլ՝ ասէ զոլ յերկինս երրորդ մտօք։ Նախ՝

յօդս ։ ուր են օդային դիւանք ։ որք որպէս
կարեն կերպարանիլ ի հրեշտակ լուսոյ ։ նոյն-
պէս և ձևանալ ի վիշապ ։ որպէս և ամպն
երբեմն ձևանայ ի վիշապ ։ և ասի թռչող
վիշապ ։ Երկրորդ յերկինս ասի ։ այսինքն
յեկեղեցւոջ ։ որ է խորհրդական երկինք ։ զի
որպէս որոմն ընդ ցորենոյն է հաւասարա-
պէս մի արտ ։ այսպէս սաղ այել ընդ կնոջ
աշխարհի զոլով և հակամարտ՝ ուր լոյսն
կիսն ։ անդ ասի զոլ և վիշապն ։ Երրորդ
ասի յերկինս՝ վասն հպարտութեան ։ զի
թէպէտ տեղի նորա է ի դժոխս ։ բայց հպար-
տութիւն նորա միշտ վերանայ յօդս ։ ըստ
այնմ՝ ամպարտաւանութիւն ստեղեաց քոց
վերասցի հանապազ ։ Աստի կոչի իշխան
օդոյս ։ զի ընդ եկեղեցւոյ երկնաւորի մարտն-
չի ։ Այսպէս զԲաբելայցւոց թագաւորէն ասէ
Եսայի ։ դու ասէիր ի մտի քում՝ ելից յեր-
կինս ։ Եւ զԱնտիոքոսն ասէ ։ մեծացաւ մինչև
ի զօրութիւնս երկնից ։ զորմէ և ասի վար-
կանէր հասանիլ յաստեղս երկնից ։ Այսպէս
զԱՐԵԾԷՆ Աղեքսանդրն ասի՝ բարձրացաւ
սիրտ նորա և վերացաւ ։ Եւ զի հրեղէն ասէ ։
որոյ բուն կայանն էր յերկինս ։ Դարձեալ
հրեղէն ասէ ։ զի բազում՝ վիշապք հուր

ընչեն։ որպէս պատմի թէ ի մէջ Աստ.քիայու
վիշապ մի հուր ընչէր։ և զարտորայս այրէր։
Դարձեալ հրեղէն ասի։ հրով նախանձու
վառեալ զոյոյն աղաւաւ։ և զի ի հրեղէն
ծովէն դժոխոց ելեալ էր այս վիշապս։ Աեծ
ասի։ օձ մի հարիւր քսան ոտնաչափ իբր
բաղնատս՝ որ է երկայն դերան բարանին՝
տեսեալ եղև։ որոյ էին եօթն գլուխք։ Ա.յլա-
բանօրէն՝ եօթն թագաւորք հպատակին սատա-
յէլի, որոց գլխաւորն լինիցի նեռն՝ որ ունիցի
տասն եղջիւրս։ այսինքն տասն մնոնաւոր թա-
գաւորս։ իսկ միւս վեց.քն չունիցին գեղջիւրս։
այսինքն՝ իցեն իսկ թագաւորք։ Ամենք զեօթն
գլուխս վիշապին նմանեցուցանեն եօթն գա-
զանաց գլխոց։ Բարոյականապէս եօթն գլ-
ուխքն են եօթն մահացու մեղք։ իսկ տասն
եղջիւրքն՝ տասն մոլութիւնք ընդդէմ տասն
պատուիրանացն Աստուծոյ։ զի վիշապս այս
նրբութեամբ քնութեան, սրութեամբ մտաց,
փորձութեամբ ժամանակաց նախակրթեալ
յոյժ՝ տեղեակ զոլով հնարից, զանազան կա-
խարդութեամբ պատրեսցէ։ " Դ.ս տուտ նոր
բարշէր զերբոլոդ մասն աստեղաց երկնից,
և էարկ զնոսա յերկիր։ և վիշապն կայր ա-
ռաջի կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել։

զի յորժամ՝ ծնցի կինն զորդի իւր՝ կոչէ վի-
շապն։" Օ՝ այս ոմանք մեկնեն զառաջին անկ-
մանէն՝ որ թոթափեաց ընդ ինքեան զեր-
բորդ մասն հրեշտակաց. բայց ըստ կարգի
իրացդ՝ այս լինի ի ժամանակս նեռին. որով
իբրու տոտմք յեկեղեցւոյն՝ իբրև յերկնից
քարշէ զերբորդ մասն հաւատացելոց՝ որք
հաւատոյ լուսոյն յստակեալ առակին. թէ-
պէտ ի ներքս՝ վարուք լցին նեռի՝ և ձգէ
յուրացութիւն նեռին։ Եւ զայս ամենայն
առնէ՝ զի և զկնոջ որդին՝ որ հանգերձի
յայնժամ ծնանիլ՝ կլանիցէ. այսինքն սի-
նակոկայն՝ որ յայնժամ մերձ լինի ծնանիլ
զորդիս ի հուրն սուրբ՝ տեսանելով զբազ-
մոց ուրացութիւնսն՝ ինքն ևս զորդիսն իւր
ի մի հաւաքեալ վերժիցէ ի բերան վիշապին.
այսինքն՝ դադարեսցի ի հաւատոյ՝ կամ՝ անդ-
րէն ի հրէութիւն դարձցի. վՀ՝ ասէ և վի-
շապն կայր առաջի կնոջն ի կլանել զզաւա-
կըն։ Եւ այսու ցուցանի չար իգձն վիշա-
պին՝ որ այնքան ընդխմանայ եկեղեցւոյն՝ մինչ
թէ հնար ինչ լցէ՝ կորուսանիցէ և զընտ-
բեսան. այսինքն զբոլոր եկեղեցին կլանիցէ։
Վ՝ՀՀ կայր առաջի կնոջն։ Գիտելի է ասա.
զի ոմանք ասեն վասն այսորիկ Աստուած ըս-

տեղՃ զմարգն ։ զի ըստ չափու երբորդ մասին հրեշտակաց՝ որք անկան յերկնից ։ եղիցին ընտրեալք և լցուսցեն զտեղիս անկելոց ։ Բայց այս է անտոյգն ։ զի թէ չիցէին անկեալ հրեշտակքն ։ Աստուած ստեղծէր զՄարդն ։ զի նախ վասն իւր ստեղծ ։ յետոյ՝ վասն անկելոց ։ Եւ հրեշտակք տասնապատիկ բազումք են քան զմարդիկ ։ ըստ առակի դրամոյ կնոջն ։ յորոց մինն ի հարիւրոյ հազիւ փրկի ։ " Եւ ծնաւ կին զորդի արու ։ որ հանդերձեալ էր հովուել զամենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ ։ և յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած և առ աթոռ նորա ։" Այլ առ Քրիստոս պատկանիլ ոչ զք բացասէ ։ եթէ բանն առ սկիզբն եկեղեցւոյ վերահայեցի՝ նա է արու արեկ և հզօր զաւակ փառաւոր կնոջն ։ որում ետ հայր իշխանութիւն հովուել զհեթանոսս գաւազանաւ երկաթեաւ ։ այսինքն հզօր և անբեկանելի յաւիտենական իշխանութեամբ։ Բայց զի ստուգապէս զվերջնոյ եկեղեցւոյ ձառէ ։ վասն նախ այսու արու զաւակաւ խմանի թէ եկեղեցին ի վերջն աշխարհի քրիստոսազօր մանկունս ծնանելոց իցէ ։ որք ունիցին զհոգին Քրի ։ և հզօրապէս ընդիմանայցեն

նեռին՝ և մարտիրոսանայցեն, որոց հոգիք յա-
փշտակիցին առ Աստուած յերեսաց վիշա-
պին՝ և առ աթոռն Աստուծոյ։ Այսպէս
Յովսափատ յափշտակեաց զՅովաս յերե-
սաց Աղալիոյ զի կամէր շինուցանել զՀրաշն
Դաւթի։ Երկրորդ խմանի՝ թէ եկեղեցին
Հրէից ի վերջն աշխարհի ճնանելոց է զգե-
բազանց ոմն բաբունի, որ հզօր և ազգու բա-
նիւ՝ իբրու գաւազանաւ երկաթեաւ, զքաղ-
մաթիւնս հրէից և հեթանոսաց դարձուցա-
նելոց է ի Քրիստոս, զործակցութեամբ Եղիայի և
Էնովքայ, ընդ որ յոյժ կատաղելոց է վի-
շապն. և բոլոր զօրութեամբ ի նա գիմելոց
ի յափշտակել։ Բայց մասնաւոր նախա-
խնամութեամբ Աստուծոյ, կամ մահուամբ՝
կամ մարտիրոսութեամբ և կամ յափշտա-
կութեամբ վերանալոց են առ Աստուած։ "Եւ
կինն փախեաւ յանապատս ուր էր տեղի նը-
մա պատրաստեալ յԱստուծոյ, զի կերակրի-
ցի անդ աւուրս հազար երկերիւր և վաթ-
սուն։" Ի թագաւորութեան Նեռին խոր-
հրդով գազանին լիցի մեծ հալածումն եկե-
ղեցւոյ. և մարտիրոսացի այն ընտրեալ գա-
ւակն, յորմէ և եւս սատակացի հալածանքն.
ուստի որպէս յեկեղեցին յաւուրս սպանման

Ստեփաննոսի եղև հալածումն մեծ, և եկեղեցին ցրուեցաւ ի գեղս և ի լերինս, այսպէս ևս ի մահուան այն մեծ զաւակին՝ սատակացի հալածանքն, և փախեցէ կինն՝ այսինքն եկեղեցին, յանապատ յերեսաց վիշապին. որպէս և Աստուածածնին փախեաւ յերեսաց վիշապին Հերովդէի Արգելպոս, Օ ի կերակրեցի անդ՝ ասէ. զի յատուկ նախանշանմնութեամբն Աստուծոյ կերակրեցի թէ ըստ մարմնոյ՝ մանանայիւ, և թէ ըստ հոգւոյ՝ բանիւ աշակերտաց Եղիայի և Ենովքայ, և այլ աշակերտաց Ճշմարտութեանն, որպէս և Իսրայէլ յերեսաց վիշապի Փարաւոնի ելեալ յանապատ կերակրեցաւ մանանայիւ և բանիւն Աստուծոյ, "Եւ եղև պատերազմ՝ յերկինս, Միքայէլ և հրեշտակք իւր պատերազմէին ընդ վիշապն, վիշապն պատերազմէր զօրօք իւրովք." Այսինքն յեկեղեցւոջ, որոյ կենցաղավարութիւնն է յերկինս, զի Աստուած սովոր է ի ժամանակի բարկութեան առնել զողորմութիւն. զի յայնմ ժամանակի վասն անզղջից բարկացեալ, և մանաւանդ ի վերայ Հրէից անդարձից, առաքեցէ ի նոսա ազգ ցութեա՛ մոլորութեան զ՝Սուն հնազանդել խաբէութե

նորա, փոխանակ զի զսէրն Աշմարտութեան ոչ ընդունեցին. և բայցէ զգուբն անդնդոց, յորմէ Սատայէլ խրովքն ելեալ, և հանդերձ օդայնովքն մտեալ ի նեռայինսն, սատանկապէս պատերազմեցի ընդ եկեղեցւոյ. Եւ սակայն ի մեծի պատերազմին զթացեալ ոչ թողու ի ձեռանէ, այլ զՄիքայէլ՝ որ է իշխան Հրեշտակաց, վայ թարգմանի Աստուծով, որպէս Աստուած. Հանդերձ զօրօք խրովք ընդդիմադրեցէ Սատայէլեան զօրացն, և պաշտպանեցէ զեկեղեցին և զընտրեալսն. բայց այս պատերազմն Միքայէլի ընդ վիշապին, միայն սրբոց լինի նկատելի, և ոչ մարմնաւոր աչաց. Այսպէս զանեբեւոյթ մարան դիւին զգայլ սուրբն Գիորս յատելն՝ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ՝ ընդ իշխանս օդոյս և այլն. Ուստի յայնժամ՝ և իրօք խակ լինի Միքայէլի ընդ վիշապին յօդս մարտ պատերազմի, զոր սուրբք միայն նկատեն, որպէս և Դանիել խմացաւ զմարտն ի մէջ Հրեշտակաց իշխանաց Պարսից և Մարաց. Դարձեալ՝ որպէս Միքայէլ ձգեաց զՍատայէլն յերկնից, այսպէս ձգեցէ և ի ժամանակս նեռին, ինքեամբ և պահապան Հրեշտակքն ե-

կեղեցւոյ։ Լսէ թէ Միքայէլիս ասցի Տէր, յայտնի է բանն։ զի նա ընկեաց զեշխանն աշխարհի արտաքս։ Դարձեալ՝ որպէս Մատթիաս կոչէ Միքայէլ։ զի ընդդիմացաւ Եպիփանու Անտիոքոսի։ այսպէս և Պետրոս կարէ կոչել Միքայէլ։ զի ընդդիմացաւ Սիմոն կախարդին։ և որպէս վերագոյն ի յերկնից ընկէց։ "Եւ ոչ կարացին կալ ընդդէմ։ և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։" Հպարտան զօրեղ կարծէ զենքն իւր Աքիւրէ։ բայց է տկար որպէս Թորոյիտէս։ Դարձեալ հպարտան միանգամ յաղթեալ դադարի առ ժամանակ մի։ բայց յետոյ մոռացեալ զտկարութիւն իւր դարձեալ ամբարտաւանի։ դարձեալ հակառակի։ զի հպարտութիւն կուրացուցանէ առ ի ճանաչել զչափ անձին։ Այսպէս բազմիցս յաղթեալ Սարայէլն մինչ թագաւորի Աստուծոյ։ մոռացեալ զչափ իւր՝ կարծէ յաղթեալ զՄիքայէլ։ բայց յաղթի և անկանի։ Եւ՝ ասէ։ տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։ ոչ զի երկին իցէ նեղ և անձուկ։ այլ՝ զի անարժան էր երկնային տեղեացն։ Դարձեալ՝ ի վախճանի աշխարհի նպաստութեամբ Միքայէլեան զօրացն՝ որք են կառավար և կեղեցւոյ՝ այնպէս զօրանայ

եկեղեցիներդ պէտ նորա։ Մինչ զի Հաղբատական լեռին յեկեղեցւոյ։ որպէս ի ժամանակս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին փախստական եղեն ի լերինս Կոմկասու։ և տեղն ոչ զտաւ նոցա ի Հայաստան աշխարհի։ այսպէս և յայնժամ տեղի ոչ գտանի նոցա յեկեղեցւոջ՝ որ է խորհրդական երկինք։ Եթէ քաղաքացուք՝ և ոչ ի մեզ գտանէ տեղի։ որպէս ասէ առաքեալն՝ մի տայք զտեղի սատանայի։ Եւ Յակոբոս՝ կացէք Հակառակ չարախօսին։ և լիցի փախստական ի ձէնջ։ "Եւ անկաւ վիշապն մեծ օձն առաջին։ որ անուանեալ կոչի Բեհեղզեբուղ և սատանայ։ որ մոլորեցուցչ զամենայն տիեզերս երկրի։ և հրեշտակք նորա ընդ նմա։" Օձն որ խաբեաց զԵւա՝ թէ ոչ էր իբրև զհասարակ օձ փոքր։ այլ՝ վիշապ։ աստուստ յայտ է։ Արդ՝ ի վիշապ օձն եմուտ Սատանէն։ նախ՝ զի ծանիցէ կինն զնա զոլ մեծ ոմն։ Նկատմամբ մեծի կենդանւոյն։ և հաւատացէ բանիցն։ Երկրորդ՝ թոյլատրութեամբն Աստուծոյ ի նա եմուտ։ զի ծանիցուք օձաբարոյ կատաղի և նենգաւոր զոլն նորա։ Աստուստ այլաբանօրէն օձ և վիշապ անուանի։ կոչի Բեհեզզեբուղ։ այսինքն՝ Տէր ճանճից։ Ճան-

ձին սեաթոյր՝ օրինակ են անկեալ վեքն և մեղաւորքն, որոց է տէր Սատայէլն, Ասի և ատանայ, այսինքն հակառակ, զի հակառակեցաւ Ադամայ, Դաեի, և Միքայէլի, որպէս Կորիս Մովսիսի։ Սորա յատուկ գործն է խաբել, վեր՝ ասէ, մոլորեցոյց զտիեզերս երկրի։ առ ժամանակօքն Յովհաննու բոլոր տիեզերս ի կռապաշտութեան էր, որք էին չար պտուղք մոլորեցուցչին։ "Եւ լուայ զձայն մեծ յերկնից՝ որ ասէ, արդ եղև զօրութիւն և փրկութիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ, և իշխանութիւն Օծելոյ նորա, զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէրն առաջի Աստուծոյ զնոցանէ ի տուէ և ի գիշերի։" Մեծ ձայնն յերկնից նշանակէ զմեծ ուրախութիւնն, և ցնծութիւնն յաղթող եկեղեցւոյ, որք ուրախանան ընդ կործանումն Սատայէլի։ որոյ կործանումն լինի զօրութեամբն Դաեի, թէպէտ միջնորդութեամբն Միքայէլի և սրբոց։ Ասասի ասեն՝ եղև իշխանութիւն և փրկութիւն Աստուծոյ մերոյ և Օծելոյ նորա, զի անկաւ չարախօսն և այլն։ Սատայէլն ծածուկ հրապուրանօք մոլորեցուցանէ, և կարծելով թէ՝ ոչ ի-

մանայ Աստուած զդրունս իւր, իբրև զկին
ինայեալ զանձն իւր լուանայ, և առաջի
Աստուծոյ զանձն իւր արդարացուցեալ, ա-
սէ՝ ոչինչ գործեցի չար, այլ ինքեանք
են պատճառ չարեաց իւրեանց, և այս է
չարախօսելն միշտ առաջի Աստուծոյ, Բայց
Աստուած գիտելով զմեղմէս բարս նոցա,
և թէ ինքն է մակարդ չարեաց և նիւթ,
Սիքայէլիս և սրբով զգեսնէ զնա, և կոր-
ծանէ ընդ ոտիւք սրբոց, զի ծանիցէ թէ՝
զիտէ զդարսն իւր մակարդ չարեաց, և
խայտառակեսցի։ Այսպէս չարախօսելն ըզ
Յօբայ՝ թոյլ ետ մարտիլ ընդ նմա, և
կործանեաց վառեալ զծառայն Հպարտու-
թեամբ։ Տես ասա թէ՝ որպէս յաղթող ե-
կեղեցին զգինուորեալն եղբարս կոչէ ինքեան,
և խնդայ յաւէտ ընդ յաղթութիւն նորա,
զփրկութիւն նորա իւր համարելով, և զովէ
զնա յաւելն։ "Եւ նոքա յաղթեցին նմա
արեամբ գառին, և բանիւ վկայութեանն նորա,
և ոչ հաճեցան ընդ վիշապին մինչև ի մահ։"
Զանկիր ասա՝ զի յաղթութիւն վիշապին
վասն մերթ Բեի, մերթ Սիքայէլի, և մերթ
սրբոց տրի, զի ամենեքեան համընթանան
առ այն։ Բն հեղինակութեամբ, Սիքայէլ

բնութեամբ և շնորհիւ ։ և սուրբք զարծակ-
ցութեամբ՝ անձնիշխանութեամբ՝ և զօրու-
թեամբ չարչարանացն Քրիստոսի ։ վայ ասէ՝
յաղթեցին նմա սրեամբ զաւրինն ։ նաև յա-
ղանեալով ի նեղութիւնս և ոչ թողլով մին-
չև ի մահ լինիլ վիշապին կամազիւտ ան-
դամ՝ յինքեանս ։ Վայ ասէ՝ և ոչ հաճեցան
ընդ վիշապին մինչև ի մահ ։ այսինքն միշտ
հակառակ կային ։ այս է պայման պատե-
րազմի և գործ հոգևոր հակոզի ։ ամենևին
չտալ թոյլ փորձողին և չարախօսին մու-
ծանել զգլուխ խորհրդոցն ի սիրտ ։ զի մի
սահեսցի բովանդակ ի նեռքս ։ " Վայ՝ ոչ ու-
բախ լիցին երկինք ։ և ամենեքին ոյք բը-
նակեալ էք ի նմա ։ վայ երկրի և ծովու ։
զի անկաւ բանսարկուն առ ձեզ որ ունի
զցասումն բազում՝ ։ և կացցէ առ սակաւ մի
ժամանակ ։" Թէ յաղթող և թէ զինուո-
ղեալ եկեղեցին մեծապէս ուրախ լինին ընդ
անկումն օձին ։ բայց վայ՝ ասէ ։ երկրի և ծո-
վու ։ Երկրաւ խմանի քրիստոնէից անհաւատ-
քն կամ մարմնասէրքն ։ ծովու՝ հեթանոսք
և ամբարիշտք ի հրէից ։ որոց եռապատիկ
վայ պատկանի ։ Նախ՝ զի թուրացուցանէ
Աստուած զանձն Սաղայէլի արձակեալսան

յարձակիլ ի նոսա։ այս է անկանելն ի նոսա։ Երկրորդ՝ զի որպէս փախստական զօր զամենայն զօր ինչ զտանէ ցասմամբ մեծաւ աւերէ և ասպատակէ. այսպէս և Հալածականն Սադայէլ յերեսաց Մ՝ իքայէլի և սրբոց. վասն ասէ՝ ունի զցասումն բազում։ Երրորդ՝ վասն սակաւութեան ժամանակին։ զի ըստ այլ թարգմանութեան զբի՝ գիտէ զի սակաւ ունի ժամանակ։ զի որպէս երեկոյեան գայլքն առաւել գազանաբարոյ լինին։ այնու զի սակաւ մնայ ի լուսոյ։ այսպէս գիտելով Սադայէլն թէ գիտի սակաւ ժամանակի փակի գարձեալ ի զուրն անդնդոց։ Աստուծոյ ուժգնութեամբ յարձակի յաւուր։ Պատմի թէ՝ ի գաւառս Նոբվեզիոյ բազէքն արագապէս թռչին զաւարաւ. այնու՝ զի միայն զերիս ժամս լուսոյ ունին։ "Եւ յորժամ ետես վիշապն թէ՝ անկաւ յերկիր։ զհետ եղև կնոջն՝ որ ծնաւ զմանուկն արու։" Հրեղէն վիշապս մինչ յաղթեցաւ ի Մ՝ իքայէլէ։ թռեաւ առ սուրբսն։ և մինչ նոքա խսպառ շինուցին զստրատեալ փայլակն։ անկեալ յերկիր և ի ծով՝ այսինքն ի յանհաւատս։ ոչ շատացաւ և ոչ յազեցաւ այնու. զի ըստ Ամբակումայ կե-

բակուր նարա են ընտիրքն, առ որս ախորժելով զարձեալ յարձակիլ ժպրհի զհետ եկեղեցւոյն, "Եւ տուան կնոջն երկու թեք արծուոյ մեծի, զի թռիցէ յանապատ ի տեղի իւր՝ ուր կերակրիւր անդ ժամանակ, և ժամանակս և կէս ժամանակի յերեսաց օձին։" Վերադառնայ ի կարգ առաջիկայ պատմութեանն. քանզի կիներն զորմէ ասաց նախ եթէ փախեաւ, ոչ է կրկին փախուստն, այլ մի. և ի փախչելն տուան թեք արծուոյ մեծի։ Ի կրկնոջն Ամադասակաբ պատմի թէ՝ այնպիսի մեծամեծ արծուիք կան, որոց թեքն են երկոտասան կանգուն։ Այս երկու թեքս են հաւատն և յոյսն եկեղեցւոյ. զի հաւատն է յանդիմանութիւն յուսացելոց իրաց, հաստատութիւն և յանդիմանութիւն անտեսութիւց, ասէ Պետրոս զոր ոչն տեսեալ։ Բայց հաստատիցին հաւատով հանգոյն Մովսիսի։ ուրանան զմեծութիւն Աստուծոյ, և յուսով ակնկալեալ խոստմանցն Քրիստոսի, թռչին յանապատ. կամ է խոկումն զերկնայնոյն արծուասարաս և հրեղէն սէրն վերբերիչ. որոց ցանկայր և մարգարէն յասելն՝ ո՞ տայր ինձ զթեւս որպէս զաղաւնւոյ. զի թռչէի, վերանայի և հեւացեալ դադարէի

յանապատի։ Աստուծի երկնային խոսքամբ յերիս ամն և կէս, զոր կոչէ ժամանակ՝ ժամանակս և կէս ժամանակաց, կերակրի անդ եկեղեցի. կամ են երկու կտակարանքն՝ որ ուսուցանեն զերկիւղ, որով խորշիմք ի մեղաց, և սէր՝ որով յարիմք Աստուած. անապատն է յարմար տեղի սրբելոյ զանձն, ուստի ասէ Դաւիթ՝ որպէս երկիր անապատ և անջուր, և յարէ՝ այսպէս սրբութեամբ երևեցայց քեզ։ "Եւ եհեղ օձն ի բերանոյ իւրմէ զջուր, զի ընկղմեսցէ զնա։" Ջուրս այս է զօրքն Նեռին, զոր հրապուրմամբ օձին՝ այսինքն Սատանայի, Նեռն լցէ զի կալցեն զեկեղեցին. որպէս օձին հոգ ուտելն այլաբանական, այսպէս և ջուր փչելն։ Պալէնայն՝ ջուր փչէ և զձկունս կլանէ. քիսիթիւն՝ զհամբարանոցն նաւուն ջրով լցուցանէ։ Ալեշաքի՝ Հինգ՝ զամբողջ եղջերուս և եղինս կլանեն։ "Եւ օգնեաց երկիր կնոջն, և եբաց երկիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն ի բերանոյ իւրմէ։" Եթէ Աստուած ի մեր կոյս է՝ ասէ առաքեալն, ով իցէ մեզ հակառակ։ Հրամանաւն Աստուծոյ՝ բանի երկիր, և կլանէ զջրս Նեռին. որպէս երբեմն զԴաթան և զԱբիրօն։ Պատմի ի Պարս

Հարանց թէ՝ անապատական Եւդոքսոս եպսկ. զի Սարակինեայի ոմն՝ սուրն ի ձեռին արշաւէր առ ինքն. և ընդ ասէն թէ այսպէս կամեցար Տէր զմահն իմ, եղիցին կամք քո. խսկայն երկիրն բացեալ եկուլ զսրամերկ Սարակինեան, "Եւ ցասեաւ վիշապն ընդ կընոջն. և գնաց պատերազմիլ ընդ այլ զաւակս նորա, որք պահէին զպատուիրանսն Աստուծոյ և ունէին զվկայութիւնս Յի Քրի։" Կինն այն՝ որ նշանակէ եկեղեցին, ոչ ընդ ամենայն որդւոց փախչի յանապատ ի հալածմանէ նեռին, այլ ըստ մեծի մասին. ուստի ոմանք մնան ի քաղաքս և ի գեղս, զորս հետապօտէ վիշապն նեռիւն, և բռնադատէ յուրացութիւն. զի մեծապէս ցասնու վիշապն ընդ պահօղսն պատուիրանաց Տեառն և վկայութեան հաւատոյ Յի Քրի։ "Եւ եկաց ի վերայ աւազոյ ծովու։" Խուռվի յերկրէ, զի օգնեաց կնոջն կլանելով զջուրն յինքենէ հեղեալ. և զի ի ցամաք երկիր ոչ ունի զհանգիստ, ի ցամաքեալ յախտից հոգւոյ. որ նշանակէ զկսերտահատատ և զպատուիրանապահ քրիստոնեայս. վասն զոյ առնու ի վերայ աւազոյ ծովու, այսինքն՝ ի հոգւոյ, յորմէ դառնու.

թիւն Ջուրց մեզայ ախտին են անպակաս, որպէս և ոչ յաւաղոյ Ջուրն Ծովու։ Պարձեալ՝ աւազոնն խմանի բազմութիւնք հեթանոսաց և նեռնայնոց, ի յորս հանդչի և զկայ անտու վիշապն, զի ինքն է թագաւոր այնոցիկ՝ որք ի Ջուրան են, ըստ Յօբայ։

Գ. ԼՈՒԽ ԺԳ.

"Եւ տեսի, զի ելանէր ի Ծովէն գազան, և ունէր զգլուխս եօթն՝ և եղջիւրս տասն՝ և ի վերայ եղջերաց նորա տասն խոյր, և ի վերայ գլխոյ նորա անուն հայհոյութեան։" Ծովու՝ խմանի աշխարհս, քանզի աշխարհս մերթ երկիր կոչի, և մերթ ծով, և ասի ծով՝ զի ծածանի և ծփայ ալեօք պէս պէս փորձութեան և կոհակք անօրէնութեան, այս գազանս հանգոյն վիշապին ունէր եօթն գլուխս և տասն եղջիւրս, զի ի նմանէ ընկալնու զզօրութիւն իւր, և է իբր չար ծընունդ վիշապին։ Բայց այսու տարբերի, զի ի վերայ եղջերաց սորա գոյին տասն խոյրք, այսինքն պսակք, որով նշանակի թէ՝ բայ ի յեօթանց խոյրակալ թագաւորաց, զորս ունէր վիշապն, զտասն իշխանս վիշապին ևս թագազարդէ, զի շքեղ երևեսցի քան զվիշ-

շապն. նաև ի վերայ գլխոյ սորա գրեալ էր անուն հայհոյութեան, զոր ոչ ունէր վիշապն. զի վիշապն երկնեաց նման գող Աստուծոյ, և այն՝ ի միտս իւր։ Բայց գազանս այս արտաքուստ ի գլուխ իւր յայտնի կրէ զհայհոյութիւնս զայս. զի անուանէ զինքն աստուած, քան զոր չէք մեծագոյն հայհոյութիւն. վասն զի գերազանցէ զվիշապին։ Կոչէ գազան՝ վասն գազանաբարոյութեան, որով անողորմաբար չարչարէ զմարդիկ։ Այսպէս Դանիէլ զչորս թագաւորս նմանութեամբ չորից գազանաց ետես ի տեսլեան. բայց ինքն զինքն կոչէ աստուած և քրիստոս՝ վասն ամպարտաւանութեանն, և այս է հայհոյութիւն։ Այսպէս Դարեհ վերջին թագաւոր Մարաց, գրեաց առ մեծն Աղեքսանդր. թագաւոր թագաւորաց բարձակից արեգական աստուծոյ Մեհրեայ, ես ինքն աստուած Դարեհ՝ Աղեքսանդրի աւազակապետի ողջոյն։ Կամ թէ որպէս ի վերնասախտակն խաչին գրեալ էր Յս Նազովրեցի թագաւոր Հրէից. այսպէս ի պսակ իւր՝ զոր կրէ ի գլուխ իւր, տայ մակագրել. յս թագաւոր Հրէից, կամ մեսիա և կամ աստուածապետական անուն։ Դարձեալ թէ՝

գլուխն նշանակէ նախ՝ զընդհանուր թագաւորութիւն նեռին ։ Երկրորդ՝ զբազմադիմի խորամանկութիւն ։ և հնարագիտութիւն նորին ։ Այսու իմացուածով ։ Միւլէման թագաւորն թուրքաց ասաց զեստպանացն կայսեր ։ ես եմ վիշապ միով գլխով ։ բայց բազում տասամբ ։ Ընդդէմ սորա՝ վիշապն և զազանն եղեցին միով տասով ։ բայց բազում գլխով։ Երրորդ՝ զտարաձայնութիւն մտացն։ զի նեռն մարդ գոլով՝ ոչ բոլորովին շրջէ զենքն ի չարն՝ որպէս զսադայէլն։ այլ տատանի ի խորհուրդս իւր եօթն տարակուսանօք։ որպէս և Սիմոն կախարդն՝ մերթ ապաչէր զՊետրոս ։ մերթ ցանկայր Հոգւոյն շնորհաց։ վերջապէս ի կախարդութեան ստակեցաւ ։ այսպէս և նեռն։ Աստուստ երկոտասան նահապետաց անուանն ետես Յովհաննէս զբրեալ ի գրունս վերին Երուսաղէմի ։ որով ցուցանի թէ՝ և զփրկութիւն նեռին կամեցեալ է ։ Բայց զցեղն Դանայ ոչ յիշէ վասն ապարդիւն նեռին ։ Զորրորդ՝ ցուցանի թէ՝ նեռն եօթն գլխաւոր մեղօք և տասն մոլութեամբք ընդդէմ եօթանց առաքինութեանց և տասն պատուիրանացն Աստուծոյ մարտնչելոց է ։ Դարձեալ՝ տասն եղջիւրքն

են տասն թագաւորք նախընթացք նեռին։ յորոց վերին խնարՀեցուսցէ բռնութեամբ։ և այլքն Հնազանդեսցին։ որպէս ետես։ "Եւ գազանն զոր տեսի նման ընձու։ և ոտք նորա իբրև զարջու։ և բերան նորա իբրև զառիւծու։ և ետ նմա վիշապն զզօրութիւն և իշխանութիւն իւր մեծ։" Աստուստ վարկանի թէ և եօթն իցեն գլուխքն նման զանազան գլխոց գազանաց։ զի սա է չորրորդ գազանն ահեղ և զարմանալի։ որ բերէ յինքեան զբարս ամենայն գազանաց։ Բանդի լիցի դարանակալ իբրև զօձ։ շղթաքարդ իբրև զշուն։ խորամանկ իբրև զաղուէս։ որկրամոլ իբրև զարջ։ վամաշոտ ի ցանկութիւնս կանանց՝ իբրև զխոզ։ սրտմտօղ իբրև զինձ։ և հզօր ի պատառել՝ իբրև զառիւծ։ Բայց յատկապէս ասէ նման ընձու։ զի որպէս ինձն է խայտ և բծաւոր։ այսպէս ի նեռն գոյն բիծ ամենայն մեղաց։ և ոտքն իբրև զարջու՝ այսինքն Հատատատ ի չարիս։ եւ բերանն իբրև զառիւծու։ զի գահարկու Հրամանն տանջանաց և սպանութեան Հանէ առ այնս՝ որք ոչ Հնազանդին ազանդոյն իւրոյ։ Ի տո որում Ազակ։ սրտմտութի թագաւորի իբրև զառիւծ։ Եւ ասէ՝ տայ նը-

մա վիշապն զզօրութիւն իւր, և զն որպէս հայրն որ ինչ ունի՝ է հարազատ որդւոյն այսպէս սաղայէլն որ ինչ ունի՝ է նեռին. զն նեռն է որդի սատանայի՝ հակառակորդն հարստացեալ. և այլն։ "Եւ մի ի գլխոց նորա վիրաւորեալ էր ի մահ, և վէր մահու նորա առողջանայր։" Եւ այս երկու են կարծիք. Նախ՝ եօթնագլխեան գազանիս այսորիկ՝ մինն ի հասարակ գլխոց, այսինքն մինն ի թագաւորաց իւրոց ի պատերազմի վիրաւորի ի մահ. մինչև բազմաց ասել թէ՝ հաւատեաւ մեռանի. բայց նեռն ուսեալ ի վիշապէն՝ այնպէս փութով բժշկէ Ճարտարութեամբ գեղոց՝ մինչև բազմաց թուիլ սքանչելեօք. ուստի կարի զարմանան ընդ զօրութիւն գազանին։ Երկրորդ՝ եօթնագլխեան գազանիս մեծ և առաջին գլուխն՝ որ է ինքն, երևի վիրաւորեալ, այսինքն՝ կեղծէ զինքենէ զոլ ի մահ վիրաւորեալ, որպէս ումանք ի կախարդաց վիրաւորեն զինքեանս առ աչօք՝ և բուժեն ի զարմանացումն ազիտաց. և կամ՝ մերձ ի մահ խօթացեալ և կամ՝ առ աչս մեռեալ, յորմէ իսկոյն կամ՝ զկնի երից աւուրց յառնէ. և քարոզէ զինքենէ թէ՝ ինքն ինչ Ճշմա-

ելեալ Ռեն։ Եւ զայս առնէ, զի մարդարէից բանան յինքն Հմարտեսցէ։ Ուստի ի լրումն երից ամաց և կիսոյ Հարաւանաց, փոխէ Համբառնալ յերկինս ի լեռնէն Համբարձման, զի նեռն է կապիկ Ռեի, զոր Տէր Յն անդ էն սատակէ Հոգւով բերանոյ իւրոյ, որպէս Պետրոս զՍիմոն կախարդն։ "Եւ գարմացաւ ամենայն երկիր ընդ գազանն և երկիրպագին վիշապին. զի ետ նմա զթագաւորութիւն իւր, և ասեն ով կայէ նման գազանին։" Ընդ յառնել գազանին ի մահաբեր վերացն, զարմանան ամենեքեան ընդ զօրութիւն նորա, և երկրպագեն տուողին նմա զայնպիսի զօրութիւն. որպէս ընդ Հրաշագործութիւնս Ռեի փառաւոր առնէին զԱստուած՝ զտուօղն զայնպիսի իշխանութիւն մարդկան։ Բայց զի այն Հրաշքն սուտ է և առ աչօք, վնչ երկրպագութիւնն ոչ վերաբերի առ Աստուած, այլ՝ առ վիշապն որ ուսուցանէ զայն կախարդութիւն, և գովին զգազանն ասելով, ով է նման Ռեի. զի զոր աստ ըստ արժանւոյն գազան կոչէ Յովհաննէս, նոքա ազիտաբար զնա քրիստոս կոչելոց են։ Այսպէս իմացի տեղիս այս, և ոչ եթէ անիրաւ տեսցին զվիշապն և

երկրպագցեն նմա, այլ՝ տուողին իշխանութեան զազանին երկրպագցեն, կարծելով Աստուծոյ տուեալ՝ բայց այն երկրպագութիւն է վիշապին և ոչ Աստուծոյ։ "Եւ տուաւ նմա բերան խօսիլ զմեծամեծս և հայհոյութիւնս։" Այս է, թոյլ տուաւ Աստուծոյ լեզու և բերան նեռին։ Աստակէ՝ Տէր զլեզուս մեծամեծս, ըստորում՝ խորհէր զինքենէ ի սրտի, համարձակ պարծիլ թէ՝ ես եմ՝ քեն և մեսիայն, որ գալոց էի. ամենեքեան որք յառաջ քան զիս եկին, գողք էին և աւազակք, և որ Քրիստոս կոչիւր, խաբեբայ էր. Մեծ հայհոյութիւն է, մինչև աստուած կամ՝ պաշտելի համարիլ զինքն։ "Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած. և հայհոյեաց զանուն նորա և զխորան նորա. և զայնոսիկ՝ որք յերկինս բնակին։" Նեռն թէպէտ եղկի ծայրագունապէս անզգամ, և ասասցէ ոչ միայն ի սրտի իւրում՝ այլ և բերանով, թէ՝ ոչ զոյ Աստուած, բայց զայս ոչ այնպէս ասասցէ իբրու բնաւ ուրանալով թէ՝ ոչ զոյ Աստուած, այլ թէ՝ բաց յինէն ոչ զոյ Աստուած, և թէ՝ Աստուած ոչ ունի որդի, և այսու սուտ հանցէ ըզ

Քեզ մեր զոլ որդի Աստուծոյ, և ասացէք ես եմ՝ աստուած, որ խոստացայ ի հին կտակարանս զալ, և ահա մարդ եղեալ եկի. և այսպէս զեկեղեցին Քրիստոսի, զոր խորան ասէ՝ և ըստ այլ թարգմանութեան տապանակ, հայհոյեսցէ թէ՝ սուտ է. նոյնպէս և զամենայն սուրբս նորոյ կտակարանի. և առ ի հաստատութիւն հայհոյութեան իւրոյ, մարտիցէ ընդ սուրբս, ընդ քարոզիչս, ընդ պետս եկեղեցւոյ, և յաղթեսցէ նոցա, ոչ միայն սպանանելով, այլև՝ առ աչօք նշանելս առնելով, որպէս ասէ, "Եւ տուաւ նմա պատերազմիլ ընդ սուրբս և յաղթել նոցա, և տուաւ նմա իշխանութիւն ի վերայ ամենայն ազգաց և լեզուաց և ժողովրդոց։" Յորժամ՝ ասացէք բաց յինէն ոչ զոյ այլ՝ և յաղթելով զսուրբս՝ նշան ևս արասցէ, և մանաւանդ՝ յորժամ սպանցէ զԵնովք և զԵղիա զՀրաբերանն, յիրաւի ամենայն ոք ցանկայ լինիլ ընդ ազանդով նորա և ասել՝ Ճշմարտապէս սա է, "Օ՛ի երկիր պագցեն նմա ամենեքեան՝ որք բնակեալ են ընդ երեսս երկրի, որոց ոչ են գրեալ անուանք նոցա ի գալրութեան կենաց գառնին զեն ի սկզբանէ աշխարհի։" Ոչ է հնար մոլորե-

ցուցանել զընարեալսն՝ որոց անուանքն զբ-
ռեալ են յերկինս ։ թէ և տացէ Հուր իջա-
նել յերկնից ։ զի որպէս անարգեալքն ի
տեսանելն զյարութիւն Ղազարու առաւել
խոտացան ։ Հակադարձաբար ընտրեալքն ի
տեսանելն զկեղծ նշանս նեռին առաւել պնդ-
գին ի Հաւատն ։ և այնպէս Հաստատին
յայնժամ ։ ըստ այսմ Պօղոս ասէ՝ ոչ մահ և
ոչ կեանք կարեն մեկնել զնոսա ի սիրոյն
Քրիստոս ։ Բրիստոս զառն Աստուծոյ ասի՝
զենեալ ի սկզբանէ աշխարհի ։ որքան առ
վճիռն Հօր ։ զի ի յաւիտենից վճռեցաւ և
զրեցաւ մեռանել ։ ըստ այնմ՝ որդի մարդոյ
երթայ որպէս և գրեալ է ։ Այսպէս և առ-
տարանիչն Մարկոս՝ զվճիռ դատաւորին՝ որ
եղև յերրորդ ժամուն ։ զորմ կատարեալ հա-
մարի ։ յասելն ։ էր ժամ երրորդ և հանին
զնա ի խաչ ։ որ ըստ այլոցն ի վեց ժամուն
խաչեցաւ ։ Դարձեալ՝ զառն ասի զենեալ
ի սկզբանէ ։ վասն զանազան կրիցն՝ զոր կը-
րեաց յանդամս իւր ։ զի ի Ադամ սպանաւ ։
ի Լոտ՝ այպանեցաւ ։ ի Մահակ՝ զենաւ ։ յե-
սայի՝ սղոցեցաւ ։ և այլն ։ " Այլ ունին ա-
կանջս լսելոյ լուիցեն ։" Այս ասէ առ ի
ցուցանել զհաստատութիւն իրացն ։ իբր զի

մի ոք համարիցի աւելորդաբանութիւն այլ՝ հաստատ Հչմարտութիւն։ Յայս միտ և Տէրն ասէր բազմիցս։ "Զի են ոմանք՝ որք ի գերութիւն վարեսցին, և են ոմանք՝ որք սրով մեռցին և են ոմանք՝ որք անձամբ զանձինս սպանանիցեն. ասա է համբերութիւն և հաւատ սրբոց։" Կեռն ի սատակացուցանելն զհարածանս՝ զոմանս ի գերութիւն վարէ. զոմանս սրախողխողէ, և ոմանց պայմանադրէ զի թէ ոչ երկրպագցեն ի պայմանեալ ժամուն՝ յապայն անընդունակ լեցի գարձ նոցա. այլ՝ ի չարահնար տանջանս մաշեսցին մինչ ի մահ. և ասատաստ բազումք անհամբեր լեալ՝ երթան զիւրովին և ինքնասպան լինին։ Եւ այս չար հնարս՝ զոր ոչ ոք ի հալածչաց եկեղեցւոյ արար, փութով շրջէ զբազումս յերկրպագութիւն նեռին. վասն այսորիկ ասէ՝ ասա է համբերութիւն և հաւատ սրբոց, զի քան զայս այլ մեծ յուսաբեկական տանջանք ոչ լինի։ Դիտելի է. զի՝ ըստ այլ թարգմանութեան գրի, որ ի գերութիւն վարէ՝ ի գերութիւն վարեսցի. իբր թէ՝ մի յուսահատիք, զի նեռն որով և չարչարէ՝ նովիմբ և ինքն չարչարեսցի իւրայնովքն. եթէ համբերեսջիք՝ գոջիք

զելս Աստուծով. զհամբերութիւն Յօբայ ստացէք և զկատարումն, Տեառն տեսէք. զի տանջանքն է մէհէնկ, այսինքն փորձաքար, որով զուտ ոսկին և խառն ճանաչի։ Այսպէս նեղութիւն յայտնէ զսուրբն և զանսուրբն. վասնորոյ ասէ Սիրաք՝ զանօթ բրտի թրծէ հնոց, և զայր արդար փորձութիւն տառապանաց. և ցՏՕբիթ՝ զի ընդունելի էիր Աստուծոյ, հարկ եղև փորձութեան ցուցանել զքեզ։ "Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս երկուս նման գառինն. և խօսէր իբրև զվիշապն։ Ոմանք ասեն այս է Մահմէտն. բայց ըստորին գալուստն ի վերս անդր նշանակեցաք. այլ այս լինի մին ի սուտ մարգարէից՝ որք յայնժամ յաճախին. որպէս առ Եղիայիւ՝ Բահաղու մարգարէքն. և այս յոյժ համախոհ նեռին. և սատանիկ ներհակ Եղիայի. այսինքն՝ սուտ քան է նեռն՝ սուտ մարգարէ՝ սա. որ մարգարէ ասելով զինքեանէ՝ ասի նման գառին, բայց խօսելով իբրև ըզվիշապն՝ ասի նման գազանին. զի վիշապն՝ մեծ գազանն՝ և այս փոքր գազանս՝ ազգակից են միմեանց՝ համախոհ և միասիրտ։ Այս քարոզելոց է զնեռն գոլ ճշմարիտ Դ

վեղ ոմանք Հաւանականապէս կարծեն թէ՝ սա լինելոց է եպիսկոպոս ոմն ուրացող և անկեալ ի սաղուկեցութիւն, որ գիտելով զնեռն զոլ որդի անօրէնութեան և խաբեբայ, առ Հաճոյանալոյ նմա աղուեսաբարոյ կեղծաւորութեամբն պնդելոյ է թէ՝ սա լցէ քրիստոս, որպէս Աստուծի եպիսկոպոսն Պարգիս գիտելով զխաբեբայութիւն Մահմետին՝ քարոզեաց զնա զոլ մարգարէ, ի նոխատինս Քրիստոնէից, "Եւ զիշխանութիւն զամենայն առաջնոյ գազանին գործէր առաջի նորա, և առնէր զերկիր և զամենայն բնակիչս նորա, զի երկրպագանիցեն գազանին առաջնոյ մինչև ողջասցի վէր մահու նորա։ Փոքր այլ գազանս գառնազգեստ և գազանաբարոյ, իբրև զլեռնանորդ առնու գինիք և զամենայն չարարուեստս Հնարս գազանին մեծի առ ի նմանէ, այսինքն՝ զկախարդութիւնսն. և առաջի նորա գործէ զամենայն, զուն գործելով և ջանալով, զի թէ Հնար լցէ զամենայն երկիր յերկրպագութիւն նորա խոնարհեցուցէ, և զայս առնէ առաջի նորա որպէս մոգքն առնէին զնշանս առաջի Փարաւոնի, բայց Մովսէս յաղթեաց նոցա. այսպէս և անդ Եղիա և Ե-

նովք կամ Մովսէս յաղթեսցեն նմա ։ և ասէ՝ մինչև ողջացի վէր մահու նորա ։ զի զազանն կեղծէ զինքենէ ի մահ խոցեալ ։ կամ մեռեալ ։ բայց ծածկաբար տայ իշխանութիւն և հրաման ։ գործակցութեամբ վիշապին զամենայն մեծամեծ կեղծ նշանս գործել ։ մինչև ողջացի ի կեղծ վերացն և յառնիցէ ի սուտ մահուանէն ։ Եւ գիտելի է ։ զի յայլ թարգմանութիւնս գրի ։ երկիրս ազգին զազանին՝ որոյ ողջացաւ վէր մահու նորա ։ զի զկնի ողջանալոյն առաւել պատերհ թուի երկրպագութիւն և առաւել յորդորին առ այն քան ի հիւանդութեան ։ որպէս յայտ է ։ " Եւ տայր հրոյ իջանել յերկնից ։" Աբուեատք Աստուծոյ լինին բընական և ոչ գերբնական ։ մարդիկ չգիտելով զազանի պատճառն՝ համարին գերբնական ։ Դևքն որպէս կերպարանին ի հրեշտակ լուսոյ ։ այնպէս ևս ի հուր կերպարանին ։ Նըշանք սոցա պատրին ի ձևն կամ ի տեսակն որպէս և կախարդից ։ " Ասեն ցնա բնակիչք երկրի ։ արա զպատկեր զազանին՝ որ ի վերայ սրոյն եկաց ։" Մինչ զառնեղջիւր զազանն ստեղ բանիւ և գիւտհնար նշանաւ շարժեսցէ զբնակիչս երկրի յերկրպագութ

թիւն մահաւէր զաղանին՝ ադաչեսցեն զնա առնել զպատկեր զաղանին մահաւորի, կամ որ ի վերայ սրոյն եկաց, այսինքն ընկալեալ զսուրն՝ ոչ մեռաւ. այլ եկաց և ապրեցաւ. Կամ ըստ այլ թարգմանութեան՝ որպէս և ի լուսանցն գնի, որ ունի զհարուածս սրոյն. Պատճառն է զի այնքան յարին ի մոլեգնին սէր նորա՝ մինչ զի ոչ տեսեն կամ մեան ապչանալոյն, զի նմա երկրպագցեն անմիջապէս. այլ խնդրեն զպատկերս. Զերևս առ այս՝ զաղանն կեղծէ զինքեանէ խոցեալ, զի փոքձեսցէ զսէր իւրոցն. և զի Հանգոյն Աստուածապատուական ոչ միայն զինքն, այլ և զպատկեր իւր պաշտել տայցէ. "Դիւ տուաւ նմա իշխանութիւն, զի տացէ զհոգի պատկերի գաղանին, և զի խօսեսցի պատկերն և որ ոչ երկրպագցէ պատկերին՝ սպանցեն զնա." Զուարարի Աստուծոյ զի հոգի դիւական մտցէ ի պատկերն, որպէս յարձանակուռան. և զի խօսեսցի՝ մինչև ամենայն մեքենարք մոլորեսցին ի նա, զի որք ընտիրքն լցեն կոծեսցին. Ասա տիրապէս փայլի հաւատս սրբոց, զի ի քառից գիմաց ասպեսցին ի մոլորութիւն նշանաւ, խօսիք պատկերին, յորդորմամբ գառնեղջիւր գա-

գանին՝ և սրով. զի որ ոչ երկրպագցէ ըստ-
պանցեն։ “Եւ արասցէ զիւրքունս և զմե-
ծամեծս՝ զմեծատունս՝ և զազատս՝ և զազ-
քատս և զծառայս՝ ունել զդրոշմ յաջոյ
ձեռին և ի վերայ ճակատու նոցա։” Կեան
մարդոյն ըստ այնքան ամբարտաւանեցի։
մինչ զի զանուն և զպատկեր իւր դրոշմել
տացէ յաջս և ի ճակատս հետևողաց իւրոց.
բայց զայս դրոշմ ոչ ընկալցին նոքա յաջս
և ի սիրտս՝ որոց դրոշմեալ է Քրիստոս իբ-
րև գինիք. ըստ այնմ։ դիր զիս իբրև գինիք
ի վերայ սրտի քո. և իբր գմատանի ի վե-
րայ բազկի քո։ Այս դրոշմ ոչ եղիցի խո-
բանագրոշմ՝ որով տապեցին ձեռք և ճակատք՝
զի այս դժուարին իմն է։ Եւ անդ էր այլ
թուղթ տպեալ։ Այսպէս Աբրիստականք
և Հունէրիոս թագաւորն բանադատէին զՀե-
տևողս իւրեանց ունել զկիր վերայ մկրտու-
թեան։ որպէս այժմ Յանձիկք զՀնագանդս
պետութեան իւրեանց խարանաթղթեն։ Դար-
ձեալ կարելի է թէ՝ կիսաւածագ լոշմեաց-
ցեն։ որ տանձիեվար ասի նիւիսկ։ զոր ան-
խոհեմ ջերմեռանդութեամբ կանել ասն Յի-
ռուսադեմ զնացողքն՝ իբր սիրահարք Քրի-
բայց այն է ցոյցք սնափառութեան. զի ոչ

բաւէ նոցա մահտեսու թեան անուն ։ " Եւ ոչ ոք կարասցէ գնել կամ վաճառել եթէ ոչ ունիցի զդրոշմ գրոյն · և զանուն գազանին և զթիւ անուանն նորա ։" Որպէս այժմ ոչ ոք կարէ զքրիստոնէական հաւատն պաշտել թէ ոչ ունիցի խաչագիր ի մէջ Ցանկոյ · և այսու կարի մեծացի նեղութիւն հաւատացելոց սրբոց ։ " Ստ է իմաստութիւն · որ ունի միտս համարեսցէ զթիւ գազանին · թիւ եղեալն մարդոյ և թիւ նորա է այս՝ վեց հարիւր վաթսուն և վեց ։" Ստանօր վասն երկու պատճառի ոչ կամեցաւ յայտնել զանուն նեռին · նախ զի ոչ էառ հրաման ի Հոգւոյն սրբոյ գրել · զի մի տկարք գայթակղեսցին ։ Երկրորդ՝ զի անուն նորա լինելոց է աղնիւ, կամ մի յանուանցն Աստի · որպիսի են առասպական անուանքս՝ Եմմանուէլ · Յոհան Աստուածաբանեան · և կամ յատուկ անուանքս՝ Յն Աստ՝ և այլք ։ Եւ կամ մի յանուանց գերազանց սրբոց առաքելոց կամ մարգարէից · զի և նեռն յազգէն Հրէից՝ ի ցեղէն Դանայ ծնանելոց է ։ Եւ զի եթէ յայտնի գրիցէր · կարելի էր նոյն անուն դնել ի վերայ ուրուք ։ Եւ կարծիլ զոլ նեռն՝ որ ոչ լինէր։ Եւ զի ասէ՝ թիւ եղեալն մարդոյ · զի մի յա-

մանց կարծիցի անուան գազանի գիտելոց որպէս ոմանք մեծ գազան թուէն ։ և այլք՝ ահեղ ինձ ։ որք կերտեն զթիւն 666 ։ Յով-հաննէս թէպէտ ոչ գրեաց։ բայց յանձնեաց ուժգնութեան մտաց առ ի խոկալ ։ այսո-քիկ միայն յայտնի է թէ՝ մարդոյ անուն և ոչ գիւրի կամ հրեշտակի կամ Աստուծոյ ։ զի ի մանկութեան՝ ի կարգս հասարակաց երեխայից լինի ։ վեր և անուան մարդոյ գի-պի ։ Բայց թէ արդեօք յունական բառի գիպի թէ եբրայականի՝ ոչ է յայտ ։ Յով-հաննէս յունական լեզուաւ գրեաց զՅայտ-նութիւնն ։ յունական գոլով անունս այս քն է 666 որ ի վեցէն սկիզբն առնու ։ զի մարդն ի վեցերրորդ օրն ստեղծաւ ։ որով ցուցանի թէ նեռն լինելոց է ձշմարտապէս մարդ ։ և ոչ դև ։ բայց անցեալ զվեցհարիւրոմն՝ ձկտի ժամանել յեօթնհարիւրն և ոչ կարէ ։ այլ պակասի ։ որով ցուցանի թէ նեռն ծնանի մարդ բայց յառաջ խաղալով հպարտու-թեամբ երանէ ի թուոյ մարդոյ ։ և ձկտի ժամանել ի բարձրութիւն աստուածութեան ի յեօթնհարիւր թիւն ։ ոչ պատկանի Աս-տուծոյ ։ բայց ոչ ժամանէ այլ յեռանդ-հանջեալ ի վայր կործանի ։ Այլ՝ եթէ

յունական անուն Հանգիպեցի։ Թուվ լինիլ Ռ։ Օ այս նշանակեաց զանխլաբար Տէրն մեր՝ յասելն։ յարիցեն սուտ քրիստոս և սուտ մարգարէք։ Այլ թէ անուանն Ռ։ կամ ըստ Յունաց թուաբանութիւնն՝ 666 ոչ գիտեմ։ բայց Յ։ է 888։ որ է տիպ երկանկութեան։ Ոմանք ասեն անուանն Մահմէտի է 666։ յորմէ կարծեն զոլ նեռն։ որ թէպէտ չիցէ։ սակայն է կարապետ նեռին։ "Այլ նաև ըստ յատենական բարբառոյ։ բառքս Տիտան։ Լատերտիս։ կերտեն զթիւն 666։ որ և երկու բառքս այսոքիկ թարգմանին յափշտակող կամ օրհնեալ։ զի նեռն կամի յափշտակել զանուն Ճշմարիտ օրհնելոյն Ռ։ Երդ՝ զայս քան նշանս վանայսոքիկ ասայ Յովհաննէս զի ի ժամանակս նեռին հաւատացեալքն թէ ի գործոյն թէ ի թուոյ տասից անուանն ճանիցեն զնա զոլ ստուգապէս նեռն։ վասն պինտ և հաստատուն կացցեն ի հաւատս Ռ։ Հալածանքն նեռին որքան սաստիկ լիցի քան զՀալածանս տասն հալածչացն եկեղեցւոյ։ այնքան պայծառք լիցին մարտիրոսքն վերջին։ քան զառաջինն։ Եւ գիտելի է։ զի յայսոսիկ գլուխս՝ ըստ գրութեան կարգին չիոթմունք գոն։ զոր այս-

պէս պարտիմք խմանալ ։ թէ նախ՝ նեռն գայ ։ և մինչ թոյլատրութեամբ Աստուծոյ և թելադրութեամբ վիշապին թագաւորէ ։ ապա գառնեղջիւր գազանն երևի ։ յետոյ Եղիա և Էնովք գան մարտնչին ընդ նմա և պաշտպանեն զեկեղեցին յերիս ամս և կէս ։ ապա նեռն սպանանէ զնոսա և ինքն սատակի ի Երուսաղեմ ։

ԳԼՈՒԽ ԺԴ

“Եւ տեսի և ահա գառն կայր զենեալ ի վերայ լերին Սիօնի ։ և ընդ նմա հարիւր քառասուն և չորք հազարք ։ ունէին զանուն նորա և զանուն հօր նորա գրեալ ի վերայ ճակատուց իւրեանց ։” Երկրաւոր Սիօնի լեառն է Զիթենեաց լեառն ։ իսկ վերին Սիոնի լեառն է լուսեղէն երկինքն ։ որ է աստուածային երկինք ։ և նկատմամբ նորին երևի որպէս լեառն ։ ուր կայր գառն՝ այսինքն Երուսաղեմ ։ և ընդ նմա՝ և այլն ։ Այսքան էր թիւ երկրաստան ազգաց կնքելոցն՝ որ թէ նոքա իցեն յայտ է թէ՝ ի ժամանակս նեռին յաղթող մարտիւ և կուսութեամբ ի Հրէից պատկերաւքն են ։ Բայց զի սոքա են կուսանք ։ թուի լինիլ ընդհանուր ազգաց ։ զի առ նեռիւն միայն ի

Հրէից այսքան կուսանք ընտրիլ անկարե-
լի թուի, թէպէտ այսոքիկ սուրբք կնքին ի
նոցունց։ Որքան բարձր է երկինք յերկրէ,
այնքան կուսանքն յամուսնացելոց։ Այնքան
սիրէ Քրիստոս զկուսանս, մինչ զն անորոշ
ընդ նոցա. և այս օրինակեցաւ ի Յով-
հաննէս որ մերձ նստէր Քրիստոսի։ Որքա-
ն ի կեանս իւրեանց զանուն Քրիստոսի կը-
րէին իբր զկնիք ի սրտի. Վայ և Քո զա-
նուն իւր և զանուն Հօր իւրոյ գրեաց ի
Ճակատս յաղթողաց գազանին, որպէս և
յառաջ խոստացաւ, որ յաղթէ, գրեցից
զանուն իմ և զանուն Հօր իմոյ ի վերայ նորա։
Ճակատն է տեղի ամօթոյ, զոր դրոշմեն
սուրբք մեռոնաւ. զի մի պատկառեսցի խոս-
տովանիլ զՔրիստոս. և զի անպատկառ հա-
մարձակութեամբ դաւանեսցեն զՔրիստոս՝
Վայ զանուն իւր գրէ ի նոսա, զի մի ամա-
չեսցեն յաւիտեան։ Հակադրի անուան և
դրոշմի նեռին, մարգարէն անկեալ ի շնու-
թիւն կուսական հոգւոյ ցանկայլ՝ յասելն.
Հոգւով պետութեան քո հաստատեա, զիս. զի
կուսական և ողջախոհ հոգին է պետ և
իշխան այլոց հոգեաց։ "Եւ լուայ զձայն
ջուրց բազմաց և զձայն սրսման մեծի, և

լուայ զձայն իբրև զքնարահարացն՝ զի հար-
կանիցեն զքնարս իւրեանց։" Զայնք և երգ
կուսանացն էր նման ձայնից ջուրց բազմից՝
վասն բազմութեան։ և ձայնի ոլոտման՝ վասն
մեծի ըղձիցն և ոլոտական հնչմանն։ և
ձայնի քնարի՝ վասն նեղաշնակութեան և
համաձայնութեան։ քանզի առաջի Քրիստո-
սի երգեն։ որ ոչ պարտի լինիլ խառնա-
ձայն։ Զի որպէս յեկեղեցւոջ դասալից
մանկանց ձայնն բազմութեան ջրոց։ բար-
ձրութեան ոլոտման։ և համաձայնութեան
քնարի ձայնից նմանի։ այսպէս և ի լեառն
վերին Սիօնի նորին մանկանց ձայնքն։
Զի՛չերան ասէ՝ քաղաքն համաձայն է որ-
պէս քնար։ քանզի՝ երկնաքաղաքաց ձայնն
երգաբանական։ Թողմնաս խակական՝ քնար
գոլ ասի ողջախոհ բանականութեամբ զցան-
կականն պատժելով առնէ համաձայն բանի։
որպէս մանկունք գաւազանաւ։ զի ըստ փի-
լիսոփային՝ ի բանէ զուրկ են։ Կայան նկա-
ւեին դեղնեալ աղջիկ աչագեղ ի ծաղկոցի։
պսակ ի գլուխ։ և քնար ի ձեռին։ "Եւ եր-
գէին զերգս նոր առաջի աթոռոյն Աստուծոյ և
առաջի չորից կենդանեացն և առաջի երիցան-
ցըն։ և ոչ ոք գիտէ զերգս նոցա։ Բայց միայն

հարիւր քառասուն և չորքն. և որք զատեալք են յերկրէ։" Երդ նոցա զոր երդէին առաջի աթոռոյն կենդանեաց և երիցանցն։ ասի նոր՝ վասն անթառամելի և անյապիրանելի զուարճութեան։ Դարձեալ վասն նորատեսակ և նորարարութ տաղիցն՝ զորս եօթնարփեան Հոգին Հանճարէ ի նոսա։ Եւ ասէ ոչ ոք գիտել։ նախ՝ որքան առ երկրաւորս. զի զերգս զատելոյն յերկրէ՝ երկրաւոր և շնչաւոր մարդ ոչ կարէ գիտել. զի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ։ Երկրորդ՝ երգն Հանճարի ըստ ըզձից. իսկ իզձն զենուորեալ եկեղեցւոյ է որպէս չափաւոր հուր, բայց իզձն յաղթօղ եկեղեցւոյ է որպէս հնոց։ Օ՝ի ըստ Իսայեայ։ ըստ այլ թարգմանութեան։ Այսպէս ասէ Տէր. որոյ հուրն է ի Սիօն և հնոցն յԵրուսաղէմ։ Դարձեալ՝ որպէս այլ է խնդութիւն կուսանաց. և այլ՝ մարտիրոսաց, այսպէս այլ և այլ են երգ նոցա. զի այլ պատճառաւ ի կողմանէ ինքեան սիրէ կոյսն զՔրիստոս, և այլով մարտիրոսն. և որպէս կուսութիւն է նոր առաքինութիւն նորոյ կտակարանի։ այսպէս և վարձն և երգն նոցա է նոր։ Այսպէս զերազանց սէրն ասի նոր պատուիրան։ Պատուի-

բան նոր տամ՝ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս, այսպէս ասէ Տէրն սիրով, "Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. սոքա զկնի երթան գառին՝ ուր և երթայցէ. սոքա ընտրեցան ի մարդկանէ առաջի Աստուծոյ և գառին։" Մեծ է պատիւ կուսանաց, զի որպէս նոր հարսն և փեսայն ի սիրոյ միմեանց զատանիլ ոչ ժուժեն, ի մէջ այնքան գասուց սրբոց սոքա յատկապէս են հարսն Քրիստի. յորոց սիրոյ ոչ զատանի, Այլքն են թագուհիք և հարճք, սոքա աղաւնիք. Սողոմոն մի միայն աղաւնի ունէր զդուստրն Փարաւոնի ի մէջ վաթսնաւոր թագուհեաց, Երկնայինն Սողոմոն ի մէջ ամբոխից ազգաց հարիւր քառասուն և չորս աղաւնիս ունի. զի թէպէտ ընտիրք բազումք են, բայց ընտրելագոյնքն սոքա են. կուսութիւն մարմնոյ բազումք ունիլ կարեն, բայց կուսութիւն մտաց, որ հարկաւոր է՝ միոն ի հազարաց. որ ցանկայ խառնիլ յերանս նոցա յաղթեսցէ ցանկութեան սրտի, որոյ նախապետական հնար է պահպանութիւն սրբոց, "Եւ ի բերանս նոցա ոչ գտաւ սուտ, զի ամբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ։" Սուտ թիւն են-

թաղրէ զգողութիւն, ուստի ասի Աստուած. ցոյց ինձ զուսան. և ես ցուցից զգողն. յորմէ յայտ է թէ՝ ստութիւն յառաջ գայ ի բծաւոր սրտից, Սատանայ թէ ոչ ունիցէր զնախանձ՝ ոչ խօսէր զսուտ ընդ Եւայի, վասն անսուտ բերանն է կարապետ ամբիծ սրտի. ուստի ընդ ասելն ոչ գտաւ ի բերանս Նոցա սուտ, խոկոյն յարէ. զի ամբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ, Դարձեալ կամի այսու ցուցանել զամենամաքուր հոգիս Նոցա, զի ոչ միայն այլ մեղք, այլև ստութիւն ոչ գտաւ ի բերանս Նոցա, որ Նկատմամբ այլոց մեղաց՝ է փոքրագոյն և թեթև. "Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ ի մէջ երկնից. և ունէր զաւետիս յաւիտենական աւետարանել ամենայն Աշխարհաց և լեզուաց՝ որ բնակեալ են յերկրի։" Այս հրեշտակս՝ ըստ կնի ստուգաբանն Նեռին աւետաւոր յոգի յերկիր. նախ՝ աւետէ թէ եհատ ժամ դատաստանի։ Երկրորդ՝ վայ տայ Նեռանշանից, զի դարձցին, և որ ոչ դարձցի՝ առանց կարծեաց մատնեսցի ի դժոխս։ Ցնս զողորմութիւն Աստուծոյ, զի որովհետև վիշապն և Նեռն ամենայն հնարիւք մոլորեցուցին զնոսա թոյլատուութեամբ իւրով, ասասն քան

զայնս ազգու և զօրաւոր քարոզիչ յոլ ։ այսինքն զՀրեշտակս։ զի գործունէաբար դարձուսցէ ։ ուստի ասէ երկերիր՝ Աստուծոյ՝ և երկիրպագէք նմա ։ յիշատակաւ զատաստանին ահաբեկէ զնոսա ։ " Եւ այլ հրեշտակ զայր զհետ նորա՝ և ասէր ։ անկաւ Բաբելոնն մեծ ։ որ արբոյց զամենայն հեթանոսս։" Բաբելոնաւ՝ ոմանք խմանան զՀռոմ՝ որպէս զրէ Պետրոս։ ողջոյն տայ ձեզ։ որ ի Բաբելոնն ընտրեալքիս եկեղեցին է ։ Երուսաղէմ՝ ևս կարէ խմանիլ ։ զի ի ժամանակս նեռին՝ եղիցի մեծ թագաւորանիստ։ քաղաք երևելի քան զամենայն քաղաքս ։ և առաւել արենարբու և մոլութեամբ լի քան զՀռոմ՝ ի ժամանակս կռապաշտութեան ։ Օ՛ի թէ ըստ առակին։ թագաւոր՝ որ հաւանի բանից անիրաւութեան ։ ամենեքեան՝ որք ըզ նովաւ են ։ անօրէնք են ։ ուրեմն ուր թագաւորն նեռն՝ անդ եղիցին ամենեքեան անօրէնք ։ Օ՛ի որպէս ի հնումն Երուսաղէմ ելանէր օրէնք և բանք Տեառն ։ հակադարձաբար յաւուրս նեռին ընդ ամենայն աշխարհ ելցեն առ ամենայն ստորադրեալ թագաւորս նեռին Աստուծոյ հրամարտակք մերով գինեալ ցասման լի ։ առ ի

լինել համարէն հալածումն քրիստոնէից. որ և անդ անկցին Եղիա և Ենովք։ Ընդ ի զենեայ ցասման նեռին արբցեն ամենայն թագաւորք, և թափեսցեն զնիսխս իւրեանց ի զենաւորեալ եկեղեցին. վասն նախապէս պատժեսցի Երուսաղէմ։ Եւ այս անկումանէ ի խորս դժոխոց հանգոյն երկանաքարի. որպէս գնմանէ ի վեր անդր ասաց. եղև շարժումն մեծ, և տաներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ։ Բայց այլք՝ զՀռովմայ ասեն, թէ՝ յաւուրս նեռին ի կուռս դառնայ. և կարծանի մերձ ի կատարած։ "Եւ այլ հրեշտակ երրորդ զայր զհետ նոցա, և ի ձայն մեծ ասէր, թէ ոք երկրպագիցէ զգազանին կամ պատկերի նորա, և կամ զդրոշմն նշանի նորա էառ ի ձակատս իւր, և կամ ի վերայ աջոյ ձեռին իւրոյ, այնպիսին արբցէ ի բաժակէ ցասմանն Աստուծոյ՝ արկեալոյ յանխառակէ բարկութեան բաժակին. և տանջեսցի հրով և ծծմբով առաջի Աստուծոյ և զառիւնն։" Գիտելի է. զի երեք էին գլխաւոր մոլորեցուցիչքն. վիշապն, մեծ գազանն, և փոքրն։ Ընդդէմ նոցա նախ՝ հակադրեաց զԵնովք և զԵղիա, և մինչ զնոսա սպան մեծ գազանն, և ինքն սպանաւ

ի Դեռ, տալա գնեռայինան ի գարձ կոչելով՝ զերիս հրեշտակս առաքէ։ Որոց մինն է այս։ որ ոչ թէ վայրապար ծանուցանէ զհանդերձեալ պատիժն նեռայնոց։ այլ վասն մեծի մարդասիրութեանն Աստուծոյ քարոզէ։ զի դարձցին։ Զ՝ան զի նեռնադրոյսմ մոլորեալքն եթէ դարձցին որոնիս առ Աստուած՝ զերծցին ի պատժոյն՝ զոր սպառնայ։ և ոչ լիցին անընդունակ սաղաշանաց նոցին։ որպէս և ոչ այժմոյս ուրացողաց ապաշաւանքն։ Անապակ գիւնեաւն իմն զանիսաւն ի ջրոյ աղօրմութեան և գթութեան Աստուծոյ անողորմ դատաստանն և պատիժն։ զոր տայ անզղջեցն։ Եւ անողորմութիւն լինի ոչ որքան առ ստուգութիւն պատժոյ։ այլ սրքան առ յարատեւութիւնն։ Ուստի ասէ՝ առաջի Աստուծոյ և գառիւնն։ որում իմանի նախ՝ խոտագոյն արդարութիւն Աստուծոյ։ զի թագաւորք ի վերայ որոյ բարկանան սատակապէս։ առաջի աչաց պատժեն։ Երկրորդ՝ զյաւիտենականութիւն։ զի որքան Աստուած և գառն է։ այնքան և տանջանքն եղիցի։ վասն յարէ։ "Եւ ծուխն նոցա ելանէր յաւիտեանս յաւիտենից։" Եւ ոչ ունին ասէ։ հանգիստ ի տուէ և ի գիշերի։ այ-

սինքն առնելին. զի որպէս ի յերկինս ոչ գոյ գիշեր. սոյնպէս և ի գժոխս ոչ գոյ տիւ։ Անհանգստութիւն ոչ միայն պատճառի ի պատժոյն, այլ և ի խղճմտանացն։ զի յուսահատութիւն ապաշաւեն։ "Եւ համբերութիւն սրբոցն ասէ, որք պահեն զպատուիրանս և զհաւատս Յի։" Այսինքն. ասէ ուրախանան համբերող սուրբքն՝ յորժամ տեսցեն զհատուցումն նեռայնոց. և ինքեանք զպտուղ համբերութեան կրեն, զաւետիսն յաւիտենական կենաց լուեալ. ըստ այսմ, ուրախ եղիցի արդարն, յորժամ տեսցէ զհատուցումն։ "Եւ լուայ զձայն յերկնից՝ որ ասէր ցիս. գրեա երանի մեռելոց, որք ի Տէր ննջեցին, այժմիկ զայս ասէ Հոգին. զի հանգեան յաշխատութենէ իւրեանց։" Մահ մարդոյ հանգիստ է՝ ասէ Յօբ. այսինքն սուրբ մարդոյ, զի զնովաւ փակէ Աստուած, այսինքն շրջափակէ Աստուածային փառքն. վայ ասէ երանի մեռելոց, որք ի Տէր ննջեցին. այսինքն յուսով Տեառն և հաւատով։ Զի թէպէտ յաչս մարդկան տանջեցան, բայց յոյս նոցա լի է անմահութեամբ։ Իսկ մահ մեղաւորին չար է. զի փակին զնովաւ գնք։

«Եւ տեսի և ահա ամպ սպիտակ, և ի վերայ ամպոյն նստէր նմանն որդւոյ մարդոյ. և ի գլուխ նորա պսակ ոսկի, և ի ձեռին իւրում՝ ունէր զդերանդի սրեալ։» Ամպեղէն կառոյք երևեալն է Քրիստոս պսակաւորդ. զի որպէս ի ժամանակս հնձոյ արտատէրն մեծաւ ուրախութեամբ գնայ ի հունձ. և միւթ նաև ինքն առնու զդերանդին և հնձէ, այսպէս Քրիստոս ուրախութեամբ՝ զոր ըպիտակ ամպն նշանակէ, գայ ի հունձ։ Ուրախ լինին որպէս յաւուրս հնձոյ։ Եւ թէպէտ ասերոյ է հրեշտակաց՝ հնձեցէք նախ՝ զցորեանն, բայց և ինքն խառն ընդ նոսա ի հունձ մնանէ. զի այս է արքայաւայելուչ։ Այսպէս մեծամեծ հողագործք ընդ միմեանց երբեմն մնանեն ի հունձ. նմանապէս և այդեռեալք։ «Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից և ասէր, առաքեա զդերանդիդ և այլն։» Հոգիք մարտիրոսացն հրամանաւ Տեառն հանդչելով սակաւիկ մի. իբրև տեսին զդերանդին ի ձեռին Տեառն, ծանեան զի եկեալ էր ժամանակ դատման, վշտի ի կողմանէ իւրեանց զհրեշտակ մի դեսպան առաքէն. և այս առ մեծի ուրախութեան. վշտի նա ձայնիւ մեծաւ աղաղակէ, այսինքն մե-

ծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ։ Այս-
պէս Օ՝ աքաբիա ետես զգերանդի թուս-
ցեալ և՝ այն։ "Եւ առաքեաց զգերանդին
իւր։ և հնձեցաւ երկիր։" Հունձն կատա-
ւրած աշխարհիս է։ հնձողքն հրեշտակք են։
ասէ Ցէր։ "Եւ այլ հրեշտակ ել ի տա-
ճարէն որ յերկինս՝ ունէր և սա զգերանդի
սրեալ։ Եւ այլ հրեշտակ ել ի սեղանոյն
աղաղակեաց առ հրեշտակն՝ որ ունէր զգե-
րանդին սրեալ և ասէ. առաքեա զգերանդիդ
սրեալ և կթեա զողկոյզս այգւոյ երկրի. զի
հասեալ է խաղող ի գ�։" Առաջին գե-
րանդաւորին՝ որ էր Ռ՝ն, յղեցաւ գեսպան
ի մարտիրոսաց հնձել զցորեանն։ որով նը-
շանակին սուրբքն։ զի լցցին ծառայակիցք
իւրեանց։ Իսկ երկրորդին և ս նմանապէս
առաքեցաւ յատկապէս գեսպան ի սեղանոյն։
այսինքն ի նեղքոյ՝ որոյ կոյին մարտիրոսք։
Որք և առաքեցին զգեսպանն զի փութա-
ցուսցէ զայգեկութն։ առ ի կթել զոյդին։
որով նշանակին մեղաւորքն՝ զի են կոխելիք
ի հնձանն դժոխոց։ Որոյ գերանդին է կեռ
դանակն։ Եւ զայս առնեն յաղագս մեծի
խնդութեան. զի ուրախ եղիցի արդարն։ յոր-
ժամ՝ տեսցէ զհատուցումն մեղաւորաց։ Այս-

պէս Երեմիա Մարգարէն՝ զկատարածն Երուսաղէմի նմանեցուցանէ Հնձանի կոխելոյ. ըստայնմ՝ Հնձան եհար Տէր կուսի դատերն Յուդայ։ Եւ Զի զկոխմանէ զիւսոյն՝ Հնձան հարի միայն։ "Եւ էարկ հրեշտակն զդերանդի իւր յերկիր։ և կթէր զխաղողն նորա և արկանէր ի Հնձան Աստուծոյ ի մեծ։" Օրինակաւ այգեկթոյ՝ նշանակէ զընդհանրական դատաստանն. զի որպէս ա՛զ են յերկար սպասի և ի սուղ ժամանակի կթի։ և ի Հնձան կոխի։ այսպէս և եկեղեցին և ազգ մարդկան։ Եւ որպէս ի հունձս ցորեանն՝ նշանակէ զընտիրսն։ իսկ յարդն ըզխոտանան. այսպէս և ի կութս այգւոյ՝ զենին նշանակէ զընտիրսն զոր կարասէ այգետէրն. իսկ չնչին ճիւն՝ զխոտանան։ զոր ի բաց ձգէ։ Բայց ըստ այլ նկատման՝ խաղողն՝ հանգերձ գենեաւն նշանակէ ըզմեղաւորսն. որք ճմլին և կոխատին ի հնձանն դժոխոյ. ըստ որում՝ զլեառոր մեկնիչքն ասեն։ "Եւ արկանէր ի Հնձան Աստուծոյ ի մեծ։" Այսինքն ի դժոխքն՝ որ է արտաքնոց Աստուծոյ և կամ՝ տեղի արդար դատաստանին Աստուծոյ՝ լայն արձակ։ "Եւ կոխեցաւ ի Հնձանն արտաքոյ քաղաքին.

և ելանէր ի հնձանէն արիւն մինչև ի սանձս ձիոցն ։ և երկայնութիւն նորա հազար հարիւր և վեց ասպարէզ ։" Աստաքոյ քաղաքին ասելով՝ յայտ յանդիմանն ցուցանէ զդժոխքն որ է արտաքոյ արքայութեան ։ Այսպէս և Եսայի. ելցեն արտաքս և տեսցեն զմարդկան սակս յանցուցելոց ։ Բանզի սուրբք մտօք ։ և կամ՝ անձամբք իսկ՝ ելանեն արտաքս յերկնից . թէ վասն զբաստանաց և թէ վասն ի գործ ածելոյ զօժիան թափանձկութեան ։ Բայց որքան առ գաստասպարտեալս՝ ելանեն մտօք և ոչ անձամբք ։ "Եւ ելանէր ի հնձանէն արիւն մինչև ի սանձս ձիոցն ։" Յորժամ կոխատի խաղողն՝ արիւնն խաղողոյ գետօրէն հոսի ։ որ թէ գազարն ծովանայ՝ մարդաչափ բարձրանայ . այսու նմանութեամբ առնու զհնձանն դժոխոց ։ յորում՝ ի Ճմլեցեալ մեղաւորաց՝ արիւնն այնպէս յորդ Ճասպազն մինչ զի հազար հարիւր վեց ասպարէզ բարձրացեալ՝ ծովանայ . յոր եթէ ձի մտցէ ։ մինչև ցսանձ բերանոյն թաղն յարեան ։ Զիւք այսոքիւք խորհրդաբար նշանակեն զսուրբսն . ի յորս հեծեալ Էր՝ կոխատէ զնոսա ի հնձանն դժոխոց ։ որպէս զփարաւովն կոխեաց հրեշտակային կա-

ռօք։ Զիոյն խնդ ի կառն Փարաւոնէի նը-
մանեցուցի զքեզ, մերձաւոր իմ։ Յայս միտ
ասէ՝ արդարն զձեռն իւր լուացեալ յարեան
մեղաւորի։ Սանձիւ ձիոյ՝ զմիջութիւն պատ-
ժոյ նշանակէ. այլաբանօրէն՝ կամ՝ են դեռ,
որք երբեւ զսեաւ երիվարս լոգան ի հնձանս
գժոխոց՝ յարեան կոխելոց։ Յբերանս իւ-
րեանց. որով ցուցանի ծարաւի գոլն գիւաց
արեան մարդկանց կոխելոց։ Պարձեալ
հազար հարիւր և վեց ասպարիզաւ՝ խնանի
թէ գժոխքն ելցէ այսքան տրամաչափ, այ-
սինքն որքան լայն՝ այնքան երկայն. զի է անդ՝
ուր միջակէտն է երկրի։ Ասյսպէս Եսայի.
պատրաստեալ է յերկրէ Թոփէթա. այսին-
քըն գեհեանն խորին և լայն։ Լիճս այս ի մէջ
է առ մակերևոյթն երկրի. անդր քան զերեք
հազար ժամուց ճանապարհս պարունակէ։ Ըստ
ծանելոյ. զի որ ի մեզ գրի հազար հարիւր վեց,
յայլս գրի հազար վեց հարիւր ասպարէզ. որ
պարունակէ 650 ժամուս ճանապարհս։ Եւ
այսքան թուի գոլ լիճն գժոխոց՝ յերկայն,
ի լայն, և ի խոր։

ԳԼՈՒԽ ԺԵ։

“Եւ տեսի այլ նշան յերկինս մեծ
և սքանչելի. հրեշտակս եօթն, որք ունէին

եօթն վէրս զինի. զի նոքօք կատարիւր բարկութիւն Աստուծոյ։" Որպէս Ճարտար քարոզիչն զքնաբան՝ որպէս զվախճան դիտէ, և զանազան ձեռնարկութիւնս գտեալ ի նոյն յանդէ, և դարձեալ սկսանի, այսպէս և սուրբս ի տեսլեան իւրում՝ իբր նպատակ ունի զկատարածն, ի միջոցի զզանազան տեսիլս տեսեալ ի կատարած յանդէ և դարձեալ սկսանի մինչև աւարտեսցին շարակարգեալ ապառնիքն՝ որք Հային առ կատարած։ Զի զմրօրինակ գիրք ինչ՝ որ զվերջին վախճանէ Ճասէ, զանազան գլխովք յառաջանայ՝ այսպէս և ասա է տեսանել. վասն յետ յանդելոյ զբան վերնոյն ի կատարած, դարձեալ ետես եօթն հրեշտակս՝ որք ունէին եօթն հարուածս, այսինքն իբր տումնակս ի ձեռին՝ յորս զրեալ կային եօթն կերպս պատժոց կամ՝ նեղութեանց՝ որովք բարկութիւն Աստուծոյ յառաջ խաղալով՝ գալոց է ի կատարումն վերջին։ Զայսոցիկ հարուածոց նշանս ի նոսա տեսեալ, պակեալ հիացաւ, վասն ասէ՝ տեսի այլ նշան յերկինս՝ մեծ և սքանչելի։ "Եւ տեսի որպէս զծով ապակեղէն խառնեալ հրով, և որք յաղթեցին զազանին, և

պատկերին և Թուոյ անուան նորա և գը-
բոշմի նորա ։ Նոքա կային ի վերայ ծովուն
ապակեղենի ։ և ունէին քնարս Աստուծոյ ։"
Համաձայնի Պարմիր ծովուն՝ զի խառնեալ
հրով ծովին լինի կարմիր ։ Արդ՝ որպէս
Իսրայէլացիքն՝ որք յաղթեցին Փարաւոնի
անսայլով Մովսէսի՝ դեր ի վեր զտեալ Կար-
միր ծովուն՝ անցին յայնկոյս ։ և քնարաւ
զերգս օրհնութեան երգեցին ։ Այսպէս և
սոքա ։ որք յաղթեցին զազանացեալ Փա-
րաւոնին ։ այսինքն նեռին ։ որ զնոսա բաղ-
միցս փորձեաց ջրով և հրով դեր ի վերոյ
գտան հրախառն ծովուն ։ Յայս դիտէ բանն ։
անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր ։ և հաներ
զմեզ ի հանդիստ ։ Եւ Եսայի ։ եթէ անցա-
նիցես ընդ հուր և ընդ ջուր՝ ընդ քեզ եմ ։
բոց նորա մի կիզցէ ։ և այլն ։ Այսու ցու-
ցանէ զարբոց օժիտն թերթևութեան և
անկրականութեան ։ զի ի վերայ հրախառն
և ապակեղէն ծովուն՝ ոչ ոք կարէ կալ՝
եթէ ոչ սուրբք ։ և այս է մեծ երջանկու-
թիւն ։ Այս ապակեղէն և հրախառն ծովս
է լուսեղէն երկինքն ։ զորմէ և յառաջ ա-
սաց ։ ի վերայ որոյ հրաշուին յաղթողքն գա-
զանին ։ թէպէտ ոմանք զաշխարհս իմանան ։

"Եւ երդէին զերգս Մովսիսի ծառայի Աստուծոյ, և զերգս գառինն՝ ասելով. թէ մեծամեծ և սքանչելիք են գործք քո Տէր Աստուած ամենակալ, արդար և ճշմարիտ են ճանապարհք քո, թագաւոր ամենայն հեթանոսաց։" Մովսէս անցեալ ընդ զգալի ծովն երդեաց, օրհնեցուք զՏէր, զի փառաւոր է փառաւորեալ. և զառն ընդ ծով արեան, ընդ ծովն դժոխոց, և ընդ ծով աշխարհս անցեալ յերկինս՝ օրհնեաց զհայր։ Սմանապէս և յաղթողքն զազանին ընդ աշխարհս անցեալ, և ժամանեալ ի յերկինս՝ ի վերայ հրախառն ծովու ապակեղենի, որով նշանակի լուսաւոր և հրեղէն երկինքն։ Ընտուստ զպատիժ նեռագրոշմիցն դիտեալ, առեալ զքնարս ահիւ և ցնծութեամբ երգէին Աստուծոյ։ Ըստ Երեմիայ. ով ոք ոչ երկիցէ ի քէն թագաւոր յաւիտենից։ Եւ ըստ Մովսէսի՝ թէ զհեծեալ նեռն և զօրութիւնս փարաւոնի ընկէց ի ծով. և այլ այսպիսիս։ Սակայն զովն զդատաստանն Աստուծոյ սուրբ զոլ և ճշմարիտ, և յորժամ յայտնեսցի ամենայն հեթանոսք երկրպագցեն զատաստանին Աստուծոյ, և ասասցեն, ճշմարիտ են՝ թէև անազան։ "Եւ

յետ այսորիկ տեսի և բացաւ տաճար խո-
ռանին վկայութեան՝ որ էր յերկինս։" Բա-
ցաւ տաճար։ այսինքն նախատիպ խորանին
Մովսիսի։ որում ասացաւ։ արասցես զա-
մենայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ ի
լերինն՝ այսինքն յերկինս։ զի Մովսիսի
ցուցաւ ի տեսլեան տաճարն երկնից։ որոյ
նմանութիւն կերտեաց զխորանն։ որ ասիւր
խորան վկայութեան։ Որպէս սուրբն Ստե-
փաննոս ասէ։ խորանն վկայութեան՝ որ էր
ընդ հարսն մեր յաւանդաւորն։ Եւ այսպէս
ասիւր վասն տապանակին վկայութեան։ որ
էր ի խորանն ի Սրբութեան Սրբոց։ որ և
տապանակ ուխտի և վկայութեան՝ վասն
տախտակացն օրինացն՝ որ ի նմա։ "Եւ ե-
լանէին եօթն Հրեշտակք։ որք ունէին եօթն
հարուածս։ և զգեցեալք էին ի տաճարէն
կուսաւս մաքուրս և պայծառս։ և գօտե-
ւորեալք էին առ ստեամբք իւրեանց գօտիս
ոսկեղէնս։" Որքա են մանկունք վերին Սի-
ոնի։ վասն ի տաճարէ անտի ելանէին։ կը-
տաւքն մաքուրք և պայծառք՝ նշանակեն զերա-
նական փառս նոցա։ Իսկ գօտին ոսկի առ
ստեամբն՝ ցուցանէ նախ՝ զնմանութիւն։ զոր
ունին ընդ Աստի։ Օ ի նմա նման լինելոց

եմք մեք և նոքա։ Երկրորդ՝ զի են դրա-
տերք վերին Սիոնի, լանջագեղ կամարաւ
զարդարեալ։ Երրորդ՝ առ ստեամբ ունին
զգօտին։ զի ելանեն հարուածել զաշխարհ։
և պարտ է նոցա ունել զանդութիւն սրտի։
որում՝ օգնէ գօտին առ ստեամբն։ զի տինքն
է աթոռ զթութեան։ Այսպէս զօրքն թա-
գաւորաց պարտին առ թշնամիս գօտեւորիլ
առ ստեամբք։ զի անազակ արդարութեամբ
յարձակիցին ի հարուածել։ "Եւ ի չորից
կենդանեացն տուաւ յեօթն հրեշտակացն
եօթն սկաւառակս լի ցասմամբ Աստու-
ծոյ կենդանւոյ յաւիտեանս յաւիտենից։"
Սկաւառակ։ այսինքն փիալին կամ փիալա
ասէ։ լի ցասմամբ Աստուծոյ՝ արդարու-
թեամբ։ զի յԱստուած ցասումն է արդ-
արութիւն։ Այլ սկաւառակաւ տայ։ զի մի
ծանր թուեսցի ընդունողաց։ զի իւրաքան-
չիւրում՝ զևրն տայ։ մայ իբրև զպարգևս ընդ-
ունելի է ի ձեռանէն Աստուծոյ։ Ուստի
յանդիմանեաց Տէր զՊետրոս ասելով ըզ-
բաժակն՝ զոր ետ ինձ Հայր ոչ ըմպիցեմ։
Յայտնի սկաւառակաւ արբոյց զկաթն Սի-
սարայ։ Թմրեցոյց՝ և սպան։ Լի են սկաւա-
ռակքն պաղասամբք և գինեաւ աստուածայ-

ին գատաստանին։ Սոքա են մատուռակք։ Աստուած սկաւառակօք բաշխէ ոմանց զինի։ ոմանց՝ օշարակ։ զի վրէժն կամ հատուցումն է պատուական իր։ Առ նշանապէս մեծամեծս՝ զմահադէզս սկաւառակաւ տան։ այլ նոքա զաւանութեամբ։ իսկ Աստուած յայտնապէս կարկառէ։ "Եւ լցաւ տաճարն ծխով փառացն Աստուծոյ։ և զօրութեան նորա։ և ոչ ոք կարէ մտանել ի տաճարն։ մինչև կատարեսցին եօթն հարուածքն եօթն հրեշտակացն։" Այսպէս և Եսայի։ յաղաղակել Սերովբէիցն վերայաւ գրանցն։ և տունն լի եղև ծխով։ Յորժամ գատաւորն ահարկաւ վճիռ հատանէ՝ ամենեքին ահաբեկին, տոգրասեն և փառաւորեն։ Զուրխս այս ուրեմն։ նախ նշանակէ ըզփառաբանութիւն երկնայնոց։ վասն ասէ։ ծխով փառացն Աստուծոյ։ Եւ զայս փառաբանութիւնս ետուն ի տալն կենդանեաց զկաւառակսն հրամանաւն Աստուծոյ։ Երկրորդ նշանակէ զաստիկ բարկութիւնն Աստուծոյ։ որպէս ասէ Եսայեաւ։ այս է ծուխ բարկութեան իմոյ։ յորում հուր բորբոքեալ է զամենայն աւուրս։ Եւ թէ այս ինչ միան յայտ է։ զի յարէ զկնի։ Եւ

ոչ ոք կարէ մնանել ի տաճարն՝ մինչև կատարեսցին եօթն հարուածքն, այսինքն առ ի բարեխօսել վասն մեծի բարկութեան Աստուծոյ. վասն կոչի սկաւառակ լի ցասմամբն Աստուծոյ, և առակիցէ՝ յաւիտեանս յաւիտենից։ Օ ի ոչ ոք միջնորդաւ կամ բարեխօսութեամբ զնչանի՝ մինչև կատարեսցին եօթն հարուածքն։ Բայց ոմանք մեկնեն թէ՝ ոչ ոք կարէ մնանել ի տաճարն, այսինքն տեղեկանալ պատճառացն հարուածոց, մինչև կատարեսցի դատաստանն. և ապա մնանեն ի տաճարն, այսինքն տեղեկանան պատճառացն։ Բ ստ այնմ՝ Սակայն և այս ջան է առաջի իմ՝ մինչև մոիցի ի սրբութիւն Աստուծոյ, և ի միտ առցի զկատարած նոցա. այսինքն մինչև մոիցի ի խորս դատաստանացն Աստուծոյ, և ի միտ առցի։ Դարձեալ՝ եօթն հարուածովք աղաղակն՝ կիզումն և ողն ամբարշտաց. մինչ զիրանայ ի վեր յերկինս՝ փառաւորի Աստուած. զի է ծուխ արդար պատժով ողջակիզեալ զոհիցն Աստուծոյ։ Այսպէս ասէր Աստուած, փառաւորեցայց ի Փարաւոնն և յամենայն զօրս իւր։ Ահա այս է ծուխ փառացն Աստուծոյ, որ լինու զտաճար նորա.

և այս է պատճառն՝ զի ծուխ դատապարտելոյն երանեալ յաւիտեանս յաւիտենից. զի միշտ փառաւորի Աստուած նոքաք։

ԳԼՈՒԽ ԺԶ։

"Եւ լուայ զձայն մեծ ի տաճարէն՝ զի ասէր յհրեշտակսն. երթայք, հեղէք զեօթն սկաւառակսն ցասմանն Աստուծոյ յերկիր։" Սոքա այլք են յեօթանց փողահար հրեշտակացն. յայտ է նախ՝ ի պատժոյն. երկրորդ՝ ի ժամանակէն. զի նոցայն էր նախ քան զնեռն, սոցայն՝ յաւուրս նեռին։ Այլ ձայն մեծ ի տաճարէն է սաստիկ հրամանն, որ անդառնալի մեծամայն հրամայէ. զի զանգիտեալ սրբոցն մի իշխեսցեն բարեխօս լինել։ "Եւ գնացին առաջին հրեշտակն, և հեղ սկաւառակն իւր, և եղեւ հարուածք չարաչար ի վերայ մարդկան՝ որք ունէին զդրոշմ գազանին։ Որ օրինակ եթէ զհալեալ ծծումբ հեղցես, կամ կապար զմարմնով ուրուք, այսպէս անելուութաբար ներդործեաց հրեշտակն ի մարմնոս ամբարշտաց. և պայթեցան արտաքս երևելի կեղք։ Պատասխանէ վեցերորդի հարուածոյն Եղիպտասի՝ որ էր կեղ և խաւարտ։ Այսպէս

եհար սատանայ զՅօբ չարաչար կեղով. առ որ նկատէ բան Սաղմոսին եհար յետս զթըշ նամիս իւր, այսինքն յերասանս. և նախատինս յաւիտենից արար զնոսա. Օ առակաս նեռայնոց հարկանէ կեղով. որպէս այժմ զփափկասէրս։ Տէս ասա զմեծ ողորմութիւն Աստուծոյ, զի ոչ նախ զգլուխն ամենայն չարեաց՝ զգազանն հարկանէ, այլ ստորագրեալսն. զի թերևս զզլասցի և դարձցի ի չարեացն։ Այսպէս այնքան հարուածովք հարկանելով զԴիոկլոս, զՓարաւոնն ազատ պահելով պատուիրեաց՝ զի թերևս դարձցի, և մինչ յամառեցաւ՝ զչափ յանդգնութեան էառ։ "Եւ երկրորդ հրեշտակն եհեղ ի ծով և դարձան ջուրքն յարիւն մեռեալ, և ամենայն շունչ կենդանի՝ որ էր ի ծովու, սատակեցաւ։" Ծովու՝ կամ աղբերաց ջուրն եթէ փոխի ի բնական որակութենէ յայլ որակութիւն, կենդանիքն ի նմա վտանգին և սատակին. որպէս եթէ ի մեզ փոխիւր ի հուր։ Ասատի ընդ փոխիլ ծովուն յարիւն, իսկոյն սատակեցան կենդանիքն։ Բայց ծանիր. զմասունս ծովու զմերձս նեռայնոց փոխէ յարիւն, և ոչ զամենայն. վասն ոչ ամենայն կենդանիք մեռանին։ Այսպէս ա-

բար և Յեդիսոտս։ Օ՝ի որպէս թագաւորք ի պատիժ մարդոյ՝ սատակեն զընտանին։ Այսպէս և Աստուած զվրէժ քինուն յանմեղսն հանէ. և զի մի այլ ևս խլեն կերակուր մեղաւորաց։ "Եւ երրորդ հրեշտակն եհեղ ի գետս և յաղբիւրս ջուրց՝ և եղև յարիւն։" Օ՝ի սուրբ և արդար է Որ էնն. զի զարիւն սրբոց հեղին ամբարիշտք. վայ արիւն ետ ըմպել Նոցա։ Ահա այս է ըստ սմին վրէժն՝ զոր սկսանի առնուլ Աստուած ի խնդրոյ մարտիրոսաց. թէ՝ մինչև յերբ ոչ առնուս զվրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի։ Այս է արդարաչափ պատիժ հատուցմանն Աստուծոյ, զի նովիմբ տանջէ զոր, որով մեղանչէ։ Այս բաղձանքն մարտիրոսաց լնանին, վայ դոչեն ի սեղանոյն, այսր Տէր ամենակալ, արդար և Ճշմարտիւ են դատաստանք քո։ "Եւ չորրորդ հրեշտակն եհեղ ի վերայ արեգական։ Եւ տուաւ նմա խորշակահար առնել զմարդիկ հրով, և տապայան մարդիկ ի տապ մեծ. և հայհոյեցին զԱստուած. և ոչ ապաշխարեցին ի փառս Աստուծոյ։" Օ՝ այս հրեշտակն առնէ, բայց զօրութեամբն Աստուծոյ. որ յաւելուլ և պակասել կարէ զտապ արե-

գական, վշտ ասէ՝ Հայհոյեցին զԱստուած, որ ունի զիշխանութիւն ի վերայ Հարուածոցս այսոցիկ։ Աստուած սակաւ առ սակաւ դիմէ առ ծանրագոյն պատիժս, տարով տեղի ապաշխարութեան. բայց անզեղջ՝ սակաւ առ սակաւ խստացեալ՝ սահին ի ծանրագոյն յուսահատութիւնս. և այս այնքան՝ մինչ Հայհոյել զԱստուած՝ յաղտեղ ցաւոյն. զի որպէս շունն արկեալ ի հնոց հաչելով սատակի, այսպէս և անզեղջ նեռնայինքն։ Դարձեալ՝ որպէս իւղն արկեալ ի հնոց առաւել բորբոքի. այսպէս և հրեշտակն հեղլով զսկաւառակն ի վերայ արեգական, առաւել բորբոքեաց։ Դարձեալ՝ որպէս յաւուրս շնչի աստեղ՝ արեգակն առաւել տեղանայ, այսպէս և յայն ժամ հրատն և շնչին համընթանան արեգական. բայց այս տասն ոչ աղդէ յընտրեալսն. որպէս և ոչ խաւարն Եգիպտոսի շոշափէր զԻսրայէլ։ Ըստայնմ Իմաստութիւն. բայց սրբոց քոց լոյս մեծ էր. որ թէ և ազդեցէ՝ ոչ անհամբերաբար Հայհոյեն, այլ որպէս նշան սիրոյն Աստուծոյ՝ համբերութեամբ ընդունին զայն եռանդն։ Ըստայնմ, մի օտարատի համարել զեռանդն՝ որ ի փոր-

ձուԹիւն ձեզ գիպիցի։ Ուստի՝ այն եռանդն է ի հրդեհումն ապաստամբացն ՅԱստուծոյ։ և ոչ հնազանդելոց։ Ըստ այսմ Եսայի։ ասէից ի վր ձեր զեռանդն ի սրբութիւն ապաստամբացդ։ Այսպէս ի տարոյ արեգական յանտառս՝ չոր փայտքն հրդեհին և ոչ թայքն։ "Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ի վերայ աԹոռոյ գազանին։ և եղև Թագաւորութիւն նորա խաւարեալ։ և ծամէին զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն։" Համաձայն Եգիպտական խաւարին։ բայց այս գառնագոյն է։ զի ունի յատկութիւն գժոխային խաւարին։ որ է խաւն ընդ հրոյ։ Այ՝ այ խստագոյնս տանջէ։ մինչև ծամել զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն։ այսպէս կարիՃքն շրջապատեալ հրով՝ խաՃատեն զմիմեանս։ Այսու խաւարաւ ըմբռնեալ նեռին և իւրայնոցն։ ըստ Եսայեայ՝ հայեացին յերկինս ի վեր։ և յերկիր ի խոնարհ։ և ահա խաւար խստութեան ի տարակուսանս նոցա։ Այս խաւար՝ կամ յատկապէս պատէ զաԹոռն գազանին։ այսինքն զԹագաւորական պալատն։ և կամ զամենեսեան՝ որոց սիրէ։ բայց ընտրելոցն լինի յոյս մեծ։ որպէս Իսրայէլի Եգիպտոս։

Լեզու նորա մեծաբանս խօսէր։ վայ ծամել տայ զլեզուն։ Այսպէս մեծատունն զցաւս իւրոյ լեզուին առաւել զդայ։ Յորոց յայտ է, թէ՝ ոչ քան զարշի Աստուած ի բարբառողաց զմեծաբանս մեռտեաց։ Օ խաւարեալն Աստուածպաշտութեն լուսոյ՝ խաւարաւ տանջէ։ "Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի վերայ գետոյն մեծի Եփրատայ։ և յամաքեցան ջուրք նորա։ զի պատրաստեսցի Ճանապարհ թագաւորի ելից արևուս։" Նեռն զխաւարն հանդերձ խաւարաւ կրեալ։ և ապա եկեալ ի լոյս։ զի այսոքիկ հարուածք թէ արեգական։ թէ ջրոյ։ թէ խաւարի։ ոչ լինին մշտատևք։ այլ փոփոխականք և ժամանակեայք։ Մինչ լսէ յոմանց բանարկուաց՝ թէ քրիստոնեայք չզգացին զխաւարն՝ այլ ի լոյս էին։ յայնժամ հանդոյն Յուլիանոսի խորհուրդ վատ ի մէջ առնու զամենեսեան ջնջել։ վայ հրամարտակս առաքէ առ ամենայն թագաւորս համախմբիլ առ ինքն։ զի բնաջինջ արասցէ զամենայն հաւատացեալս ի Քրիստոս։ Եւ յայսմ միջոցի առ ի լուսն բազմանայ նեռին՝ հրեշտակն չորացուցանէ զդետն Եփրատ՝ զի փութով անցցեն արևելեան թա-

գաւորք առ Նեռն։ բայց այս եղիցի ի վնաս նեռին։ զի Աստուած այսու հնարիւք։ և իբր նենգութեամբ՝ ժողովէ զնոսա առ Նեռն։ և ի միասին կործանէ։ Այսպէս Դաւթեհ և Կիւրոս ի բազումս բաժանեալ զգետն Եփրատ՝ անցին ի կործանումն Բաբելոնի։ Դեռ տես այս է խորհրդաւոր։ զորս հրեշտակքն ևս ի վերայ սորա կապեալ կային։ որք յառաջագոյն արձակեցան։ Մեծամեծ գետքն են իբր զօրեղ կապանք ոտից հինից և թըշնամեաց։ որք ոչ թոյլ տան անցանել։ "Եւ տեսի զի երանէր ի բերանոյ վիշապին, և ի բերանոյ գազանին։ և ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք երեք անսուրբ իբրև զգորտս։ Երեքեան սոքա զոլով համախոհք և մանաւանդ Նեռն և սուտ մարգարէն հպատակ Սատանայի կամ Սատանայի առնէին։ զոր ինչ առնէին՝ ըստ ազդեցութեան Սատանայի կամ Սատանայի առնէին։ Եւ որպէս ի մէջ մարդկան գան խոստնագոյնք և բանականագոյնք քան զայլ՝ այսպէս և ի մէջ դիւաց։ Ուստի Սատանէն ի պաշտօնէից իւրոց զերիս առաւել նրբամիտս և քաջահնարս որոշեալ էր։ որովք զամենայն արուեստս առնէր և մոլորեցուցանէր զամենայն։ որոց մինն էր իւր գոր-

ծունեայ, միւսն նեռին, և երրորդն սուտ մարգարէին։ Օ այսոսիկ երիս անտուրբ ոգիս, զորս ի սրտի իւրեանց կրէին, տեսանելով զյատուկ նախախնամութիւն Աստուծոյ ի վերայ ընտրելոց, առ մեծի սրամտութեան զյատուկ պաշտօնեայս իւրեանց բղխեալ ի բերանոյ, յորմէ առ ամենայն և մանաւանդ առ արևելեան թագաւորս, զի քաջահնար մտօք իւրեանց փութով դըրդեալ շարժեսցին գնոսա ժողովել Յերուսաղէմ, ի սպառումն հաւատացելոց պատերազմիլ ընդդէմ գառին, բայց գառն յաղթեսցէ գնոսա։ Արդ՝ սոքա որպէս նման գորտան, այսպէս և դրդուելքն ի սոցունց՝ զօրքն արևելեան հանգոյն գորտանց կարկաջեսցին ընդդէմ քրիստոնէից, բայց ոչ ինչ կարասցեն առնել. զի փութով սատակեսցէ գնոսա Ռ Մ՝ Քրիստոս։ որպէս հետևի։ "Ռանգի նոքա էին ոգիք դիւականք, որք առնէին նշանս և երթային առ ամենայն թագաւորս երկրի՝ ժողովել գնոսա ի պատերազմ, յօրն մեծ Տեառն Աստուծոյ Ամենակալի։ քանզի ասաց Տէրն։" Օ ի որպէս զզօրսն Սենեքերիմայ ժողովեաց ի վերայ Երուսաղէմի, և հրեշտակիւ զ180'000 սատակեաց։ առ որ

նկատելով ասաց Մարգարէն, զոհ Տեառն է ի Բոսորայ, և սպանդ մեծ յերկրին Եդոմմայեցւոց։ Այսպէս և սոքա թէպէտ և զիւական հոգւով սակայն նկատմամբն Աստուծոյ ժողովին յԵրուսաղէմ յօրն մեծ Տեառն, այսինքն յօր մեծի ընթրեցին Աստուծոյ յորս Եբեր պարարակս զենով կոչէ ի վերայ նոցա զթուչունս երկնից և գազանս երկրի։ "Ահա այս է ասելն զամ՝ ես իբրև զգող, զի զանխլաբար հատանի ի վերայ նեռայնոց յանկարծակի իբրև զգող, որպէս և ի վերայ ամենայն ումիք։" Ուստի՝ որպէս ըզգաստն պահէ ի գողոց զհանդերձս իւր, այսպէս և մեք պարտիմք զհոգիս մեր զարգարեալ պահել առաքինութեամբ, զի յորժամ եկեսցէ Տէրն իբրև զգող՝ առ ի գողանալ զհոգիս մեր, մի լեցի մերկ ի զարդուց առաքինութեան։ "Եւ ժողովեցից զնոսա ի տեղն մի, որ կոչի Եբրայերէն Արմագեդոն։" Արմագեդոն թարգմանի լեառն Աւետարանի, և նշանակէ զձիթենեաց լեառն, որ է մերձ Յովսափաթու ձորոյն։ ուր ժողովէ նեռն զամենայն քրիստոնեայս, և ամենայն զօրօքն ահացուցանէ երկիրպագանել ինքեան որպէս Աստի։ և անդէն հարկանէ

Բ։ Մ՝իքայելու զնեան և զամենայն զօրս նորա, հանգոյն զօրացն Սենեքերիմայ, և կարձէ զկեանս նորա, որ եթէ ոչ կարձէր ոչ ապրէին քրիստոնեայք, բայց վասն ընտրելոցն կարձեցին աւուրքն։ "Եւ եօթնեերորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի վերայ օդոյն, և ել ձայն մեծ յերկնից և յաթոռոյն, ասելով՝ եղև։" Հրեշտակն ի վերայ տարերաց ունի իշխանութիւն փոփոխել ըստ կամաց։ "Շարժումն մեծ քան զոր ոչ է եղեալ ի սկզբանէ։" Այս մասնաւոր շարժմունքս են կարապետք ընդհանրականի շարժմանն, եթէ ի սոցա շարժմանն քաղաքք կործանին, կղզիք սուզանին, որպէս յայտ է ի պատմագրաց, ոչչափ ևս ի մեծի շարժմանն՝ որ լիներոյ է ի կատարածի։ "Եւ եղև քաղաքն յերիս մասունս, և քաղաքք ազգացն անկան, և Բաբելոնն մեծ յիշեցաւ առաջի Աստուծոյ տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկութեան նորա։" Մեծ քաղաք ասէն զԵրուսաղէմ ասէ։ Իսկ Բաբելոնեաւ նշանակի Հռոմ. և ասէ յիշեցաւ։ զի ծաներ ուք նախ՝ թէ շարժն ոչ ըստ գիպուածոյ քակէ զքաղաքս, այլ՝ հրամանաւն Աստուծոյ։

վեյ ոմանք բաժանին ի մասունս, ոմանք յիշին, և այլք անկանին։ Երկրորդ զի էր ժամ կոծանման նորա եկեալ Հասեալ։ "Եւ ամենայն կղզիք փախեան, և լերինք ի միջոյ բարձան։" Ցնս, որքան զօրեղ է Հրամանն Աստուծոյ, զի հզօր շարժմանն լերինք և կղզիք ոչ կարելով զդէմ ունել, Բարելովն կայ և մնայ՝ սպասելով Հրամանին Աստուծոյ։ Շարուժմնս այս ոչ միայն է արտաքուստ՝ յամբոխմանէ օդոյն, ի փայլատակմանց և յորոտմանցն՝ զոր արար Հրեշտակն, այլ և ի ներքուստ՝ յարդելեալ գոլորշեաց, որ այնպէս սարսիցէ զբոլոր գունդն երկրի, մինչ զի ամենայն լերինք կլանին, և երկիրն յառաջին բոլորակութիւն դառնայ։ "Եւ կարկուտ մեծ իբրև կշիռ տաղանդի մեռջ իջաներ յերկնից ի վերայ մարդկան։ և հայհոյէին մարդիկ զԱստուած յերկինս՝ վասն հարուածոյ կարկտին։ զի մեծ էր հարուածն և սաստիկ։" Մի տաղանդն կարկտի է 60 մնաս։ որ առնէ իբր 62 լիտրուկէս։ Պատմէ թէ՝ ի դաշտին Պանէնսիոյ եկն կարկուտ խառնեալ արեամբ՝ հատն 28 լիտր։ Օ այս արար սկաւառակ Հրեշտակին։ տակաւին ոչ տպաշխարե-

ցին։ Երկրաւոր հարուածն թերևս պատ-
ճառեցին զոլ պատահումն։ զենչ կարեն ա-
սել զերկնայնոյն։ Աստանօր յայտնապէս
զյուսահատութիւնս իւրեանց ցուցանեն հայ-
հոյելով զԱստուած։ և այս լինի յերկար
սովսրութենէ մեղանչելոյ և ի բազմութենէ
մեղաց։ Եօթն հարուածքս՝ կարգաւ պա-
տասխանեն եօթն մահացու մեղաց։ որոց յար-
մարումն դիւրին է։ Ասէ զի՝ որ եհեղ յեր-
կիր և եղև վէրք։ է նախանձոտն։ Երկ-
րորդ՝ որ ի ծովն։ և երրորդ՝ որ ի գետն՝
են որկրամոլն և ծոյլն։ Չորրորդ՝ որ յարեւ-
զակն։ է բարկացողն։ Հինգերորդ՝ որ
շոշափեաց զաթոռ գազանին՝ է հպարտն։
Վեցերրորդ՝ որ ցամաքեցոյց զԵփրատ՝ է
վավաշոտն։ Եօթներրորդ՝ որ եհեղ յօդն՝
է ագահն։ որ իբր զօդ ծնանի որոտումն
կռուոյ և փայլատակումն հայհոյութեանց։
զի շահեցի լինչ։

ԳԼՈՒԽ ԺԷ։

"Եւ եկն մի ոմն յեօթանց հրեշտակացն
որք ունէին եօթն սկաւառակսն։ խօսեցաւ
ընդիս և ասէ։ եկ ցուցից քեզ զդատաստան
մեծ պոռնկին՝ որ նստի ի վերայ ջուրց բազ-

մաց։" Այսու մեծ պռունկաւ բազումք իմա-
նան զՀռովմ՝ որ և ի Պետրոսէ կոչի Բաբե-
լոնն՝ որպէս գրեցաք ի վերս։ Սա՝ ի ժամա-
նակս Յովհաննէ՝ էր ի կուսակալութեան։
և նստէր ի վերայ Ջուրց բազմաց։ այսինք-
քն թագաւորէր ի վերայ աշխարհի և ժո-
ղովրդոց՝ որք այլազանութեան անուանին Ջուրք։
և էր արեանարբու։ զի գրէթէ զամենայն
արիւն մարտիրոսաց նա եհեղ ի ձեռն տա-
ճանց կուսակալաց կայսերաց։ և թուի թէ ի
ժամանակս նեռին՝ վերսին զառնալոց է ի
կուսակալութիւն։ և ընդ նախնի կուսակալ
ժողովրդոց իւրոց՝ դատաստանաւ դատապար-
տելոց յԱստուծոյ։ վայ սակ՝ ելց ցուցից քեզ
դատաստան մեծ պռունկին։ Բրուսաղէմայ
ևս կարէ պատկանիլ։ զի ի ժամանակս նե-
ռին առաւել քան զՀռովմ մեծանալոց է և
տիրելոց աշխարհի։ և զարիւն բազում սրբոց
հեղլոց։ պռունկ կոչին սոքա։ զի ի Հռ-
ովմ՝ դեռ ևս յաճախին պռունկութիւնք ըստ
իրին։ իսկ Բրուսաղէմ՝ որպէս ի ժամանակս
նախկինս՝ բազմիցս պռունկեցաւ ընդ կռոց։
այսպէս և ընդ նեռին պռունկի ընդունելով
գնա որպէս քո։ "Ընդ որում՝ պռունկե-
ցան թագաւորք երկրի։ և արբեցան բնա-

կիչք երկրի, ի գինւոյ արբեցութեան պոռ-
նկութեան նորա։" Թագաւորք և բնա-
կիչք երկրի ըմպելով զհրապոյրս նեռին,
այսինքն անասրով չար վարդապետութեանն
խոնարհին յերկրպագութիւն, և այնու պոռ-
նկին ընդ քաղաքին յորում թագաւորէ,
Սիրոնն Հռովմայ ևս մոլեցան թագաւորք
և աշխարհք։ "Եւ առ տարաւ զիս յանա-
պատ հոգւով, և տեսի զկին մի զի նստէր
ի վերայ կարմիր գազանի, և լի էր անուամբ
հայհոյութեան բերան նորա, և գազանն զոր
տեսի՝ ունէր զլուխս եօթն և եղջիւրս տասն։"
Այս անապատս ըստ գրոյն է տեղի յարմար
խոկալոյ, իսկ ըստ այլաբանութեան նշանա-
կէ զապառնեան, յորս ոչ գոյ իրօք լինե-
լութիւն և է անապատ, յոր վերանայ հո-
գւով Յովհաննէս, և տեսանէ զկինն պոռ-
նիկ, այսինքն զԵրուսաղէմ կամ զՍինակո-
կայն, զի նստէր ի վերայ կարմիր գազանին
այսինքն ի վերայ նեռին, քանզի զնեռն որ-
պէս աթոռ հանգստեան ունելոյ են սրտի
իւրեանց Հրէայքն, զի բաղձանք նոցա՝ որք
սպասեն մարմնաւոր թագաւորութեան Մե-
սիային՝ ի նա լինելոյ է առ ժամանակ մի,
վասն իբրև տեսցեն զնեռն թագաւորեալ յե-

բուսաղէմ՝ ունելով զեօթն գլուխս և տասն եղջիւրս, այսինքն զամենայն թագաւորութիւնս աշխարհի ենթարկեալ ինքեան, յայնժամ մեծաբանելոց է սինակսային, և հայհոյելոց զԲան մեր, թէ՝ որչի էր հիւսան աղքատ, այս է Ճշմարիտ Բան, Այ ասէ՝ լի էր բերանն անուամբ հայհոյութեան, Կարմրութիւն գազանին նշանակէ զարքայական փառս նեռին և զգազանական բարս, զի որպէս նա արեամբ անաւնոց, այսպէս և սա՝ արեամբ գառանցն Աստուծոյ շաղախի, Դարձեալ անապատ անուանէ զբազմամարմնոյս քաղաքն, նախ՝ զի մեծ գազանին է բնակարան, երկրորդ՝ զի ամենայն զգեցեալ էին զբարս գազանաց, Եւ ոչ զոյ անդ մարդ, ուստի Դիոգինէս՝ ճրագաւ զմարդ որոնէր ի քաղաքի, և յասէն ոմանց՝ ապա զենչ են սոքա, ասաց՝ զոքա մարդակերպ անասունք են, "Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս, և զարդարեալ ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականաւք, ունելով բաժակ ոսկի ի ձեռին իւրում՝, և լի էր գարշելի և անմաքուր պոռնկութեամբ։" Կինս այս է եկեղեցի նեռին, և յատկապէս Սինակսային, որ Յե-

բուսաղէմ զնեան ինքեան փեսայ ձանաչէ, որ զինքն հատուցանէ աշխարհական երջանկութեան, որում տեսնելով տղասէր, զի զարդը և բաժակն ոսկի՝ նշանակ զվառս աշխարհի, որում հատուցանէ նեան զիւրայինսն, և առաւել զՀրեայս։ Բայց լի է այս՝ անմարքուր պոռնկութեամբ, զի չարաչար խոնարհին ի պաշտօն նեռին։ Եւ մարմնապէս իսկ, զի կին պՀնեալ՝ է ուռկան սատանայի, որով զբաղումն որսայ ի կորուստ։ Բաժակն ոսկի՝ է գէմն գեղեցիկ, որով գրեթէ հայեցողաց արբուցանէ զկինի զարշելի սիրոյ, և արբեցուցեալ զլրբէ առ անմարքուր մերս իւր։ "Եւ ի ձակատ նորա գրեալ անուն խորհրդով՝ Բաբելոնն մեծ. մայր պոռնկութեանց և զարշութեանց երկրի։" Այսինքն՝ իբր թէ գրեալ էցէ ի ձակատն, թէ էցէ նոյն ինքն Բաբելոնն։ Խորհրդապէս զԵրուսաղէմ մերթ կոչէ Սոդոմ՝ և մերթ Բաբելոն, վասն հոմանման գործոյն։ Հռովմայ ևս պատշաճի։ Ի ձակատ դրան քաղաքին գրեալ լինի Բաղաք Մեսիային։ զի նեռն նորոգեսցէ զԵրուսաղէմ և զանուն իւր մակագրեսցէ ի նմա, և այսու գարշեսցի յոյժ քաղաքն Երուսաղէմ։

«Դու տեսի զկինն՝ արբեցեալ յարենէ սրբոց և յարենէ ամենայն վկայիցն Յիսուսի. և զարմացայ տեսեալ զնա զարմացմամբ մեծաւ։» Ի թագաւորել Նեռին Յերուսաղէմ, յառնեն սատակ հարածանք, եկեղեցիքն քրիստոնէից՝ որ այժմ են անդ՝ խաւարին, հաւատացեալքն ի մահ մատնին, Անակոկայք բազմանան, և տաճարն Սողոմոնեան նորոգի. ըստ կարի հրճուին Հրէայք վրիժառութեամբ Յիսուսի, և ի սատակ խնդութենէ՝ որպէս արբեալ երևին. ընդ որ մեծապէս զարմանայ սուրբս՝ ընդ յիմարութեան զինեալ արբենայն նորա. որպէս նաև մեք զարմանայաք եթէ տեսանէաք զոք՝ որ յետ ընկելոյ զթիւնախառն գինին՝ սկսանէր իբրև զարբեալ խաղալ և խնդալ, ոչ գիտելով զմերձ ընդ մերձ սատակումն անձին։ «Դու ասէ ցիս հրեշտակն, ընդէ՞ր զարմանաս. ես ասացից քեզ ըզխորհուրդ կնոջն և զազանին՝ որ բարձեալ ունի զնա, որ ունի զեօթն գլուխ և զտասն եղջիւրս։ Հրեշտակն խորհրդազգած գոլով՝ զտգիտութիւն Յովհաննու յանդիմանէ ասելով, զի զարմանաս. զի զարմացումն տգիտաց է. ընդէ՞ր ոչ հարցանես, զի ես ուսու-

ցեց։ Տես զգուշն հրեշտակին թէ որպէս փութայ լուծանել զտարակուսութիւնս Յովհաննու։ Այսպէս պարտէ վարդապետին խնամածու լինել աշակերտին։ "Եւ զանդ զոր տեսեր՝ որ էր և չէր։ է հանդերձեալ ելանել ի դժոխոց և ի կորուստ երթալ. և զարմացան ամենեքեան՝ որ բնակեալ են ի վերայ ամենայն երկրի՝ որոց ոչ են գրեալ անուանք նոցա ի գիրս կենաց ի սկզբանէ։" Կեանք մարդոյ է ի մէջ էի և ոչ էի. զի ի միում վայրկենի է, և ի միւսումն անցանէ ի չէութիւն։ Աստուծոյ միայն պատկանի՝ էր և է։ Այլ՝ այս փութացական զաղանս հանդերձեալ է՝ ասէ, ելանել ի դժոխոց. այսինքն՝ նեռն մերձ է ելանել ի յարգանդէ մօր իւրոյ, որ է իբր դժոխք. ըստ այսմ Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ. կամ՝ զի գալուստ նորա ըստ ազդեցութեան սատանայի գոլով, ասի՝ ելանել ի դժոխոց, և յետ սակաւու ի կորուստ երթալոց. ընդ որ սխրացեալ զարմանան, այսինքն՝ ընդ կարմրութիւն և շքեղութի նորա, և սրտիւ յարին ինքնայնոքիկ՝ որք չեն գրեալ ի գիրսն կենաց։ Դառն հիկք զարմանան ընդ ծաղնէտունս, զի չեն տեսեալ զպատս.

աշխարհասէրք զարմանան ընդ նեռն՝ զի չէն տեսեալ զվայելչութիւն Դեռի։ «Ասա է խմաստութիւն, որ ունի միտս։» Յամենայն այլաբանական նշանակութիւնս զոյ մեծ իմաստութիւն, վասն միայն առատամիտք կարեն զայլաբանական բանս լուծանել։ «Ասա է խմաստութիւն։» Գործ խմաստութեան է զթագաւորս՝ գլխոյ և եղջերաց, և զամբարիշտ քաղաքս՝ պռունիկ կնոջ նմանութեամբ այլաբանել. քանզի յոյժ գեղեցիկ այլաբանութեամբ թագաւորք գլխոց և լերանց նմանին. զի որպէս լեառն ի վերոյ դաշտաց, և գլուխն ի վերայ մարմնոց, այսպէս և թագաւորն ի վերայ ժողովրդեանն է բարձրացեալ։ «Հինգքն անկան, և մին եկաց, և միւսն ոչ է եկեալ. և յորժամ զոյ սակաւիկ մի ժամանակ ունի։» Ի Կայենէ մինչև ցնեռն՝ ամենայն ամբարիշտ թագաւորք հարածողք եկեղեցւոյ՝ եօթամբ նշանակին։ Հինգքն՝ որք անկան, նախ՝ Կայէն ընդ Հակայից, յառաջին զարն աշխարհի։ Երկրորդ՝ Նեբրովթ ընդ նմանեացն, յերկրորդ զարն։ Երրորդ՝ Փարաւոն ընդ նմանեացն, յերրորդ զարն։ Չորրորդ՝ Հաղբէացւոց թագաւորքն Նաբուգոդոնոսոր և այլք, ի

չորրորդ դարն։ Հինգերրորդ՝ Յունաց թագաւորքն Աղէքսանդր և Անտիոքոս և այլք։ Հնգեքեանքս սոքա անկան՝ այսինքն անցին։ Իսկ մինն՝ որ եկաց։ որ է վեցերրորդ։ են Հռովմէական ամբարիշտ կայսերքն որք դեռ կային ի ժամանակս Յովհաննու։ որպէս Դոմեատիանոս։ Իսկ եօթներրորդն է նեռն։ որոյ կարապետն է Մահմէտն իւրայնովքն։ Յիրաւի ասա է խնամութիւն։ զի մի ծայրն գիտէ առ ժամանակն Յովհաննու։ իսկ միւսն՝ առ ժամանակն նեռին։ Ուստի վասնակին մինչիչք և մարդկային միաք այսչափ միայն զօրեն մինչել։ Եւ գազանն՝ որ էր և չէ։ ութերրորդ է՝ և յեօթանց անտի։ և ի կորուստ երթայոց է։ Նեռն ասի՝ որ էր և չէ։ նկատմամբ սակաւ ժամանակին՝ յորում՝ տեսեալց է։ Ասի ութերրորդ։ զի յետ եօթն կարգաց ամբարիշտ թագաւորաց՝ զորս թուեցաք՝ գալոց է։ Եւ ասի՝ մի յեօթանց անտի։ զի եօթներրորդն է Մահմէտականքն՝ որք են կարապետք նեռին։ որոց զկնի հետևելոյ է։ նաև թշփատութեամբ և բազմակնութեամբ նըմանելոյց նոցա։ վայ է մի յեօթանցն։ Դարձեալ ասի՝ յեօթանց անտի։ զի ի Կայենէ

մինչև յնեռն, որ ինչ հարածանք հասին եկեղեցւոյ՝ ամենեքեան ի նեռն բովանդակին, մեր համարեա զնա Պայէն, Փարաւօն, և այլն։ "Եւ տան եղջիւրքն տան թագաւորք են, որոց չև ևս է առեալ զթագաւորութիւն, այլ՝ առնուն և կան իշխանք ի մի ժամ, և առնուն նոքա իշխանութիւն ընդ գազանին։" Նոքա սա նեռին ի միասին երևին, վասն այսրիկ ասէ՝ կան իշխանք ի մի ժամ, այսինքն ի մի ժամանակ, յորում թագաւորէ նեռն, վասնորոյ ասէ՝ առնուն նոքա իշխանութիւն ընդ գազանին, այսինքն յԱստուծոյ առնուն, և են միմեանց ժամանակակից։ Նոքա են տան եղջիւրք նեռին, ոմանք յարեւելս, ոմանք յարևմուտս, այլք ի հիւսիս և ի հարաւ։ Յորոց զերիան պատերազմաւ նուաճէ նեռն, և այլք զարհուրեալք անձնատուս լինին, որպէս ի յաղթելն Աղեքսանդրի զԴարեհ, ամենայն թագաւորք անձնատուս և հնազանդ եղեն։ Ուստի՝ որպէս եղջերաւորք եղջերօք պարծին, այսպէս և նեռն ասէ՝ "Նոքա զմի կամս ունին, և զզօրութիւն և զիշխանութիւն իւրեանց՝ զազանին տան։" Ոչ իւրեանց կամաւ

այլ Յերկիւղէ։ և յետոյ Համախոհ և կամակից լինին զաղանին։ "Եւ ընդ գառին պատերազմին։ և գառն յաղթեսցէ նոցա։ զի Տէր է Նոցա և Թագաւոր Թագաւորաց և ընդ նմա ամենայն ընտրեալք և Թագաւորեալք։" Գառն Աստուծոյ թէ ի ձեռն անգամոց իւրոց ժողովելով զամենեսին ի տեղին Աւմաղեդոն յաղթէ Նոցա։ որպէս Տէր և Թագաւոր։ և ի կորուստ առաքէ։ "Եւ ասէ ցիս։ Ջուրքն զորս տեսեր։ ժողովուրդք են։ և բազմութիւնք և ազգք և լեզուք։" Այսպէս Գաւիթ ի Ջուր այլաբանէ զժողովուրդս և զզօրս։ կեցմ զիս Աստուած։ զի հասին Ջուրք յանձն իմ։ զի որպէս Ջուրք ի կաթիլեաց առաստանան։ այսպէս և զօրք և ժողովուրդ յանձանց։ "Եւ տասն եղջիւրքն զոր տեսեր։ նոքա ատեսցեն զպոռնիկն։ և զմերկինս նորա կերիցեն և այրեսցեն զնա հրով։" Այսինքն Հռովմայ Թագաւորքն ապստամբին ի նեռնէն։ և նեռն առաքէ ի վերայ նորա զտասն Թագաւորս։ որով իբր եղջերօք իւրով՝ խեթիկ։ քակէ։ կողոպտէ։ այրէ և ատատակէ զսպասամբսն։ Եւ այս այնքան կատաղմամբ՝ մինչ զի Թուի ուտել զմարմինս նոցա։ է

աւելորդաբանութիւն։ Այսպէս Յօր, ընդ-
էր հալածէք զիս, և մարմնով խնով չեցէք
յագեալք։ և Սաղմոս՝ ի միրձենալ առիս չա-
բաց յուսալ զմարմին իմ, նեղիչք իմ, և
թշնամիք իմ, նոքա տկարացան և անկան։
"Դանիել Աստուած եղ ի սիրտս նոցա առ
ի լինել նոցա ի մի կամս։ և տալ զթա-
գաւորութիւն զազանին, մինչև կատարեսցի
բանն Աստուծոյ։" Զսոն թագաւորաց հը-
նազանդիլն զազանին՝ Աստուծոյ լինի։ զի
ի ձեռն նոցա և զՀռոմ կործանեալ՝ տացէ
զվրէժ անպարտ արեան սրբոցն։ Եւ զի նեռն
տիրելով բորոր թագաւորութեանց երկրի։
ցուցցէ զինքն Հրէից զոր մեսիայ ժառանգող
ամենայն հեթանոսաց՝ մարմնապէս թագա-
ւորելով։ առ որ հառաչեն։ Եւ սոյա յան-
կարծ խառարեալ թագաւորութեան՝ սա-
տակմամբ իւրով անկցի զոլորմն մեծ ի վե-
րայ Իսրայէլի։ որով միահաղոյն զարձցին ի
Տէր։ Եւ այսպէս կատարեսցի խորհուրդ
սահմանադրութեան։ և բանն Աստուծոյ
զոր և գրեաց Դանիել մարգարէ։ Զատ-
ճառն թէ Հռոմ վասն էր կործանի ի նե-
ռէն։ է՝ զի որպէս Հռոմ ի ձեռն կայսե-
ցաց իւրոց կործանեաց զԵրուսաղէմ։ այս-

պէս Աստուած տեսրինէ, զի Երուսաղէմ՝ի ձեռն նեռին կործանեսցէ զՀռովմ։ Եւ այսպէս առ աչս Հրէից նեռն ցուցցի գոլ մեծայ՝ վրէժխնդիր իւր տհմին իւրոյ, զի սատակագոյնս յարեսցին ի նա։ Եւ ապա յետ սատակմանն, բոլորով սրտիւ դարձցին ի Քրիստոս։ "Եւ կինն՝ զոր տեսեր, է քաղաքն մեծ՝ որ ունի զթագաւորութիւն ի վերայ թագաւորութեանց երկրի։" Այս յայտնապէս ցուցանէ զՀռովմ՝ եթէ նկատեցեմք առ ժամանակն Յովհաննու. իսկ որքան ժամանակն նեռին, Երուսաղէմ ունէցի զթագաւորութիւն ի վերայ թագաւորութեանց երկրի ի ձեռն նեռին։ Պատնիկն ի սկզբան պատկանի Երուսաղէմն. ի վախճանի՝ Հռովմայ. որպէս մեկնէ Հրեշտակն ատ ի վախճանի։

ԳԼՈՒԽ ԺԸ։

Եւ յետ այսորիկ՝ տեսի այլ Հրեշտակ ի՞ջեալ յերկնից, որ ունէր իշխանութիւն մեծ, և երկիրս լուսաւորեցաւ ի փառաց նորա։" Այ մի ի նախնագունից երանեալ Հրեշտակաց. եթէ մի՞ն փառքն յաղթէ արեգական լուսոյն, զի՞նչ լինիցի եթէ տեսանիցին այն-

քան բազմութիւնք երանելեաց։ “Եւ ա-
զազակեաց ի ձայն մեծ՝ասելով անկա՛ անկա՛
Բաբելոնն մեծ։ որ եղեալ էր քնակատ ի դի-
ւաց։ և արգել ամենայն այսոց պղծոց։ և
բանդ պահպանութեան ամենայն հոգւոց անս-
պրծոց և ատելեաց”։ Ազազակէ նախ՝ զի աշ-
խարհի լսելի լիցի։ Երկրորդ՝ զի ուժգնեսս
աղբերսցէ ի ներքին լսելիս մեղաւորաց։
առ ի զարթնուլ ի մահաբերս քնոյն։ Օ ի
տեսանեն և ոչ տեսանեն։ և լսեն և ոչ լսեն։
Որպէս մարգարէս ի Երայեայ կատարեցան ի
վերայ Բաղդէական Բաբելոնի, այսպէս ևս
կատարի ի վերայ Հռովմայ՝ որ է Բաբելոն.
զի որպէս Բաբելոնն զորով թագաւորանիստ
քաղաք Այսրոց եղեալ էր բանդ պահպա-
նութեան ամենայն հոգւոց անսրբոց դիւաց։
որպէս զրէ։ այսպէս և Հռովմ՝ թէ ի
ժամանակս Յովհաննու։ և թէ նեռին։ զԲա-
բելոնիսն ասէ։ անդ հանդիպեսն համբարուք
և գաստերք Ջայլեմանց։ և անդ զնք կաքա-
ւեսցեն։ այսինքն զինի աւերմանն։ զի մեղա-
ւորք և ամբարիշտք ոչ այլ ինչ են։ եթէ
ոչ՝ անմաքուր հոգիք։ քնակարան դիւաց և
դժոխայնոց։ Այսպէս Հռովմն եղեալ էր
քանտ պահպանութեան հոգւոց անսրբոց և

ատեցելոց դիւաց։ Յօրինակ որոյ յետ կոր-
ծանմանն լցի բնակարան համբարուաց և
ոգնեաց։ «Վա՜ ի զի բարկութենէ գինւոյ
նորա արբին ամենայն ազգք և թագաւորք
երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան։ և վաճառա-
կանք երկրի ի նորա զօրութիւն յօրանա-
լով մեծացան»։ Պատճառս զնէ կործանմանն
Հռովմայ։ զի զայթակղութեան առիթ եղև
տիեզերաց։ Այսպէս ամենայն թագաւորք
և թագաւորանիստ քաղաքք։ որ քան զչա-
փըն առաւել պճնելոյ։ ուտելոյ։ ըմպելոյ և
յապարանս յօրանալոյ պարապին։ առիթ լի-
նին բազմաց մեղաց։ զի յամենայն կողմանց
սիրով շահից և վաստակոց ձգին առ նա
ամենայն վաճառականք։ յորմէ պատճառին
բազումք մեղք։ ստութիւնք։ աւազակութիւնք։
ստերգմնութիւնք։ խաբէութիւնք։ և այլ
անթիւք։ որոց սկզբնամայրն և սկզբնապատ-
ճառն շարժութեանց՝ լինի ախտամոլութիւն
և փառասիրութիւն թագաւորաց։ վայ նախ
ինքն պատժի՝ և ապա սիրողքն իւր։ Այս՞
է ասելն։ ի բարկութենէ գինւոյ նորա արբ-
ին ամենայն ազգք։ է աւելորդաբանու-
թիւն։ Եւ նշանակէ զբազմաց հաղորդելն
մեղաց Հռովմայ։ և նոյնպէս պատժոյն։ «Եւ

լուայ զձայն յերկնից, զի ասէր՝ ելէք ի միջոյ դորա ժողովուրդ իմ, զի մի հաղորդ լիցիք մեղաց դորա։" Մեծ է խրնամքն Աստուծոյ ի վերայ իւրայնոց։ Եսայեաւ ազգէր Հրէից՝ ելանել ի Բաբելոնէ, ելէք ի Բաբելոնէ, և մեկնեցարուք ասէ Տէր։ Այսպէս և Դաւ իւրոցն ազգեաց, որք ի Հրէաստան լցեն՝ փախիցեն ի յերկինս, զի վրէժինդրուեն աւուրքն այնքիկ։ Բայց զի Հռովմայեցի քրիստոնեայքն թէ և տիրեալ տեսցեն ի կռապաշտից զՀռովմ, սիրահարեալ գոլով՝ ոչ կամին ելանել անտի։ Վասն Աստուածազգու ձայնիւ յերկնից բարբառելով շարժէ զսիրտս նոցա ելանել։ Այսպէս շարժեաց և զՊօղոս յերկնից կոչելով։ Սաւուղ։ Սաւուղ։ զի՞ հալածես զիս։ Այսմ ձայնէ փոխի աթոռն ի Հռովմայ յայլ ուրեք։ "Դանդղ հասին մեղք նորա մինչև յերկինս։ և յիշեաց Տէր զանօրէնութիւնս նորա։" Ի աւելորդաբանութիւն։ որպէս այն՝ շինեացուք աշտարակ՝ որոյ գլուխն հասանիցի մինչև յերկինս։ Այսուցուցանի բազմաի և սատկուի մեղացն Հռովմայեցւոց։ այսպէս զԼինուէացւոց ասէ, եհաս աղաղակ չարուն նորա առիս։ Յիշեաց ասէ

Տէր զանօրէնուէս նոցա։ Տես զերկայնմտութիւն Աստուծոյ։ տասանց բանաւորաց ի ըստ կրքան եկեղեցւոյ այժմ յիշէ։ այսինքն ի ժամանակս նեռին։ “Եւ հատուցանէ դմա՝ որպէս և հատոյց մեզ։ և առցէ դա երկապատիկ ըստ գործոց իւրոց։ և զբաժակն որով խառնեացն՝ խառնեցէ՛ք դմա կրկին”։ Հատուցումն առնելն է՝ ոչ թուաբանօրէն։ այլ երկրաչափապէս։ այսինքն՝ ոչ հաւասար։ այլ՝ համեմատական չափով։ զի պատիժն դժոխոց յոյժ առաւել է քան հեշտութիւն կենաց։ զի որպէս թուաբանօրէն ոչ չափակցին չարչարանք ժամանակիս՝ հանդերձելոյն փառաց։ այսպէս և ոչ հեշտութիւնքն՝ հանդերձելոց տանջանաց։ Այ՝ այ ասէ։ խառնեցէ՛ք դմա կրկին։ Սրբոց հրամայէ խառնել և տանջել։ առնուլ զհատուցումն հեթանոսաց։ և դատաստան ըստ գրոց։ զի փառք այս են ամենայն սրբոց նորա։ Սրբոց պատժելն զանաւրէն՝ է կամակցին Աստուծոյ և ուրախանան ընդ պատիժ նոցա։ Եւ այսմ՝ ոչ է ընդդէմ բանն Տ՚Ռեն՝ որ ասէ։ որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։ զի ամբարիշտք իւրեանց չափովն տրբուցին սրբոց։ Աստուած ևս իւրեան

չափովն արբուցանէ նոցա զբաժակն սրտմտութեան։ Իսկ ասելն՝ խառնեցէք դմա, երեք կերպիւ խմանի։ Նախ՝ որպէս զլեզուին խառնեցին ի քացախն, այսպէս Աստուած ի քացախն զժոխային պատժոց՝ խառնէ զլեզուին յիշման անցեալ հեշտութեանց։ Երկրորդ՝ որպէս Նաբուզոդոնոսոր խառնէր ի հուր հնոցին զնաւթ և զձէթ, այսպէս Աստուած խառնէ ի հուրն զժոխոց զցծումն. հուր և ծծումն, այս մերկիկ բաժին բաժակի նոցա։ Երրորդ՝ կռապաշտ կայսերք զպատիժ մարտիրոսաց խառնէին, այսինքն բազմատեսակ պատժով պատժէին. այսպէս Աստուած ի դրժոխս զանազան տանջանս խառնէ։ Ասի թէ պարզ ջուրն թշնամի է փղից, զպղտորն յօժարապէս ըմպեն։ Աշխարհս որպէս յուշկապարիկ զեղեցիկ գիմաւն քարշէ յինքն, բայց տտով մահուան պատատէ և ձգէ ի դժոխս, որպէս և նա ի ծոմն։ Աղուէսն չեմուտ առ առիւծն. ասէ, զհետս մտողացն տեսանեմ, այլ ոչ ելողաց։ " Եւ որչափ փառաւորեաց զինքն և խայտեաց, այնչափ հատուցէք դմա զսուգ. զի ի սրտի իւրում ասէր, եթէ յամենայն ժամ նստայց ես թագուհի, և այրի

ոչ ևս եղէց, և սուգ ոչ տեսից։" Այսպէս խօսի և Աստի առ Բաբերոնն։ Արդ՝ այս նախ ցուցանի՝ Հռովմայ եկեղեցաձիգ իշխանութիւնն, ի ձեռն որոյ հպարտացեալ սատէր ի սրտի իւրում՝ յաւիտեան թագաւորեցից, վայ զսուգն ըստ չար ըղձիցն հաստատեցանէ յաւիտեան. որպէս զի Աստուած պատիժն ըստ ըղձից չարաց չափէ։ Ի միտ առ զի եթէ և դու որքան փառաւորես զանդամն քո, և հեշտանաս մարութեամբ, այնքան կրեալց ես զկսկիծ պատժոց ի դժոխս։ "Այսն այսորիկ ի միում աւուր եկեսցեն ի վերայ դորա հարուածք, մահ, և սուգ, և սով, և ի հուր այրեսցի. զի հզօր է Տէր Աստուած՝ որ դատեաց զնա։" Հռովմ՝ որ կարծէ զինքեանէ զոլ անյաղթ ի տասն թագաւորաց՝ թերադրութեամբն Աստուծոյ պաշարեալ, և հրամանաւ նեռին ի միում աւուր՝ այսինքն ի սուղ ժամանակի, այնպէս քայքայի, հրդեհի և պարտի, որպէս Երուսաղէմ՝ Տիտոսիւ և Վեսպասիանոսիւ։ Եւ որպէս պատկերն այն ուրուական քարին հատեալ ի լեռնէն։ Այս է վերջն փառաց աշխարհի։ Այսպէս ամենայն թագաւորք աշխարհի և իշխանք պարծին՝ ոչ զոլ

ինքեանց նման. որոց հոգիքն մինչ ի բաց պահանջին կեանքն դառնայ ի սուգ, յաղ-թութիւնն ի սով, և փառքն ի յաղթ. և այս-պէս գան միանգամայն ի մուսաւուր մահ, սով և սուգ։ Յուսալով ի յերջանիկ կեանս, մի ասեր, ոչ զոյ ինձ նման։ Դերհակ հոգմ մի յանկարծ հնչեալ՝ կործանէ զքեզ հա-մանգամայն։ Աստի մինչ ցքսան համարն՝ զողբա և վայս ամենայն վաճառականաց գրէ. որք շահէին և վաստակէին ի ձեռն առից և տրոց ի Հռովմայ. որք վայ կարդան՝ թէ անձանց՝ և թէ քաղաքին, ի տեսանելն զծուխ կիզման նորա։ Օ որոբինակ երթէ Ռիւզանդ կործանեսցի, վաճառականք՝ նաւաղք՝ ցան-ցորդք և անթիւ արհեստաւորք սուգ առ-ցեն, զի յորմէ շահէին՝ անտի զինաս կը-բեսցեն։ Ուրախ լերուք ի վերայ նորա երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք. զի դատեաց Աստուած զդատաստանս ձեր ի նը-մանէ։" Երկնքով այլաբանօրէն առնու զերկնայինսն, յորոց սակի են և առաքեալք և մարգարէք։ Ամենապէս նկարէ առ Երու-սաղէմ, առ որ հառաչելով ասաց Տէր։ Երու-սաղէմ, Երուսաղէմ՝ որ կոտորես զմարգարէս, և քարկոծ առնես զառաքեալսն առ

քեզ ։ «Յե՛ւ էառ Հրեշտակ մի հզօր՝ զքար մի մեծ՝ իբրև զերկան մի մեծ ։ և ընկէց ի ծով՝ ասելով ։ այսպէս յարձակմամբ անկցի Բաբելոնն քաղաք մեծ ։ և այլ մի ևս գտցի "։ Քաղաքք բազմիցս անկանին ի ծով մինչ սատիկ շարժն կամ պատառէ զնոսա ։ և ի տեղիս նոցա ծով զարձէ ։ կամ վանէ զնոսա ի տեղւոջէ և ընկենու ի ծով ։ որպէս կայ ի պատմագիրս ։ Հրեշտակն՝ ոչ միայն զքար՝ այլ և զքաղաք ։ կարէ ընկենուլ ի ծով ։ և այնքան դիւրին՝ որպէս զքար մի երկանի ։ Այսպէս Հրեշտակն զմեծ վէմն ի դրանց գերեզմանին ի բաց թատաւեցոյց ։ Բաբելոնն այսինքն Հռովմ կամ Յերուսաղէմ Հոգեւորապէս առեալ ։ ոչ ըստ շինուածոյն՝ այլ ըստ մեղաւորացն՝ որք ի նմա՝ անկանին ի ծովն դժոխոց ի ձեռն Հրեշտակի ։ որպէս և Փարաւօն զօրօք իւրովք անկաւ ի ծովն կարմիր ի ձեռն Հրեշտակի ։ ըստ այնմ՝ ձիոյն խնոյ ի կառան Փարաւօնի նմանեցուցի զքեզ ։ « Կախարդութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ամենայն ազգք ։" Յ աւերորդաբանութիւն ։ այսինքն բաղումք յԱզգաց ։ Կախարդական դեղատուութիւն Հռովմայ էր փառասիրութեան ախտից բաժակն ։ զոր

իբր թէ արբուցանէր ազգաց, և սիրահար զործէր ինքեան։ Իսկ Երուսաղէմի կախարդական զեղտուութիւնն՝ լինի ըստ իւրեն, զի նեռն կախարդութեամբ մոլորեցուցանէ զամենայն ազգս՝ որք հառաչեն առ Երուսաղէմ՝ տեսանել զզեղաքն։ "Եւ ի քեզ արիւն ամենայն մարգարէից և սրբոց գտաւ. և ամենայն զրելոց յերկրին կենդանեաց։" Օ՝ օրութեամբ բանիցս նախ՝ նշանակի Երուսաղէմ՝ յորում գրեթէ հեղան արիւն ամենայն մարգարէից։ Երկրորդ՝ նըշանակէ Հռովմ՝ որ ի ձեռն կռապաշտ կայսերաց իւրոց՝ գրեթէ եհեղ զարիւն ամենայն մարտիրոսաց։ Երրորդ՝ և տիրապէս նշանակի աշխարհս՝ որ է մեծ Բաբելոն՝ յորում արիւն ամենայն սրբոց խակապէս գըտաւ։ Օ՝ ի Աստուած ի պատժելն՝ ոչ միայն զմեղաւորս Հռովմայ կամ Երուսաղէմի՝ այլ բոլոր տիեզերի՝ ընկղմէ ի ծովն զժոխոց։ Եւ ասա զիտելի է՝ քաղաքն պոռնիկ՝ որ ունէր զթագաւորութիւն ի վերայ թագաւորութեանց երկրի յաւուրս Յովհաննու՝ թէպէտ էր Հռովմ՝ բայց յաւուրս նեռին՝ եղեցի Երուսաղէմ։

ԳԼՈՒԽ ԺԹ։

"Եւ յետ այսորիկ լուայ զձայն մեծ բազմութեան յերկինս՝ ասելով, ալէլուիա։ փրկութիւն, և փառք, և պատիւ, և զօրութիւն Աստուծոյ մերոյ։" Տեսանելով զգաստասան պոռնկին արդարապէս եղեալ՝ մեծապէս ուրախանան սուրբքն յերկինս, և շնորհակալութեամբ մեծաւ զոհութիւն և փառս և գովութիւնս տան Աստուծոյ։ "Զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա։ զի դատեաց զպոռնիկն մեծ ի պոռնկութեան իւրում՝, և խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց ի ձեռաց նորա։" Սուրբք թէ և տեսցեն զաղգականս իւրեանց դատապարտեալ՝ ուրախանան տակաւին։ զի ճշմարտութիւն և արդար դատաստանն Աստուծոյ բառնայ ի սրտէ նոցա զամենայն արենակցական գութ։ և սանձէ զամենայն ընական զորով։ "Եւ կրկին անգամ՝ օրհնեցին և ասացին ալէլուիա։ և ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից։" Զ՝ծուխ ոչ քաղաքին Նինուեանի, այլ բաբելականի ի դժոխս։ զի այս պատճառեաց ի նոսա ըզկրկին օրհնութիւն։ զի որքան պատիժ ամ-

բարշտաց ի՝ յերանեայ ։ այնքան օրհնութիւն և գովութիւն սրբոց բազմապատկի ։ “Եւ անկան քսան և չորք երիցունքն և չորք կենդանիքն ։ և երկրպագին Աստուծոյ՝ որ նստիւրն յաթոռ փառաց՝ ասելով ամէն ։ ալէլուիա ։” Զոքա՝ սրբոց փառաբանութիւնն համաձայնին ։ ստորասեն ։ և զնոյն բարբառ առ ըղձալի լինելոյ կրկնեն ։ Այսպէս Դաւիթ՝ օրհնեցէք զՏէր ամենայն ազգինք ։ բարձր արասցուք զանուն նորա ի միասին ։ “Եւ ձայն յաթոռոյն ելանէր ասելով ։ օրհնեցէք զԱստուած մեր ամենայն ծառայք նորա ։ և որք երկնչիք ի նմանէ ։ փոքունք և մեծամեծք ։” Այսպէս և Դաւիթ՝ երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր ։ Այս ձայն ելանէր ի չորից կենդանեացն ։ զի նախապատիւք գոյով՝ հրամայեն ամենեցունց երկիւղածաց օրհնել զԱստուած ։ “Եւ լուայ զձայն բազմութեան մեծի իբրև զձայն ջուրց բազմաց ։ և իբրև զձայն հզօր որոտմանց ասելով դարձեալ՝ ալէլուիա ։ վասն զի թագաւորեաց Տէր Աստուած մեր Ամենակալ ։” Նախ ասէ ջուրց բազմաց ։ նշանակելով զմիաձայն երգ խմբիցն վերնոց ։ Երկրորդ՝ ասէ հզօր որոտմանց ։ ցուցանելով

զզուարձալից և զառ ի սրտէ աշխոյժ տեսչանօք զախորժական երգաբանութիւնս նոցին։ Երբորդ՝ մինչ ցաստ չորկոյս կրկնէ զալէլուիայն, զի փառաբանութիւնս է Ամենասուրբ Երրորդութեան՝ երրեակ և միոյն։ Չորրորդ՝ պատճառ դնէ զի թագաւորեաց Աստուած ասելով. զի թագաւորութիւն Աստուծոյ նաև յայլոց տիրապէս ճանաչի ի հատուցումն. որպէս ասէ Յօր, հատուցէ նմա և ծանուցցի։ Եւ Սաղմոս՝ ճանաչէ տէր յառնելն զդատաստան իւր, ուստի բոլոր պատճառ ամբարշտաց անզգամութիւն է. յամեցումն դատաստանին, որպէս ասէ մարգարէն, իսկ ընդ՝ բարկացոյց մեղաւորն զԱստուած. և յարէ պատճառն, զի ասաց ի սրտի իւրում՝ թէ ոչ խնդրի. այսինքն ասաց ի սրտի՝ թէ ոչ գոն իրաւունք և հատուցումն։ "Խնդամք, և ցնծամք, և տամք փառս նմա. զի եկն հարսանիք գառնին, և կին նորա պատրաստեաց զինքն։" Երկեղեցին է հարսն Գառի, նշանատուքն լինի ի մկրտութեան, իսկ հարսանիքն ի յերկինս։ Կնոջ պատրաստիլն է յարութեամբ վերանորոգիլն, և անճառ փառօք զարդարիլն։ Խնդութիւն և ցնծութիւն սրբոց այնքան է,

որքան երկնային հարսանեաց վայել է։ Մի-
աւորիչն և զուգելն ընդ փեսային յայնժամ
լինի՝ մինչ ասէ, եկայք օրհնեալք Հօր
իմոյ։ "Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս
սպիտակս և լուսափայլս, որ է բեհեզն ար-
դարութիւն սրբոցն։" Բեհեզն է պայծառ
և լուսափայլ վուշն այս յատուկ է սրբոց։
և նշանակէ զերանական փառս։ Այս բե-
հեզ տուեալ լինի վասն հասարակ արդա-
րութեան սրբոցն։ որով ցուցանեն ամենեքին
զոլ արդարք։ որպէս տոտեղք ունին հա-
սարակ երանդ՝ զսպիտակութիւն։ բայց իւ-
րաքանչիւր դասք սրբոց՝ իւրեանց յատուկ
առաքինութեանց ունելոց են զյատուկ փառս։
զի որպէս այլ փառք արեգական։ և այլ
փառք աստեղաց։ այսպէս այլ փառք կուս-
անաց։ և այլ փառք մարտիրոսաց։ սոյն-
պէս և այլոց։ "Եւ մի երկնայնոցն ասէ ցիս։
գրեա զայդ։ երանելիք են՝ որք կոչեցեալք
են յընթրիս հարսանեաց գառնն։" Զ այս
և աւետարանական կիրն ըղձայ յասելն։
երանեմ որ կերկոյզ զՀաշ յարքայութեան Աս-
տուծոյ։ Յովհաննէս թէպէտ գրէր։ բայց
երէցն առ ի առաւել ըղձակերտս առնելոյ
լսողաց՝ հրամայէ հաստատապէս գրել։ ի-

բաւի երանէ, և բիւր երանէ կոչեցելոց ի յընթրիս հարսանեաց գառին։ Ճաշն լինի զմիջաւուրքն, ընթրիքն յերեկոյի, այսինքն ի կատարածի։ Այժմ վայելեմք զճաշ գառին հաղորդութեամբ մարմնոյ և արեան, բայց երանի եթէ հասցուք ի վայելել զընթրիսն։ Ընթրիքս այս՝ ոչ է կերակուր և ըմպելի՝ այլ՝ է դէմ յանդիման տեսութիւն Աստուծոյ, յորմէ ճաշակեմք զսէր, զուրախութիւն և զանդութիւն։ "Եւ ես անկեալ առաջի ոտից նորա, զի երկրպագից նմա։" Ասա այլ. Եւ ես անկեալ առաջի ոտից նորա երկրպագէ նմա։ Մինչ լուաւ թէ գրեա զայդ՝ կարծեաց վերջին բանն յայտնութեան. ուստի գրեալ՝ կամեցաւ երկիրպագանել. իբր շնորհակալ լինելով վասն զայնքան խորին խորհուրդսն ցուցանելոյն։ Եւ սակայն հրեշտակն ասէր ասելով. զի և ես ծառայակից քո եմ։ Եւ այս նախ՝ վասն խոնարհութեան իւրոյ. զի հրեշտակքն են հոգիք խոնարհք, վասնորոյ ասաց Աստուծոյ երկրպագեա. և ոչ հպարտ՝ որպէս գեն՝ որ զՔրիստոս հրապուրէր յերկրպագութիւն իւր։ Երկրորդ՝ վասն պաշտօնակցութեան, զի որպէս հրեշտակն հոգայ զփրը-

կութիւն հոգւոց, Նոյնպէս և Յովհաննէս։ վայ տայ՝ Աստուծոյ երկրպագեա՛, զի և ես ծառայակից քո եմ։ Երբորդ՝ զի էր ինքեան հանգիստապատիւ շնորհօք մարգարէութեան, զի Հոգին Սուրբ՝ որ ինքեան յայտնեալ էր զապառնեան, զնոյն՝ և Յովհաննու յայտնէր։ թէպէտ միջնորդութեամբ իւրով։ վայ տայ Հոգւոյն Սրբոյ զմարգարէութիւն, ասելով, զի վկայութիւնդ Յի՛սուսի Հոգւովն սրբով, որ ի մարգարէսն էր, և ո՛չ իմ։ Վկայութիւն ասէ այսինքն Ճշմարիտ մարգարէութիւն։ ըստ այմ է և այն։ Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ո՛չ ամաչէի։ Աստուստ ցուցանի թէ հրեշտակաց հանգիստապատիւք են մարգարէք, մանաւանդ առաքեալք՝ որպէսի էր Յովհաննէս։ "Եւ տեսի զերկինս բացեալ և ահա՛ ձի սպիտակ, և որ հեծեալն էր ի նմա՝ հաւատարիմ և Ճշմարիտ և արդարութեամբ դատէ և պատերազմի։" Որպէս ի սկզբան ձիաւորով ետես զՔրիստոս, այսպէս և ասա։ Եւ որպէս անդ հաւատարիմ վերկայ կոչեաց, այսպէս և ասա։ սպիտակ ձին՝ քան զայլ տեսակ ձիս է արագընթաց։ Քրիստոս սատիկ լուսով ելանէ յերկնից, և այնու

երևի երկինքն որպէս բացեալ ։ Նոսի ի ըս-
պիտակ ձիակերպ ամպս ։ և անտի մեծաւ
որոտմամբ վայլակնահարէ զնեռն արդարու-
թեամբ դատելով ։ Կամ՝ սպիտակ ձին է
Մ՝ ևքայէլ Հրեշտակապետն բեհեղազարդ ։
որով սատակէ զնեռն ։ Բանզէ հանդիսա-
պէս միայն ի դատաստանի իջանելոց է ։ և
ոչ վասն նեռին ։ Զարձեալ՝ սպիտակ ձին
է նշան յաղթութեան և հանդիսավեհու-
թեան ։ ուստի հեթանոսք ի կառս յաղթող
թագաւորաց՝ սպիտակ ձիս լծէին ։ զոր ա-
սաց ի վերս անդր՝ տեսի սպիտակ ։ և եկն
յաղթօղն ։ զի յաղթեսցէ ։ " Եւ աչք նորա
բոց հրոյ ։ և ի վերայ գլխոյ նորա պսակ
բազումս ։ և ունէր զանուն գրեալ՝ զոր ոչ ոք
գիտէ ։ բայց միայն ինքն ։" Բոցափայլ աչ-
քքն՝ նշանակէ զսրտմտութիւն Աստի ընդդէմ
ամբարշտաց ։ մեծ զօրութիւն կայանայ յաչսն ։
քարքն՝ խստադոյն աչօքն հայելով սպանանէ
զթուչունս ։ Եւ ընդդէմ սորա ջայլամն և
կրկայն քաղցրապէս հայելով՝ տաճեն ըզ-
ձուս ։ որպէս ասեն բնախօսք ։ Եւ պատ-
ճառ սորին է ։ զի ի քաղցր հայեցմանէ
քաղցրադոյն ոգիք բղխին ։ և ի դաժանա-
կան հայեցմանէ՝ ժանտադոյն ։ Այսպէս Աստ

ի դատաստանի՝ զերկուս տարբեր նեղզոր-
ծութիւնս յաչաց իւրոց բղխէ. որով ար-
դարք զմայլին, և մեղաւորք՝ խոցոտին։ Ու-
նէր Տ՚ն պակս բազումս. նախ՝ զի ըստ
Աստուածութեան է թագաւոր թագաւորաց,
և Տէր Տերանց, գոլով բազմազան կատա-
ւելութեամբ պակեալ։ Երկրորդ՝ ըստ մարդ-
կութեան՝ է ծայրագոյն վարդապետ, հաւա-
տարիմ մարտիրոս, և ամբիծ կոյս. վասն ունի
զպակս մարտիրոսութեան, վարդապետու-
թեան և կուսութեան։ Եւ ունէր զանուն
գրեալ ասէ, զոր ոչ ոք գիտէ. զի ըստ
Աստուածութեան՝ անուն նորա սքանչելի
է. զի ոչ ոք անուն՝ զբնութիւն նորա կա-
րէ բացայայտել։ Իսկ ըստ մարդկութեան
հայրն երկնաւոր գրեալ է ի պակս նորա
մակագիրս պատուոյ՝ անձառելի ի մարդկա-
նէ։ Իսկ եթէ այս անուն ինչ է բան, նմա-
նապէս է մեզ անձառելի։ "Եւ արկեալ
զիւրեաւ զհանդերձ արեամբ ներկեալ, և
կոչիւր անուն նորա՝ Բան Աստուծոյ։" Ո՞ այս
և Դասալի կանիրաւ ետես. և ի հարցանելն
վասն էր են կարմիր ձորձք քո. պատաս-
խանեաց, հնձան հարի միայն։ Ո՞ օրաՁը-
լուխք ի խաղաղութեան զգենուն պայծառս.

խակ ի պատերազմի՝ արիւնագոյնս ։ զի մի երկիցեն յարենէ ։ Այսպէս Դ՚ն նախ՝ երևեցաւ պձնաւոր ։ այսինքն սպիտակ պատմուճանաւ ։ որպէս քահանայապետ խակ այժմ՚ երևի կարմրազգեաց ։ զի ելեալ է ի պատերազմ ։ Որպէս մարտամուխ զօրք արեամբ թաթաւին ։ այսպէս Դ՚ն նախ՝ ի խաչին մարմնին արեամբ խրով թաթաւեաց ։ ապա արեամբ թշնամեացն զհանգերձս իւր ։ Բան Աստուծոյ կոչի ։ զի յիմացականութենէ Հօր ծնանի ։ քանզի Հայր իմանալով զէութիւն իւր՝ ծնանի զՈրդին ։ և սիրելով զէութի իւր՝ բղխէ զՀոգին սուրբ։ բայց եղանակ ծնեղեանն և բղխմանն՝ է անճառելի ։ վասնայսորիկ ասաց ի վեր՝ ոչ ոք գիտէ զանուն նորա՝ բայց միայն ինքն ։ "Եւ զօրաւորք երկնից ։ և զօրք երկնից զհետ երթային նորա ձիւաք սպիտակաւք ։ ընդգեցեալք բեհեզս սուրբս և սպիտակս ։" Զ զօրսն նեռին երկնային զօրաք սատակելոց է ։ որք երանեան փառաւք հետևեալ զկնի Զ զօրապետին Յն՝ սատակեսցեն զզօրս նեռին ։ որպէս երբեմն զզօրսն Սենեքերիմայ ։ "Եւ ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ։ զի նովաւ հարցէ զազգս ։" Այս սուրս է

ազգու հրամանն Քեզ. որ հանգոյն երկայ-
ըի սրոյ՝ ըստ աշխէի, բայց ոչ միայն ըզ-
մարմին՝ այլ և զհոգի խոցէ։ Դարձեալ՝
յերկուց կողմանց հատանէ զյաւիտենական
կեանան ի մեղաւորաց և զյաւիտենական
մահն՝ յարդարոց։ Այսու սրով սատակէ
գնեռն։ "Եւ նա հովուեսցէ զնոսա գաւա-
զանաւ երկաթեաւ։" Այսինքն հզօր և
անլուծանելի հրամանաւ. զի որպէս երկա-
թեայ գաւազանն յերկար տևէ, այսպէս
և պատժողական հրամանն Աստուծոյ ի վե-
րայ տանջելոց՝ տևէ յաւիտեանս յաւիտե-
նից։ "Եւ նա կոխեսցէ զհնձան գինւոյ
ցասման բարկութեան Աստուծոյ Ամենա-
կալի։" Զի Հայր ոչ զատէ զոք, այլ զա-
մենայն դատաստան ետ Որդւոյ իւրում։ Ի
խաչին կոխեաց զհնձան գինւոյ. ի դատաս-
տանի կոխելոյ է զհնձան ամբարշտաց. ո-
րով հանգուցէ զցասումն բարկութեան Հօր
Ամենակալի։ Քանզի արդար պատիժն զո-
վացուցանէ զարտմնութիւն դատաւորի։ "Եւ
ունէր ի վերայ պատմուճանի իւրոյ և ի
վերայ անդամոց իւրոց զիր գրեալ։ Թագա-
ւոր թագաւորաց, և Տէր Տերանց։ Քրիս-
տոս յամենայն ուրեք թագաւոր քարոզի,

ի մակագիր խաչին գրեցաւ թագաւոր · ի գլուխն, ի պատմուճանն, և ի յազգրն · գրի ատ նմանապէս թագաւոր թագաւորաց։ Գլխագրոնն նշանակի Քն գրեալ թագաւոր թագաւորաց, ըստ Աստուածութեան։ Իսկ գրոնն ազգերն՝ Տէր Տերանց, նաև ըստ մարդկութեան։ Քանզի արդեամբ խաչին արդիւնաւորեաց զոլ թագաւոր թագաւորաց։ Դարձեալ՝ զի անդամն է բնական մասն մարդոյ, նշանակէ թէ Քն է թագաւոր թագաւորաց, ոչ բնութեամբ՝ այլ բնութեամբ · զի ոչ ինչ յատկութիւն համարեցաւ ըզլինելն հաւասար Աստուծոյ։ Դարձեալ՝ Քն ոչ միայն նկատմամբ աշխարհի թագաւորաց՝ է թագաւոր թագաւորաց · այլ և նկատմամբ երանելեաց և սրբոց · որք գոլով անդամք Քնի, են Հնմարիտ թագաւորք, ի վերայ որոց Քն է թագաւոր թագաւորաց։ Եւ ծանիր · զի երկրաւոր թագաւորք ի մտանելն ի պատերազմ՝ ծպտին · (թէպտիլ սուրթ լինին) վասն երկիւղի · զի մի ոք ծանիցէ զինքեանս։ Բայց երկնաւոր թագաւորն յարուցեալ ի պատերազմ՝ կամի յայտնի լինիլ աշխարհի · վասն ազատադէմ աներկիւղ կրէ զանուն իւր · ատ-

զանիշ տառիւք ի պատկեր, ի պատմութեան, և յանդամս իւր. զի յամենայն կողմանց յայտ լեցի թէ է թագաւոր թագաւորաց և այլն։ "Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր ի վերայ արեգական, զի աղաղակեաց ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ի մէջ առելով. եկայք և ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ։" Հրեշտակս այս կալով ի վերայ արեգական ի միում աւուր ընդ բոլոր աշխարհ թաւալմամբ արեգական՝ հնչէ ըստիրզերայուր զբարբառ. որով ազգ առնէ ամենայն գիշակեր թռչնոց ժողովել ի վերայ անկեալ զօրաց նեռին. յորում գտանին բազմութիւնք մարմնոց թագաւորաց, իշխանաց, մեծաց, փոքրոնց, ձիանց, և այլն։ Օ որս հետեւեալ տունն ցուցանէ։ Եւ այս լինի որպէս ընթրիս մեծ ամենայն գիշակեր թռչնոց և գազանաց։ Օ այս ընթրիս առնէ Աստուծ երկնային զօրքն ատակելով ըզ զօրս նեռին։ Դարձեալ՝ յարեգակն կալով հրեշտակին ցուցանէ թէ այս պատերազմ լինելոց է յայտնի համայն աշխարհի. զի է վերջին պատերազմ թագաւորաց աշխարհի ընդ եկեղեցւոյն Աստուծոյ, որպէս ասէ։ "Եւ տեսի զգազանն և զթագաւորս

երկրի, և զզօրս նոցա ժողովեալս, առնել պատերազմ ընդ այնմ, որ հեծեալն էր ի ձի սպիտակ և ընդ զօրս նորա։" Որք են հրեշտակք և քրիստոնեայք։ Օ այսմանէ ընթրիսէ մարգարէացաւ և Եզեկիել՝ ի վերայ Գոգայ և Մագոգայ։ Ոստայամ և դու որդի մարդոյ ասա ցամենայն հաւ թռչունս, և ցամենայն գազանս՝ ժողովեցարուք և եկայք յամենայն կողմանց ի զոհումն իմ, զոր և զենի ձեզ զոհումն մեծ ի վերայ լերանց Իսրայէլի։ Գարձեալ. այս հրեշտակս յերկինս կալով ոչ միայն հրաւիրէ զամենայն թռչունս, այլ և աւետարանէ զանկումն նեռին՝ քրիստոնէից սփռելոց ընդ բոլոր աշխարհ որպէս Ադամ կոչէր զթռչունս և գայլն։ Այսպէս հրեշտակն. զի որպէս կենդանիք սրբոց, այսպէս և հրեշտակաց հրնազանդին։ "Եւ ըմբռնեցաւ գազանն և ընդ նմա սուտ մարգարէն։" Օ օրքն նեռին սատակին սրով բերանոյն Քրիստի, այսինքն ազգս հրամանաւն. այսպէս փչմամբ Պետրոսի Ղազարոյն հրեղէն կառքն Սիմոնի Կախարդին շինաւ։ Իսկ նեռն և սուտ մարգարէն ըմբռնին և կենդանւոյն արկանին ի լիճն հրոյ այրեցելոյ ծծմբով։ Եւ սատ

գիտելի է, զի ոմանք ի բան Պօղոսի հայելով, որ ասէ զնեռանէն՝ թէ Տէր Յն սատակեսցէ զնա սրով բերանոյ իւրոյ, ասեն թէ նեռն նախ՝ սատակի ի Յեն միջնորդութեամբ Միքայէլի. և ապա յարուցեալ արկանի ի լեռ Հրոյն. քայց ասա յայանապէս ասէ. զօրքն սատակեցան, և ինքն ընդ սուր մարգարէին իւրոյ ըմբռնեցաւ. և կենդանւոյն արկաւ ի լեռն, և այս մեծ պատիժ է փոխիլ կենդանի աչօք բացօք ի թագաւորութենէ ի լեռն զժոխոյ շղթայակապ, որպէս Դաթան և Աբիրօն։ Դարձեալ ամենայն հերձուածողապետք մահուամբ սատակեցան։ Աբիոս կամէր բառնալ զսիրելի Որդին Աստուծոյ զԱզգին Հօր, սաղնքն հոսեցան։ Ալեքսանդրի լեզուն յորդանց կրծեցաւ։ Լութերի որկորն փտեցաւ։ Դալվին միզարգել սատակեցաւ։ Մահմէտ դիւահարեալ սատակեցաւ։ Այսպէս և ամենայն մեղսագիւտք նոսանշան պատժեցան։

ԳԼՈՒԽ Ի։

"Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ելանէր յերկնից, և ունէր զբանալիս զժոխոց, և շղթայս մեծ ի ձեռին իւրում։" Ոմանք ի

թիւը միտ՝ առ որ Համոզէ և կարգ շարա-
դրութեան առեալ զբանն, վարկեցին զկնի
աստակման նեռին՝ այսր հրեշտակի կապել
զատանայ հազար ամ. և ապա արձակել առ
ի մոլորեցուցանել զազգս, և յետոյ հրա-
կիզեալ անկանիլ ի լիճն. ուր անկեալ էին
գազանն և սուտ մարգարէն. որպէս և զբ-
ուէ ի ստորև։ Այսր կարգի հետևեցաւ Փա-
փիաս աշակերտ սրբոյն Յովհաննու և սմա
Բերինթոս, նաև Ղուգինէս, և կոչեցան
հաղարամեանք։ Այս կարծիք խնամպէս
ընդունելի երևի ոմանց. զի զկնի նեռին դառ-
նալոց են Հրէայք, և պահանջի բազմու-
թիւն ամաց, զի զօրացին ի հաւատսն և
արդարացին ճնունդք նոցա։ Այլ ասեն
ոմանք՝ թէ Աստուած վասն ազգին Հրէից
փոքր ինչ յապաղէ զկատարումն։ Բայց
ըստ մեկնութեան հասարակ հարց, այս հրեշ-
տակս է Քն, կամ՝ մի ի հրեշտակաց իշխող
դժոխոց. որ յաւուրս խաչելութեան հրա-
մանաւն Քնի կապեաց զատանայ. զի Քն
ոչ միայն, այլ՝ հրեշտակօք էջ ի դժոխս,
և անդ հրամայեաց կապել զվիշապն։ Ը-
ստ այսմ Յովք հրամանաւ իւրով սպան զվի-
շապն ապստամբ։ Օ. ի շղթայն է Քնի

հրամանն, և կնիքն կամքն արքունական. ի ներքոյ որոյ արդեալնի յանդունդս մինչև ցհազար ամ։ Այս հազար ամս զկնի կարծեացն Որոգինեայ, այլք ի մերոց վարդապետաց թուաբանօրէն առեալ ասեն, ըզկնի հազար ամայ գալստեանն Քրիստի, արձակիլ սատանայի. բայց որպէս առաջին կարծիքն նոյնպէս և այս է անդէպ։ Այլ խորհրդաբար առեալ՝ նշանակէ զբովանդակ ժամանակն ի Քրիստի մինչև ցնեռն. զի հազարն է քառակոյս, և է գուշակող բովանդակութեան։ Այսպէս հազար ամ յաչս Աստուծոյ որպէս օր երեկի՝ զի էանց, նշանակէ զտեւողութիւն աշխարհի ի սկզբանէ մինչև ցկատարած։ Իսկ որ ասէ, պտրտէ լուծանել նմա ի սակաւ ժամանակս՝ այս է ի ժամանակս նեռին, որ է երրորդ ամ և կէս։ "Եւ տեսի աթոռս, և նստան ի վերայ նոցա, և դատաւորութիւն տուաւ նոցա ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեան Յի, և վասն բանին Աստուծոյ, և որոս ոչ երկրպագին գազանին, և ոչ առին ըզդրոշմն նորա ի ճակատս իւրեանց, և կացին և թագաւորեցին ընդ Քրիստի մինչև ի հազար ամ։" Այսքիկ աթոռք են հոգւոցն սրբ-

բոց և յարուցելոց ընդ Քրիստի, որք որպէս դատաւոր կացուցան ընտրել զՀոգիս մարտիրոսաց և արդարոց։ Այսոքիկ դատաւորք էին Հոգիք նահատակաց և մարգարէից, որք ընտրէին զՀոգիսն՝ որք ոչ երկրպագին գազանին։ Գիտելի է, զի կրկին է երկրպագութիւն գազանին, մին՝ ըստ իրին՝ յաւուրս նեռին, երկրորդ՝ ըստ խորհրդոյն, ըստ սմա՝ այժմ՝ երկրպագեն Հրէայք նեռին, թէպէտ չև է եկեալ. ուստի ասէ Պօղոս՝ զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ։ Եւ սուրբս ասէ, արդէն իսկ նեռայինք բազումք եկեալ են։ Աստուստ՝ Դեկոս, Դեմետիանոս էին խորհրդաւոր նեռինք. և կրէին զպատկեր գազանին, որոց ոչ երկրպագին սուրբքն, և ոչ առին զդրոշմ՝ նորա։ Սոքա թագաւորեցին ընդ Քրիստի ի հազար ամ։ Հոգիք սրբոց վարկին յամբարշտաց ոչընչացեալ. բայց թագաւորեն ընդ Քրիստի հազար ամ։ Եւ այս ըմբռնումն օձին, և փակումն ի բանտն հանդերձ գիւօք՝ Քրիստի, Աստուծոյ գուշակեաց յառաջն, և եղիցի յաւուր յայնմիկ ածցէ Աստուած ի վերայ զարդուն երկնից զձեռն իւր, և ի վերայ թագաւորաց երկրի՝ որք ի վերայ երկրի։ Եւ

ժողովեցին զժողովս նորա ի կապանս, և պաշարեացին յամուրս, և յետ բազում աղագաց այցելութիւն եղեցի նոցա։

Օ արդուք երկնից խմանին օդայինքն, թագաւորք երկրի՝ որք յերկրի փորձին, զորս ձեռն Աստուծոյ Յն փակեաց յանդունդս, և յետ հազար ամին, այսինքն ի ժամանակս նեռին՝ այցելութիւն լինի, այսինքն արձակին։ "Եւ յետ այսորիկ ի մեռելոց ոչ ոք եկաց մինչև ի կատարել հազար ամին։ այս է յարութիւն առաջին։" Այսինքն զատապարտս մեռելոց, որք յընտրութենէ ի բաց ձգեցան՝ և խոտան զտան։ սոքա ոչ կեցին ընդ Յն, այլ անկան ի դժոխս մինչև ցկատարել հազար ամին։ Այս է մինչև ցժամանակս նեռին՝ որոյ մերձապէս հետևի զատապատանն և կրկին զատապարտութիւն ըստ այնմ։ զարձցին մեղաւորք անդրէն ի դժոխս։ Յայս միտ Մահմէտ՝ կամ՝ Աստուծոյ կամ՝ ի գիւէ ներշնչեալ ասաց՝ առանդս իմ՝ մեայ հազար ամ՝, որեթէ ըստ այսմ՝ խորհրդոյ ասէր։ իբր տևելոց ցկատարած՝ սուտ պարծէր։ իսկ եթէ ըստ թուոյն ճշմարտանման է։ զի արդէն էանց հազարն։ և սկսեալ է նուազել եթէ ոչ պղերգու-

թիւն և անօրէնութիւն քրիստոնէից արբ-
գելցեն. զի տիպն համեմատի նախատպին։
Օ ի որպէս ի ծառայութենէն Եբրայեցւոց
Յեգիպտոս մինչև ցելս նոցին յաղատութի՝
հոսեցան ամք 1633։ Այսպէս և քրիստո-
նէից ազատութիւն ի Թուրքաց, զկնի այն-
քան ամաց վարկի լինիլ. ուրեմն մի պարծ-
ցեսցին մահմէտականք թէ շարիաթն մեր
տևելոց է մինչև ցկատարած աշխարհի։
"Երանի՛ սրբոցն. որք ունին բաժին ի յա-
րութեան յառաջնում՝ ի վերայ սոցա երկ-
րորդ մահն ոչ ունի իշխանութիւն. այլ ե-
զեցին քահանայք Աստուծոյ և Քրիստոսի
Քրիստի. և թագաւորեսցեն ընդ նմա հազար
ամ։" Առաջին յարութեամբ իմն զյարութի
հոգւոց՝ որ լինի ի մահուն իւրաքանչիւրոց.
որ եթէ հոգին արդար իցէ ի մեռանիլ՝ մարմ-
նոյն՝ յանէ ի կեանս. իսկ եթէ մեղաւոր՝
մեռանի անկմամբ յաչացն Աստուծոյ։ Իսկ
երկրորդ յարութեամբ իմն զհատարակաց
յարութիւն մարմնոց. որոյ հետևի երկրորդ
մահն՝ այսինքն դատապարտութիւն հոգւով
և մարմնով ի դժոխս. և այս ոչ ունի իշ-
խանութիւն ի վերայ նոցա՝ որք ունին ըզ-
բաժին ի յարութեան յառաջնում՝ զի երա-

նեալք հոգւով՝ առնուն զյարութիւն յառնեն յերանական կեանս։ Հոգիք սրբոց նաև երանելիք են քահանայք Աստուծոյ և Քրիստոսի։ զի մշտամնութիւն փառաբանութեամբ օրհնեն զԱստուած և զՔրիստոս։ որ է զորս քահանայութեան։ Աստուստ երկնային զօրացն ասեն քահանայապետութիւնք։ զի են փառաբանիչք Աստուծոյ։ Թ. ազաւորեալ զոլով ընդ Քրիստոսի զքահանայական պաշտօնս իւրեանց ոչ մոռանան։ յամենի թուլամտութ քրիստոնէից՝ որք մինչ բարձրանան ի քահանայութիւն և ի թագաւորութիւն խակոյն թուլանան ի պարտաւոր պաշտօնէ փառաբանութեան Աստուծոյ։ "Եւ յետ հաղար ամին լուծցէ զսատանայ և հանցէ ի բանտէ անտի։ ելցէ մոլորեցուցցէ զԱզգս ամենայն ընդ չորս կողմանց աշխարհի, և զԳոգ և զՄագոգ առցէ ի ձեռս ժողովել նոքօք զամենայն զօրս ի պատերազմ. որոց թիւ իբրև զաւազ ծովու։" Այս լինի ի ժամանակս նեռին։ յորում արդարութիւն Աստուծոյ սրտմտեալ բարկութեամբ վասն ծովացեալ մեղաց մարդկան՝ արձակեացէ դարձեալ զսատանայ։ որ մոցէ ի նեռն։ և առցէ նովաւ ի ձեռն զԳոգ և զՄագոգ։ որք լինին հզօր իշխանք Ակեռ-

թացւոց և Աբրաքացւոց, այսինքն զՀիւսիսային և զՀարաւային Թագաւորս, և ժողովեալ անթիւ զօրս պատեսցէ զքանակս սրբոց և զքաղաքն Երուսաղէմ, որ և առցէ, և անդ դիցէ զաթոռ Թագաւորութեան. որ և առ ժամանակ մի վերանայ որպէս զծուխ, և բարձրանայ որպէս զմայրս Լիբանանու, և յետ սակաւ միոյ ոչ գտանի տեղի նորա։ Որ և ի ժամանակին յայնմիկ մեծ քաղաքութիւն լինի նահատակիլ, կամ փախչիլ ի ձեռաց Նորա առ ի պահել զՀաւատս, որպէս ասէ Եսայի, փախիր և Թագիր առ ժամանակ մի, մինչև անցցէ բարկութիւն Տեառն, այսինքն նեռն։ Այլ՝ որպէս Մահմէտ ի ձեռն Աբրաքացւոց զօրացաւ, այսպէս նեռն զօրասցի Գոգաւ և Մագոգաւ։ Գոգ է Սկիւթացիք, այսինքն մեծ Թաթարք։ Այլ Լաբանօրէն Գոգ է նեռն. իսկ Մագոգ՝ սուտ մարգարէն, զորս Սաղայէլ յարձակման իւրում առցէ ի ձեռս, և տայցէ պատերազմ ընդ Եկեղեցւոյ՝ առ ի մերձեցուցանել զաշխարհս։ "Եւ լիցէ հուր յերկնից առ յԱստուծոյ, և երկիցէ զնոսա, և արկցէ զնոսա ի ծովն հրոյ և ծծմբոյ. ուր է գազանն և սուտ մարգարէն. և չարչարեսցին

զոխ և զգիշեր։" Այս լենի ի մեծ պա-
տերազմին, յորում Դ՝ երկնային զօրօք
խմբի ընդդէմ նեռին. զոր հրեղէն սրով
հարկանէ և իբրու կայծակնահար ստակէ
և արկանէ ի ծոմն դժոխոց։ Բայց զոր ա-
սէ, ՝ռբ է դաղանն և սուտ մարգարէն։ Այ-
սու մտօք իմանի և այն՝ զոր ասէ յայլուր
ելցեն յարտաքս շունք և գողք յարքայու-
թենէն, իմանի թէ ոչ մտցեն. քանզի շունք
և գողք զհաւրդ կարեն մնանել յարքայու-
թիւն Աստուծոյ երկնից։ "Եւ տեսի զա-
թոռ սպիտակ և ի վերայ նորա նստեալ՝
յորոյ երեսացն երկնչէին և փախչէին եր-
կինք և երկիր. և տեղի ոչ գտաւ նոցա։"
Աթոռս այս է Դ՝ին ի լուսալիր ամպոյ ձև-
ացեալ, ի վերայ որոյ նստեալ Դ՝ զայ ի
դատաստան ահեղ փառօք. յահէ որոյ այն-
պէս աղմկին մեռք և աչք, մինչ զի ապշեալ
վարկեն երկինք և երկիր փախչել։ Փախ-
չին երկնի և երկրի՝ է փոխել ի նոր տեսակս
և ձևս. բարւոքապէս երկնիւք իմն զօրս
հրեշտակաց. իսկ երկրաւ՝ զմարդիկ. որք դա-
զան յահէ փառացն Դ՝ին, և փախչել փու-
թան. բայց տեղի ոչ գտանի փախչելոյ,
զի ՝ռբ կարեն վախչել։ "Եւ տեսի զմե-

ռեալս մեծամեծս և զվերքունս՝ որք կային առաջի աթոռոյն։" Ոչ թէ ըստ չափու հասակի լինին փոքր և մեծ։ զի ամենեքին միաչափ յառնեն։ այլ ըստ արժանապատուութեան։ որպէս թագաւորք և տնանկք։ եկեղեցականք և աշխարհականք։ "Եւ գրեանք բանային։ և այլ գիրք բացաւ կենաց։ և դատեցան մեռեալք ի գրեալցն՝ ըստ գործոց իւրեանց։" Գիրք կենաց է խոցմ մտաց արդարոց։ զի որ ինչ ի նմա գրի՝ է արժանի կենաց։ իսկ գիր մահու է խոցմտանք մեղաւորաց։ զի որ ինչ ի նմա գրեալ է։ առ մահաբեր պատիժն դժոխոց պատկանի։ Աստուած գերբնական լուսով համբնթանայ ընդ խոցմտանայ արդարոց և մեղաւորաց։ տեսանել իւրաքանչիւր իբր ի հայելւոջ զոր ինչ գործեայ։ Դարձեալ ամենայն գործք մարդկան ի միտս Աստուծոյ՝ իբր ի դանձ գրքոջ կնքեալ կայ։ ի դատաստանի բանի։ և ըստ այնմ Ո՞չ այս ամենայն ժողովեալ է առիս։ և կնքեալ պահի ի դանձի իմում։ և այլն։ Այսպէս և ի միտս հրեշտակայ և դիւաց իբր գրեալ կայ։ Այսպիսի գրեանք և Դանիել ետես բացեալ։ "Եւ ետ ծով զմեռեալս իւր։ և մահ և դժոխք զիւրեանց մե-

ռեալս ։ և դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։" Զոմն տայ զմեռեալս յինքեան ։ մահն՝ զմեռեալս երկրի ։ և դժոխք զհոգիս զատապարտելոց ։ և դատեսցին ըստ գործոց իւրեանց ։ Զարդարոց ոչ խօսի ։ որք թէպէտ յառնեն ։ բայց զոլով անմեղք ի դատաստան ոչ մտանեն ։ այլ փոխեսցին ի մահուանէ ի կեանս ։ Զմանք կարծեն թէ ի կատարածի ծովք ցամաքին ։ բայց ի բանէ աստի երևի թէ մնան ի դայն ։ թէպէտ փոփոխին յայլ պարզ և զեղեցիկ տեսակ ։ զի եթէ երկինք և երկիր մնան ։ ընդէր ոչ և ծովք ։ " Եւ մահ և դժոխք մատնեցան ի լիճն հրոյ ։ այս է մահն երկրորդ ։" Այսինքն մահու և դժոխոց արժանիքն ։ որք մահ և դժոխք անուանին ։ զի ինքեանք ինքեանց դառնագոյնք և ծանրագոյնք են քան զդժոխս ։ որպէս ասէ Յովհաննէս՝ զնախանձոտաց խիստ քան զդժոխք նախանձ ։ Զմանն ոմն ասէ Պաւլոս՝ դիցեն զնոսա որպէս հնոց ի հուր ։ Այս է մահն երկրորդ և դառնագոյն քան զառաջինն ։ Զարձեալ ստատնայ որ է պատճառ մահու և դժոխոց ։ ընդ իւր հետևողքն մատնին ի դժոխքն ։ Զատնումն նշանակէ զխիստ ատելութիւն Աստուծոյ

տուծոյ, զի ծայրագոյն ատելութեամբ Աստուած մատնեսցէ զթշնամիս իւր ի գժոխս։ "Եւ որ ոչ գտաւ ի գիրսն կենաց գրեալ, արկաւ ի լիճ հրոյն։" Գիրք կենաց է գրպրութիւն նախատատեսութեան և խնայողութիւն Աստուծոյ՝ յորում գանձեալք են անուանք արդարոց։ Աստուած թէպէտ զանուանս մեղաւորաց ճանաչէ, բայց ոչ սիրողապէս՝ այլ անարգօրէն. վասն ոչ յիշատակէ զնոսա՝ զի չեն հաճոյ. այլ մոռանայ կամաւ։ Տես ուրեմն ով ընթերցող. թէ զնչ ի գիրս խղճի մտաց քոց գրես, և զիտելով զխտասղիր. զի յահեղ ատենի անդ ընթերցեալ լինի եթէ չար, և եթէ բարի։ Եւ ասա զիտելի է զի որովհետև ի սոյն գլխոյ Աւետարանիչն վեց անգամ հազար ամ յիշէ. ասեն վարդապետք թէ ոչ է առանց խորհրդոյ. և վարկին թէ զնին վեց հազար ամաց լինելոյց է կատարած աշխարհի. և առ այս համեմատական օրինակ բերեն՝ ասելով։ Նախ՝ թէ յետ վեց աւուր արարչութեան՝ յեօթներորդումն հանգեաւ Աստուած։ Երկրորդ յայտնիկ ասն "ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր." առ Երբայեցիս է վեց ալէք. և ալէքն՝ առ Նոսա, է նշան հազար

ամայ։ Երրորդ՝ յեօթներրորդն Աղամայ Նոյ՝ փոխեցաւ յերկինս։ Չորրորդ՝ վեց աւուրց հետևի շաբաթն, և նշանակէ զհանգիստն յաւիտենից։ Հինգերրորդ՝ Աստուած 120 ամայ ասաց զաւուրս մարդկան. իսկ ազատութեան թիւն է 50. որով բազմապատկեալ 120 ամն՝ գոցես 6000 ամս։ Վեցերրորդ՝ օրէնք բնութեան մինչև յԱբրահամ եկայ՝ 2000 ամք. որոյ թրիատութիւն դաշն էր Մովսիսականին, և յԱբրահամայ ցՔրիստոս հոսեցան ամք 2000։ Ուրեմն ի Քրիստէ մինչև ցկատարած եղեցի 2000։ Որք ընդ ամն լինին դարձեալ ամք 6000։ Յեսու Ժողովրդեանն հրամայեաց յանցս Յորդանանու՝ հետևի կալ ի տապանակէն՝ 2000 կանգուն, և այս նշանակէր ի մկրտութենէն Քրիստի մինչև ցկատարած 2000 ամն՝ յորում տապանակ մարդկութեան Քրիստի տեսանի զէմ յանդիման եկեալ ի դատաստան։ Ատի կոչի յետին ժամանակ. առաջինն էր՝ բնութեան, միջինն՝ օրինաց, յետինն՝ շնորհաց։ Այժմ աւետարանն գրեթէ յամենայն հեթանոս լսելի եղև. քարոզի ի Հին, ի Հինգ, յԱմերիկայ, և յամենայն տեղիս. որ է նշան գալստեան Տեառն։ Քո ծնաւ յամի

աշխարհի 5930։ Սակաւ ինչ ժամանակ մը-նացեալ երևի կատարածի աշխարհի և գա-լստեան Տեառն. բայց զայս ասեմք հաւա-նականաբար, և ոչ ապացուցօրէն. զի ըստ ասից Տեառն՝ ոչ է մեզ գիտել զժամն և զժամանակս՝ զոր Հայր եդ յիւրում իշխա-նութեան։

Գ. Լ. Ո Ի Խ։ ԻԱ

"Եւ տեսի երկին նոր, և երկիր նոր. քանզի առաջին երկինք և երկիր էանց, և ծով ոչ գոյր։" Եւ կատարածի մինչ երկինքն զկայ առցէ և իբրև զանիւ կացցէ, յայն-ժամ ամենայն զբօսանք կենցաղոյս դադարին. ցնուանդք, անձրևք, հողմք, ցփանք ծովու. և հուրն՝ որ առաջի դատաւորին ընթանայ՝ բոցակիզէ զլերինս և զանտառս, և մաքրեալ ճուլէ զերկիր իբրև զապակի զիւրաքանչիւր տարբ ի յաւաջին պարզ որակութիւն իւր ածելով։ Այլ իրաւի այս երկինք երկիր և ծովք ոչ լինին, զի ոչ խառնակութիւնք օդոց և ամպոց, և ոչ մրրիկք և ցփանք ծովու լիցին, այլ անցցեն յայլ պարզագոյն տեսակ և գեղեցկաձև։ Ամանք երկրաւ առ-նուն զմարմին սրբոց, իսկ երկնիս՝ զհոգին,

և ծովու՝ զալիս խարհրդոյն և հառաչանաց։ որք ի կատարածի երանեան օժտիւքն փոխին յայլ տեսակս։ Դարձեալ երկնիս իմն զուարքան։ և երկիրս՝ զմեղաւորսն։ սոքա այժմ ոչ են ի կարգի։ զի մեղաւորք տիրեն արդարոց։ այսինքն Մահմետականք Արիստոնեից։ բայց այս առաջինս անցցէ։ և եղեցի երկին նոր։ և երկիր նոր։ այսինքն արդարք ըստ արժանւոյն փառաւոր իշխանք բարձրացեալք՝ որպէս զերկին։ Իսկ մեղաւորք՝ անարգք խոտանք և խոնարհեալք որպէս զերկիր։ Դարձեալ երկիր նոր՝ է լուսեղէն երկին՝ ընակարան սրբոց։ և կոչի երկիր կենդանեաց։ իսկ երկինք նոր է ամենասուրբ Երրորդութիւն ի վերուստ առարկեալ տեսութեան սրբոց։ "Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի ի Զանէր Աստուծոյ և յերկնից։ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ։" Ըստ նկարագրին՝ քաղաքն սուրբ նորն Երուսաղէմ է կերպաւոր ինչ լուսապայծառ՝ ականակուռ ոսկեփայլ՝ ընդարձակատարբ՝ մեծանիստ քաղաք տրամաբաշխեալ ի զանազան օթևանս։ զորմէ ասէ Դաւթեան։ Նա աւանիկ ազնուականի ուրումն ցանկացեալ էին։ այսինքն է՝

երկնային քաղաքին. վայ ոչ սմեթ համարի Աստուած՝ կոչիլ նոցա Աստուած. զի պատրաստեաց նոցա զքաղաք. Եւ այս քաղաք կոչի նոր Երուսաղէմ՝ վասն նորոգ երևելոյն. թէպէտ ի սկզբանէ կազմեալ լոյէ. և այն այնքան գեղեցիկ՝ որքան վայել է երկնային քաղաքացեաց. կամ փեսային փառաց. վայ ասէ իբրև զհարսն պատրաստեալ առն իւրոյ. ի սմա զոյ հոյակապ պալատ արքունական Դրան թագաւորին. Դարձեալ՝ է խորանարդ. այսինքն խորանաձև. զի ըստ օրինակի սորա կազմեցաւ խորանն Մովսիսի. տեսջիր ասէ. արասցես զամենայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ ի լերինն. Զ այս քաղաքս ինքնուցանէ յերկնից. և զամենայն երկնաքաղաքացիսն ի սմա զետեղեալ՝ անդրէն վերաբերէ յերկինս. որպէս ի վերացուցանելն զԵղիա յերկինս՝ զՀրեղէն կառս ինքոյց. Այսպէս խօսի զի բարձցէ զամենայն կարծիս երկրայութեան. զի մի ասիցեն երկրախորհուրդք. թէ՝ մարմնաւոր մարդ՝ զիա՞րդ կարէ վերանալ յերկինս. զի եթէ թանձրամարմինքն Եղիա և Ենովք վերացան. զիարդ ոչ և փառաւորեալքն մարմնով. Ինքնին քաղաքին է նման արեգական. որ զոյա-

յուԹեամբ յերկինս է, և ՃառագայԹիւք յերկրի։ Շարժելիք ի մեզ՝ են անշարժք Աստուած։ Ի ծովու՝ զերկինս գալ և գնալ և շարժիլ տեսանեմք, բայց են կայուն յինքեանս։ Այսպէս իջանէ քաղաքն՝ որքան առ մեզ, բայց է կայուն յինքեան, զի է քառակուսի։ Այնպէս դիւրաւ փոխէ զերանեալսն յերկինս, մինչ զի Թուի երկինք իջեալ առ յինքեանս, քան Թէ ինքեանք երԹալ։ Եւ յայնժամ տեսանեն նոր աշխարհ, նոր երկինք, նոր երկիր, և նոր ծով յերկինս։ Իսկ ըստ խորհրդոյն՝ քաղաքն իրաւի իջանէ յերկնից, այսինքն հոգիք անդրանկաց կատարելոց, զի իջանեն յերկնից և զգենուն զմարմինս փառաւորս, զի անՃառ փառօք զարդարին, որպէս վայել է հարսի ընդ երկնաւոր փեսայի զուգելոյ։ Եւ այս է ասելն, և կին նորա պատրաստեաց զինքն, և Թէ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ։ Գլուխն է Քրիստոս. մարմին՝ եկեղեցին յաղԹօղ։ Որպէս գլուխն է անյաղԹ և անմահ, այսպէս մարմինն։ Այսու մեօք ասէ Պօղոսն՝ եկեղեցին է ՀՃ, զի գլուխն է ՀՃ. մեր յաղԹիլ չկարէ։

“Եւ լուայ զձայն մեծ յերկնից՝ որ ա-

սէր , ահաւասիկ խորանն Աստուծոյ ի մէջ մարդկան , և բնակեսցի ընդ նոսա , և նոքա ժողովուրդ նմա՝ և սա Աստուած նոցա ։" Օյսաւիտենական խնդութիւն երանելեաց ընդ Աստուծոյ աւետարանէ այս ձայնս , խորան Աստուծոյ քաղաքին · զի էր խորանաձև , կամ զի ի քաղաքի Տեառն զօրութեանց զոյ՝ և յատկապէս խորան Աստուծոյ , որպէս ի յերկրաւոր քաղաքի յատուկ տուն Աստուծոյ ։ Քանզի Աստուած յերկինս ի լուսաշաղարդ պալատի իմիք ի քրօքէական կառս բազմեալ տեսանի , ըստ տեսչեանն Եսայեայ և Եզեկիելի · և ըստ խորանին Մովսիսի՝ յորում՝ ի վերայ քրօքէից առ տապանակին բազմիւր · և Քն բազմեալ տեսանի ընդ յաջմէ որպէս և Հոգին սուրբ ։ Եւ այսպէս տեսլեամբ ամենասուրբ Երրորդութեան զմայլին · զի թէպէտ է էութեամբ յամենայն ուրեք , սակայն զինքն յատկապէս տեսանել ընծայէ ի պալատի լուսեղինի եղելոյ ի յերկնային քաղաքի · զոր տեսեալ ասացին , սա Աստուած մեր՝ և մեք ժողովուրդք և խաշն արօտի սորա ։ Դարձեալ խորանն Աստուծոյ է ինքն Քն · որ ոմանց երևի որպէս զփայլակն և ամիս-

փէ, որ ամենայնից փափագելին է. սա ի կատարածի միանգամ երևեալ այլ ոչ ամ-
փոփի, այլ բնակի ի մէջ մարդկան փրկե-
լոց յաւիտեան, և լինի նոցա Աստուած.
և նոքա նմա ժողովուրդք յարաժամ։ Ուս-
տի զայն որ խորանն գրէ, յետոյ Աստուած
գոլ ասէ. եղեցին ժողովուրդ նորա՝ այսինքն
որպէս սիրելի որդիք հօր, որպէս գեղեցիկ
հարսունք փեսայի, որպէս սիրաշաղկապ
բարեկամք, որպէս հարազատ եղբարք, և
որպէս հաւատարիմ պաշտօնեայք. և նա եղե-
ցի նոցա Աստուած՝ որպէս թագաւոր սի-
րելի, որպէս փեսայ գեղեցիկ, որպէս արեգա-
կէն աչաց, որպէս քնար լսելեաց, որպէս մա-
ղըր ճաշակելեաց, որպէս խաղաղութիւն սըր-
տի՝ որպէս խնամատութիւն մտաց, և որպէս
խնդութիւն և բարութիւն կամաց. յայն-
ժամ ասասցեն Տէր Աստուած իմ՝ ես դու,
և նա ասասցէ, ժողովուրդ իմ՝ ես դու։
Խօսեցցին առ միմեանս՝ որպէս լուաք,
տեսակս և տեսաք ի քաղաքի Տեառն զօրու-
թեանց, թագաւորքն մեծի, և ցքաղաքն
ասասցեն՝ փառաւորեալն խօսեցաւ վասն քո.
կամ զքէն մարդարէն՝ քաղաքդ Աստուծոյ։
Եւ ցԱստուած ասասցեն՝ զե՞նչ կայ իմ

բնաւ յերկինս ։ զի քաղաքն և Աստուածդ՝ առ մեզ է ։ կամ՝ ի քէն զենչ ևս խնդրեսցուք յերկրի ։ Աստուած սրտից մերոց ։ բաժին մեր Աստուած յաւիտեան ։ " Եւ ընդեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա ։ և մահ ոչ ևս զոյ ։ ոչ սուգ ։ և ոչ աղաղակ ։ ոչ ցաւք և ոչ աշխատանք ևս զոյ ։ զի առաջինն էանց ։" Երկանիկ աչք՝ որոյ արտասուքն ընդէ ձեռամբ ստեղծողին ։ որպէս մայր զորդին զգուէ զլացեալ ։ սփոփէ և մխիթարէ ։ այսպէս Աստուած զայնս՝ որք յամբարշտաց նեղին և լան ։ կամ՝ վասն մեզոց ի սուգ ապաշխարութեան նստին ։ Աստուած որպէս բարեբար մայր ձեռամբ իւրով արբէ զարտասուս նոցա ։ և մխիթարէ երկնառաք բարեօք ։ վայ ասէ Տէր՝ երանի՝ սգաւորաց ։ զի նոքա մխիթարեսցին ։ Օ՛այրազոյն մխիթարութիւն սոցա է՝ զի ոչ ևս տեսցեն սուգ և աղաղակ ։ այլ՝ յաւէժական խնդութիւն ։ զի առաջինն էանց ։ այսինքն՝ հին և թշուառ կեանքն աշխարհի ։ Եւ նոր կեանք երկնական փոխանակեաց ։ Այսպէս և Եսայեաւ ասէ ։ նոր առնեմ զամենայն ։ ոչ եղիցի մահ ։ ոչ բանական և ոչ բնական ։ ոչ աղաղակ տանկայ՝ զոր ամենայնք նե-

գեն, կամ մշակաց՝ զորոց վարձս կտրեն, կամ հաւատացելոց՝ զորս անհաւատք չարչարեն։ «Եւ ասաց ցիս որ նստիր ի վերայ աթոռոյն, ահաւասիկ առնեմ զամենայն նոր. և ասէ ցիս, այս բանք հաւատարիմք և ճշմարիտք։» Աստուծոյ յաթոռն է Գ։ որ առնէ զամենայն նոր։ Յառաջին գալն նորոգեաց զմարդկային կեանս՝ շնորհօք։ Երկրորդ գալն նորոգէ զշնայեալ պատկերն իւր փառաւք։ Կամ զկեանս զրախտին զոր Ադամ վարէր։ Նորոգէ զերանելեանն փոխելով ի տրամութենէ յուրախութիւն, ի սգոյ ի ցնծութիւն։ Ա։ հաստատութիւն ճշմարտութեան տեսլեանս՝ հրամայէ զգուշութեամբ գրել, զի մի ոք երկբայեսցի։

«Եւ ասէ ցիս եղէ,» ըստ այլ թարգմանութեան՝ եղև, այսինքն զոր ինչ վճռեալ էի զընտրելոց և զկոտրելեաց, եղև և կատարեցաւ. զի զոր Աստուած կամի, ընտրէ սահմանէ, և վճռէ։ Ըստ ընտրութեան յառաջադրութիւն Աստուծոյ հաստատի. զի ինքն է ալֆա, և օ. սկիզբն յառաջադրութեան, և վախճան կատարումնակութեան։ Եւ ծարաւելոց տամ յաղբերէ ջրոյ կենաց ձրի։ Երանի ուրեմն որ քաղցեալ և ծարաւի

ինչեն վասն արդարութեան, զի նոքա յաղեսցին։ Օրհնեալ է անձն իմ առ քեզ Աստուած իմ Յն, երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ. արժանի արա՛ զիս զովացուցիչ սեռութեան քո Տէր։ Զի զնախկին շնորհն Աստուած տայ մեզ։ Առաքինի՛ք թէպէտ գործով արժանաւորին, բայց Ջանք և չարչարանք առաքինեաց համարժանապէս ո՛չ են արժանիք հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ի մեզ, զի փոքր մի աշխատեալ՝ զլուսցեն զմեծամեծ բարութիւնս։ Օ՛ հարդ ինչ արժանի, զի վայրկենական նեղութեանց՝ փոխարինէ զյաւիտենական հանդիսան. և բաժակ մի ցուրտ ջրոյ՝ շնորհէ զաղբիւրն կենաց՝ որ խաղայ ի կեանս յաւիտենականս։ Որ յաղթէ՝ ժառանգեսցէ զայս ամենայն, և ես եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ որդիք։ Որ յաղթէ աշխարհի՝ մարմնոյ և սատանայի, որ լինի հաւատով. ըստ այնմ՝ ո՞է որ յաղթէ աշխարհի՝ եթէ ո՛չ հաւատքն ձեր, որ հաստատ հաւատով հաւատայ զբերոց սատ՝ յաղթէ և ժառանգէ զայս ամենայն. և այնժամ եղիցի Աստուած տիրապէս նմա Աստուած, և ինքն հարազատ որդի Հօր։ միշտ վայելելով զսէր նորա. զի մեզաւորն արդար-

լուրք՝ ոչ այլ ապարդեամբ կոչէ զԱստուած։ Աստուած և հայր՝ որքան լսէ սատանայի և առնէ զկամս նորա։ Որ յաղթէ տակաւին առնու ձրիապէս, զի յաղթէ Աստուծով։ Բ սա այնմ, զօրութիւն իմ և օգնութիւն իմ Տէր, և ի նմանէ է ինձ փրկութիւն։ "Եւ ծուլացն և անհաւատիցն։ սպանողաց և պոռնկաց։ և կախարդաց և կռապաշտից։ և դեղատուաց։ և ամենայն ստոց ամբարշտաց։ որոց բաժինն ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով։ որ է մահն երկրորդ։" Արդարութիւն Աստուծոյ փայլի ի հատուցման։ որպէս գիշերն զտիւն պայծառացուցանէ՝ այսպէս գժոխքն զարքայութիւն։ և պատիժն՝ զվարձն։ Բանզի սուրբք՝ որքան ցնծան ժառանգելով զարքայութիւն։ այնքան ուրախանան փրկելոցն ի գժոխոց։ Եւ այս առաւել յորդորէ զնոսա ի զոհութիւն և ի շնորհակալութիւն զԱստուծոյ։ "Եւ եկն առիս մի յեօթանց հրեշտակաց։ որք ունէին զեօթն սկաւառակսն լցեալս եօթն վախճանօք կատարելովք։ խօսեցաւ ընդիս և ասէ։ Եկ ցուցից քեզ զհարսն, և զկին Գառին։" Յովհաննէս՝ տեղանելն քաղաքին յերկնից ի հեռատանէ գիտէր։ շիտակաբար ետես։ քաղաքայր պարիսպ

զապէս տեսանել, Հրեշտակն վերատին ցու-
ցանէ, Նա և նոքն Երուսաղէմ այնքան
ցանկալի է, մինչ զի միով տեսլեամբ՝ ոչ
բաղձանք յաղի և ոչ տեսութիւն, այլ մի-
անգամ տեսօղն՝ յորդի և ևս տեսանել։ "Եւ
էառ և տարաւ զնս ի լեառն մի բարձր և
մեծ հոգւով. և ցոյց ինձ զքաղաքն մեծ
և սուրբ Երուսաղէմ, զնջեալն յերկնից՝ առ
Աստուծոյ։" Այլ որպէս Մովսէս որ հա-
նաւ ի լեառն Նաբաւ և անտի ետես զերկիրն
աւետեաց ի հեռուստ. այլ՝ սա անդ ի կա-
տար լերին՝ յոր էլ, ետես զԵրուսաղէմ
Վերին, յորում տիրապէս ինանի բանն
Եսայեայ՝ յաւուրս յետին եղիցի յայտնի
լեառն Տեառն. և տուն Աստուծոյ ի վերայ
լերանց։ Օ այսմանէ լեռնէ և Դաւիթ ասէ՝
ով ելցէ ի լեառն Տեառն. յօրինակ սմին,
Հաղարամ ի մարգարէսն ի լեառն էլ և
ասէ, ի գագաթանց վիհաց տեսանեմ զզ-
ժողովուրդն՝ զոր օրհնեմ։ Յովհաննէս՝ հո-
գւոյն վերացաւ ի լեառն վերին Սիօն, և
անդ ետես թէ զերկնայնն քաղաքն Երու-
սաղէմ, և թէ զքաղաքացիսն։ Իսկ ասելն՝
ջնջեալ առ Աստուծոյ՝ այս է՝ մերձեցեալ
առիս, որպէս թէ ջնջեալ։ "Եւ ունէր զզ-

փառս Աստուծոյ։" Եւ այս է անհաւելի։ առ որ նկատեալ ասաց Աղաքեալն՝ զոր աչքն ոչ ետես։ և ունկն ոչ լուաւ։ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ "Եւ ի նմա լուսաւորութիւն նմանեալ ականց պատուականաց, քար յասպիս սառնատեսակ և կենդանի։" Վասն զի փառս արքայութեան ի լեառն եցոյց, որոյ ստուերն ցուցանի յեռանկիւնի ապակին։ որ կոչի գրախտացուցիչ։ որոյ նման զոլ ասէ քաղաքն լուսաւոր և բազմագոյն՝ ըստ գունոց երկոտասան ականց։ Որով ցուցանի թէ երանելեաց տեսութիւնքն թափանցին ընդ ամենեսին թէ ընդ քաղաքն։ թէ ի միոս միմեանց և հրեշտակաց, և թէ յԱստուծոյ։ Եւ զի ասելի է։ զի քաղաքն վերին ոչ է խակապէս յականց օրինեալ։ նախ՝ զի է ըստ Աբրահամայի հինգերրորդ էութիւն՝ երկինքն, յոր ոչ գոյ տարբական ինչ։ Երկրորդ՝ ասէ նման ականց և ոչ խակապէս ակունք։ Այլ ոմանք մեկնիչք ասեն զոլ յերկինս մեծամեծ ակունք։ և թէ մարդամատ ակունք են փշանք ինչ նոցա։ "Եւ էին պարիսպք նորա մեծ և բարձր։ և ունէր դրունս երկոտասան։ և

յերկոտասան դրունսն՝ երկոտասան հրեշ-
տակս ։ և անուանք իւրաքանչիւրոց ի վե-
րայ դրանցն գրեալք էին ։ ըստ երկոտասան
ցեղիցն Իսրայէլի ։" Բարձրութիւն և մեծու-
թիւն պարսպին ցուցանէ զյաւիտենական
հաստատութիւն նորա ։ զի հաստատմամբ ցնծայ
քաղաք թագաւորին մեծի ։ Երուսաղէմ՝ քա-
ղաքն Դաւթի ունէր դրունս ինն ։ Եզե-
կիէլ ասէ ։ դրունք քաղաքին էր ըստ ցե-
ղիցն Իսրայէլի ։ Բանակ որդւոցն Իսրայէլի
էր քառակոյս ։ իւրաքանչիւր ցեղ ունէր դը-
րունս ի վերս անդր տան՝ բարձաւ ։ Իսկ ասա-
դնի ներ լուսթեամբ ։ յայտ է թէ զՀոգևոր
որդիսն Իսրայէլի նշանակէ ։ այսինքն զՊ-
ռաքեալսն ։ Իմացուցեն է թէ՝ ըստ երկոտա-
սան առաքելոցն Քրիստի ։ որք զերկոտասան
Ազգս Քրիստոնէից մեծին յերկնայինն Յե-
րուսաղէմ ։ Իսկ հրեշտակքն ի դրունս են
պահապան հրեշտակքն՝ երկոտասան ազգաց ։
որք և զամենայն սուրբսն մեծին յերկնից
քաղաքն Յերուսաղէմ ։ " Յարևելից կող-
մանէ՝ դրունք երեք ։ և ի հիւսիսոյ կողմա-
նէ՝ դրունք երեք ։ և ի հարաւոյ կողմանէ՝
դրունք երեք ։ և յարևմտից կողմանէ՝ դը-
րունք երեք ։" Եկեսցեն յարևելից և յարև-

մոկց, և բազմացին ընդ որդիսն Աբրահամու, այսինքն՝ յամենայն հեթանոսաց։ "Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան. և ի նոսա երկոտասան անուանք երկոտասան Առաքելոց Գառնին։" Առաքեալք՝ ասին հիմունք քաղաքին, զի ի վերայ նոցա վարդապետութեան, քարոզութեան, և հանգանակացն հաւատոյ՝ կառուցեալ եղև խորհրդական քաղաքն վերին. վասն ասէ Դաւիթ հիմունքն նորա ի լեռանն սուրբ նորա։ Եւ Առաքեալն ասէ, շինեալք ի վերայ առաքելոց և մարգարէից։ 'Ի հիմունս դնին Առաքեալքն, ի գլուխն՝ Մարգարէքն։

'Նախահին քաղաքին է Հաւատամքն ի ձեռն Առաքելոց։ "Եւ որ խօսէին ընդիս ունէր զեղէգն ոսկի ի ձեռին իւրում, զի չափեսցէ զքաղաքն և զդրունսն նորա, և զպարիսպս նորա։" Չափէ վասն տեղեկացուցանելոյ զՅովհաննէս, և նոքաւ գիտէ, զի ծանիցուք և ըմբռնիցուք։ Երկրաւոր Հաւատարատեսաց չափն լինի երկաթեայ կամ պղնձեայ, բայց երկնաւոր Հաւատարատեսինն էր ոսկեայ. զի ծանիցուք թէ որքան թանգագին է ոսկին քան զերկաթն. այնքան պատուական և հարուստ է երկնային

քաղաքն՝ քան զերկրաւորս։ Եթէ չափն է
ոսկի, հետևի՝ զի չափեալն իցէ զոհար։ Յոսկի
և ի զոհար առակէ զքաղաքն, զի քան զսսա-
ռչ զոյ առ մեզ այլ պատուական իր։ Թէ և
իցեն յերկինս ոսկի ակունք և մարգարիտք,
ոչ սակայն են համատեսակ ստորայնոցս, այլ՝
զերազանց քան զնոսա։ Եթէ ոսկին Սա-
փղայ ազնիւ է քան զայլս, որչափ ևս երկ-
նայինն, այպէս և զայլ հանքաց խմա։ "Եւ
էր քաղաքն քառակուսի, և որչափ երկայ-
նութիւն նորա, նոյնչափ և լայնութիւն և
բարձրութիւն հաւասար։" Քառակուսին
կրկնակի առնի, մի թուաբանօրէն քառա-
կուսի, որպէս այս՝ [illegible] որ կոչի տրամագիծ։
Երկրորդ՝ երկրաչափօրէն՝ որպէս այս՝ [illegible]
որ է առաւել երկայն քան լայն, բայց է
տակաւին քառակուսի։ Արդ՝ յասելն՝ որ-
չափ երկայնութիւն և բարձրութիւն հաւա-
սար՝ ոչ պարտի առնել տրամագծօրէն. զի
այս ընդհանուայ ձևոյ քաղաքի, եթէ իցէ
երկայնութիւն ընդ բարձրութեան թուա-
բանօրէն հաւասար, այլ՝ երկրաչափապէս,
այսինքն՝ ըստ երկայնութեան լայն և բար-
ձրը։ Եթէ այսպէս խմանալի է. պարզ է ի
հետևեալ տանն՝ զերկայնութիւն դնելով

երկոտասան հազար ասպարէզ։ իսկ լայնու-
թիւն սարսալին կամ բարձրութիւն հա-
լիւր քառասուն և չորք ասպարէզ։ Խոր-
հրդապէս քաղաքն վերին է քառակոյս, եր-
կայն յաւիտենականութեամբ, լայն ընդ արա-
ձակ սիրով, և բարձր փառօք։ "Եւ էր
չափ երկայնութեան նորա երկոտասան հա-
զար ասպարէզ։" Որ առնէ 1500 մղոն, մեծ
քան զքաղաքն Եղեկիէլի, և յոյժ չափա-
զանց քան զքաղաք՝ զհինն Երուսաղէմ։ Օ-
րութեամբ բանիս՝ գիտելի է, զի բոլոր յեր-
կինս է մի միայն քաղաք, և այն՝ որպէս
վարկանիմ՝ ի վերայ դագաթան հնոյ Երու-
սաղէմի ուղղագիծ հայեցմամբ, և սակայն՝
յոյժ մեծ և ընդարձակ, որքան գրաւէ
1500 մղոնն։ Որոյ մեծութեամբ ոչ զտանի
ի վերայ երկրի քաղաք, զի լինի մեծագոյն
քան զՍեաւ՝ Օ՞ոմն դրութեամբ։ Հոմանդակ
քաղաք աշխարհիս այսորիկ հազիւ թէ ըստ
չափու երկնային միակ քաղաքիս՝ բնակիչս
արժանաւորս բազկացուցանեն, որ թէպէտ
նկատմամբ կորուսելոյ փոքր է, բայց ըստ
ինքեան յոյժ մեծ է։ Եւ իբրու անթիւ,
քանզի այնքան սուրբք, մարտիրոսք, կրօ-
նաւորք, միրտեալ մանկունք, պատանիք,

Հերձուածողաց ժողովուրդք ։ բաց ի տեսա-
կան մոլորեցուցչաց՝ որք առաքելական հան-
դանակացն հաւատով և յուսով մեռանին ։
առանց կարծեաց՝ փրկին ։ Սուրբք թէպէտ
ունին զմի քաղաք ։ սակայն՝ երանեն մերթ
զերկնիւք պարեն և մտանեն ։ վայ զրունքն է
միշտ բաց ։ "Ակիսս այսինքն քառակոյս որ-
պիսի է ։ Օ արն նարտին ։ որ այլով անուամբ
կոչի կիբիկն ։ Խորհուրդս քաղաքացիքն
վերին են քառակոյս ։ զի որքան են խոհեմք
այնքան են արդարք ։ որքան արդարք՝ այնքան
ողջախոհք ։ որքան ողջախոհք՝ այնքան արի ։
կամ՝ զի էին յերկրի խորանարդ մարմնով այ-
սինքն հաւասարաչափ չորիւք առաքինու-
թեամբքս ։ վայ կանգուն կան յաւիտեան ։ որ-
պէս և զարն խորանարդ զոլով յոր կողմն
անկցի՝ կանգուն է ։ Այսպէս կատարեալ
հաւատոյ յոյսն ։ սէրն ։ և գործն չափակցին ։
"Եւ չափեաց զպարիսպ նորա հարիւր քառա-
սուն և չորս ասպարէզ ։" Պարիսպն Բաբե-
լոնի՝ ունէր զբարձրութիւն ։ չէ զարմանք
թէ ։ երկնային քաղաքի պարիսպն՝ ունիցի
զայնքան բարձրութիւն՝ մի ասպարէզն է 125
քայլ ։ և է ութերորդ մասն մղոնի ։ Ա-
սպարէզ յիշէ ։ զի յաղթեացէ պատկն ։ Խոր-

հրդապէս՝ պարիսպն նշանակէ զնոսխանա-
մութիւն Աստուծոյ և զապահովութիւն սըբ-
ոց։ Եւ եղէց նմա պարիսպ հրեղէն շուրջ-
ջանակի։ "Չափ մարդոյ՝ որ է հրեշտակի։"
Դպես իմանի թէ՝ հրեշտակն։ որ չափէր։
էր մարդաչափ։ Երկրորդ՝ թէ այնու չա-
փով էր չափն։ որով սովոր են մարդիկք
չափել զպարիսպս։ Խորհրդապէս նշանակէ
չափակցին մարդկանց հրեշտակային փա-
ռաց։ և կամ ըստ չափու անկելոցն լենիլն
չափ մարդկան փրկելոց։ Դարձեալ՝ նշա-
նակէ թէ շնորհքն։ արդիւնքն և փառքն
չափակցին՝ ոչ տրամաչափօրէն։ այլ՝ եր-
կրաչափաբար։ այսինքն եթէ լցէ միոյ ար-
դեան՝ հարիւր չափ փառք հարիւր չափ ար-
դեանց՝ բիւրապատիկ փառք չափի։ "Եւ
էր շինուած պարսպոյ քաղաքին՝ էր ոսկի
մաքուր յասպիս։ և քաղաքն նման սուրբ և
սպիտակ ապակւոյ։" Յասպիսն է կանաչա-
շարդ քար։ զգեան վանէ։ ըստ ասից ոմանց։
Եթէ Երեքմէջ պարիսպն կարէ զոլ յան-
դիմանդ քարէ։ որչափ կարէ զոլ երկնային
քաղաքի պարիսպն յասպիսոյ։ Ոսկին երկ-
րային զուրկ է ի պայծառութենէ ապակւոյ։
և ապակին ի հաստատութենէ ոսկւոյ։ բայց

երկնայինն՝ զերկոսեանն ունի. զի է այլա-
տեսակ։ Երկրաւոր թագաւորք վասն ոսկ-
ւոյ հառաչեն. իսկ աղքատքն երկնից քան
զայս պայծառագոյնն՝ յարաժամ կոխատեն։
Տես թէ որքան զերազանց են քան զերկ-
բաւոր թագաւորս. որպէս երանելքն լինին
թափանցիկք, զի թափանցեն ի նեղքս սրտի
խորհուրդս միմեանց, այսպէս և քաղաքն
իւրեանց լինի թափանցիկ առ ի տեսանել
զմիմեանս՝ ծագէ ի ծաղ։ Զ երկնային զա-
կանակուռ Երուսաղէմ մարգարէացաւ և
Տօբիթ։ Զ ի շինեցի ասէ Երուսաղէմ ի
քարանց պատուականաց, ի շափիւղայէ և
ի սուտակէ. և այլ ևս պատուական քա-
րամբք պարիսպք քո, և աշտարակքն և
մարտկոցքն քո՝ յոսկւոյ սրբոյ։ "Եւ հի-
մունք քաղաքին յամենայն ակունց պատ-
ուականաց։" Համաձայն Տօբիթայ խօսի։
Հինն առաջին յոսպիս։ սա կոչի ապարձատ
կամ՝ զապարձատ. զորմէ ասի թէ՝ ընդդի-
մանայ հոսման արեան դաշտանայ, կապեալ
յերանս յոլայն՝ զծնունդն արձակէ, զգբը-
խոյ ցաւն մերժէ, է Պետրոս. ի սմա գբ-
ռեալ էր ցեղն Դաւթայ։ Սա՝ հինեցաց Հա-
ՒԱՑԱՄՔ 'Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ։ Երկրորդն՝ շափի-

զայ ըստ Եբրայեցւոց ասի սափիր, ըստ Յու-
նաց և Լատինացւոց՝ սափիրուս, է եաղու-
թիւն որոյ են զանազան տեսակ կապուտ,
կարմիր, սպիտակ սափիր՝ Թարգմանիչ գե-
զեցիկ է քահանայական ակն։ Ի սմա էր ցե-
զն 'Եբեթաղիմ՝ է Ընդրէաս, որ հիմն եաւ՝
ԵՒ Ի ՄԻ ՏԵՐ ՅԻՕՈՒՍ ՀՐԻՍՏՈՍ։ Երրորդն՝
պղնձագոյն, որ ըստ այլոց քաղկեդոնոս, գը-
տանի ի Կարկեդոն, յորմէ և անուանի։ Յո-
մանց՝ վարկի գոլ ատամանն՝ որ ի հրում
պայծառանայ, սրպէս պղինձ հրաշէկ՝ պատ-
ուականն գունով պողպատի հետեւի։ Ի նը-
մա էր ցեղն Դանայ է Յակովբոս Եղբայրն
Յովհաննու վաւեալ սիրով, որ եդ զհիմն
ՅՂԱՑԱՒ 'Ի ՀՈԳԻՈՑՆ ՍՐԲՈՑ։ Այլք զպղնձա-
գոյնն ասեն գոլ կարկեհանն, որ ասի կայծ
քար, և կարմիր եաղութ։ Զորրորդ՝ զըմ-
բուխտ։ Բրապի ասի՝ զամարութ, ի սմա
էր Յուդայ, է Յովհաննէս, որ իբրև զզըմ-
բուխտ կանաչ մնայ 110 ամ՝ զկնի Ռեի,
և հիմն եդ՝ ԽԱՉԵՑԱՒ ԵՒ ԱՅԼՆ։ Խաչն է
հայելի զարշութեան մեղայ, զերոյ առա-
քինութեան, սիրոյ Աստուծոյ, և պատժոյ գե-
հենին։ "Չինգերրորդն՝ եղեգնաքար։ Այս-
պէս ասի, զի է նման ընկգան մարդոյ, որ

է ի տեսակէ յաշխարհին. ուր էր Մանասէ. է Փիլիպպոս և ետ զՀիմն Է.Ջ 'Ի Դ.ՈՒՍ։" Ա՝ ելեալ ելանոր՝ սարդիան, որ է կարմիր սէրեանն. ուր Ռուբէն է Բարդուղիմէոս՝ որ յոմանց կարծի զոր 'Նաթանայէլ, եւ՝ ՑԱՐԵԱՒ։" Եօթնեալ ելանոր՝ ոսկեքար։ Ոմանց կոչի Թարսխ. է քար նման ապակւոյ ոսկեշաղ, ուր Երիրեմ՝ է Մատթէոս, և եղ հիմն ՀԱՄԲԱՐՁԱՒ։ Ութեալ ելանոր՝ բիւրեղ։ 'Նման պարզ պիլորի, ուր Բենիամին՝ է Թովմաս, հիմնեաց՝ ԳԱԼՈՑ Է ԵՒ ԱՑԼՆ։ Իններեալ ելանոր՝ տպազիոն։ Ըստ Յունաց թօփազ. զորմէ ասէ Յօր։ ոչ հաւասարի նմա տպազիոնն Երթովպայեաց, այսինքն 'Բեի խմաստութեան՝ խմաստն փիլիսոփայից։ Յանուն Թօրաձ կղզւոյն Տպազ կոչեցեալ. ուր Շմաւօն, է Յակօբոս Եղբայր Տեառն։ Ուռաքեալքն երթային Յերուսաղէմ 'ի նմա դիտել զԲ, էր Նախեպիսկոպոս։ Յովսեպոս ասէ վասն ապանման սորա՝ կործանեցան Հրէայք. հիմնեաց՝ ՀԱՒԱՏԱՄՔ 'Ի ՀՈԳՒՆ ՍՈՒՐԲ։ Տաներեալ ելանոր՝ քրիսոպրաս, որ է նման պրասի. ուստի թարգմանի՝ ոսկեպրաս. հիւթն պրասի երեք տրամ՝ ըմպեալ անշնչացուցանէ. 'ի տեղի սորա 'ի գլխս Մով-

սիսի է ակատն, ուր Խաչքար է Ղուկէոս որ հիմնեաց՝ 'Ի ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ։ Պե-տասաներրորդ՝ յակինթ, նման յակինթ ծաղկան, ասի ևս ըստ Յունաց կամ Լ՝ ա-տինացւոց՝ լեզուբիւմ, ի Լ՝ եզուբոս գա-ւառէ, ուր Ազեր է Սիմոն Կանանացին, որ հիմնեաց 'Ի ԹՌՂՈՒԹԻՒՆ ՄԵՂՈՑ։" Երկո-տասաներրորդն՝ Ամէթոս, այսինքն՝ ոչ սր-բեցօղ. զի է շինակարմիր, ուր Օ՝ աբուղն է Մատաթիա, որ հիմնեաց՝ 'Ի ՑԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ։ Բ՝ ատ քանի ինչ գիտելի է, նախ մինչ լսես հիմունք, մի կարծիցես ի ներքոյ պարսպի եղեալ քարինք. ըստ որում ոչ երկո-տասան, այլ՝ յոլով քարինք պիտին։ Այլ հիմունք անուամբ՝ իմն ատէն զմահարձան և զթալկուԹ, այսինքն մարտկոց. որ և ռամկօրէն ասի պուրջ, որք և անգրաբերա-բար ասին հիմունք, վասն հաստատուն պա-հելոյ զպարիսպն՝ հանգոյն հիման։ Բ՝ ու այս-պէս առաքեալքն են վերնոյ քաղաքին երկոտասան գոհար մահարձանք։ Երկրորդն՝ զայս կարգ ականց ընդ Աւաքելոց՝ առաք ի Մատթէոսէ, որ զգուշագոյն գրէ զկարգ ա-ռաքելոցն։ Երրորդ՝ զզօրութիւն և զյատ-կութիւն ականց ի բաց թողաք, այնու՝ զի

ումանք Հաստատուն, և ումանք եղծեն. վայ
եթէ կամիս, տես յայլ գրեանսն։ Զոր-
ծորդ՝ Յովհաննէս մինչ ետես զնախասահ-
մանաւ թենէ իւրմէ խրատեալ եղև, զի զոլով
կենդանի, տեսանէր զանուն իւր եդեալ ի
հիմունս քաղաքին. որպէս և Տ՚ն զուշա-
կեաց, ընդ այս խնդացէք՝ զի անուանք ձեր
գրեալ են յերկինս։ Զ՚նշան Տէր զձեռագիր
յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ՚ի գրքի
բուրթեան կենաց զի և ես արժանի եղէց ո-
դորմութեան քում՝. և օրհնեցից զքեզ ընդ
Առաքելոց յաւիտեան։ "Եւ էին երկոտասան
դրունք յերկոտասան մարգարտաց՝ միա-
ձև, և իւրաքանչիւրոյն դրունք էին մի մի
դուռն ի միոյ միոյ մարգարտաց. և ընդար-
ձակութիւն քաղաքին ոսկի մաքուր, որպէս
ղաստակի պայծառ։" Այսոքիկ մարգարտեայ
դրունք թէ յոր քանակութեան լցեն՝ ոչ է
յայտ, զի ոչ չափեաց հրեշտակն։ Եւ պատ-
ճառս տան թէ դուռն արքայութեան նեղ
գոլ ասաց Տ՚ն։ Այլ զայս ասաց բարոյ-
ականապէս. այլ այնքան ընդարձակ քա-
ղաքին՝ դրունքն ևս մեծազոյն պարսին գոլ։
Ի յերկրի ոչ է հնար դռնաչափ մարգա-
բիտ գտանել, որքան և փոքր լցէ դուռն։

Աւրեան երկնային մարգարիտն՝ է այլատեսակ։ Ասուրիտն՝ որ մի մարգարիտ ընծայէ։ է յոյժ մեծագին։ Աչի թէ՝ Կղէովատրա ունէր երկուս մարգարիտս՝ որ արժէր երկոտասան հարիւր հազար ֆլորի։ սղկեաց՝ և տրորեալ քացախով էարբ։ Խորհրդապէս մարգարտեայ դրունք են։ նախ՝ Աւաքեալքն։ Երկրորդ՝ վարդապետք՝ քարոզութեամբ։ Երրորդ՝ մարգարտափայլ կուսանք։ յորոց միոջի գերազանց մարգարտեայ դուռն է Սրբուհի Աստուածածին Յուստինիանոսի Կոյսն։ ըստ այսմ՝ մարգարտատեսիլ և ծիրանափայլ հրաշափառագոյն Կոյս և այլն։ Մարգարիտն պայծառանայ՝ թէ աղաւնին կլցէ։ և թէ բերանացանով և աղիւ չիկցի։ Մեծագին են։ նախ՝ ադամանդն։ երկրորդ՝ կարկեհանն։ երրորդ՝ մարգարիտն։ չորրորդ՝ շափիղայն։ միտիերթ մարգարիտ է սիրտն պայծառացեալ սիրոյն Աստուծոյ՝ որպէս զարեգակն։ Յերկինս են գերապայծառ ակունք և մարգարիտք։ Որոց փշանք ինչ են առ երկրաւորս գտեալքն։ որպէս լոյսն ճրագի։ որ առ մեօք է աղօտ հաղորդութիւն ինչ լուսոյ արեգական։ Ընդարձակութիւն և հրապարակ քաղաքին էր։ ասէ։ ոսկի մաքուր

որպէս զապակի պայծառ. որ խորհրդապէս նշանակէ զսիրտս արդարոյ մաքրեալ ի մեղաց, և պայծառացեալ փառօքն Աստուծոյ։ Մանաւանդ զամենայն հրահալելիս ծակէ, բայց յապակին ոչ կարէ ներգործել։ Այսպէս և ոչ մեղք ինչ ի սիրտս երանելեաց, զի զոլով ոսկի մաքուր՝ զգեցեալ են զպայծառութիւն ապակւոյ։ "Եւ տաճար ոչ տեսի ի նմա, քանզի Տէր Աստուած ամենակալ տաճար էր ի նմա՝ և Գառն։" 'Ի յերկինս թէ զոյ լուսակազմ խորան, ըստայնմ՝ անաւասիկ խորանն Աստուծոյ ի մէջ մարդկան։ 'Ի յոր իբր յԱստուածավայելուչ գահոյս բազմի Աստուած և Գառն։ բայց որքան առ այնպիսի տաճար, որ է տեղի աղօթից՝ լալոյ՝ ապաշխարութեան՝ նուիրանաց և պատարագի։ արդարև ոչ զոյ։ զի պարզևատուն Աստուած, որ զամն պարունակէ՝ ներկայ է։ որոյ տեսութեամբն՝ անկարօտ են յամենայնի։ Օ՜ի որպէս ի տաճարէ։ զորմէ ասէ Դաւիթ՝ լցցուք մեք ի բարութենէ տան քո։ ի բարութենէ Աստուծոյ ընանին։ Վասն զի Տէր Աստուած տաճար է անդ։ այսինքն՝ լցուցիչ ամենայն բարութեանց։ 'Նոյնպէս և Գառն՝ որ ասէր զինքենէ։ քակեցէք

տաճարս զայս, և զերկս աւուրս շինեցից։ Եւ թէ որպիսի բարելիս տաճար լցէ, ասէ, ես եմ գուսան, ընդկս եթէ ոք մոցէ և ելցէ և ճարակ զոցէ։ "Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ. և Ճրագ ի նմա Գառնն։" Զի եթէ Բեռի փայլումն ի Թ. ափօր արեգական գերազանցեաց, և մինչ զմինչև-ւուրբն փայլեցաւ Պողոսի, արեգակնայիցն յաղթեաց Ճառագայթիկ, քանի բիւրապատիկ պայծառափայլեսցի բացարձակ լոյս Աստուածութեան ի վերին գաւառի, յորմէ լուսոյ լցեալ արդարքն իսկ՝ որպէս մի մի արեգակունք ծագեսցին յարքայութեան. որպէս ահա ստորակոյտ։ "Եւ գնային հեթանոսք ի լոյս նորա, և թագաւորք երկրի լուսազգեաց լինէին ի փառաց նորա։" Ի լուսոյն յաւիտենական լուսաւորեալ բոլոր ուժգնութեամբ ըղձից իւրեանց՝ գիմեն առ նա յորդ փափագանօք։ Այսու անենահաղ և անհրաժեշտ և անյափրական վայելումն նոցա նշանակէ։ Թագաւորք ասելով՝ ցուցանէ թէ՝ ոչ միայն աղքատաց երկրի չտեսից յափշտակէ զերկս փառքն Աստուծոյ,

այլ և թագաւորաց։ որք ոչ միայն զերկրաւոր փառս իւրեանց մոռացին։ այլ և զարեգակն և զլուսին։ Ըստ այնմ՝ և ոչ ես եղեցի քեզ արեգակն ի լոյս տունջեան։ և ոչ ծագումն լուսնի տացէ քեզ զլոյս ի գիշերի։ այլ՝ եղեցի քեզ Տէր՝ լոյս յաւիտենական։ և փառք քո Աստուած։ "Եւ դրունք նորա ոչ փակեսին ի տուէ և ի գիշերի։" Դրունք երկնային քաղաքին են առ ի զարդ։ և ոչ առ յերկիւղէ։ զի ոչ գիւք և ոչ գողք կարեն մնանել անդր։ Երկրաւոր քաղաքի դրունք ի գիշերի փակին։ բայց անդ՝ և ոչ գիշեր գոյ եթէ գոտաւոր անհաւոր և սուրբ։ և ոչ ի գիշերի փակել տայ զդրունս քաղաքաց։ Այսր թէ ի հռովմ միշտ դրունքն բաց են։ 'Ի մեր ժամանակս՝ Հաճի Ալի Բէկն հրամայեաց Զմիսիացւոց՝ զդրունս բաց պահել։ Եւայլ ևս ասէ ի տուէ և ի գիշերի եղեցին դրունք բաց։ այսինքն հանապազորդ։ զի արեգակն ստուգաժութեան և լուսին հանապազ անդ մշտավայրեն։ "Այլ փառք և պատիւ ազգաց ի նմա։" 'Ի քաղաքի անդ՝ եղեցի լեւութիւն բարութեան և ամենայն փառք և պատիւ։ որք եղեն և կարեն լինել յաշխարհի յամենայն ազգս։ զոյի անդ

փառքն Լիբանանու և պատիւն Կարմելայ յամենայն Հրէից և հեթանոսաց։ Իւ ոչ միոցէ անդ ամենայն չարակամ և սլիգծ և ստութիւն։ բայց միայն որ զրեալք ի գպրութեան կենաց Գառնին։ Թէպէտ ամենայն մեղաւոր ոչ մոռանէ անդր՝ բայց ատ զերիս զայսոսիկ առաւել անարժան զրէ։ Չարակամ է նախանձոտն՝ որ ոչ կամի զբարի այլոց։ Սլիգծ՝ սղջեւան անմաքրութեամբ ըղձախոհութեան։ Իսկ ստութիւն՝ այր հանապազորդեալ ի ստութիւն։

ԳԼՈՒԽ ԽԲ։

"Իւ եղոյց ինձ զմաքուր գետ կենդանւոյ ջրոյ՝ սառնատեսակ։ որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ և Գառնին։" Կարագրատպէս ումանք զօրութեամբ բանիս ասեն զոլ յերկինս զգալի ջուրք։ ոչ առ արբումն։ զի արքայութիւն ոչ է կերակուր և ըմպելի։ և ոչ փառաւորեալ մարմինն կարօտի ուտելոյ և ըմպելոյ։ այլ՝ առ զուարճութիւն և հեշտութիւն սրբոց։ Բայց և թուի զոլ յերկինս զգալի ջուրց։ նաև ծառոյ կենաց։ որպէս ի հետևեալ տանն ասէ։ Այսպէս ի զուարճութիւն արդարոց։ որպէս և

Աղամայ ի գրախտին։ Երկրորդ՝ եթէ կամիցին ի Ճաշակել և ըմպել։ ոչ առ պահպանութիւն անհատին՝ որովհետև ոչ են կարօտ, այլ միայն՝ առ ամենակերպ խրախութիւն։ Այսպէս Ադամայեալ հրեշտակն։ Զի՞ ցետ յարութեան փառաւորեալ մարմնով՝ կերը և արբը, և ծախեաց որպէս արեգական ըզշոգի։ բայց եղաք վարկմամբ՝ և ոչ հաստատելով։ Յայս միտ ասել տեսանի Դաւիթ։ արբեացին նոքա ի պարարտութենէ տանքդ։ և զուխս փափկութեան քո տացես ըմպել նոցա։ Խորհրդապէս՝ ամանք ասեն գետս այս է Հոգին Սուրբ եկեալ յաթոռոյ Աստուծոյ և Գառին, այսինքն բղխեալ ի Հօրէ և Որդւոյ։ ըստ այնմ՝ որ ծարաւի է եկեաց է առխ և արբցէ։ որ հաւատայ ցիս։ որպէս ասեն գիրք։ գետք յորովայնէ նորա բղխեացեն ջրոց կենդանութեան։ Բայց այսպէս գետ զոլով՝ երկրորդ հոգի լինի։ քանզի այլ է աթոռ Աստուածութիւն։ և այլ աթոռ մարդկութեան։ Այլք առնուն զերանական տեսութիւն Աստուծոյ և Գառին որ իբրև զգետ զովայուցանէ։ ըստ այնմ՝ յաղեցայց յերևիլ փառաց քոց։ Եւ որպէս Ճառագայթ արեգական գետոցէն բղխէ։ այսպէս

և լոյս փառաց իբրև զվիթխտ սառնատեսակ գետ ի փառահեղ տեսութենէն Աստուածութեան և Արդկութեան։ Այ զերկոսին հատանշանակէ յասելն՝ ի քէն է Ցէր աղբիւր կենաց։ և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Նշանակէ զառատութիւն պարգևաց Աստուծոյ և ի Որդեէ հեզեալ յերանելսն։ որով ուրախ լինին։ ըստ այնմ՝ գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ։ Գետոյն ածէր իբրև զգետ զխաղաղութիւն։ և իբրև զհեղեղատ յորդորեալ զփառս հեթանոսաց։ Զգետ կիսէ լի տեսեալ գետն՝ է զենուորեալ եկեղեցւոյն։ այս՝ յաղթողին։ Այսմանէ ևս՝ Գոմաստութիւն արտահեղի զգետս։ Ի խորհրդական գետ վերնոյ դրախտին՝ տեսութիւն Աստուծոյ։ Իբրև զարեգակն լուսաւորէ։ և իբրև զգետ զովացուցանէ։ Ի գիրս Գոսթերայ ասի։ փոքր աղբիւրն ի գետ։ ի լոյս։ և յարեգակն դարձաւ։ Այսպէս հարանացեալք Աստուծոյ ի գետ։ ի լոյս և յարեգակն փոխին։ որպէս Գոսթեր։ Գետոնքն՝ կեանքն յաւիտենական նշանակի։ եղեցի նմա աղբիւր Ջրոյ կենդանւոյ բղխեցելոյ ի կեանս յաւիտենականս։ իսկ կենօքն՝ լոյս երանական։

ըստայնմ՝ Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան։ Հին հեթանոսք՝ վարկէին հողիք մարդկան վերաբերիլ ի կառ կատարունական ընդանեն՝ որ կոչի ծիր Յարդդողի, որ է իբրև զգետ։ Ոչ՝ մեզ երկրաբղձիցս՝ որ մուռացեալ զգեան այն սառնատեսակ ջրոյ կենդանւոյ, ըմպեմք ի պղտոր և յապականեալ գետոյ ախտալից սիրոյ կենցաղոյս անցաւորի, առ որս ի դէպ գայ ասել, զե՞կայ քեզ և Ճանապարհին Եդիպտացւոց, ըմպել քեզ զջուրն Գիհոնայ զպղտոր։ Աթոռս այս յորմէ եւանէ գետ հրոյ յորդեալ ի սրտմուռթենէ ահեղ դատաւորին՝ առ ի ողողել զմեղաւորս ի ծոին անդնդոց, բստ տեսլեան Դանիէլի ի յերկինս զջուրն քաղցր և կենդանի՝ իբր զպարսատ՝ ի հեզուռթենէ և ի քաղցրուռթենէ սիրոյ Աբքային փառաց։ առ ի զովացուցանել և զմայլեցուցանել զտոչորեալ սիրտ եկեղցոյն ի վշտաց մեծաց՝ ծարաւելոց արդարուռթեան։ Երանի՞նոցա։ "Եւ զնայր ի մէջ հրապարակաց քաղաքին։ և զեղերը գետոյն ասսի և անտի ծառ կենաց։ որք բերէին պտուղս երկոտասան՝ ըստ մէոյ միոյ ամսոյ տային զպտուղս իւրեանց։ և տերև ծառոյն էր բժշկութիւն հեթանոսաց։"

Այսպէս եաես և Եզեկիէլ առ զեստուն զբազմութիւն Ծառոյ։ առ ապն Հեղեղատին փայտս յոյժ բազում։ Աստուստ երկնից արքայութիւն դրախտ անուանի։ այսինքն Ծառարան։ Համայնձայն Եդեմական դրախտին։ Բայց այս է տարբերութիւն։ զի Նորին զեան յերկրէ ելանէր։ սորայն՝ յաթոռոյն Աստուծոյ։ 'Ի նմա՝ ի մէջ բազմատեսակ Ծառոց էր մի միայն Ծառ կենաց։ իսկ ի սմա ամենայն Ծառք՝ են Ծառ կենաց 'Ի նմա՝ զեան ոռոգանէր զերկիրն։ իսկ ի սմա՝ զՀրապարակն և զերանեալսն ոռոգանէր։ Երանեալք յերկինս՝ մերթ որպէս ձկունս՝ ի զետ անհուն խնդութեան լոգան։ մուտ յուրախութիւն Տեառն քո։ Ա՝երթ՝ որպէս թռչունս։ բարձրացեալ՝ ի Ծառս կենաց՝ երգեն զերգս զերանուէտ քաղցր եղանակս Աստուծոյ և Գառնին։ Հրապարակն Ա՝ենիժոյ՝ միշտ ոռոգանի Ծովային ջրով։ բայց է ազատեալ։ բայց է անդ՝ մնքուր։ Արմատենիքն ամենայն նման լուսնի։ ասի թէ՝ զմի մի ոստս ընձիւղ։ և այսպէս երկոտասան ոստովք պՀ՝նի։ և ի պտղաբերելն՝ երկոտասան ողկոյզս պտղաբերէ։ որպէս ասէր Անոփրիոս։ յիւրաքանչիւր ամսոջ բերէ ինձ զմի ողկոյզ արմատոյ՝ որ ինձ բաւական է։

Աստուած՝ Եղիսպասցիք զամն ի տիպ արմատենուոյ նկարեն, վասն ունելոյն զերկոտասան ոստս, որպէս և նա՝ զերկոտասան ամիսս։ Հոգևորապէս նշանակէ զանչափրական խնդութիւն երանելեաց. զի միշտ նորոգի ի նոսա խնդութիւն և ցնծութիւն, որպէս ի զենուրեալ եկեղեցւոջ՝ միշտ նորոգի տօն և նաւակատիս. որպէս Արարգաբէն ասէր, վասն հարէք ի գլուխս ամսոյ՝ յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց։ Օ որ և Եսայի ասէ. և եղիցի ամիս յամսոյ՝ և շաբաթ ի շաբաթէ, եկեսցէ ամենայն մարմին, այսինքն ընտրելոց, երկիրպագանել առաջի իմ՝ Տերուսաղէմ՝ ասէ Տէր։ Այլ ոչ եթէ յերկինս իցէ շաբաթ կամ ամիս, զի և ոչ շրջան արեգական գոյ։ Այլ՝ այսու ցուցանէ թէ ընտրեալքն ամսոյ յամիս՝ Ճաշակելով ի ծառոյն կենաց, ցուցանին անկարօտ գոլ Ճաշակման միայն, առ լուսն խոստմանն Յեսի. որ ասաց, որ յաղթէ՝ տաց նմա ուտել ի ծառոյն կենաց, որ է ի մէջ դրախտին Աստուծոյ. ընդ ժամանակս ժամանակս Ճաշակեն։ Իսկ տերևքն՝ ասէ, ի բժշկութիւն հեթանոսաց. ոչ թէ յերկինս իցէ ախտաժէտութիւն, այլ՝ զի հեթանոսք հաւատացեալք

ի Բ. ի վշտաց մեծաց գնացեալ՝ ընդ Հովանեաւ ծառոյն կենաց հանգիստ առեալ, նշմարելով զվայելչագեղ տերևսն ծառոյն կենաց՝ բժշկին ի նախանցեալ վիրաց։ Ամենք ասեն տերևքն են Բ.ին՝ ծառոյն կենաց սիրտական բանքն։ Իսկ պտուղն է նոյն ինքն՝ որ ճաշակ և ճարակ լինի երանելեաց. առ որ կաթողնեալ ասէ Հարսն. Իբրև խնձոր ի փայտս անտառի, այնպէս է սիրելին իմ ի մէջ ուստերաց. ընդ Հովանեաւ նորա փափագեցի և նստայ. և պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում։ " Եւ նզովք անդ ոչ եւս լինէին, և աթոռն Աստուծոյ և Գառին նորա՝ էր ի նմա. և ծառայք նորա պաշտէին զնա։" Այսինքն ոլորումն, անվատումն և զրկումն ոչ լիցի, այլ թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։ Աւրքունական աթոռն Աստուծոյ և Գառին ընդ ամէն՝ է յատկապէս ի քաղաքի անդ ի բարձր տեղւոջ, ի լուսազարդ խորանի փառաց, և ծառայք նորա հրեշտակք և մարդիկք։ բիւրք բիւրոց պաշտէին զնա։ Գարձեալ նզովք ոչ լինի անդ՝ կամ անէծք. զի մեղք ոչ լինի. որ է պատճառ նզովից մեզաց։ որոյ վասն Աստուծոյ ի Գրիգորիոն անիծաւ և նզո-

վիւք Հերքեցաւ։ "Եւ տեսանէին զերեսս նո-
րա։ և անուն նորա գրեալ էր ի Ճակատս
նոցա։" Ի Ճակատս Եպիսկոպոսին գրեալ
էր "Սուրբ Տեառն։" գրի ի Ճակատս սրբոց՝
"բաժին Տեառն և ժառանգ Աստուծոյ։ և
ժառանգակից Քրիստոսի։" Այլև սուրբք այն-
պէս ներքոյապէս միասցին ընդ Աստուծոյ։
մինչ զի ընդ նմա եղեցին մի՝ սիրովք։ որ-
պէս փեսայն ընդ Հարսին ոգեխառնեալ՝ լե-
նի ընդ նմա մի մարմին։ Ուստի ի Ճակա-
տս նոցա գրեսցի անուն Աստուծոյ։ զի
ընթերցօղն ասասցէ թէ՝ դուք Աստուածք
էք։ և որդիք Աստուծոյ ամենեքեան։ Անդ
տեսանիցին զէութիւն Աստուծոյ դէմ յան-
դիման։ որպէս մեք տեսանեմք զարեգակն։
որպէս ասէ Գրայի՝ զԹագաւորն փառաց
տեսցեն աչք նորա։ Եւ սա ասէ՝ տեսանե-
լոց եմք զնա՝ որպէս և էն։ բայց թէ զինչ
է։ անգիտանան։ որպէս և մեք զարեգակն տե-
սանեմք։ բայց զբնութիւն նորա ոչ գիտեմք։
"Եւ գիշեր ոչ էր անդ։ և ոչ էին պէտք
Ճրագի և արեգական։ վասն զի Աստուած
լուսաւորէր զնոսա։ և թագաւորեսցեն յա-
ւիտեանս յաւիտենից։" Ուր արեգակն՝ անդ
ոչ լինէ պիտոյէ Ճրագ։ և ուր Աստուած՝

անդ ոչ ձիաղ ։ ոչ սրեգակ ։ Աստուած զոլով փեսայ անմահ ։ սուրբ թագաւոր ։ հաստատեալք նորին են թագուհիք զեր փառաւորք ։ " Եւ ասէ ցիս ։ այս բանք հաւատարիմք են և ճշմարիտք ։ և Տէր Աստուած մարգարէից սրբոց առաքեաց զհրեշտակ իւր ծառայիդ իւրում՝ ցուցանել՝ զոր լինելոց է վաղվաղակի ։" Ա՝ռ ասէ հրեշտակն ։ թէ՝ հաւատարիմք են այս բանք ոչ զոլով ի սմա մեծամեծ և զժուարապատում՝ բանք ։ Բազմաց անհաստատելն թուի ։ վասն հարկեցաւ հրեշտակն վկայել զճշմարտութիւնն ։ Ա՝ռ վայել է յարժանահաւատ անձաց ։ ի Ռա՝ն՝ որ ստորև ասէ ։ ես Յ՝ առաքեցի զհրեշտակն վկայել զայս ամենայն ձեզ եկեղեցեացդ ։ ի հրեշտակէն՝ որ ասաց վկայէ ։ և ի Յովհաննէ՝ որ ի հետևեալ տանն վկայեալ բանիցն միամտութեամբ սրտի հաւատ ընծայել և զմիտս մեր զերել ի հնազանդութիւն բանիցս ասացելոց ։ զի մի՛ ընդ հետաքրքրաց անեղատից մոլորիցուք ։ զոր ասէ Լմնատունն ։ զի մեծամեծք և զրժուարապատումք են դատաստանք քո Տէր ։ վասն այսորիկ անձինք անեղատից մոլորեցան ։ Ա՝ռաղվաղակի ասէ՝ վասն երկոց ։ Նախ

առ ի յորդորել զհաւատացեալս ի սէր արքայութեան և բարեգործութեան։ Երկրորդ՝ վասն սակաւութեան ժամանակին։ զի ժամանակս մերձ է։ Երրորդ՝ զի զկնի դրեալցն վաղվաղակի՝ սկիզբն եղև։ "Ահա դամ ես վաղվաղակի։ երանի՞ որ պահէ զբան մարգարէութեանս այսորիկ։ Այսինքն՝ հաւատով և գործով։ "Ես Յովհաննէս լուայ և անկայ երկիրպագանել։" Պատճառն՝ վասն Էր ոչ եթող հրեշտակն երկիրպագանել։ 'ի վեր անդր ասացաւ. տես զնոնարհութիւն հրեշտակին և Յովհաննու։ Երկրորդ՝ թէ գերկրպագութիւն ի կատարած բանին շնորհակալ լինելով։ բայց տակաւին ոչ թողու։ Յովհաննէս փոխարէն այսքան խնամսոյ՝ ոչ ունէր տրիտուր ինչ՝ բայց ի շնորհակալութենէ. տես առ որ ընթեռնուս զյայտնութիւն և զայլ գրեանս հանդերձ մեկնութեամբ շնորհակալ լեր զյայտնողէն և զմեկնողէն։ յորժամ՞ օգտիս ինչ ի նոցանէ. զի մեծ նշան է խոնարհութեան շնորհակալութի. քանզի բերան շնորհակալու ի խոնարհ մարդոջ առատանայ։ Իսկ ապարատան շնորհակալու՝ ախտն հպարտութեան և ինքնահաւանութեան։ "Եւ ասէ ցիս դարձեալ՝

մի կնքեր զքանս մարգարէական գրոյս այ-
սորիկ. քանզի ժամանակս մերձ է։" Դա-
նիէլն ասաց կնքել, զի տեսիլդ յաւուրս է.
այսինքն կատարումն հեռի է։ Այսինքն մի
թագուցաներ, այլ քարոզութեամբ և օրի-
նակել տալով տարածեա, զի ամենեքեան
ընթերցցին և փրկութեան հասանիցեն։ "Ոչ
ամբարշտելոյն է՝ ամբարշտեսցի, և որ աղ-
տեղանալոյն է՝ աղտեղասցի, և որ արդարա-
նալոյն է՝ արդարասցի, և որ սրբելոյն է՝
սրբեսցի։" Երկու է միտ բանին. Նախ՝ ա-
սել կամի, ահա վերջին վարդապետութիւն
Աստուածային Գրոց, այլ ասելի է խրատ
և սաստ ոչ մեաց. կամիս արդարացիր, կա-
միս՝ մեղանչես, դու գիտես. արիւն քո ի գլ-
լուխս քոյ։ Օ՛ի թէ արդարոց վարձն և թէ
մեղաւորաց տանջանքն՝ ահա բաւականապէս
ցուցաւ։ Երկրորդ՝ հեղնէ զամբարիշտս, ոչք
զայս ամենայն լուեալ՝ տակաւին յանդգնին
մեղանչել. քան զոր չիք այլ խելագարութի.
որպէս է և այն՝ զոր ասէ Յովհաննէս. ուրախ
լիր երիտասարդ՝ ի մանկութեան քում. և
յարէ՝ ծանիցի եթէ վասն այսր ամի ածցէ
զքեզ Աստուած ի դատաստան։ Կամի ասել,
ի մանկութեան քում՝ ի սանձարձակ ուրա-

խուԹեան, որոյ վասն յետոյ գատելոց ես։ "Եւ որ արդարանալոցն է՝ արդարացի։" Եւ բան Ճշմարիտ խրատողն, զի արդարն տրամադրի առ արդարութիւն. և մեղաւորն՝ ի մեղս։ Ըստ այնմ, Սիրաք. մեղաւորն յաւելցի ի՝ մեղանչել։ Դարձեալ բնական արդարն տրամադրի առ դերբնական շնորհն. ըստ այնմ, որ ունիցի տացի՝նմա և յաւելցի. և թէ՝ եղից զօգնութիւն իմ՝ ի վերայ հրեզօրին։ Այ՝ ոչ է պարտ դադարիլ յարդարանալոյ և ասել բաւական է. զի ասէ Սիրաք, մի դադարիր մինչև ի մահ արդարանալ. քանզի շնորհն Աստուծոյ ի վարձ արդարոց Ճեպէ։ Այսպէս մեղաւորն ոչ է պարտ տակաւին ի մեղանչել. զի մի սաստկացին տանջանքն՝ որպէս ասէ Սիրաք. որդեակ մեղաւ, մի ևս յաւելուր զմեղս ի վերայ մեղաց. այլ և սակս առաջնոցն աղաչեա, զի թողցին քեզ։ "Ահա գամ ես վաղվաղակի. և վարձք իմ ընդիս է, հատուցանել իւրաքանչիւր զգործս իւրեանց։" Օ այս ասէ Տէր առ ի լուսաւորութիւն վերոյ ասացելոցն. որ որպէս թէ թագաւոր ոք գնացեալ ի տար աշխարհ, առ վերակացուն տան, կամ փոխանորդն թագաւորութեան

գրիչէր հրովարտակս վաղվաղակի գալոց, զհնազանդս պատկելոց, և զապստամբս սատակելոց. և առ հաստատութիւն բանիցն ի վերջն գրիչէր՝ որ ապստամբելոցն է՝ ապստամբեսցի, և որ հնազանդելոցն՝ հնազանդեսցի. զայս ոչ թէ հրաման տայր, այլ յահ և յերկիւղ ապստամբացն, և ի յուսադրութիւն հնազանդիցն ասէր։ Այսպէս առնէ և Քրիստոս աստանօր և ի աղքատացեալս տըպաւորել ի միտս լսողացն՝ հաստատէ առակըցելով։ "Էս եմ Ալֆա և Օ, Սկիզբն և Կատարած, Առաջին և Վերջին։" Օ այս ասէ զի ծանիցուք թէ՝ որպէս սկիզբն ստեղծման ինքն է, նոյնպէս և կատարմանն՝ որպէս խոստանայ՝ նոյնպէս և կատարէ. զի ամենայն ինչ ի ձեռին նորա է. թէ վարձք՝ և թէ պատիժք. և նա է զատաւոր ամենեցուն։ Եւ մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ահեղ աստենին Քրիստի, առ ի առնուլ զհատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց։ "Երանելիք են՝ որք պահեն զպատուիրանս նորա, նոքա ունին իշխանութիւն ուտել ի փայտէն կենաց, և մտանել ընդ դրունս քաղաքին։" Երանութիւն առաքինեաց է կրկին. ասա՝ յուսով վարձուցն հատուցման, ըստ-

այնմ՝ , երանի ամենեցուն զոյք յուսացեալք են ի Տէր ։ Իսկ յոյսն ծնանի ի շնորհացն Աստուծոյ և ի յատուկ արդեանց ։ վասն այսորիկ երանէ մարգարէն ասելով՝ երանեալ է այր՝ որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց ։ Եւ ասա երանէ զպատուիրանապահումն ։ զի այս ներգործական երանութեան վերինք առին բոլոր բանն և պատճառն ։ Փայտն կենաց նկարագրապէս յայտ է ։ իսկ խորհրդապէս է Քն ։ զոր ուտեն երանեալք վայելելով զերանական տեսութիւն նորա ։ Մեծ է առաքինութիւն ։ զի տայ իշխանութիւն մնանել ընդ դրոնս վերին քաղաքին ։ Յայլ թարգմանութեան գրի ։ երանի որք լուանան զվերարկուս իւրեանց արեամբ գառին՝ և այլն ։ որպէս գրի ի լուսանցն ։ " Այլ ելցեն արտաքս շունք և գեղատուք ։ և սպանողք և կռապաշտք ։ և ամենեքեան՝ որք սիրեն զստութիւն ։" Ելցեն արտաքս ։ այսինքն ոչ մնացեն ի քաղաքն ։ կամ ելցեն ի զինուորեալ եկեղեցւոյ ։ որպէս այրն այն՝ որ ոչ էր զգեցեալ զհանդերձ հարսանեաց ։ զոր հրամայեաց հանել յարտաքին խաւարն ։ Գեղատուաց շատ է չարութիւն ։ զի կամ տան՝ առ ի սպանանել զթշնամիս ։ և կամ՝ առ ի ա-

պակասել զարգանդ կանանց՝ զի անյաղօրէն հետևէիցին շաղակրութեան. սոքա աղտեղաբզեստք գոլով ոչ ունին իշխանութիւն մուտանել ընդ դրունս քաղաքին. այլ հանգոյն խոզից ի տիղմն դժոխոց։ "Եւ Յն առաքեցի զՀրեշտակ իմ վկայել ձեզ եկեղեցեացդ։" Մեծ է պատիւ եկեղեցեաց Քրիստոսանէից, որոց Յն յետ շնորհելոյ զԱւետարանն Աստուածային, տակաւին յերկնից ի ձեռն Հրեշտակի, և սիրելի Աշակերտին իւրոյ՝ զերկնից արքայութենէն Հառէ մեզ, և վկայէ այսր ամենայնի։ "Ես եմ յարմատոյ՝ ի սեռէ Դաւթի։" Օրանուցանէ այսու զմարդեղութիւն իւր և զանմահ թագաւորութիւն. իբրու ասիցէ՝ ես եմ այն՝ որ ըստ մարմնոյս յարմատոյ Դաւթի յառաջացեալ՝ կոչեցայ որդի Դաւթի։ Ի սեռէ, այսինքն ի ցեղէ. ըստ այլ թարգմանութեան՝ ես եմ արմատն և սեռն Դաւթի. այսինքն հիմն Դաւթի, նոյնպէս և ամենայն մարդոյ։ "Ես աստղ պայծառ առաւօտու։" Առաւօտու աստղն է արուսեակն. որպէս արիւսեակն ի ծագել իւրում իբր առեստաւոր լինի ծագմանն արեգական, այսպէս Յն աստանօր զինքն անուանէ արուսեակ՝ գոլով արեգակն ար-

դասուութեան, այնու՝ զի աւետարանեաց մեզ զտիւն յաւիտենականի արքայութեան. և արիւնական փառաց նորա։ Ասասի յայլ թարգմանութեան գրի՝ ես եմ արուսեակ դուշակաւոր մրգենալոյ արեգական. այսինքն յաւիտենական կենաց և երանաւէտ փառաց նորա։ Դարձեալ Քրիստոս առաւօտու կոչի. առաւօտիւ նշանակելով զարքայութիւն, յորում յատկապէս փայլի ինքն։ Առաւօտն մթնախառն գոլով և զովական, մանաւանդ յամարայնի նշանակէ զԱստուածային լոյսն ընդ նսեմախառն մարմնոյն. զի որքան պայծառ լիցէ մարմինն Քրիստոսի՝ տակաւին նսեմ է առ Աստուածային լուսոյն։ Եւ զանհասութիւն Աստուածութեանն. զի ոչ միայն սրբոց՝ այլ հրեշտակաց ընդ աղօտ տեսանի. որպէս ասէ Պետրոս՝ զոր ցանկային դոնէ ընդ աղօտ տեսանել հրեշտակք։ Օ ի ըստ Դաւթի՝ եդ զխաւար ի ծածկոյթ իւր։ Եւ զի տեսութիւն արուսեակին քաղցր է քան զարեգական, ինքնապէս և առաւօտն՝ քան զմիջօրեայն, ցուցանէ թէ՝ երանելեաքն ոչ ինչ նեղին յարքայութեան, այլ յամենայնի զովագոյն և զուարճալից լինին։ "Եւ հոգի և փեսայ, որ

զալոյն եմ, և հարսունք ասասցեն թէ՝ եկ, և որ լսէ՝ ասասցէ եկ. և որ ծարաւի է՝ եկեսցէ, և որ ոք կամի առնուլ զջուրն կենաց ձրի։" Հոգի փեսայ, այսինքն հոգևոր փեսայ. Ճշմարիտ հարսունք՝ սրբասէրքն Ճշմարտապէս փափագին Քրիստի. այսպէս հոգևոր հարսն ասէ Յերզան՝ եկ եղբօրորդի, ելցուք յանդաստան, հանդիցուք ի գեօղս, այսինքն՝ եկ. զի զօրութեամբ քո ելցուք յերկրէ յերկինս։ Դարձեալ՝ ասելով հարսունք ասասցեն եկ, հրաման տայ քարոզչաց միշտ զգալստենէ իւրմէ ջերմապէս քարոզել. զի շարժեալ լսողքն ի սէր փեսային՝ ասասցեն թէ՝ եկ։ Եւ որ ընթեռնու կամ լսէ զայս երկու գլուխս՝ որք խօսին զարքայութենէ երկնից, մեծաւ փափագմամբ ցանկան փութանակի գալստեան նորա. միայնթէ՝ ոչ խցեն ապականեալ և դաղջ հարսունք իւղազուրկք և լապտերաշէջք։ Ուստի յարէ, և որ ծարաւի է՝ եկեսցէ. յորմէ յայտ է, թէ՝ որ ոչ ծարաւի տեսութեան Քրիստի, ոչ զնայ առ նա. և ո՞ խցէ այնքան խելագար, որ ոչ փափագիցի Քրիստի, և դիմեսցէ առ նա՝ առ ի առնուլ զջուրն կենաց ձրի։

Օտարաւելի է Քրիստի գալստեան առաւել

քան զերդՀերու՝ յաղբերս Ջուրց, որպէս ծաբաւէր Դաւիթ։ Օ Աթանասէ՝ որ ծարաւի էր աղբերսայն Քրիստոսի, պատմի թէ ի հոգեվարութեան՝ եկն ձայն յերկնից՝ եկ Աթանաս առանմահութիւն։ "Վ կայեմ ես ամենայնի՝ որ զքանս մարգարէութեանդ գրոյս այսորիկ՝ եթէ սք յաւելցէ ի սա, յաւելցէ Աստուած ի վերայ նորա զեօթն հարուածսն զրեալսն ի Գրիս յայս։" Որ ՀԱստուածաշնչէն յաւելու կամ պակասեցուցանէ՝ լինի հերձուածող Սրբոց, որպէս արար Մարկիանոս՝ զոր յայն սակս Թերթուլիանոս կոչէ զնա մուին Պոնտոսի, որ էր Պոնտացի։ "Ասէ՝ որ վկայեաց այսոցիկ՝ դամ ես վաղվաղակի։ ամէն։" Օվաղվաղակի գալուստն լուեալ Յովհաննէս՝ ասորասելով ասաց զամէն։ ցանկանալով գալստեան նորա։ Վ այ յաւելու։ Եկ Տ Յ Քրիստոս։ Քանզի սուրբք ունին զկեանս ի համբերութիւն։ և զմահ ի յաղթի։ մանաւանդ թէ զանմահութիւն։ վայ հառաչեն առ Տէր՝ եկ։

Շնորհք Տեառն մերոյ Յի Քրիստոսի ի վերայ ամ Սրբոց իւրոց՝ Ամէն։ եղեցի եղեցի։

Վ. ԱԽՃԱՆ

Ողբերգութիւն գրուած 'ի Յովհաննէս Գրիգորեան։

Եւ՛ Աբեղային արգարութեան,
Եւ Արուսեակդ առաւօտեան,
Ծաղեա մեզ լոյս՝ ողորմութեան։

Եւ՛ ով Թուլուն Աբջայութեան,
Հանգիր յոստ ծառոյս բանական,
Եւ լսեցո՛ քաղցրիկ քո ձայն։

Եւ՛ Ճշմարիտ մեր Բարեկամ,
Ցուրբ մեզ ողջոյն՝ որում ցանկամ։
Որով բարձցին յաւէտ իմ՝ յոր կամ։

Եւ՛ մեղրածնան իմ Ցիսուս,
Ծորանդ ծորեա՝ ծարաւելոյս։
Ամքել զդառնութիւն հոգւոյս։

Եւ՛ միայնակ սրտի իմ Ցոյս,
Եւ աչաց ներքին իմոյ Լոյս,
Փարատեա զմառալ հոգւոյս։

Եւ՛ հաստատութեան իմոյ Վէմ,
Վանեա զլեառն՝ որ կայ ինձ դէմ,
Ոտն զործել առ քեզ լուսատեմ։

Եւ՛ անուանեալդ՝ մեզ Թափեալ Լուզ,
Մառայակիր յանձնաւորս խուզ։
Վառեա լաստերս, շինանի իւզ։

Եւ՛ ով Փեսայդ՝ իմոյ հոգւոյս,
Եկ Սիոնիցդ իմոյ հիքոյս։
Ցեր հառաչէ առ քեզ Պետրոս։

Յօրինեալ է

Յամի Տեառն 1828 Սեպտեմբերի 28։ ՅԵւգոկիա քաղաքի եհաս ի կատար, Զերուա՛մ ընթերցասէր մեծարու անձանց սիրատուրթեան կարօտաւորիս ձեռամբ

ԵՒԴՈԿԻԱՑԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԵՂԱՑԻ։

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
7	2	Յովաննու	Յովհաննու
7	24	իձն	ինձ
8	7	քաչալերիչ	քաջալերիչ
6	22	խոցեցինն	խոցեցինն
16	10	հալեսցէ	հալոցէ
16	22	հոտ	հուբ
26	24	գաւթի	Դաւթի
30	14	մարդն	մարան
39	2	կայսերքն	կայսերքն
46	17	յանդամանի	յանդիմանի
	23	մծաւ	մեծաւ
48	25	ի մեղո	ի մեղս
57	11	եղբայրսեր	եղբայրասէր
62	13	գալով	զոլով
71	3	եւ	ես
73	19	այսօր	այսր
86	8	Դեգոնի	Գեգոնի
98	11	նշան	նշանակ
101	18	Սիսոփն	Սիմոփն
103	8	աշխարհին	արեգական
104	20	խաՃաբ	խաբաՃ
112	8	յայն	յայն
113	8	աշխարհն	արեգակն
	14	աշխարհ	արեգակն
114	4	ով աշխարհ	ով արեգակն
115	2	աշխարհն	արեգակն
	24	յերկին	երկիրն
131	18	շաբժաց	շաբժեաց
140	12	զողոց	փողոց
	12	աբծուաւերբա	աբծուաւերբպ

—24	պատժէն	պատիժն
145—21	չարչարել	չարչարել
146—2	անպրաղարձման	անդարձման
156—1	հովեսցես	հովուեսցես
171—20	մինչև	մինչ չև
174—17	հաստատէ	հաստատ է
183—6	յերկինս	յերկինս
186—2	խորագոյն խոնարհութիւն և	ամենամաքուր
	ամենամաքուր	սրբութիւն
	սրբութիւն	
—11	պատրգևն	պարգևն
192—14	այսր	այս
196—19	յաղթեալ	յաղթել
201—14	յաւուր	յաւար
218—1	մահաւէր	մահավէր
—2	մահաւիրի	մահավիրի
219—13	խորանաղրոշմ	խարանաղրոշմ
255—9	շարուժիս	շարժուիս
260—10	ի կորուա	ի կորուստ
298—23	երկեցէ	կերկեցէ
301—10	ի գալն	ի գոլն
314—18	ի մարգարէալն	ի մարգարէանալն
318—24	պարզ է	պարզէ
320—25	յաղթեսցէ պսակն	յաղթողացէ պսակն
321—22	յանպիմանդ	յանդամանդ
322—9	թափանցիկ	թափանցիկ
323—4	սպիտակ սափիր	սպիտակ ։ սափիր՝
329—10	Պողոսի	Պօղոսի
335—22	ի պտղաբերելն	ի պտղաբերելն
339—11	անհաստատելի	անհաստատալի
345—22	աբիւսեակն	արուսեակն